



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.


We also ask that you:


- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

**B** 1,215,421








**ՍՈԿՐԵՏԵՑ ՍՔՈԼԸՍՏԻԿՈՍԻ**  
**ԵԿԵՂԵՑԵԿԸՆ ՊԵՏՄՈՒԹԻՒՆ**

ԵՒ

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ**

**ՍՐԲՈՅՆ ՍԻՂԲԵՍՏՐՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ**

**Հ Ռ Ո Վ Ծ Ա Յ**



**ΣΩΚΡΑΤΟΥΣ ΣΧΟΛΑΣΤΙΚΟΥ**

**ΕΚΚΛΗΣΙΑΣΤΙΚΗ ΙΣΤΟΡΙΑ**

**Κ Α Ι**

**ΒΙΟΣ ΤΟΥ ΜΑΚΑΡΙΟΥ ΣΙΛΒΕΣΤΡΟΥ**

**ΕΠΙΣΚΟΠΟΥ ΡΩΜΗΣ ΤΗΣ ΜΕΓΑΛΗΣ**

100 Mousisean, Mesiap  
Sokratoy Skolastikosi Ekeghetsaka

**ՍՈՎՐԱՆՅՑ ՍՔՈԼԱՍՏԻԿՈՍԻ**  
**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ՓԻԼՁԵՆ ՓԻՐԱՎԱՅԻ

ԵՒ


ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ

ՍՐԲՈՅՆ ՍԻՂԲԵՍՏՐՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ՀՌՈՎՄԱՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

**ԱՐԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԻ ՋՅՐԱՓՈՐԵՅԻՆՑ**



— **Հ Ա Տ ՈՐ Ա** —

Ա շ ի ա տ ա ս ի ր ս լ Թ ե ո մ ք

ՄԵՍՐՈՊ Վ. ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ

Միաբանի Ս. Ամրամնի

— ԳՐԱԿՐԱՆ —

ՀՐԱՄԱՆԱԻ

**Յ. Տ. ՄՎԻՅՈՒՆԻ Ա.**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՑԵ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ՈՄԵՆՈՑԵՆ ՀԱՅՈՑ

— ԳՐԱԿՐԱՆ —

Վ Ա Ղ Ա Ր Հ Ա Գ Ա Ց

նա-

ՏԳԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՑ Ս. ԷՋՄԻԱՆԻ

**1897**


պատմութեան  
Սոփիայի Ս. Առաքելի յայտնեցին և փոր-  
ձեցին հաստատել այն միտքը որ Մովսէս Խորենացին

1

5700  
I RIN  
700  
V. 1-2  
P. 1-3

Дозволено цензурою 9 Ноября 1896 г. г. Тифлисъ

GRAN  
LKEN  
FEO  
01.10.99



### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն


Ա.

Սոկրատ յոյն պատմչի եկեղեցական պատմութիւնը մեր գրականութեան մէջ յայտնի է երկու օրինակով՝ Մեծ և Փոքր Սոկրատ անունով: Առաջին անգամ երկուսն ի միասին տպագրութեամբ ի լոյս ածելով, լրացնում ենք մի պակասութիւն որ խիստ զգալի էր: Այդ պատմութիւնը Յունաց չորրորդ դարու գրականութեան բաւական յայտնի արդիւնքներից մէկն է, միջին դարում թարգմանուելով հայերէն լեզուով դարձել էր և մեր նախնիքների համար հեղինակաւոր և գործածական գիրք, մեզ հասած համեմատաբար բազմաթիւ ձեռագիր ընդօրինակութիւնները լաւ ապացոյց են այդ բանի: Պէտք է յուսալ որ նա ներկայումս էլ կունենայ բազմաթիւ հետաքրքրուող անձինք, եթէ դեռ վառ է ճշմարիտ գրասիրութիւնը, եթէ դեռ կան մարդիկ որ սիրում են հետամուտ լինել անցած դարերի պատմական մեծ դէպքերին: Սոկրատը ունի առանձին նշանակութիւն և Հայոց գրականութեան համար. նրա պատմութեան հետ վերջերս կապուեց Հայոց պատմութեան հայր Մովսէս Խորենացու գիրքը. յայտնեցին և փորձեցին հաստատել այն միտքը, որ Մովսէս Խորենացին

20  
1-2  
1-2

Дозволено цензурою 9 Ноября 1896 г. г. Тифлисъ

CRA  
L E N  
1-0  
01-10-99



### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ա.

Սոկրատ յոյն պատմչի եկեղեցական պատմութիւնը մեր գրականութեան մէջ յայտնի է երկու օրինակով՝ Մեծ և Փոքր Սոկրատ անունով: Առաջին անգամ երկուսն ի միասին տպագրութեամբ ի լոյս ածելով, լրացնում ենք մի պակասութիւն որ խիստ զգալի էր: Այդ պատմութիւնը Յունաց չորրորդ դարու գրականութեան բաւական յայտնի արդիւնքներից մէկն է, միջին դարում թարգմանուելով հայերէն լեզուով դարձել էր և մեր նախնիքների համար հեղինակաւոր և գործածական գիրք: մեզ հասած համեմատաբար բազմաթիւ ձեռագիր ընդօրինակութիւնները լաւ ապացոյց են այդ բանի: Պէտք է յուսալ որ նա ներկայումս էլ կունենայ բազմաթիւ հետաքրքրուող անձինք, եթէ դեռ վառ է ճշմարիտ գրասիրութիւնը, եթէ դեռ կան մարդիկ որ սիրում են հետամուտ լինել անցած դարերի պատմական մեծ դէպքերին: Սոկրատը ունի առանձին նշանակութիւն և Հայոց գրականութեան համար. նրա պատմութեան հետ վերջերս կապուեց Հայոց պատմութեան հայր Մովսէս Խորենացու գիրքը. յայտնեցին և փորձեցին հաստատել այն միտքը, որ Մովսէս Խորենացին

օգտուել է Սոկրատի պատմութեան հայերէն թարգմանութիւնից՝ ութերորդ դարում կատարուած, հետեապէս Խորենացին այդ դարուց առաջ չէ գրել: Յառաջարանիս մէջ մանրամասն և բազմակողմանի կերպով կաշխատենք պարզարանել այդ խիստ կարևոր խնդիրը:

Արդէն երեք տարի է անցել այն օրից, երբ առաջին անգամ «Արարատ»<sup>1</sup> ամսաթերթի միջոցաւ յայտարարեցինք մեր մտադրութիւնը՝ հրատարակել Սոկրատի պատմութիւնը: 1891 թ. Ապրիլի 15-ն Ազգիս Վեհափառ Հայրապետի բարեհաճ թոյլտուութեամբ սկսուեց պատրաստ ձեռագրիս տպագրութիւնը: Հանգամանքներ որոնց յիշատակութիւնը մեզ հեռուն կրտանէր, ձգձգեցին և մինչև այսօր ուշացրին շատերից<sup>2</sup> տնհամբերութեամբ սպասած գրքի լոյս տեսնելը, և որ գլխաւորն է նոյն այդ հանգամանքները թողին իրանց հետքերը գրքի ներքինի և արտաքինի վրայ: Ծանր երկարատև աշխատութիւն և համբերութիւն պահանջող մի գործ էր մեր սկսածը, ոչ համապատասխան նոր սկսողի և անփորձ անձի ոյժերին. նրա մէջ կան թերութիւններ որ կարելի էր չանել և որը մեզ համար ամենից շատ է զգալի:

Աշխատանքի ժամանակ շատերն են ինձ օգնել համեմատութեան և սրբագրութեան մէջ, անուանական ցանկը կազմելիս՝ մանաւանդ Բազրատ արեղան, Արսէն վարդապետը, Պ. Բազրատ Մատթէոսեանը. Միաբան Գալուստ Տէր Մկրտչեանը իւր հարողած մի քանի տեղեկութիւններով և ուրիշները. բոլորին հրա-

1. Արարատ 1893. Յունուար. էջ 61.

2. Հանդէս Ամսօրեայ՝ 1896 Խալաթեան՝ Армянскій эпосъ. էջ 23. Գորիէր Հանդ. Ամ. 1893 էջ 184.

պարսկաւ շնորհակալութիւնս եմ յայտնում: Սրբագրութիւնը ինքս եմ կատարել, անվարժ լինելով թոյլ եմ տուել սխալներ, որոնց ցանկը կայ գլքի վերջում. խնդրում եմ գործածողներին գիրքը գործածելուց առաջ ըտրի լինել համեմատել բնագրի հետ:

## Բ.

Գլքիս տպագրութեան համար գործ եմ դրել Մեծ Սոկրատ՝ Չեռ. Մայր Աթոռի թիւ 1682 (ըստ կարինեանի ցուցակի թիւ 1640), Փոքր Սոկրատ Չեռ Մայր Աթոռի թիւ 1670 (ըստ կարինեանի ցուցակի թիւ 1628): Առաջինից միայն մի օրինակ ունէի տրամադրութեանս տակ, երկրորդից եօթ օրինակ: Մեծ Սոկրատը որ բառացի ստրկական թարգմանութիւն է յունարէն բնագրից, ամբողջութեամբ բաղդատել եմ յունարէն հրատարակած երկու յայտնի հրատարակութիւնների հետ՝ Ռոբերտ Հուսեյի և Ալիլիամ Բուայտի<sup>1</sup>: Համեմատութեամբ սրբագրել եմ մեր ձեռագրի սխալ-

1. ա. Socratis scholastica ecclesiastica historia, ed. Robertus Hussey, S. T. B. Oxonii, 1853. Այս հրատարակութիւնը բաղկացած է երեք հատորից, երկու հատորում բնագիրն է լատիներէն թարգմանութեամբ և ընթերցուածների տարբերութեամբ, իսկ ամբողջ երրորդ հատորը պարունակում է լատիներէն լեզուով ծանօթութիւններ, որ անփոփոխ կերպով արտասուած է Վալեսիոսի և Ռեդենգի հրատարակութիւններից:

բ. Socrates Ecclesiastical history according to the text of Hussey by William Bright. Oxford, 1893. Սա ունի միայն յունարէն բնագիրը և գեղեցիկ յառաջաբան անգղիերէն լեզուով: Սա անփոփոխ արտասուութիւն է առաջինից:

ները, որոշել բնագրի և թարգմանութեան մէջ կղած տարբերութիւնները, իսկ Հուսեյի երրորդ հատորից վերջրել եմ ընտրութեամբ կարևոր ծանօթութիւնները կամ ամբողջովին թարգմանելով, կամ կրճատելով: Այնքան պարզ է՝ թէ ինչ կարող եմ փոխառած լինել, որ աւելորդ համարեցի ամեն անգամ յիշատակել աղբիւրը:

Երկու տարի առաջ՝ 1894 ամառը Վիեննայի Միւթարեանների մօտ տեսայ պ. Նորայր Բիւզանդի Փոքր Սոկրատի պատրաստի ձեռագրի ընդօրինակութիւնը՝ գեղեցիկ ծանօթութիւններով և մեկնութիւններով. նամակով զիմեցի նրան և շնորհակալութեամբ թոյլտուութիւն ստացայ օգտուել այդ ձեռագրից: Մինչև նամակի պատասխանը ստանալը, արդէն հասել էր արտասահմանից վերադառնալուս ժամանակը, բարեբախտաբար Վիեննայի յարգելի միաբանութիւնը յօժարութեամբ թոյլ տուեց ձեռագիրը հետս բերել Ս. Էջմիածին և այնտեղ օգտուել: Այդ օրինակից ընդօրինակել եմ բաւական թուով ծանօթիւններ Փոքր Սոկրատի համար, որոնք վերաբրւում են գլխաւորապէս Հայոց գրականութեան<sup>1</sup>: Պ. Ս. Բիւզանդը գրում է գրաբառ, ամեն անգամ նրա ծագ. նօթութիւնը ընդօրինակել եմ անփոփոխ կերպով յիշել եմ անունը, և չակերտներով որոշել վերջրածս:

Ընդարձակն ու համառօտ, կամ Մեծ ու Փոքր Սոկրատը միաժամանակ՝ համապատասխան հասուածները ըստ բովանդակութեան իրար հանդէպ մի երեսի վրայ տեղաւորելով, յոյս ունենք մեծ գիւրութիւն սուլած

1. Մի քանի ծանօթութիւններ մտցրել եմ Փոքր Սոկրատի արտատպութեան մէջ, որովհետև Մեծի համապատասխան մասը արդէն տպուած էր:

Ե.

ըինենք այդ երկու նոյն աղբիւրից բղխող բայց շատ տարբեր բնագրերը բաղդատողներին, թէև այդ ձևը տպագրական մեծամեծ անյարմարութիւններ ունէր, միայցած մեկնողական և ձեռագրական ծանօթութիւնների հետ:

Վերև ասացինք որ զրքի տպագրութեան ուշանալը թողել է իւր հետքերը. ժամանակի ընթացքում մի քանի անգամ փոխուել են ծանօթութեան տառերը տպարանի վարչութեան կողմից. իսկ բնագրի տպուելու ձևի մէջ ես եմ փոփոխութիւն մտցրել: Սկզբում ընդարձակ օրինակը արտատպում էին Ձեռագրից ամենայն հաւատարմութեամբ. Ձեռագրի կէտադրութեամբ, շեշտերով, տառասխալներով, բայց վերջը համոզուեցի որ ստրկական յունարան թարգմանութիւնը եթէ կէտադրութեամբ չորոշուի, շատերի համար աւելի անհասկանալի կլինի, վճռեցի հետևել յունարէն բնագրի կէտադրութեանը, քանի որ Ձեռագրինը ոչ մի կանոնի չէ ենթարկուում: Չնայած դրան այնուամենայնիւ Մեծ Սոկրատի յունարան բնագիրը շատ անհասկանելի կամ դժուար հասկանալի հատուածներ ունի, որ միայն յունարէնի օգնութեամբ կհասկացուի. այս ուղղութեամբ աշխատել եմ ծանօթութիւններով փոքր թեթևութիւն տալ: Անհամեմատ պարզ և դիւրահասկանալի է Փոքր Սոկրատը, որը արտատպեցի առանձին հատորիկով իբրև դիւրին ընթեռնելի գիրք:

Գ.

Մեծ և Փոքր անունով Սոկրատի կրկնակի օրինակի որոշումն գտնում ենք առաջին անգամ տասնչորրորդ դարու սկզբում ապրող և գրող Այրիվանեցու

պատմութեան՝ մէջ՝ «Սոկրատիս Մեծ և Փոքր»։ Իսկ այնուհետև երկար ժամանակ մեր գրողները մօտ յայանի է նուա՛ միայն Փոքր Սոկրատը։ Անկատելի է մնացել նոյն իսկ Մադրասայում հրատարակուող Ազդարար թերթի<sup>2</sup> թէև համառօտ բայց շատ ուղիղ նկատողութիւնը։ Թերթի հրատարակիչ տէր Դմաւոն քահանան տպել է մի հետաքրքիր ցուցակ նախնեաց հեղինակած և թարգմանած գրեաց<sup>3</sup>։ Յուցակի մէջ յիշուած են 41 սղոթային և 18 թարգմանուած պատմագիր։ Թարգմանականի ցանկը ունի հետևեալ կարգը։ Յովսէփոս Երանոս, Եւսերբոս, Աթանաս Հայրապետ, Եպիփանէ Արարացի, Պատմութիւնք Արևելեան վիպից և «Սոկրատ սկսեալ ի կոստանդիանոսէ մինչև ցմահն Թեոդոսի փոքու հատորս Է և զայս ևս յունաց լեզուէ թարգմանեցաւ զոր համառօտեցաւ վասն խնգրոյ Եբրսիսի ի շխանին ի ժամանակս կաթողիկոսութեան Անաստասայ, և այժմ զերկուսն միայն երեք զոր ասեն Մեծ Սոկրատ, և Փոքր Սոկրատ, զայս Է զիրքն ևս ի թարգմանչացն եղև թարգմանեցեալ»։ Սկստողութեանս գրողը բացի այն որ առաջևը ձեռագրեր է ունեցել, օգտուել է նաև Ասողիկի պատմութեան

1. Յես Միսիթ. Այրիվանեցի 2եռ. Ս. Էջմիածնի թիւ 241(9) թղ. 260.»

2. Ազդարար 1795 էջ 188—192. հմտ. Գր. վ. Գալէմքարեան՝ պատմ. Հայ լրագր. Վիեննա 1898. էջ 205—210.

3. Գալէմք. յ. տ. «Գրեանց ցանկը անշուշտ գրողն ինքնին կազմած է առաջևը ձեռագրիներ ունենալով, 1 Մն. և յ. տ. շ. Գ. Զարբ. իւր Հայկ. Հ. Գ. (Վեն. 1886) մէջ յիշատակած է այս գործը էջ 278, 446, 485 և Ն.» «Ենացալ կագիրն Հ. 2ամչեանի պատմութենէն շե առած այս ցուցակը»։

մէջ եղած տեղեկութիւնից: Մենք յետոյ ցոյց կտանք որ Տէր Շմաւոնը Մեծ Սոկրատի այն Չեռագիրն է ունեցել, որ բարեբախտաբար պահուել է:

Ամենահին յիշատակութիւնը Սոկրատի անուան Ասողիկինն է տասներորդ դարում: Նա թուելով յայտնի պատմագրաց շարքը. Աստուածաշունչ գիրք՝ Յովսեփոս) «Եւսեբիոս Պամփիլեայ<sup>1</sup> աւարտաբանէ ի քսանամեակն Կոստանդիանոսի Թագաւորի Մեծի: Եւ զկնի նորա Սոկրատէս: Նաև այլ ևս անթիւք են ի մէջ Յունաց Պատմագիրք. բայց սոքա երկուքս: որ պէս լուսաւորքդ մեծամեծ քան զաստեղս՝ առաւելան պայծառութեամբ»: Ասողիկը Սոկրատին Եւսեբիոս կեսարացուն հաւասարակից, բոլոր յոյն պատմիչների ամենամեծ և լուսաւոր աստղն է համարում. նա յայտնելով թէ Եւսեբիոսը գրել հասցրել է իւր պատմութիւնը մինչև Կոստանդիանոսի Թագաւորութեան 20-երորդ տարին կցում է անմիջապէս՝ «և զկնի նորա Սոկրատէս» տեղիք է տալիս ընդունելու, որ ճանաչում է միայն բուն Մեծ Սոկրատը, որ դեռ չէր միացել Սեղբեստրոսի վարքի հետ, որովհետև նրանից յետոյ յիշատակող պատմագիրները բացի Սամուէլ Անեցուց և Միքայէլ Ասորուց գիտեն միայն Փոքր Սոկրատին: Սամուէլ Անեցին իւր պատմութեան սկիզբը վերցրել է Ասողիկից (զլ. Ա էջ 5—7) մի քանի փոփոխութիւններ և յաւելուածներ անելով, ուստի և նրա հետեւալ տեղեկութիւնը՝ «առ որս երևելագոյն քան զյուրովս եղև Եւսեբի երանելի ի մէջ առօջնոյն և վերջնոյն. և զհետ նորա Սոկրատէս պատմագիր այլօք բազ-

1. Ստեփ. Տար. Ասողկան պատմութիւն տիեզերական Տրոտ. Ստ. Մալխասեան. Ս. Պետերբուրգ 1885. էջ 6.

մօք»<sup>1</sup> առանձին նշանակութիւն չունի քանի որ բուն աղբիւրը առաջներս ունենք:

Միքայել Ասորին յիշում է երկու տեղ՝ զբքի սկզբում պատմագիրների անունները տալիս. «Զոսրմնս և Սոկրատ և Թէդորիտոս հերետիկոս ի կոստանդիանոսէ սկսեալ մինչ ի Թէոդոս Փոքրն գրեցին»<sup>2</sup>, ուրեմն նա Ասողից անկախ գիտէ Սոկրատի պատմութեան ուղիղ լրովանդակութիւնը՝ առանց որևէ յաւելումաձի: Սակայն նրա երկրորդ յիշատակութիւնը մեզ կարող էր ենթադրել տալ որ Մ. Ասորին օգտուել է իսկապէս Փոքր Սոկրատից: Նա կոստանդնի հօր կոստասի մասին պատմում է. «Յովհաննէս Ասիացին ասէ. թէ հայր կոստանդիանոսի դարձաւ յաստուածպաշտութիւն, և Սեղբեստրոս զհայրն բժշկեաց ի բորտութենէ. և Պետրոս և Պաւղոս երևեալ կոստայ՝ խրատեցին զնա կոչել զՍեղբեստրոս մկրտել զնա: Այսմ վկայէ Սոկրատ Հռովմայեցի»<sup>3</sup>: Այստեղ նկարագրած պատմութիւնը կայ Սեղբեստրոսի վարքի մէջ միայն այն տարբերութեամբ, որ այն ինչ Յովհաննէս Ասիացին կոստասին է վերագրում, Սեղբեստրոսի վարքի հեղինակը նրա որդի կոստանդին մեծի մասին է պատմում: Հարց է ծագում, Միքայել Ասորին իւր պատմած դէպքի աղբիւրը արդէն յիշելով ինչ կարիք ունէր անմիջապէս յետոյ երկրորդ պատմչի անունն ևս տալ, որը դէպքը բաւական տարբեր է պատմում. և երկրորդ

1. Սամուէլ Անեցի Հրատ. Տէր Միք. Վաղարշապատ 1895 թ. էջ 2, 3:

2. Միքայել Ասորի Հրատ. Երուսաղէմի 1871 թ. էջ 2.

3. Միք. Ասորի էջ 126. Տես և Սոկր. Վարք Սեղբեստրոսի էջ 737. ճն. 1.

քանի որ առաջի յիշատակութիւնից երևում է որ միայն Մեծ Սոկրատին գիտէ, ինչպէս է նա Սեղբեստրոսի վարքը Սոկրատի գործ համարել, ասորերէն բնագիրը հեշտ կլուծէր խնդիրը, որի հետ ծանօթ չենք: Այդ անհետբեթութիւնը կվերանայ սակայն եթէ «այսմ վկայէ Սոկրատ Հռովմայեցի՝ սկզբնական պատմութեան հետ կապ չունեցող բառերը, իբրև յաւելուած դուրս հանենք. նրա աւելացնողը Միքայելի պատմութեան թարգման Վարդանն է ժամանակակից Կիրակոս Գանձակեցու, որին միայն Փոքր Սոկրատն է յայանի:

Կիր. Գանձակեցու վկայութիւնը այս է. «Եւ<sup>2</sup> ապա մեծիմաստն Սոկրատէս կորովակի բանիւք, սկսեալ ի սբբոյն Սեղբեստրոսէ Հռոմայ հայրայե տէն և ի Կոստանդիանոսէ մեծէ, և ածէ մինչև յաւուրս Թէսդոսի փոքու. զարարս և զգործս իւրաքանչիւր թագաւորաց և եպիսկոպոսաց՝ զառաքինեաց և վատթարաց, և զժողովեցոց բազմաց եղելոց, պիտանեաց և խոտանեաց ընդարձակ և յաճախ պատմութեամբ աւանդէ»: Սա արդէն Փոքր Սոկրատին գիտէ և կարդացել է: Միիթար Այրիվանեցոց յետոյ, որը սակայն երկու բառով է վերջացրել իւր ասելիքը, փոքր ի շատէ կարևոր տեղեկութիւնն այս է, որով կարելի է յայանի կերպով մատնանիշ անել թէ երբ են մեր պատմագիր-

1. Հ. Բ. Սարգսեան՝ Տեսութիւն Սեղբեստրոսի Պատմ. և Ծ. Խորէն. աղբերաց, Վենետիկ 1893 թ. էջ Թ յիշում է որ Միք. Ասորին առել է Ասորի հեղինակից, և չէ բացատրում թէ Սոկրատի անունն ինչու համար է աւելցրած:

2. Կիր. Գանձակ. Պատ. հրատ. Վենետիկ 1865 թ էջ 2. բայց մեք վերջնում ենք էջմիածնի 2եռ. թիւ 1670 իբրև աւելի լաւ օրինակի:

ները գործածել Փոքր Սոկրատին: Սոկրատի անունը կայ յիշուած հնէրնից նաև Մխիթար Անեցու մօտ<sup>1</sup>:

Նորերին մինչև ամենավերջին ժամանակներս միայն մի թարգմանութիւն է ծանօթ եղել: Չամչեանը փոքրը ձեռին ունենալով, բազմաթիւ է յունարէն բնագրի հետ և գտնելով ակնյայտնի տարբերութիւններ, եզրակացրել է. որ կամ խանգարուած օրինակից է թարգմանուել կամ յետոյ է խանգարուել<sup>2</sup>: Նոր Հայկ. բառգիրք կազմողները կրկնում են մօտաւորապէս Չամչեանի ասածները<sup>3</sup>, հ. Գ. Զարբանալեանը իւր 1886 թ. երկրորդ տպագրութեամբ լոյս տեսած Պատմ. Հ. Մատ. դեռ ոչինչ չէ ասում Սոկրատի կրկնակի օրինակների գոյութեան մասին, իսկ մի քանի տարի ուշ լոյս հանած Պատմ. Հայ. թարգմ. Մատ. մէջ որոշում է երկուսը միմեանցից, այն էլ Երուսաղէմի Մեծ Սոկրատ Չեռազրից մի քանի հատուածների արտագրութիւն ստանալուց յետոյ<sup>4</sup>:

Ամփոփելով ի մի մեր հաւաքած տեղեկութիւնները կարող ենք եզրափակել. Մեծ Սոկրատը սկսուած է յիշուել սկսած տասներորդ դարից. յիշում են Ասողիկ:

1. Մխիթար անեցի, Հրատ. Բ. Պատկանեանի. Ս. Պետերբուրգ 1879. էջ 15.

2. Չամչեան. Պատմ. Հայոց Հ. Ա. էջ 27. «Թուի թէ այն օրինակ յորմէ թարգմանեալ է. խանգարեալ էր և կամ զկնի անզգոյշ անձանց խանգարեալ իցէ. զի բազում տեղիս օտարաձայն տեսանի յուղիղ բնագրէ յունաց»:

3. Նոր բառգ. Հայկ. լեզ. Վենետ. 1836. էջ 19. «Կէս մի հարթ, և կէս մի անհարթ ոճով. թող զպազմապատիկ տխալանս գրչաց»:

4. Հ. Գ. Զարգ. Հայկական թարգմանութիւնք Նախնեաց Վենետիկ 1889 էջ 696.

Սամուէլ Անեցի և Միքայէլ Ասորի, Փաբր Սահրատը  
 տասներեքերորդ գարից՝ Կիրահոս Գանձակեցի, Միքայէլ,  
 Ասորոս Թարգմանն Վարդանը և մի քանի նարեր, և  
 վերջապէս երկուսը միասին ճանաչում են միայն տառ-  
 նչորորդ դարում՝ Մխիթար Այրիվանեցին և շատ աւելի  
 ուշ Ազդարար Թերթի հրատարակիչը: Մեծ Սոկրատից  
 կամ նման աղբիւրից օգտուել է Միքայէլ Ասորին  
 (տես Սոկր. էջ 125, 163, 383) Փաբրից Վարդան  
 պատմագիրը (տես Սոկր. էջ 335.)

Դ.

Ուխտանէս եպիսկոպոսը իւր պատմութեան Ա. գլ.  
 5-րդ և 6-րդ պատմում է Կոստանդին Մեծի քրիստոնէա-  
 նալը Սեղբեսարոս հայրապետի ձեռքով և Հեղինէ Թա-  
 գուհու Երուսաղէմ գնալը Փրկչի խաչը գտնելու հա-  
 մար: Հեղինէի Երուսաղէմ գնալը յիշուած է Սոկրատի  
 Պատմ. մէջ ևս, բայց ամենաթեթեւ բաղդատութիւնը՝  
 բաւական է ցոյց տալու, որ այդ չի եղել Ուխտանէսի  
 աղբիւրը: մեռւմ է Կոստանդինի դարձի պատմութիւնը:  
 Մանրամասնութիւնները և նոյն իսկ ամբողջ պատ-  
 մնաւծքը նման է ընդարձակ Սեղբեսարոսի վարքին.  
 բայց այնու ամենայնիւ տասներորդ դարում գրող Ուխ-  
 տանէսը չէ ճանաչել այդ Թարգմանութիւնը: Յայսմա-  
 ւուքքի մէջ Քաղոց Ին և Յունուարի Բ ունինք. Վարք  
 եւ յիշատակ սրբոյն Սեղբեսարոսի Հռոմայ հայրապետին՝  
 որի շարունակութիւնը կազմում է առանձին վերնագրով  
 որոշած «Հաւատալն ի Քրիստոս Կոստանդինոսի Թա-  
 գաւորին»:

1. Յես Սոկր. Ա. էջ 17.

ԺԲ.

Ամենահին Յայսմաւուրքը Յունաց Բարսեղ Բ. Կայսեր անունով 975—984 թուի յօրինածն է համարուում, որի մէջ Յունուարի 2 է կարգուած Ս. Սեղբեստրոսի աօնը, սակայն մեծ տարբերութիւն կայ այդ վարքի և մեր Յայսմաւուրքի մէջ եղածի<sup>1</sup>. Վատիկանի մէջ կայ տասերորդ դարում գրած մի Յայսմաւուրք ուր «բաց ի մկրտութեան յիշատակութենէն» կը պարունակուեն նոյնպէս արիօղական կախարդաց մարտիկեան բժշկաց, և մանկանց կոտորածի մանրամասնութիւնքը<sup>2</sup>, չետևապէս մեր Յայսմաւուրքի հատուածը երկրորդ խմբագրութիւնից է թարգմանուած, այն էլ անպատճառ տասերորդ դարուց առաջ կատարուած, այլպէս Ուխտանէսը չէր կարող օգտուել:

Ուխտանէս<sup>3</sup>

Յայսմաւուրք

Թագաւորն Հռոմայ Կոստանդիանոս կռապաշտ էր և հրապուրեալ ի Մաքսիմիանէ կնօջէն իւրմէ<sup>4</sup> որ էր թռուն Գեոկղետիանոսի կայսեր. սա հալածէր քրիստոնեայսն . . . . իսկ երանելին առեալ զաշակերտսն փախեալ ի լեառնն և էր

Թագաւորն Հռոմոց Կոստանդիանոս կռապաշտ էր և հրապուրեալ ի Մաքսիմին դեայ կնօջէն իւրմէ (որ էր դուստր Մաքսեմիանոսի թագաւորի) և թռուն Գեոկղետիանոսի կայսեր . . . . սաւրբն Սեղբեստրոս . . . . առեալ զաշա-

1. Համեմատիր հ. Բ. Սարգ. յ. ա. էջ ԻԲ.

2. Հ. Բ. Սարգ. յ. ա.

3. Ուխտանէս Հրատ. Ս. Էջմիածնի 1871. էջ 102—103.

4. Խոր. և Փղբր Սոկրատից անկախ բոյց միանգամայն նոյն ձևով է թարգմանում յոյն բնագիրը ուշագրութեան արժանի է:

անդ ի թագաւոր:

Եւ եղև բորոտութիւն  
 Կոստանդիանոսի թագա-  
 ւորին իբրև տապաստ և  
 բժիշկք ամենեին ոչ կա-  
 րացին բժշկել:

Ասացին աղանդաւորքն,  
 եթէ անհնարին է քեզ  
 բժշկել, բայց միայն եթէ  
 անարատ մանկունք ժողո-  
 վեացես և արեամբ նո-  
 ցա լցցին զաւազան և  
 մինչդեռ ջերմ է արիւն  
 մացես ի նա մերկ յաւա-  
 զան և լուայցես արեամ-  
 բքն . . . .

և հեծեալ թագաւորին  
 երթայր ի կապե տղւոյն  
 տաճար կոոցն:

Ինչպէս տեսնում ենք Ուխտանէսը բառացի ար-  
 տագրել է Յայսմաւուրքից: Յայսմաւուրքի վարքը աւելի  
 նման է Մեծ Սոկրատին, բաց յայտնի դարձուածնիւր  
 յիշեցնում են Փոքր Սոկրատին, միայն վստահօրէն կա-  
 րելի է ասել ոչ մէկիցն է առնուած ոչ միւսից: Հ. Սար-  
 գսեանը յառաջաբանի մէջ աւելորդ է համարել բազ-  
 գատել յունարէն Յայսմաւուրքի հետ: Իսկ մենք դժբախ-  
 տաբար մեր ձեռին չունէինք բնագիր: Առ այժմ բաւա-  
 կանանում ենք հարցը միայն շօշափելով, իսկ Խորենացու  
 համեմատութեան մէջ կրկին կդառնանք նոյն խնդրին

կերտան իւր փախեալ ի  
 լեառն և էր ի թագստի:

Եւ եղև բորոտութիւն  
 Կոստանդիանոսի որպէս տա-  
 պաստ և ամենեին ոչ կա-  
 րէին բժշկել զնա բազում  
 բժիշկք:

Եւ աղանդաւորք ասա-  
 ցին թէ անհնարին է քեզ  
 (ողջանալ) և բժշկել (ի  
 յայդ ցաւոյդ), բայց թէ  
 ժողովես (հազար մանկունս  
 սանդեայս) և նստցիս դու  
 յաւազանս . . . և լուսա-  
 ցիս ջերմ արեամբ աղայոցն  
 և ապա ողջանաս . . . .

. . . և ելեալ թագաւորն  
 երթայր ի կապե տիլիոն  
 ի տաճար կոոցն:

Ը.Գ.

ցոյց տալու այդ աղբիւրների մէջ եղած առնչութիւնն ու կապը:

Ե.

Ինչպէս Սոկրատի հայերէն թարգմանութիւնը մինչև այժմ առանձին ուշադրութեան չէր արժանացել, նրա ձեռագիր օրինակների ծանօթութիւնը ևս պատահական համառօտ նկատողութիւններ են եղել «Արշալոյս Արարատեանի» «Աիօն ամսաթերթի» և «Արարատի» մէջ: Նոյն իսկ Բ. Սարգսեանը իւր ուսումնասիրութեան մէջ բաւականացել է միայն Ա. Ենեատի մատենադարանի չորս օրինակ Սոկրատի մասին գրչութեան տարեթուից զատ ուրիշ տեղեկութիւն չտալ: Ահա այս պատճառով մենք քիչ երկար կանգ կառնենք նրանց նկարագրութեան վրայ:

Ընդարձակ կամ Մեծ Սոկրատից յայտնի են երկու օրինակ. Մայր Աթոռի մատենադարանինը և Երուսաղէմում Հայոց Ս. Յակոբեանց վանքում եղած օրինակը: Արք 1893 թ. իբրև հրաւիրակ Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի Երուսաղէմ գնացի, հետո ունէի մեր մատենադարանի ձեռագրի ընդօրինակութիւնը, որը ցանկանում էի համեմատել նրանց օրինակի հետ: Ինչքան կներէր ինձ այդտեղ մնալիք կարճ ժամանակս: Մատենադարանապետ Գեր. Սահակ եպիսկոպոսը բարի եղաւ սիրայօժարութեամբ թոյլ տալ մատենադարանում ծանօթանալ իրանց ձեռագրերի հետ, յայտնեց միևնոյն ժամանակ որ Սոկրատի ընդարձակ օրինակը մատենադարանում չէ պահւում: այլ պատրիարքական առանձին գրատան մէջ և քանի ժամանակից ի վեր չէ երևում:

Վեհափառ Հայրապետի Մայր Աթոռս ժամանելուց մի քանի ամիս անց, նոյն եպիսկոպոսը նամակով դիմեց Վեհին և խնդրեց, որ մեր վանքի ձեռագրի ընդօրինակութիւնը Նրուսաղէմ ուղարկուի որպէսզի իրանց ունեցած օրինակի բաղդատութեամբ այնտեղ ի լոյս ածուի, արդէն կարգադրութիւն էր եղած գրքի տպագրութեան համար, որ և հաղորդուեց: Բայց երբ ևս տեղեկացայ որ կորած ձեռագիրը նորից գտնուել է, նամակով դիմեցի սրբազանին և խնդրեցի ձեռագրի նկարագրութիւնը և մի քանի թերի և կորած էջերի արտագրութիւն, նամակս մնաց անպատասխան. Գեր. Սահակ եպիսկոպոսը իմ երկրորդ նամակին սոյն թուի Ապրելի 2 պատասխանելով,—որի մէջ նկարագրում է իրանց երեք օրինակ Ձեռագրերը,—յայտնում է որ առաջի նամակը չէ ստացուել: Հրապարակաւ յատուկ շնորհակալութիւնս եմ յայտնում սրբազանին իւր ուղարկած նկարագրութեան համար: Աւելի ուշ 1894 թ. Արեւմտայում Հայր Յակոբոս Տաշիանից ստացայ մի քանի շատ կարևոր տեղեկութիւններ նոյն այդ ձեռագրի մասին: Ձեռագիրը բերուել է Հնդկաստանից, նուիրակ Ներսէս եպիսկոպոսի ձեռքով՝ նուիրուած Տ. Յովհաննէս քահանայ Խաչիկեանից 1868 թուին<sup>1</sup>: Գեր. Սա-

1. Արշալոյս Արարատեան 1868 (23 նոյեմբ.) թ. 845. «Եկեղեցական ի Վալկաթայէ կրխաւրէ ձեռագիրներ՝ ազգային հաստատութեան մը տալու և որ են այժմ Նրուսաղէմ, ի միջի այլոց պատմութիւն Փիլոնի Տիրակացոյ որոյ սկսուած բանից եզաւ ի ստորին ի տեղեկութիւն հնասիրաց: Մատենա այս բամբակաթուղթ է հնութենէ ժամանակին թուի փտեալ, սակայն անբարտ ունի զգրեալսն»: Ապա տալիս է գրքի յիշատակարանը և սկզբից մի մեծ հատուած (տես Սուր. էջ 1—3):

Հակ եպիսկոպոսի նկարագրութիւնն է<sup>1</sup>. «Բուն եկեղեցական պատմութիւնը 29 տետրերէ կբաղկանայ. մէկ մի տետրակ ութն թերթ կամ 16 էջ. բայց մէկ երկու տետրակ, օրինակի համար ԺԶ տետրը եօթն թերթ ունի, թերևս մէջէմէջ թերթեր պակասած լինի: Մեծ ութիւն, 26×17 սանտ. գրութիւն, միասին 10,5×12 սանտ. տողք. 24. գիր բոլորգիր, բաւական մաքուր՝ ի լուսանցս ուրեք ուրեք նոյն գրչով մոռացուածներու յաւելուած. նիւթ, թուղթ անողորկ և խնամքուր. կաղմ չունի, ցրուած տետր առտետր երբեմն թղթատուած. հանգամանք, խոնաւութենէ զլքին վերի կողմը բամբակոտած և պատռտած, որով շատ տեղ անընթեռնելի, նաև տեղ տեղ ցեցոտած. խորագիրք և վերնագիրք կարմրաւ. սկզբնատառք գլխոց՝ ծաղկագիր. ժամանակ՝ անյայտ. գրիչ. Թովմաս դպիր. տեղի, տէր և ստացող կպակսին:

Սեդրեստրոսի պատմութենէն միայն երեք տետրակ կայ, վերջերը կպակսի, ուստի յիշատակարան և տարէթիւ չկան: Միայն թղթի տեսակից, որ շատ անողորկ և անմաքուր է, նաև զրի տեսակից, կարելի է հետևցնել, թէ գրչութիւնը եղած է Թիւրք դարում<sup>2</sup>:

1. Սիօն ամսագիր 1869 թ. 9. էջ 216 «Ընդկաստանէն սուրբ Աթոռոյս թանգարանին նուիրուած գրչագիր գրեանքը. 1 Սոկրատ պատմագիր՝ առաջին թարգմանութիւն հարազատ, բոլորագիր գրեալ ի վերայ բամբակեայ հին թղթոյ, քանի մի տարի յետոյ քան զթարգմանութիւնն»:

2. Հարկաւոր ենք համարում նկատել որ Գեր. եպիսկոպոսի Չեռ. ժամանակի որոշումը իբրև ենթադրութիւն, այդպէս էլ պէտք է ընդունել:

Գիրքը դուռ չունի՝ այլ անգոյն կիսախորանի մը  
տակ եղծուած Պ . . . . անունով կրակսի այսպէս:  
Յամի վեցհազարեր | դ-ի երկերերորդի չորրորդ-ի կենցա | ղում ան-  
ցաւորի որպէս ունի ժամանակագրութիւն սուրբ | Սոփի աւագ եկե-  
ղեցի տէրգերական մայրաքաղ | արին Կոստանդնուպաւսի:

Եւ յեւթի՝ հարիւրերորդի չորրորդի քրիստոսի գալստեանն | եւ  
ի հարիւր քառասուն եւ ի չորս թուականին, ի յինն | երբորդումն  
ընտելաինին, յառաջնում ամի թագաւորութեանն եր(կր'որդ Ղեւոնի  
Ինքնակալի Աւգոստոսի

Թարգմանեաց Փիլոն Տերակացի առաջին ձեռնարկութեամբ՝  
զգիրս զայս մասնաւոր Եայրաքաղ ի Սոկրատայ Եկեղեցական Պատ-  
մութենէն. թողեալ 2 գինքն(ախաւսութիւնս) եւ զԹուղթս այլոց եւ  
զ(ճառս յազագս նուազու)թեան քարտի եւ մագաղաթի (եզեղոյ  
յաւտարութեան) .: 3

Այս վերին աստիճանի կարևոր յիշատակարանը  
չկայ Մայր Աթոռիս Զեռագրի մէջ, բայց Զեռագրի  
միւս յիշատակարանը, Սոկրատի պատմութեան վերջը  
և Սիդրեստրոսի վարքի սկզբում դրած, երկու ձեռագ-  
րում էլ նոյն է:

«Յառաջ քան զութուտան ամ ի Թարգմանելոյ Փիլոնի զգիրս-  
զայդ՝ Սոկրատայ զԵկեղեցական պատմութիւն. Թարգմանեալ էր արա-  
սուն Գրիգորի Զորոյփորեցոյ (հրամանաւ) ընդ փառաւորս յիշելոյ  
Ներսէհի վրաց իշխանի փեսային Կամարականաց, զգիրս Պատմութեան  
վարուց Սրբոյն Սիդրեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ. եւ կայր ի  
քարտիդի:

Այժմ պատշաճ համարեցաք առ նմին գրոց գրել. Արու-  
սաղէմի Զեռ. աւել ունի. «Զեռամբ Թողմայ դպրի պատ-  
րաստ լինելով մագաղաթին» .:

Երկու յիշատակարանը միմեանց լրացնելով, կատա-

1. Արշ. Արատ. «յեւթն» որ անկասկած ուղիղն է:
2. Սահակ եպ. «Թող ևս», Արշ. Արատ. «Թողեալ»:  
 • Փակագծերում դրած բառերը և բառամասերը վեր-  
ցրել ենք Արշ. Արատ. երևում է Զեռ. Հնդկաստանից բերած  
 ժամանակ անվնաս է եզել. իսկ յետոյ Երուսաղէմի վանքում  
 անվնամ պահուելով վնասուել է. շատ ցաւալի երևոյթ:

ժԸ.

րեալ տեղեկութիւն են տարիս զըքի՝ թարգմանութիւնսն ժամանակի, թարգմանողի և թարգմանել տուողի մասին: Այս մասին յետոյ: Մենք ասել էինք որ Տէր Շմուկնի գործածած Ձեռագիրը անկորուստ է մնացել, կարծում ենք հաղիւ կարելի լինի կասկածել, որ Հընդ-կաստանից Երուսաղէմ բերած օրինակը նոյն այդ օրինակն է: Այդ Ձեռագրից մի փոքր հատուած կայ սպուած Հ. Զարբանուկեանի (Թարգմանական Մատենագրութեան մէջ, բայց դժբախտաբար մոռացել ենք մեր գիրքը տպելիս համապատասխան հատուածը բաղդասել, քանի որ ընթերցուածոց տարբերութիւնը կարող էր այս Ձեռ. մասին որոշ գուղափար տալ՝:

Երկրորդ օրինակը Մեծ Սոկրատի Մայր Աթոռիս մատենադարանինն է: Կարինեանը շատ համոռօտ է նկարագրել. «Թիւ 1628, Սոկրատայ պատմութիւն եկեղեցական մեծ, մեծադիր բոլորապիւր գրեալ ի իղթի ի վանս Բովհաննու որ ի Կարբի: Պարունակեն ի սին ա. Պատմութիւն վարուց սրբոյն Սեդրեսարոսի Հռովմայ հայրապետին. բ. պատմութիւն Աղուանից ի Սոփսիէ կաղականդացոյ: Ունի զյիշատակարան նորոգութեան»<sup>2</sup>:

Աւելի ընդարձակ էր «Արարատի» մէջ մեր մի յօդուածում սուած նկարագրութիւնը<sup>3</sup>: Դեռ այն ժամանակ ասել ենք, «Սա է իսկապէս Փիլոն Տիրակացու

1. Համեմ. Գ. Զարբ. Մատ. Հայկ. Թարգմ. էջ. 697 և Սոկրատ Բ. գլ. 38 էջ 186—187.

2. Կարինեան՝ Եռուցակ Ձեռ. Մայր Աթոռոյ Թիֆլիզ 1869. էջ 182.

3. Մովսէս Խոր. մէկ նոր Աղբիւր. Արար. 1893 թ. էջ 65.

Քարգմանածք. մի թարգմանութիւն որ լի է յունա-  
բանութիւններով, շատ մօտ է յունական բնագրին և  
հակառակ է. Զարբանալեանի վկայութեան՝ շատ հե-  
ռու «ընտիր լեզու» ունենալուց: Աւելի մանրամասն  
քննութիւնը և ծանօթութիւնը որով միանգամայն  
պարզուում են ընդարձակ և համառօտ Սոկրատենրի մէջ  
եղած յարաբերութիւնը, հաստատում են մեր յայտ-  
նած կարծիքը, թէ և յօդուածի մէջ կան արդէն հեր-  
քելի կէտեր:

Մեծադիր<sup>2</sup> (folio) բամբակեայ ընտիր յղած և մո-  
մած թղթի վրայ, խոշոր պարզ և միատեսակ գրչու-  
թեամբ գրած գեղեցիկ ձեռագրերը պարունակում է.

ա. Սոկրատայ Սքալաստիկոսի Պատմութիւն Եկե-  
ղեցական:

բ. Վարք Ս. Սիդբեստրոսի Հռովմայ եպիսկոպոսին:

1. Լ. Զարբ. յ. տ. էջ 693—698:

2. Նիւթ. հաստ բամբակեայ յղած թուղթ.

Վազմ՝ կաշեայ, պաճուճեալ, ունի ախ. եզերքը կար-  
միր ներկած, կազմուած է երկրորդ անգամ, ամուր և ճա-  
շակով:

Հանգամանք. սկզբից, միջից և վերջից թերթեր են  
պակաս. գիրքը ունի լայն լուսանցք՝ թերթերից շտտերի լու-  
սանցքները դանակով կորել են, կամուղղակի պատուել ըստ  
երևոյթին առօրեայ գործածութեան համար, Կրկին կազմողը  
կարածի տեղ շեռ. թղթի նման թուղթ է կպցրել, ծածկելով  
տառերի մի մասը. գործածելիս սախպուած էի պոկել այդ  
աւելցրածը:

Գտտարկ. երկու թերթ սկզբից և թղ. 187.

Մեծ ու թիւն. 48×32,5 սանտ. թ ու ղ թ.ք 377.

Գր ու թիւն. երկսիւն. 40×10,5 ս. Տողեր. 32.

Գիր. խոշոր և պարզ գրած ընտիր միջ. երկաթագիր. տառերի  
մէջ դեռ շատ գլխագրեր խառն են սովորական բոլորագրերի հետ:

և գ. Մովս. Կաղ. Պատմութիւն Աղբւանից:

Սոկրատի պատմութիւնը և Սիդրեստրոսի վարքը՝ գրուած են միապաղաղ, անընդհատ, առանց բաժանմունքների և գլխակարգութեանց: Առաջինը որ բազկացած է եւթ գրքից, ունի Ա. Բ. Գ. որոշող տառերը. իւրաքանչիւր նոր սկսող գրքի առաջի տողը գրած է խոշոր գլխագրերով: Տեղ տեղ պարբերութիւնները կարծես առանձին կերպով որոշուած են կամ խոշոր գլխագրերով, կամ աստղանշաններով: Յունարէն սկզբնական բնագիրը գլխակարգութիւն չէ ունեցել, յետոյ են մտցրել ինչպէս մեր մի քանի համառօտ օրինակների մէջ: Գործածութեան դիւրութեան համար տրպազրութեան մէջ մտցրինք Յայնի գլխակարգութիւնը, առանց նրա խորագրերի, բայց միանգամ շեղուել ենք (Ս. գլ. 6 էջ 407) բնագրից և առաջնորդուելով մեր Առ. աստղանշանով՝ գլուխը ըստ այնմ ենք բաժանել, որովհետև մտքի կապն այդ էր պահանջում:

Առաջինն ունի թերութիւններ. պակուած կորած են երկու թերթ սկզբից (տես տպագ. էջ 1—10), մի թերթ երես 300 և 301 մէջ (տես տպագ. 491—495), մի ամբողջ թուղթ՝ էջ 371—372 մաքուր է թողնուած. հաւանական է սկզբնական օրինակի մէջ այդ

Լ ու ս անցքազարդ. տեղ տեղ սև թանաքով պաճուածանքներ են նկարած, անճաշակ և կիսակատար թողած:

Ս ա ա յ ո ղ. Ց է բ Լ ա մ ա ղ ա ս պ ե պ ի ս կ ո պ ո ս ա ու ա ջ ն ո ղ Թ ո վ հ ա ն ն ու վ ա ն ու լ զ որ ի Կ ա Ր Ր ի:

Ժ ա մ ա ն ա կ. Չ Լ Ը -ից յետոյ (1289):

Տ ե ղ ի. Յ ո վ հ ա ն ն ու վ ա ն ջ ու մ ի Կ ա Ր Ր ի:

Յ ի շ ա ա տ կ ա գ Ր Օ Լ Թ ի ւ ն. բ ա զ մ ա թ ի ւ. Վ ե ղ ղ ու մ կ ոյ ն որ ո գ ո ղ ի ը ն դ ա Ր ձ ա կ յ ի շ ա ա տ կ ա Ր ա ն ը Ռ Ճ Ի Ե (1676) թ ու ի ն գ Ր ա ծ:

Թերթը չէ եղել և արտագրողը մաքուր է՝ թողել թերին լրացնելու յոյսով՝ այդպէս մնաց և է առանց լրացնելու (տես ապագ. էջ 615—619.) մի երթ կիսով չափ կտրուած է, էջ 387—388 այնպէս որ իւրաքանչիւր երեսի մի մի սիւնեակի կէս մասը չկար (տես ապագ. էջ 648—650): Երուսաղէմից խնդրել էինք թերի մասերը չստացանք՝ յոյն բնագրից թարգմանելով լրացրել ենք, և առանձին փակագծերով զատել ենք մեր թարգմանած մասը. բայց բարեբախտաբար էջ 1—3 կարելի եղաւ լրացնել Երուսաղէմի Ձեռագրից Արշալոյս Արարատեանի մէջ արտատպած հատուածներով:

Ձեռագիրը կրկին կազմուել և նորոգուել է 1676 թուին<sup>1</sup>. Կարբեցի Յովհաննէս վարդապետի վանահայրութեան ժամանակ և «Հոգաբարձութեամբ և օգնու-

1. Յիշատակարան նորոգողի. թղ. 377<sup>ա</sup>. Անորհօք և մարդասիրութեամբ ամենակալին Աստուծոյ և Սուրբ Հոգւոյն եղև նորոգումն գրոցս որ կոչի Սոկրատ և Աղուանից պատմագիր. ի թղին ՌՃ և ԻԵ. յերկրիս Արարատու ի գաւառս Պարբու ի գերահռչակ. հրաշափառ և աստուածաբնակ սուրբ մենաստան Յովհաննու Վանից. ընդ հովանեաւ սուրբ Պարպետին և Վաթուղիկէին և այլ միայեղէն սրբոցն. Ի բըռնակալութեան Պարսից Շահ Սուլէյմանին և յիշխանութեան տանս Արարատեան Սաֆիղուլի խանին երկրորդի, ի կաթուղի-խոսութիւն Ս. Էջմիածնի Յեանն Յակոբայ և առաջնորդութեան սուրբ մենաստանիս Յովհաննէս վարդապետի Պարբեցւոյ, Հոգաբարձութեամբ և օգնութեամբ նորին եղև նորոգեալ (զ) գիրքս և աւարտեցաւ ի գրունս սուրբ Պարպետիս: Որք օգտիք ի սմանէ յիշեցէք յաղօթս ձեր զառաջնորդ Յովհաննէս բարունապետն և զաթոռակալն զԳրիգոր վարդապետն և զԽալիփայ Ջաքարիայն աշխատող հնացեալ գրոցս և զիս անարժան Աթանաս գրչս»:

Թեամբ նորին», Աթանաս գրչի ձեռքով: Ահա այդ քայքայուած լինելն է պատճառ որ չէ պահուած Ձեռագրի վերջում եզոզ սկզբնական յիշատակարանը. կորուստը աւելի զգալի է որովհետեւ Արուստղէմի Ձեռագրի վերջն էլ չկայ. դրա փոխարէն մէջը բաւական թուով փոքր յիշատակարաններ կան, որոնցից երկուսը իբրեւ աւելի կարեւոր կ'յիշատակենք.

ա. Թղ. 230<sup>բ</sup>. Սոկրատի պատմութեան վերջում-

«Այս պատմութիւն իմաստասիրական ոչ գաղղ ի սուրբ մենաստանիս ի վանօ Յովհաննու, ես Տէր Համազասպ բազում փափագանաւք ի խնդիր էի զի յետ իմ ճեպոցէ ինձ ընծայ ընդ մեծամեծս ի սուրբս այս Արսէն կաթուղիկէի....»:

բ. Թղ. 306. Աղուանից պատմութեան մէջ լուսանցքում գրած է.

«Աւաղ մեծի աշետիս և անմիթար սոյս որ եհաստ ասնս Վրայ և քրիստոնէից. զի սպանու թագաւորն Ռիմէարէ յազգէն Նեոզայց, սչինչ ժահու պարտական, ի սահմի ամոյ և էր թիւն Չլլ: Եւ ահա ի մեծի վտանգի կանք: Տէր փրկեա զմեզ»:

Այդ վանքի մէջ վանահայրութիւնը աւել է մինչև Արմէն և Ղուկաս կաթուղիկոսների ժամանակը անցեալ դարու վերջերում: Այնուհետեւ, անխնամ ճեարով վանքը սկսել է քայքայուել. հաւանական է այդ ժամանակները Ձեռագիրը բերուած լինի Ս. Էջմիածին<sup>1</sup>:

Ձեռագիր գրել սուտղ Համազասպ եպիսկոպոսի

1. Երկրորդ յիշատակարան կոչ գրած ՅճԺԲ (1733) գործեալ Յոհաննավանքում Յովհաննէս փարգապետի վանահայրութեան ժամանակ. իսկ երրորդ յիշատ. անթուական գրած է Էջմիածնում. «Յիշատակ է գիրքս այս սուրբ Էջմիածնայ»:

ժամին Յով. եպիսկոպոս Շահխաթունեանը մի քանի կարևոր տեղեկութիւն է տալիս: Սա թուում է Յոհաննուվանքի առաջնորդներին օգուտ քաղելով Զաքարիա Սարկաւազի պատմութիւնից <sup>1</sup>:

«Ժա» Համազասպ ի թուին 21Ը, յամի 1279. յազգէ Մամիկոնէից՝ այր փառահեղ և ահարկու՝ որ ի ժամանակի առաջնորդութեան իւրոյ փարթամացոյց զմենաստանն. և ստացաւ զբազում գրեանս և յաւել ի գրանոց մենաստանիս, յորոց արդէն քանիք գտանին ասա ի գրանոց աթոռոյս Էջմիածնի. որպիսի են մի հաս ճառընտիր մեծ գրութեամբ (թ. 916, 3 և 919, 6) և Պատմութիւնն Աղուանից հանդերձ պատմութեամբն Սոկրատայ յունի, և ընդարձակ պատմութեամբն Սեղբեսարոսի հայրապետին՝ թարգմանեալ ի Գրիգորէ Զորափորեցոյ 2.:

Նոյն վանքի հին արձանագրութեանց մէջ ևս պահուած է Համազասպ եպոս. անունը <sup>3</sup>, նա իւր առաջնորդութեան ժամանակ 1279, 1283 և 1300 թուերին պայմանաւորուել է վանքի զանազան նուիրատուներին յիշատակել յատուկ որոշեալ պատարագներում:

Համազասպը յիշուում է նաև Օշականի եկեղեցու մի քանի արձանագրութեանց մէջ. «ի թուականին 21Է (1288) յառաջնորդութեան Տէր Համազասպայ . . . <sup>4</sup>» մի ուրիշ անգամ նա յիշուում է մինչև անգամ իբրև հայրապետ. «ի թուին 21ԽԻ (1295) ի թագաւորու-

1. Զաքարիայ Սարկաւազի Պատմութիւն Վաղարշապատ 1870 հատ. Գ. էջ 30.

2. Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի Յովհ. եպիսկոպոս Շահխաթունեանց Վաղարշապատ. 1842. Հատ. 2. էջ 112. Ալիշան Արար. էջ 170 ծն. 2. 3. էջ 171. ծն. 1. 4. էջ 190.

3. Տես նոյն տեղ. էջ 102. 103. 104.

4. Յ. տ. էջ 79.

ԻՒ.

Թեան աստուածասէր արքայ Քեազաթու դանին՝ և ի հայրապետութեանն Տէր Համազասպայ . . .<sup>1</sup> Այս արձանագրութիւնները յայտնի ապացոյց են. ոչ Համազասպը ոչ միայն սոսկ վանահայր էր, այլ և շնչակայքի առաջնորդ, և այդ բարձր դիրքը գործ էր դրել վանքը պայծառացնելու և դրականութեանն ծաղկման օժանդակ լինելու:

Երուսաղէմի և Էջմիածնի ձեռագրերի մասին այսքան խօսելուց յետոյ, կցանկայինք մի եզրակացութիւն ևս կցել: Արդեօք Երուսաղէմի ձեռագրերը Արարատեան գաշտից չէ տարուել Հնդկաստան Շահաբասի մեծ գաղթականութեան ժամանակ, և արդեօք նա համարեալ մեր Ձեռագրի ժամանակակից լինելով միմեանցից արտագրուած չեն. Երուսաղէմի վարդապետները հեշտութեամբ կարող են տպադրած օրինակը բողոքատելով իրանց Ձեռագրի հետ լուծել այս հարցը: Ընդունելով այդ ենթադրութիւնը իբրև հիմք, միջոց կունենանք այսպիսի մի կարծիք յայտնել. Շիրակում թարգմանուած Սոկրատը իւր սկզբնական, ընդարձակ ձևով իբրև դժուար հասկանալի, առանձին տարածումն չէ ստացել, նո միայն քիչ օրինակներով արտագրուել և ֆետցել է Արարատեան գաշտում և գուցէ հէնց մեր ձեռքը հասած օրինակներն են տեսել Մխիթար Այրիվանեցին 14 դարի սկզբում և Մխիթար Անեցին 13 դարում: Իսկ համառօտ օրինակը լեզուի դիւրութեան և ծաւալի փոքրութեան պատճառաւ տարածուել է Հայաստանի ամեն կողմերը և համեմատաբար շատերին է յայտնի:

## Զ.

Համառօտ կամ Փոքր Սոկրատից անհամեմատ ա-  
 • ելի շատ թուով ձեռագրեր ունենք:

ա. Էջմփածնի Մատենադարանում պահուում են  
 վեց օրինակ. Ա. թիւ 1670 (կար. թիւ 1640), Բ.  
 թիւ 1661 (կար. թիւ 1629), Գ. թիւ 264 (Գէորգ  
 կաթողիկոսի՝ շապուած ցուցակի թուահամարն է), Դ.  
 թիւ 76 (Գէորգ կաթ. ցուց.) Ա<sup>1</sup>. թիւ 620 (Գ. 4 ց.)  
 և Ա<sup>2</sup>. թիւ 621 (Գ. 4. ց.): Ա—Դ օրինակները գրած  
 են ինչպէս Մեծ օրինակը միապաղաղ, առանց գուխ-  
 ների բաժանման, իսկ Ա<sup>1</sup> և Ա<sup>2</sup> ունեն պիտակարգու-  
 թիւն և միմեանցից են արտագրուած: Գ և Դ Ձեռա-  
 գրերը ունեն թերի մասեր, մանաւանդ Դ. իսկ միւս-  
 ները ոչ:

բ. Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքում կան երկու  
 օրինակ թիւ 999 և 1,711:

գ. Չորս օրինակ Վենետիկ ս. Ղազարի վանքում Ա.  
 թիւ 781, Բ. թիւ 738, Գ. թիւ 207. և Դ. թիւ  
 693:

դ. Մի օրինակ պ. Կ. Եզեանի մասնաւոր սեփհա-  
 կանութիւնն է Պետերբուրգում:

Յւրօպական յայտնի մատենագարաններում, ուր  
 կան հայերէն ձեռագրեր, Սոկրատի ձեռագիր չկայ.  
 մասնաւոր անձանց գրատներում կարող են նոր օրի-  
 նակներ երևան գալ, բայց նոր բան հազիւ թէ կարո-  
 ղանանք նրանցից իմանալ: Ես բարեյաջող պայմաննե-  
 րում հնարաւորութիւն եմ ունեցել, բացի Վենետիկի  
 օրինակներից, միւսների հետ և անձամբ ծանօթանալ

կամ գոնէ ատենել, իսկ Վենետիկի ձեռ. մասին համառօտ տեղեկութիւն ունեմ:

1. Տղազրութեան համար մեր ունեցած վեց ձեռագրերից ընտրել եմ ամենահին և գեղեցիկ ձեռագիրը՝ Ա. թիւ 1670<sup>1</sup>. Նա գրուած է բամբակի լաւ հաստ և յղկած թղթի վրայ, մեծադիր է (gross-quart 38×28,5 սանտ.) բացի առաջի երեսից, որը զարդարուած է խորանով և թռչնազրերով, ամբողջ երկսիւն գրութեամբ է (29×9,5 սանտ.) վարժ և ճաշակով գրող գրչի գործ, բոլոր գրով: Վերնագրերը կարմիր թանաքով են գրուած, ունի երկու խորան, մի քանի լուսանցքազարդ և քիչ թուով թռչնազրեր: Ունի պատիւներով սղումներ և ամենասովորական նշանազրեր, կանոնաւոր ուղղազրութիւն, եթէ չհաշուենք գ-ից առաջ փոխանակ գ-ի ս-ի գործածելը օր. սգեստ, սգաստ, սգաստու-

- 1. Ձեռ. ժողովածու է հետևեալ բովանդակութեամբ.
  - ա. Ցեռոն Միքայելի Համառօտ ժամանակաց գրոց:
  - բ. Լուսաւոր վարդապետի Վարդանայ, բան պատմագրութեան:
  - գ. Աշխարհագրութիւն, առանց վերնագրի:
  - դ. Դաշանց թղթից հատուած և Պետրոս Գեաղարձի պատմութիւնը:
  - ե. Ցեսիլ Յոհաննէս վարդապետի Պոզեոն կօչեցելը:
  - զ. Պատմութիւն վասն Թէոդոսի թէ որպէս թագաւորեաց:
  - է. Յայտնութիւն բանից ի նուաստէ Վարդանայ ի Յոհան Ունեցին:
  - ը. Ցաւն կատարման Սիւնեաց Ստեփաննոս եպիսկոպոսի:
  - թ. Մի քանի փոքրիկ պատմական հատուածներ:
  - ժ. Պատմութիւն Սոկրատայ:

Թիւն և չն. օ և աւ անխտիր գործ է դնում, մինչդեռ Մեծ Սոկրատը օ չընտէ, և այդ պատճառաւ Մեծում մենք անփոփոխ կերպով աւ պահեցինք, իսկ Փոքրում գերադասեցինք օ: Գրչի անունը Ստեփաննոս է, ստացողինը Սրապիոն վարդապետ: Թէ ինչքան խնամքով է գրիչը իւր գործը կատարել, այդ երևում է նրանից որ եթէ գրելու ժամանակ երկու երեք տառի սխալ է արել՝ զգուշութեամբ քերել է այդ սխալը, իսկ եթէ ամբողջ բառ կամ հատուածիկ է աւելորդ տեղից կրկնել, կամ սխալ գրել, որ քերելով թուղթը կփնասուէր, նա աւելորդ մասի վրայ կետէր է դնում, որով թէ ընթերցողն է սխալը ուղղում և թէ ձեռագիրը չէ տգեղանում: Ձեռագիրը գրուած է հայոց ՌԽԳ (1594) թուին Յամիթ քաղաքում «ի դուռն սուրբ Արակոսի» (կարպետի), ինչպէս ցոյց են տալիս բազմաթիւ յիշատակարաններ, որոնցից հետաքրքիրներն են:

ա. թղ. 2<sup>ր</sup>. «Ջգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի Տէր, զգործս ձեռաց մերոց օգնեայ և առաջնորդեայ մեզ: Գրեցաւ ի Յամիթ քաղաքի ի դուռն սուրբ Արակոսի թվ. ՌԽԳ»:

բ. թղ. 180<sup>ա</sup>. «Տէր Աստուած բարեխօսութեամբ արբուհոյ Աստուածածնի.

|                          |                          |
|--------------------------|--------------------------|
| Ողորմեա արարորդի սորին   | պարին                    |
| Տէր Արապիոն վարդապետին   | Խոտավէրտի սարկաւազին.    |
| Քաջ և արի է ի բանին:     | Եւ Բաղդասար սարկաւա-     |
| Եւ ծնողացն իւր մարմնային | զին.                     |
| Խոճայ Գանէլին և մահ-     | Ջձեղ կաղաչեմ տեսողք      |
| տեսի Աթլանին,            | սորին                    |
| Եւ եղբարց իւր ամէնին     | Մի մեղադրէք սխալ գրչին»: |
| ՄԻ կտի Յակոբին և Գաս-    |                          |

ԻԸ.

՝գ. թղ. 261<sup>բ</sup>. «Թէ ուզես զի ցրտանաս, զթուղթն կտկէ որ տաքընաս»:

Եւ քըւերցըն Եղիսարէթին ծոյլ և պղերգ է ի բարին և Մարիամին. Հմուտ չէի այս արուեստին.

Եւ Ստեփաննոս զըջի ծաղր և կատակ զիս կառսորին: նէին:

դ. թղ. 272<sup>ա</sup>. «Թ՛վին Ռիտո վազիրն յՈւռհայոյ եկաւ Յամիթ, Յուլուար իԱ Մարտ իՌ խապար եկաւ Յամիթ եագիչուն ելաւ յՈւռհայոյ: Մարտ իԶ ելաւ վազիրն Յամթայ ի կոստանդնուպոլսէ, մինչև Յամիթ գեաւղ և քաղաք շէն չեթող զամէն աւերեց, որ ընդ գրով արկանել չի գայր»:

ե. թղ. 294<sup>բ</sup>. «Թ՛վին Ռիտո Ապրիլի իԱ զիտր մի հայ եղև Յամիթ Ա շահի ու չէր դտուի. հայ ու տաճիկ գացին ի վերայ դատաւորին մահու կուսպասէն, չի կարային»:

զ. թղ. 300<sup>բ</sup>. «Վայ ժամանակիս նեղութենիս. Թ՛վին Ռիտո Մայիս Ռ չարեկ մի ցորեն ի շահի. չարեկ մի կլկլ ԼԲ շահի. չարեկ մի կորեկ իՌ շահի»:

է. թղ. 365<sup>բ</sup>. «Սոկրատ է, անմեղաբիր լերուք զըջիս, զի անիմաստ էր և աւրինակն հնացեալ և եղծեալ էր: Թ՛վին Ռիտո երէկ Ազարիա կաթողիկոսն ի ճողայոյ ի Նոյեմբերի Ռ ելան Յամթայ գնացին ի Հալապ»:

Ժամանակակից կեանքի տխուր երևոյթները, երբեմն նոյն իսկ կատակներ, աւերուղ չէ համարել զրիչը օրագրի պէս կցել Առաքրի լուսանցքներին, մեծաւ մասամբ նօտրգրով: Առաքրի վերջում բաց թելթել է թողել երկար յիշատակարանի համար, անյայտ պատճառով միայն սկիզբն է կարողացել գրել:

2. Բ թիւ 1661<sup>1</sup>. Չեռագրի դիրքը հաւասար է նախընթացին (31×22,5 սանտ. թուղթք 518) գրած մանրագիր նօտրգրով, բարակ և փայլուն թղթի վրայ. գրութիւնը երկսիւն է: (24×8 սանտ.) կարմիր գծերի մէջ ամփոփուած, ունի աւելի շատ թուով սղուճներ և նշանագրեր: Իւրաքանչիւր նոր սկսող պատմութեան առաջ նկարած է կամ խորան կամ կիսախորան, ունի և լուսանցքազարդեր, իսկ վերնագրեր կարմիր գոյնով են որոշուած: Գրել են Գրիգոր քարտուղար և Թումա գրիչները Մինաս րարունու համար, Հայոց Ռճիլ (1678) թուին «ի գիւղն Ալիփուղար» ինչպէս յայտնում են բազմաթիւ մանր յիշատակարանները: Կազմը կաշուց է, գեղեցիկ պաճուճեալ, եզերքը կարմիր և ունի ախ. անխնամ պահելուց քայքայուել, թերթերից շատերը տեղահան են: Թէև յիշատակարաններ կան, բայց համառօտ են և միմեանց կրկնութիւն, կարևորներն են.

ա. թղ. 365<sup>ա</sup>. «Գրեցաւ թփին Ռճիլ ի գիւղն Ալիփուղար ձեռամբ Գրիգորի քարտուղարի»:

բ. թղ. 442<sup>ա</sup>. «Այլ և զստացող տառիս զՄինաս րարունին ընդ երկայն աւուրք ի խոր խաղաղութեան պահեսցէ, և զփանաքիմաստ Թումա գրիչս»:

1. Բ ո վ ա ն գ ա կ ու թ իւ ն. ա. Պատմութիւն Հայոց Մովսէս Խորենացւոյ. բ. Պատմ. Ստեփ. Եպիսկոպոսի Տարն. գ. Պատմ. Ըստակիսի Լաստիվերցւոյ. դ. Եւսերիոսի Պատմ. Եկեղեցական. ե. Պատմ. Ագաթանգեղոսի ունի և դաշտնց թուղթ. զ. Պատմ. Ներսէսի Մեսրոպ երեց. է. Պատմ. Տարօնոյ. Զենոբոյ. ը. Բուզանդական Պատմ. թ. Պատմ. Եղիշէի. ժ. Պատմ. Ստեփ. Օրբելեանի. ժա. Ցես նախընթաց թիւ 1670 ա—ժ, բայց աւել ունի. ժբ. Պատմ. Պիրապոս Գանձակեցւոյ:

1.

3. Գ թիւ 264<sup>1</sup>, հասարակ թղթից, նօտրպրով անվարժ և տգէտ գրչի ձեռքով մօտաւորապէս ժՆ դադարում գրած ձեռագիր է. փոքր զիւքով (20×15 սանտ. թուղթ 200). կազմը նորոգած է, բայց մինչև նորոգուելը սկզբից թէ վերջից թերթեր են կուրել իսկ միջից շատերը պատռտուել. տգէտ կազմողը թերթերը երբեմն յետ ու առաջ է դասաւորել: Մեր ունեցած ամենավատ ձեռագիրն է շատ թերուժիւններով: Յիշատակարան չունի:

4. Գ թիւ 76<sup>2</sup>. Նսխընթացի պէս ունի մեծ թերուժիւններ. գրած է անկանոն, փոքր զիւքով (19,3×14 սանտ. 426 թուղթ), երկսին գրուժեամբ (14,3×4,6 թ.) որ ամփոփած է կարմիր դծերի մէջ. գիրը նօտրաչիր է, կարմիր գրած սկզբնատուերով: Գրուած է մօտ ժՆ դարում Արիստակէս գրչի ձեռքով ի վայելս Սիմէօն կրօնաւորի, Հայոց ՌՄԺՆ թուին: Կրկին անգամ ստացել է Ժարեցի Գրիգորի որպէ տիրացու Պետրոսը: Պահուած է անխնամ, մի քանի

1. Բ ո վ ա ն դ ա կ ու թ իւ ն. ա. Սոկրատ. սկզբից 11 թերթ կորած է. բ. Պատմ. Ժողովոց. գ. Ըննդէմ այնոցիկ որ սպականեն զսուրբ խորհուրդն ի ձեռն խմորոյ և ջրոյ. դ. Յոհ. Մանգակ. յաղ. պահոց քառասնորոց. ե. Շապուհ Բագր. պատմ. փոքր հատուած. զ. Հարցմունք երկուց փրիտօփայից վասն վեցօրեա արարչութեան և վասն պահոց. է. Տասնինն թուղթ յաղագս այլ և այլ խնդրոց հաւատոյ. ը. Պատմ. ազգին նետողաց. թ. Պատմ. ս. Խաչին Հացունեաց. ժ. Եղիշէի երիցու յաղ. թարուրական լերինն. ժա. վասն է նշանացն. ժբ. Պատմ. Լանկթամուրի Թոմ. Մեծոփ:

2. Բ ո վ ա ն դ. ա. Ներսէսի եպիսկոպոսի Տարսնի խորհրդածութիւն ի սուրբ Երորդութեան. բ. Պատմութիւն Սոկրատայ:

Թերթեր մրտած է, կարտած թերթեր էլ կան:

5. Ա՛ թիւ 620, Ղուկաս վարդապետի ձեռքով 1746 թուին կոստանդնուպոլսում գրած ձեռագիր է նօտր գրով, բայց կարելի է և շլագիր ասել: Գիրքը փոքր է (18×12 սանտ. թուղթք 103.) նիւթը հասարակ թուղթ, մագաղաթեայ կազմով, հետաքրքիր է նրանով որ ամբողջը բաժանուած է ճՅԲ պուլիսների, իսկ գլուխների ցանկը գրած է գրքի վերջում: Ղուկաս վարդապետը օգտուելով կիրակոս Գանձակեցուց գրել է հետեւեալ յիշատակարանը:

Ի՞ջ 187. «Շարագրեալ Սոկրատայ մեծի իմաստնոյ Ներսէհի (կոստանդնուպոլսեցւոյ ??) ի խնդրոյ Տեառն կամսարական Վատրկի. զոր սկսեալ ի սրբոյն Սեղբետորոսէ, և ի մեծին կոստանդիանոսէ, ճառէ զթագաւորաց և ին. . . . Յարմէ օրինակեցեալ և դադափարեցեալ եղև սայ ի կոստանդինուպոլիս. յամի Տեառն ՌԶԽԶ, և Հայոց ՌԺՂԻ, Մարտի ամնոյ ի, նուաստ ումեմնէ շնչին և մեղապարտ ծառայէ, զլխասեալ, տնատեալ և ցանկն շարս գրեալ հանգոյն այլոց պատմագրաց առ ի գիւրութիւն ընթերցողաց և զրոսնողաց, որ զցանկ սորին ի վերջ գրոցս տեսցես»: Այս յիշատակարանը ամբողջութեամբ կայ նաև Ա՛ ձեռագրում:

6. Հետեւեալ Ա՛ Ձեռագիրն սրանից է արտագրուած մօտաւորապէս նոյն թուականին, պահուած է աւելի խնամքով և մաքուր քան առաջինը, մեծութեամբ (21,5×16,5 սանտմ. թուղթք 200.) գրութեան ձևով նման է Ա՛-ին:

Սոկրատայ պատմութիւնից յետոյ գրած է Յակոբ վարդապետ Ղլիմեցու Մեկնութիւն Տոմարի:

7. Նոր.<sup>1</sup> Չեռագիր կ. Եզեանի, այս Չեռագիրը տեսայ անձամբ կայսեր թագադրութեան հանգիսին Պետերբուրգում հանդիպելով իսկ նրանից օգտուել մ' Նորայր Բիւզանդի արտագրած և ծանօթութիւններով հարստացրած օրինակից: Չեռագրիս մանրամասն նկարագրութիւնը տուել է Ստ. Մալխասեանը Ասողկի հրատարակութեան յառաջաբանում<sup>2</sup>, աւելի համառօտ նկարագրել էր Պ. Նորայրը: Նկարագրութիւնը ցոյց է տալիս որ նա շատ նման է մեր Բ Չեռագրին:

Գրած է բամբակեայ ընտիր, հաստ և ողորկ թղթի վրայ, մեծագիր (27,5×20 սանտմ.) երկսիւն գրութեամբ (20,5×6,3 սանտմ.) մանր նօտրգրով, ունի շատ հասարակ գունաւոր կիսախորաններ և լուսանցքազարդեր նոր սկսող գրքերի սկզբներում, վերնագրերը կարմիր ներկով, գրութեան ժամանակը ՌժԺԵ 1680 թիւն է Տիգրանակերտում գրած Արահամ զրչի ձեռքով: Բովանդակում է 18 պատմագրաց գործեր:

Այս եօթ ձեռագրից օգտուել եմ, մանրամասն բաղդատել բնագրերը և ընթերցուածոց տարբերութիւնները ծանօթութեանց մէջ նշանակել:

8. Երուսաղէմի Չեռ. թիւ 990, գրուած է անյարթ թղթի վրայ ի ձեռն Բարսեղի թվին ՌԺԱ (1602 թ.) ի վայելումն Մաղաքիա վարդապետին: Թողթք 141. էջք 20. մեծութիւն 15,5×20 սանտ. գրութիւն երկսիւն 15×9 սանտ. գիր, նօտր

1. Մեր տպագրութեան մէջ Եզեանի Չեռագիրը նշանակել են Ն. տառով (Նորայր):

2. Ստեփ. Տարնեցւոյ Ասողկան Պատմութիւն Պետերբ. 1885 էջ ԼԵ-ԼԹ.

ուչ այնքան մաքուր և ուղղագիր՝ կազմ՝ հին տախտակեայ, կաշէպատ»:

9. Երուս. Ձեռ. թիւ 1117 «Գրուած է տոհմունս մաքուր և յղկեալ թուղթի վերայ ժամանակ Ռոմիսի (1693 թ.) Խոտրջուր գիւղում, թուղթք 190, էջ 380. մեծութիւն 19,5×13,5 սանտ. գրութիւն միասին 12,5×8 սանտ. գիրնօտր, մաքուր. կազմ՝ տախտակեայ, կաշէպատ. Տէր՝ Ղազար վարդապետ որ իւր հոգևոր որդւոյն Մարգարէ վարդապետին կտայ»:

«Այս երկու Ձեռագիրք ալ Սեղբեստրոսի պատմութեամբ կըսկսեն և առանց զլիստութեան կշարունակեն, միայն լուսանցքներում հատուածաթիւք նշանակուած են, ըստ այսմ առաջինը՝ 172 և երկրորդը 132 հատուածներէ կրողկանան: Չուզեցի հատուածութեոց տարբերութեան պատճառը փնտռել: Հետաքրքիր է վերջին նկատողութիւնը. այդտեղից պարզ երևում է որ սկիզբը փորձ է եղել աճողջ գիրքը առանձին հատուածների բաժանել և արդէն յետոյ են զլիակարգաթիւ մտցրել: Մեր Ա<sup>1</sup> և Ա<sup>2</sup> Ձեռագիրքը ունին ուղիղ 172 գլուխ. ասել է այնքան ինչքան Եր. 199 թիւ Ձեռագիրք հատուածանշաններ ունի: Ստորև կաշխատենք այդ երեւոյթի հաւանական բացատրութիւնը տալ:

10—12. Վենեակի վանքի գրատան կան չորս օրինակ Սոկրատ, ինչպէս Հ. Բ. Սարգսեանն է յիշում. իսկ մի ուրիշ անդեկութիւնից իմանում ենք, որ հինգ պիտի լինին օրինակները<sup>2</sup>: Այդ չորս ձեռագրի մասին

1. նկարագրութիւնը արագգրել ենք Սահակ սրբազանի առ մեզ ուղղած նամակից:

2. Փարիզի մատենադարանում կայ Վենեակի ձեռագրերի այրբենական կարգով կազմած մի ցուցակ 1888 թուից, այդ ցուցակում հինգ օրինակ Սոկրատ են յիշուում:

իմ ունեցած տեղեկութիւնը Բ. Սարգսեանի մի համառօտ ծանօթութիւնն է Սեղբեսարօսի վարքի հրատարակութեան մէջ: Գրութեանս ներկայացուցիչ չորս գրչագիր ունինք մեր Ձեռագրատան մէջ, այն է Ա. թիւ 781, Բ. թիւ 738, Գ. թիւ 767, և Դ. թիւ 693: Առաջին օրինակը գրուած է ի թուին ՌՀԳ (1623) ի կոստանդնուպօլիս, ձեռամբ Մաղաքիայի Գ. օրինակը գրուած է դարձեալ ի կոստանդնուպօլիս յամի Տեառն 1732, անանուն գրչէ: Դ. և հնագոյն օրինակն է՝ անթուական. բայց ժԳ. դարուն գրուած կերևի: Սորա գրչութիւնն որչափ որ գեղեցիկ բոլորգիր է, սակայն ուղղագրութեան մասին յոյժ սխալագիր: Բ. օրինակը բոլորովին նոր է, այսինքն է յամի Տեառն 1838, Դ. օրինակի վրայէն զաղափարուած է Մխալցիս ի վանատան մեր.՝:

Բոլոր տասներեք ձեռագրերը ըստ ժամանակի տեղի և տեսակի այսպէս են բաժանուում.

Վեն. Դ. ամենահին օրինակն է. տեղ և գրիչ՝ անյայտ. ենթադրական ժամանակ՝ ժԳ. դար.

Ա. տեղի՝ Յամիթ քաղաքում, գրիչ՝ Ստեփաննոս, թիւ՝ ՌԽԳ—1594.

Եր. Ա. գրիչ՝ Բարսեղ, թիւ՝ ՌԺԱ—1602.

Վեն. Ա. տեղի՝ Կ. Պօլիս, գրիչ՝ Մաղաքիս, թիւ ՌՀԳ—1624.

Սոր. տեղի՝ Տիգրանակերտ, գրիչ՝ Աբրահամ, թիւ՝ ՌՃԺԵ—1666.

Բ. ի գիւղն Արիփուղար, (?) գրիչ՝ Գրիգոր քարտուղար և Թումա, թիւ՝ ՌՃԻԷ—1678.

Եր. Բ. Խոտարջուր գիւղ, գրիչ՝ անյայտ՝ Թիւ՝  
ՌժԼԽԲ—1693.

Վեն. Գ. տեղի՝ Կ. Պօլիս, գրիչ՝ անյայտ Թիւ 1732.

Ա՛ տեղի՝ անյայտ, գրիչ՝ Ղուկաս վարդապետ,  
Թիւ 1786.

Ա՛՛ գրիչ, տեղի և ժամանակ՝ անյայտ մօտ ԺԼ դար.

Գ. տեղի՝ Կ. Պօլիս, գրիչ՝ Արիստակէս ԺԼ դար.

Գ. տեղի անյայտ, գրիչ՝ անյայտ, ժաման. ԺԼ դար

Վեն. Բ. Ախալցխա, գրիչ՝ անյայտ ժամ. 1838 Թիւ.

Ամենահին ձեռագիրը ԹԳ-րդ դարուցն է, հաւա-  
նական ենթադրութեամբ, իսկ Թուականով հաստատը  
մեր Ա. Չեռ. է. ԺՋ. դարու, մնացածները, ԺԷ—ԺԹ.  
դարու են:

Չեռագրերից եօթի մանրագնին համեմատութեանց  
արդիւնքը միջոց է տալիս նրանց երկու գլխաւոր խմբի  
բաժանել մի ստորաբաժանումով: Առաջի խմբին պատ-  
կանում են Վենետիկի Գ. նրանից Ախալցխայում՝ ար-  
տագրուած են Վեն. Բ. և մեր մատենագարանի Գ. Չեռ. 1.  
մեր օրինակը անկասկած արտագրուած է նրանից, ունի  
թերի մասեր, արդեօք Վենետիկին էլ ունի՝ չգիտենք  
Այդ խումբը միւս խմբից շատ աչքի ընկնող տարբե-  
րութիւններ ունի. ընթերցուածներով անպայման ընտ-  
րագոյն են. շատ ասած չենք լինել՝ եթէ հաստա-  
տենք, թէ դոքա սկզբնական կրճատումից ամենավաղ ժա-  
մանակներում ուղղակի սրբագրուել են: Սկզբնական ձեռ.

1. Սեղբեսորսի վարքը Կ. Բ. Ս. այդ օրինակիցն է  
կատարել. մեր Դ. օրինակը ուղղակի արտագրութիւն է նրա-  
նից, Վենետիկի Չեռագիրը եղել է Ախալցխայի վանքում, ո-  
րից արտագրել են Վեն. Բ. և մեր Դ. Չեռ. որ բերուած է  
Ախալցխայից Կարապետ եպիսկոպոսի ժողովածուի հետ:

ներկայացուցիչները վիւս բոլոր ձեռագրերն են: Երկուսն էլ մուտք են երկրորդ խումբը: Այդ խմբի ձեռագրերից Ա. Բ. Կոր. Վեն. Բ. և Վեն. Գ. անմիջապէս նոյն աղբիւրից են: Թէև ունին յատուկ տարրերութիւններ, դրանցից են ծագում միւս ձեռ. որոնք ունին գլուխներէ բաժանմունք. Եր. Ա և Բ ունին գլխակարգութեան նշաններ: Իսկ մեր Ա<sup>1</sup> և Ա<sup>2</sup> ուղղակի գլուխներէ են բաժանուած: Եր. Ա օրինակը ունի 172 բաժանման նշան, որ համապատասխան է մեր Ա<sup>1</sup> և Ա<sup>2</sup> գլուխների թուին. զարմանալու է ինչու Եր. Ա. վերնագրերը չունի: Գուցէ այդ ձեռագրի նախկին տէրը ձեռքին ունեցել է Ա<sup>2</sup>ի պէս գլուխների բաժանած ձեռագրեր: և կարելու է համարել նոյն բաժանումները մոցնել իւր օրինակի մէջ: Գ. ձեռ. ընթերցուածներով շատ է նմանուում Ա<sup>2</sup>ին: Բայց ընդհանրապէս թերութիւններով լի է: Երկրորդ խմբի ձեռագրերը ունին ուրիշ յայտնի որոշիչ նշան. Ա. Բ. Կ. Ա<sup>2</sup>. և Ա<sup>1</sup>. ձեռագրերի բուն անագրի մէջ մտել է մի նկատողութիւն, որ ոչ մի կապ չունի բնագրի հետ. նկատողութիւնը գրուած էր բոլորին նախատիպ ծառայող Ձեռագրի եղերքին և նրանից արտագրող ազէտ գրիչը բնագրի մաս կարծելով միացրել է նրա հետ: Իսկ նրանից յետոյ բոլորն էլ արտագրել են: Յաւելուածն է.

«Ես Սմբատ սարապետ Հայոց, որ տեսի ի Սէմերզէնա (Ա. Ն. ի Սմրզաձա) քաղաքն բազումք ի Յունացն այնոցիկ ուղղափառք նիկիական հաւատն»:

Սմբատի նկատողութիւնը կցած է Սոկրատի պատմութեան այն մասի լուսանցքին, որտեղ պատմուած է պարսից մէջ քրիստոնէութեան տարածուիլը Մարութաւի ձեռքով (տես Է. էջ 588): Աթէ Սմբատ

պատմագիրն է նկատագրութեան դրոշմը, ուրեմն 13-րդ ֆորուսն է յաւելուածը մտել ձեռագրերի մէջ, հետեւապէս երկրորդ կարգի նախատիպը այդ ֆորուսն է:

Ձեռագրերից Ա. Նոր. գուցէ և Բ. (ի պիւղն Ալիփուղար) գրուած են Տիգրանակերտում.

Վեն. Ա. Վեն. Գ. Ա<sup>1</sup> և Ա<sup>2</sup>. չորս օրինակ կոստանդնուպօլսում, Ռ. Վեն., Բ. Ախալցխա. Եր. Բ. Խոտըջուր, Եր. Ա. Վեն. Ռ. և Գ. յայտնի չէ տեղը: Այս համեմատութիւնից երևում է, մինչդեռ Մեծ Սահրատը միայն Արարատեան աշխարհումն է տարածուել: Փոքրը տարածուել է ամեն կողմ, գլխաւորապէս Պոլիս և Աթիթ:

Փոքր և Մեծ Սոկրատից լատինաւորներն մէջ մըտել են Թէոդոս մեծի, կոստանդիանոս մեծի և Սեղբեստրոսի վարքերը<sup>1</sup>:

ա. «ի յիշատակի ս. Թագաւորին կոստանդիանոսի ի Սահրատայ պատմութենէ ի չարրորդ դրոց» Մայր Աթոռի լատինաւորներից թիւ 130 (Գ.) թիւ 160: լատինաւորը հաստ բամբակեայ յղիած և մնամեծ թղթի վրայ է գրուած, մեր ունեցած ընտրագոյն օրինակներիցն է: գրուած միջին մնարայեան դրոշմով թԱ—ԹԲ. դարում: Գրիգոր գրչի ձեռքով ի վայելչ Յովհաննէս քահանայի: Մեծ յիշատակարան չունի, մանրեր շատ են: լատինորի հատուած Մեծ Սոկրատիցն է: մանրամասն բաղդատել ենք մեր Ձեռագրի հետ և տարբերութիւնները նշանակել (տես էջ 714—712):

բ. «ի Սոկրատայ պատմութենէ վասն Թագաւորութեան Թէոդոսի Մեծի: Իսկ Թագաւորն Գրատիա-

1. Վերջինս Սեղբեստրոսի վարքից:

նոս տեսեալ տկարացեալ զՀռովմայեցւոց պեաութիւնն  
 և շնոյս հատուածը կայ երկու ճառընտրում թիւ  
 940. 7. ԺԶ. (կամ կարինեանի ցուցակ 920. 7. էջ  
 106) և 945. 12. ԺԲ. (կար. ցուցակ 925. 12. էջ  
 134) (տես տպագիր էջ 402—416):

Թիւ 940 մեծադիր ընտիր բամբակեայ թղթի  
 վրայ բոլորգրով: Ճառընտիրը Հայոց ԶԵ. (1456) թուիցն  
 է, Մատթէոս քահանայի ձեռքով գրած վերի Նորա-  
 վանքում:

Թիւ 945 մեծադիր, բամբակեայ թղթի վրայ  
 ճառ. ՊՂԱ. (1442) թուիցն է. գրած է ձեռամբ Յով-  
 հաննէս միայնակեաց կրօնաւորի:

Ք. Երնասաղէմի ճառընտիր թիւ 1. ունի մի  
 հատուած, որի մասին Քեր. Սահակ եպիսկոպոսը գր-  
 րում է. «Ճառընտիր ԽԾԹ. գրուեալ որ է Պատմութիւն  
 վարուց սրբոյն Սեղբեսարոսի, բաղդատեցի մեր ձեռու-  
 գրաց (999 և 1117) հետ, նոյնն է միայն տեղ տեղ  
 համառօտուած. օրինակի համար, յետ նահատակու-  
 թեան Տիմոթէոսի Սեղբեսարոսի ձերբակալումը, բան-  
 տարկութիւնն, բռնաւորին չարաչար մահը և շն. զանց  
 կրնէ ուղղակի Մեղետեայ վախճանէն յետոյ, Սեղբես-  
 արոսը կաթոռակալէ, այսպէս և ուրիշ կտորներու մէջ,  
 բայց ճառընտիր լեզուն աւելի մաքուր է, ինչպէս և  
 ուղղագրութիւնը»:

Ինչպէս երևում է ճառընտիրների մէջ մտել է  
 Սեղբեսարոսի վարքից՝ ընդարձակի և համառօտի նոյն  
 մասը, անկասկած հետեոզութեամբ մէկը միւսից:

Է.

Սոկրատի պատմութիւնը առանձին հետաքրքրութիւն ստացաւ մանաւանդ սկսած այն օրից, երբ Ֆրանսիացի հայագէտ պ. Կարիերը մի շարք յօդուածներով «Հանդէս Ամսօրեայի» մէջ Ֆրանսերէն և հայերէն լեզուներով տպած, աշխատեց ապացուցանել՝ որ Մովսէս Խորենացին Է-րդ դարու հեղինակ չէ, նրա պատմութիւնը այդ դարումը չէ կարող գրուած լինել. որովհետև նրա գրողը օգտուել է Սոկրատի եկեղեցական պատմութեան՝ այն էլ հայերէն թարգմանութիւնից. իսկ հայերէն թարգմանութեան ժամանակը որոշուում էր ընդհանրապէս Է-րդ դարու վերջը՝ կամ Է-րդի սկիզբը: Յարգելի քննիչի անսպասելի և չափազանց վստահ եզրակացութիւնները գալիս էին խտրուելու, հիմնովին տապալելու մի դարևոր համոզմունք, խորը արմատացած մի հաւատ դէպի այն պատկառելի պատմահայրը, որի ամենախիստ քննադատները մինչև այդ ժամանակ բաւական համոզեցուցիչ փաստերով կորողացել էին միայն մի բան հաստատել, որ նա միամտաբար երբեմն հետևում է իւր աղբիւրներին՝ հետառութեամբ հաւատ ընծայելով նրանց ամեն պատմութիւններին. բայց ոչ ոք չէր յայտնել այն աստիճան ծայրահեղ կարծիք, հաստատուած այդքան հիմնուոր թուացող փաստերի վրայ, որ ապացուցանէր թէ նա

1. — Կարիեր. «Մովսէս Խորենացու մէկ նոր աղբիւրը» Հանդ. Ամս. 1892 թ. էջ 250 և 373. «Նորագոյն աղբերք Մովսէսի Խորենացու» Հանդ. Ամս. 1893 էջ 116. 134. 178. Այս յօդուածները լոյս տեսան առանձին գրքոյկներով Ֆրանսերէն և հայերէն լեզուներով:

կեղծել է: Թէ երկար ժամանակ կարողացել էր խաբել ընթերցողներին՝ որ նա երկու երեք դար ուշ ապրելով և գրելով՝ կեղծելու արտակարգ ընդունակութեամբ՝ զգալ չէ տուել այդ կեղծիքը: <sup>1</sup> Եւ այդ բոլոր սովորական մտածողութեան դժուարըմբռնելի և հասկանալի եզրակացութիւնները պիտի հաստատուէին մի քանի տող պատահական նմանութեամբ այդ պատմագրի և ը-րդ դարում թարգմանուած պատմութիւնների մէջ: Ահա խնդրի այդ կարևորութիւնն էր պատճառ: որ Թէ մասնագիտական թերթերում և Թէ նոյն իսկ օրաթերթերում լոյս տեսան մի շարք յօդուածներ: բոլորն յօգուտ և ի պաշտպանութիւն Խորենացու. միայն Գ. Խաղաթեանցն էր որ իւր մագիստրոսութեան աստիճան ձեռք բերելու համար ներկայացրած աշխատութեան մէջ՝ ամէն ջանք գործ է դնում Խորենացու գիրքը մինչև Թ-րդ դարն իջեցնել:

Մեծ և Փոքր Սոկրատների հրատարակութեամբ համոզուած ենք վերջնականապէս կը լուծուի մի խնդիր՝ եթէ Խորենացին սովորաբար ընդունուած ժամանակից ուշ է գրել: դրա ապացոյցը այլ ևս չպէտք է որոնել Սոկրատի և նրա պատմութեան մէջ եղող նմանութիւնով: իսկ դրա փոխանակ իւրաքանչիւրիս համար մի տեսակ յորդոր: մի տեսակ նախազգուշացում. չպէտք է զօրեղ հիմնաւոր փաստերը թողած: շտապեցիչ: նորահայտ երևոյթներով մի ամբողջ հաստատուն շինութիւն տապալել:

1. Գրիգոր Խաղաթեան՝ իւր մագիստրոսական աշխատութեան մէջ էջ 1—36 ի մի է հաւաքել այդ մասին յայտնուած կարծիքները:

Г. Халатянъ.— Армянскій Эпосъ въ Исторіи Арменіи Моисея Хоренскаго. Москва 1896.

Ամենազօրեղ հարուածն էր, որ պ. Կարիերը փորձեց հասցնել Խորենացուն. մինչև այսօր էլ ոչ ոք չկարողացաւ համոզեցուցիչ փաստերով ջրել նորա սասաները. բայց նորագոյն փաստերը կը խօսին իրենց համար. Խորենացին է և կը շարունակի մնալ Ս-րդ դարում ապրող, նոյն դարում գրող Սահակ ու Մեսրոպ մեծ ուսուցիչների աշակերտը:

Մենք ընդունելով իւրաքանչիւր լուրջ և բարեխիղճ քննադատութեան մեծ արժէքը, մնում ենք այն համոզման, որ շատ անգամ ամենասուր և հանձարեղ արտայայտած մտքերն անգամ չեն կարող մնայուն լինել՝ եթէ եզրակացութիւններ հանելիս դատողութիւնը գերակշռել է նիւթի բազմակողմանի ծանօթութեանը: Սուրատը շատ քիչ է ուսումնասիրուել և քչերն են նրան ծանօթ. ներկայումս յայտնի հայկաբաններից նրա մասին՝ շատ կարծիքներ են յայտնուել, որ չէին արտայայտուիլ, — որովհետեւ հիմունքից զուրկ են, — եթէ այդ անձինքը իրենց ձեռին ունենային բուն Սովորատը:

Մեր գրականութիւնը դեռ շատ քիչ է ուսումնասիրուած. դեռ շատ նորանոր կարծիքներ կարող են յայտնուել և հները խախտուել, բայց հէնց դրա մէջ է վտանգը: Մի ըստ երևոյթին ամենահամոզեցուցիչ կարծիք բազմակողմանի ուսումնասիրութեան արդիւնք չլինելով, հիմնովին կը հերքուի իսկական նիւթի ծանօթութեամբ:

Փորձենք համառօտ ձևով ի մի ամփոփել խնդրիս վերաբերեալ յայտնած կարծիքները և տալ մեր վերջնական եզրակացութիւնը: Հիմնած մեր ուսումնասիրութեան վրայ:

Յայտնի է անգլիացի գիտնական Վիստոն եղբայրների հրատարակութիւնը Մ. Խորենացու պատմութեան հայերէն բնագրի և լատիներէնի թարգմանութեամբ՝ հմտալից ծանօթութիւններով և մեկնաբանութիւններով: Արանք էին որ առաջին անգամ ուշադրութիւն դարձնելով Մ. Խոր. Բ. գր. 29 գլ. կոստանդին Մեծի ծննդեան և թագաւորելու սուսպելախառն պատմութեան վրայ, մասնանիշ էին արել Սեղբեստրոսի վարքի վրայ, երկուսը միևնոյն աղբիւրից ծագած համարելով: <sup>1</sup> Արանք զարմանք են յայտնում և դժուարանում մեկնելու, թէ ինչպէս կարող էր Խորենացին օգտուել և հաւատալ կոստանդին Մեծի մասին պատմած սուսպելներին, քանի որ լաւ ծանօթ էր Եւսերիոսի պատմութեանը: Աոր Հայկազեան բառգիրք կազմող Վենետիկի հայրերն ևս Վիստոններին հետեւելով, ուղղակի Սեղբեստրոսի վարքն են Խոր. աղբիւր համարել: <sup>2</sup>

Հարեանցի յայտնած կարծիքը մնաց երկար ժամանակ առանց ուշադրութեան՝ մինչև պ. կարիէրը Խորենացու և Սեղբեստրոսի վարքի նման հատուածները իրար հետ բաղդատելով, անսպասելի հետեանքների հասաւ: Թիւրիմացութիւնների առաջն առնելու համար, կարեոր ենք համարում անցողաբար յիշել, որ

1. Մ. Խոր. հրատ. Վիստոն եղբ. Լոնդոն 1736 թ. էջ 210 գլ. 2. Ծանօթ. համեմ. իմ յօդուածը Աբարտա 1893 թ. էջ. 65—76:

2. Նոր. Հայկ. բառ. նախադրութիւն էջ 19. Վատ. Ս. Սեղբեստրոսի Հռովմայ Հայրապետի՝ որոյ հետք կան նաև ի բանս Խորենացւոյն:

Սեղբեստրոսի վարքն ու Սոկրատի պատմութիւնը միանգամայն տարբեր գրութիւններ են, հայերէնի մէջ համառօտչի ձեռքով միացրած, իսկ թէ ինչպէս և երբ՝ այդ մասին յետոյ:

Պ. Կարիերը 1892 թ-ին՝ մի նամակ գրեց «Հանդէս Ամօրեայի» խմբագրութեան, որը և տպուեց նոյն թերթի օգոստոսի համարում: <sup>1</sup> Նամակի էական միտքն էր. Խոր. Բ. գլ. 29. Սեղբեստրոսի վարքիցն է առնուած: Սեղբեստրոսի վարքը գրուած է սկզբնաբար լատիներէն լեզուով, Ե-րդ դարու վերջում. նոյնը Ֆոյները թարգմանել են վեցերորդ դարու սկիզբը. Խորենացին ի հարկէ այդ թարգմանութիւնից է օգտուել, ոչ շուտ քան Գ-րդ դարու կէսը: Սա էր առաջին հարուածը. փաստերը խօսում էին ակնյայտի կերպով, բառեր և նոյն իսկ ամբողջ նախադասութիւններ բառացի փոխառութիւններ էին. այդ նորագիւտ համեմատութեամբ մեկնուում էին Խորենացու մինչև այդ ժամանակ չհասկացուած մի քանի բառերը:

Պ. Կարիերի գէմ և նրա յայտնած կարծիքի առթիւ յօդուածներ տպուեցին «Հանդէս Ամօրեայի» «Մուրճի», «Արարատի» մէջ. պրօֆ. Ն. Մառը Պետերբուրգի արևելեան բաժնի մասնագիտական թերթում. «Արևելք» և «Հայրենիք» օրաթերթը, իսկ «Բաղմավէպը» մի շարք յօդուածներով մի ամբողջ ուսումնասիրութիւն հրատարակեց:

Հանդիսի յօդուածագիրը՝ յայտնի Հ. Ս. Պարոնեան էր, <sup>2</sup> որի զինաւոր նկատողութիւնն է. եթէ Խո-

1. Ե. ա. էջ 250.

2. Հանդէս Ամօ. 1892 էջ 343. Խմբագր. կարծես հա-

ԽԴ.

ըննացու անձն անգամ անհետանայ Եւրդ գարուց (էջ 344)։ նրա գործի ժամանակը անփոփոխ կը մնայ։ այդ հաստատում են նրա ոճը, լեզուն, հեղինակի որոշակի տուած տեղեկութիւնները իւր անձի մասին։ Իսկ կարիերի ատածների դէմ առարկում է, թէ կարող էր Սեդրեսարտի վարքի շատիներէն բնագրից առաջ՝ յունարէն լեզուով համառօտ վարք գոյութիւն ունենալ։ որից օգտուել է և շատիներէն հեղինակը և Մովսէս Խորենացին։ Սակայն այս յօդուածը իւր էութեամբ չէր կարող խախտել և հեղքել կարիերի սասածներն. յօդուածի փաստական մասը շատ թոյլ էր։

Այդ կողմից աւելի զօրեղ և համազօլ էր պ. Ս. Մալխասեանի յօդուածը «Մուրճի»<sup>1</sup> մէջ, ուր նա մի շարք շատ հաւանական թուացող փաստերով աշխատեց ցոյց տալ, որ Խորենացու յիշեալ գլուխը յետամուտ յաւելուած է (Enterpolation), որի փոխարէն ըսկրպում եղել է Հռիփսիմեանց Հայաստան գալու և Գրիգոր Լուսաւորչի գործերի պատմութիւնը։

Բազմազէպի յօդուածների հեղինակը Բ. Ա. Սարգսեանն է. նա այդ առթիւ տպեց Սեդրեսարտի աճ բողջ վարքը յունարէն բնագրի հետ միասին, պարզաբանուած երկար յառաջարանով։ Պարոնեանի հետ սա էլ համեմարծիք է, միայն փաստերով է խօսում։ Սորա առաջ բերած հիմունքներն են.

ա. Արդէն Դ-րդ գարուց սկսած յայտնի է կոս-

մակարծիք չէ յօդուածագրին. «Այս յօդուածը ուղղած է մեզ Ս. Ա. Պարոնեան՝ զոր կը հրատարակեմք անփոփոխ հեղինակին թողով ամեն երաշխաւորութիւն. Խմբ.»

1. Մուրճ՝ 1892 ղեկաներէր։

տանդին Մեծի ծննդեան այն պատասխանագրերն որոնք պատմութիւնը ըստ որում նա Հեղինեայ պատնիի գաւակ էր: Զոսիմոս հեթանոս պատմագիրը գրելով 410—431 թ. տուածինն է յիշում պատնիկ Հեղինէի անուհը՝ (էջ ԺԲ.):

բ. Սողոմէնը գրում է 439 թ-ին իւր պատմութիւնը: Նրա մէջ կան Սեղբեստրոսի վարքի հետքեր (էջ ԺԲ):

գ. Գելասիոս պապը 494 թուին հրատարակում է ընդունելի և անընդունելի գրեանց ցանկ, ուր յիշուած է Սեղբեստրոսի վարքը իբրև վաղածանօթ և՛ շատ եկեղեցիներում ընդունուած գիրք. հետևապէս լատիներէնը աւելի շուտ է գրուել կամ ուղիղը յունարէնից՝ որոշ փոփոխութեամբ թարգմանութիւնը աւելի շուտ է քան 494 թիւը, այլապէս չէր կարող հանրածանօթ լինել:

Ճ. Բարսեղը ունի մի քանի երկրորդական փաստեր, որոնք միացնելով էականների հետ եզրակացնում է. «Վոստանդիանոսի և Սեղբեստրոսի ստեղծարանութիւնք յարևելից անցած են յարևմուտս, անտի ապա շրջան ընելով, գրեթէ մէկ դար վերջ, վերադարձան յարևելս բայց կերպարանափոխութեամբ» (էջ ԺԸ)

1. Հ. Բ. Սարգսեան. էջ ԺԲ. «Զոսիմոս եթէ չէ նախկին հեղինակ Վոստանդիանոսի և Սեղբեստրոսի պատմութեան, այլ անշուշտ ունեցած է ի դիմաց Դ-րդ դարու հեղինակութիւն մի, յարմէ համառօտ տեղեկութիւնքը քաղում է: որ իրեն համար պատմական արժէք ունէին և կամ նպաստաւոր էին իր հեթանոսական դիտումներուն և թէ այս հեղինակութիւնս՝ արևելքի մէջ, արևելեան լեզուով գրուած էր»:

ԽԶ.

ուրեմն խորենացին օգտուել է շատ շատերին ազրիւր.  
Ծառայող Սեղբեստրոսի սկզբնական վարքից: <sup>1</sup>

Վարիերը կարիք չզգաց և ոչ մէկին պատասխանե-  
լու. և իսկապէս ոչ ոք էլ չէր կարողացել հերքել նրա  
ասածների էական մասերը:

Վարժեռ բոլոր հայագէտները արդէն հաշտուել են  
այդ մտքի հետ, որ Սուրենացու գրութեան ժամանակը  
այլ ևս չէ կարելի հաստատուն պահել:

Միայն պ. Մառն է շարունակում հակառակել  
որը քննելով Վարիերի յօդուածները՝ ասում է. «Մենք  
կարող ենք համաձայնուել Ֆրանսիացի գիտնականի  
հաստատած փաստերի հետ, բայց ցանկալի է յիշել,  
որ կան նաև ուրիշ փաստեր, որ ուրիշ բնաւորութիւն  
ունին և որոնք նոյնպէս արժանի են ուշադրութեան:»  
որոնց քննութեանը նուիրում է նա իւր գեղեցիկ ու-  
սումնասիրութիւնը: <sup>2</sup>

ԹԾ.

Սրբ Վարիերի առաջին յօդուածը այդքան յաջո-  
ղութիւն գտաւ, բնական էր որ մի անգամ ընթացած  
շաւղով ընթանար, մանաւանդ երբ Նորայր Բիւզանդի  
մասնաւոր նամակից իմանում է, որ կան Սոկրատի  
պատմութեան և Սեղբեստրոսի վարքի հայերէն թարգ-

1. Հ. Բ. Սարգսեանի տեղեկութիւններով չափազանց  
բարդուած աշխատութիւնից մի քանի անգամ կորզալուց յե-  
տոյ միայն՝ կարողացայ վերոյիշեալ էական մտքերը ի մի  
փոփել:

2. Н. Марръ. О начальной истории Анонима, къ вопросу объ  
ист. М. Хор. по поводу критических статей А. Карьера.

մանութիւնը: 1 Խնդրի կարևորութեան պատճառաւ յարգելի գիտնականը յանձն է առել գնալ Վենետիկ և առ տեղեալն ծանօթանալ հայերէն ձեռագրի հետ: Հայերէն Բնագիրը և Խորենացու պատմութիւնը՝ իրար շատ նման էին: մանաւանդ պատմութեան սկսուածքի առաջի տողերը որ համարեա բառ առ բառ իրար ծածկում էին: Եզրակացութիւնը պարզ էր և անխուսափելի, մանաւանդ՝ երբ բաղդատութեան նոր նիւթ տացաւ Սեղբեստրոսի վարքի հետ միացած Սոկրատի պատմութեան մէջ. — Վրաց դարձը Նունէի ձեռքով: Իրև արդիւնք և ամփոփումն այդ ուսումնասիրութեան յայտնեց նա այս հետեանքը: 2

Ա.—Մովսէս Խորենացին Բ. գրքի 29 գլխից սկսած բազմաթիւ փոխառութիւններ է անում Սոկրատի եկեղ. պատմութիւնից (էջ 185): Մինչև կոստանդին մեծի ժամանակը նա ձեռին ունէր Եւսերիոսի ժամանակագրութիւնը և եկեղեցական պատմութիւնը: այնուհետև նրան առաջնորդ է ծառայում Սոկրատը:

Բ.—Խորենացին գործ է ածել Սոկրատի այն հայերէն թարգմանութիւնը՝ որ յայտնի է Փոքր Սոկրատ անունով: երբ սա արդէն միացած էր Սեղբեստրոսի վարքի հետ և ունէր յապաւումներ ու յաւելուածներ:

Գ.—Այս թարգմանութիւնը Ի. դարու վերջի տա-

1. Մենք զարմնք ենք յայտնել մի առթիւ: Թէ ինչու պ. Կարիերը չէ իմացել Վիստոն եղբարց կարծիքը. պ. Նորայրից ստացած տեղեկութիւնը կարող էր նա գտնել Լ. Ջարբալեանի գրքում: Ասողկի հրատարակութեան մէջ, Լայկազեան բազրբում: Չամչեանի պատմութեան մէջ ևլն.:

2. Հանդէս Ամս. 1892. էջ 372. սկսած 1893-ից էջ 194. 178.

րիներիցն է: Հետևապէս Քովսէս Խորենացու. Հայոց պատմութիւնը չէր կարող ը-րդ դարու առաջի տարիներէց աւելի շուտ գրուած լինել:

Այս դր չփորձեց անգամ հիմնովին քննելու պ. Կարիերի ասածները: նոյն իսկ պ. Նորայր Բիւզանդը իւր գրած գեղեցիկ յօդուածում Հանդէսի մեջ,<sup>1</sup> բաւականանում է միայն Փ. Սոկրատի ժամանակը որոշելով. բայց նա կարող էր աւելին տնել, որովհետև մանրամասն ուսումնասիրել էր, և Խորենացին ու Սոկրատը իրար հետ բաղդատել:

Գարագաշեանը միանգամայն համակարծիք է պ. Կարիերին. «Նայելով Խորենացւոյն պատմութեան լեզուին, որ չէ միակերպ և գլուխներէն ոմանք, որ են եկամուտ, այսինքն յայլմէ մուծեալ և յետին, որպիսի են հաւանականապէս առաջին եօթն գլուխք և մանաւանդ Գ. դպ. ԿԱ գլխոյն վերջին հատուածն և ԿԲ գլուխ ողջոյն՝ կրնանք զյօրինումն այն պատմութեան դնել ոչ ի Զ-րդ, այլ յեօթներորդ դարու իսկ. մանաւանդ որ Մ. Խորենացու անուն զոր<sup>2</sup> չենք գտներ յիշած ի մատենագիրս շ. դարուն»:<sup>3</sup>

Պ. Կարիերը իւր յօդուածների շարքը վերջացրել է յայտնելով. «Հաստատապէս համոզուած ենք, որ Սոկրատի հայերէն հրատարակութիւնը, որ յայտարար-

1. «Եւմ կարծիք զկրկին հայ թարգմանութեանց եկեղեցական պատմութեան Սոկրատայ սքոլաստիկոսի և զնոցին թարգմանչաց». Կանդ. Ամս. 1893. էջ 273 և ըն.:

2. Այդ հիմունքը թէև շեշտած, ամենաթոյլն է:

3. Ա. Մ. Գարագաշեան, Գննական պատմ. Հայոց. Թիֆլիզ 1895. մասն Գ. էջ 347-348.

ուել է Իջմֆածնից՝ պիտի լրացնէ և զօրեղացնէ ստացած նպաստաւոր ապացոյցները»:

Փորձենք ցոյց տալ թէ ինչ չափով և ինչ ձևով են արդարանում նրա ենթագրութիւնը: Ինչ էլ լինի այդ արդիւնքը՝ կը մնայ հաստատօր պ. կարիերի յարուցած և բաւական սուր ու զիւրըմբռնելի կերպով պարզաբանած խնդիրները նոր զարկ տուին ընդհանրապէս հայագիտութեան և ի մասնաւորի՝ Խորենացուն: Մեր յիշատակած մի շարք յօդուածները՝ լուրջ աշխատութիւնները և նոյն իսկ Սոկրատի պատմութեան հրատարակութիւնը, բոլորն արդիւնք են յայտնի Ֆըրանսիացու յարուցած շահագրգիռ խնդրին: Միշտ այդ է և կը լինի անկողմնապահ և իսկական գիտնական արժէք ունեցող արտայայտած մտքերի արդիւնքը:

Ժ.

Ետընացին չէ ծանաչել Սոկրատի եկեղեցական պատմութիւնը, եւ ոչ էլ որ եւ է կերպ օգտուել նրա յունարէն կամ հայերէն ընագրից, քայց օգտուել է Սեդեքստրոսի վարքից, թէ եւ ոչ մեր ձեռքը հասած հայերէն թարգմանութիւնից:

Սոկրատը՝ Սոզոմէնի պէս սկսում է գրել այնտեղից, ուր դադարեցրել էր Եւսեբիոս Պամփիլեան իւր եկեղեցական պատմութիւնը: «Եւսեբիոս Պամփիլեայ յամենայն տասնեսին գիրան եղեալ զեկեղեցական պատմութիւն: դադարեաց ի ժամանակս կոստանդնի թագաւորի յորս և առ Դիոկղետիանոսիւ եղեալ հալածումն դադարեաց (էջ 1) . . . Իսկ մեր նախադրեալ շարադրել զառ ի նմանէ մինչև առ յեկեղեցեացն եղելոց պատճառայն» (էջ 2) այն է՝ Փրկչի 306 թ-ից

մինչև 439 թ.։ Թէոդոս Փոքրի Թագաւորութեան ժամանակը։ Նա համառօտակի անցնելով Ռիոկղեախանութի պատմութիւնը։ երկար կանգ է առնում նրա յաջորդների մասնաւորապէս եկեղեցական գործերի վրայ) յիշելով նաև քաղաքական դէպքերը։ Վերոյիշեալ ժամանակամիջոցում յաջորդաբար պատմուած է կոստանդին Մեծի, Լիկինիոսի, կոստանդին Փոքրի, կոստանսի, Յուլիանոսի, Յորիանոսի, Վալէսի, Վաղէնախանսի, Գրատիանոսի, Թէոդոս Մեծի, Ուորիոսի, Արկադիոսի և Թէոդոս Փոքրի ժամանակ պատահած եկեղեցական գործերը։ Ընդ կայսրների մասին պատմում է նաև Խորենացին։ Կաշխատելք երկու պատմագիրներն համեմատելով զրանել ընդհանուր կապը և դրանով ապացուցանել, թէ կարող էր արդեօք մէկը միւսին աղբիւր ծառայած լինել։ Կարող էր Խորենացին Սոկրատի բազմակողմանի տեղեկութիւններով հարուստ պատմութիւնից միայն մի քանի առասպելներ ընտրել։

1.

ա. Մով. Խոր. Բ. գլ. Սոկ. մեծ՝ Ա. 2. էջ 4. Ընդարձակ Սիզ. Վ. էջ 29. էջ 165. 714-716.

Սա (կոստանդինոս) - Ի միջուրէ մինչ արեւ Իսկ Ռիւզանդացոյն յառաջ քան զթագաւոր զան ընթանայր ժուան. զնա պարտեալ։ Եւ կոստանդին, մինչդեռ կեսար էր. ետես յերկինս խաչանկառանդիանոս կայսր եր պարտեալ է մարտն. և սիւն լուսոյ, յորում ընտրամեալ յոյժ .. Տեսանէ արամութեամբ մեծաւ նընթեանոյր գրեալ այսու ապա է գիշերին յայնմ լեալ. երևութացաւ նմա յաղթեա . . . . արար զբոշ յորում ննչէր. սեպի առ է քան իայ առեղաց խաչանկա և մտեալ է պարտեալ յերկինս. իայ յերկինք պարունակեալ զըտերազմ յաղթեաց զՄագդաղոսմական ունելով վերջով տէ. Այսու յայտնեալու. նազիր յաստեղաց. այսու թեա. զոր արարեալ սիւզ. յաղթեաց . . . . Երամայեաց

Ս. 1. Գործ եմ գրել Վեներա. Հրատ. 1865 թ.

նոյն և յառաջերեւել  
յազթեաց պատերազմացն:

աւնել զաւրինակ իւրին  
.. և աւնել առաջի զա-  
տերազմաւ և յազթեաց:

Համառ. Վարք Սեղրեստրոսի էջ 715.

«Եւ յազթահարեցին Բիւզանդացիքն զզաւրսն Կոստան-  
գիանոսի, եւ . . . արամեալ ննջէր, և տեսանէ ի տեսլեան գի-  
շերին վերնագիր տատեղանշան խաչի . . . Եւ հրամայեաց զնշան  
խաչին կայսրն Կոստանգիանոս առաջի իւր և զօրացն մասնել  
ի մարտն. և պարտեաւ Մարսիմիանոս»:

Համառօտողը կրկնութիւնից խոյս տալով, Փոքր Սոկ-  
րատի պատմութիւնից հանել է այդ մասը, քանի որ Սեղ-  
րեստրոսի վարքի մեջ կար նոյնը: Խոր. և Ղնդ. վարքը  
կայրկի է ասել բառացի արտադրում են նոյն աղբիւ-  
րից: Խորենացին համառօտում է: Սոկրատը տարբեր է  
պատմում, նրա պատմութեան մէջ տեսիլքը ցերեկն է  
երևում: Համ. վարքը չունի «Այսու յազթեա» յայտնի  
բառերը: Ղնդ. վ. ունի՝ «հրամայեաց տանել զաւրինակ  
խաչին» նոյնը Համ. վ. ըստ յուն. τὸ σημεῖον τοῦ σταυροῦ.  
Խոր. «արարեալ սիգնոյն» լատիներէնից է՝ signum. այդ  
բառը Խոր. աղբիւրինն է: Ուրեմն Խոր. այդ դէպքում  
ունի մի աղբիւր անկախ Սեղրեստրոսի վարքի հայերէն  
Թարգմանութիւնից. նա Համ. չէ օգտուել, որովհետև  
աւելի, և այն էլ ոչ ինքնաստեղծ տեղեկութիւն ունի.  
Ղնդ. նոյնպէս ոչ, նրա մէջ չկայ «սիգնոյն» բառը: Խո-  
րեն. տալիս է իւր աղբիւրը. «Որպէս համառօտ ու-  
տուցանէ քեզ Ագաթանգեղոս»: Այս տեսիլը պատմում են  
Եւսեբիոսը. Վարք Կոստ. Ա. 28. բոլորովին նման  
Սոկրատին. Ռուփինոսը և Սաղովէնը՝ որոնք սակայն  
ունին տարբերութիւններ:

Խոր. Բ. զ. ՁԳ. էջ 165. Համ. Վարք Սեղբ. էջ 721.

Բայց յետոյ հրապուրեալ ի կնոջէն իւրմէ Մաքսիմինայ, ի դասերէն Դիոկղեախանոսի, յարոյց հալածանս եկեղեցւոյ. և զբազումս վկայեալ, ինքն եղեփանդական՝ բորոտութեամբ ըստ բոլոր ընկալեալ մարմնոյն ապականեցաւ վասն յանդնութեանն. Զոր ոչ կարացին բժշկել Արիոզական կախարդքն և Մարիսկեան բժիշկքն. յազգոս որոյ յղեաց առ Յըրդաս՝ առաքել նմա գիւթս ի Պարսից և ի Հնդկաց. սակայն և այնք ոչ հասին նմա յօգուտ:

Զոր և քուրմք՝ ոմանք ի դիւաց խրատուէ հրամայեցին բազմութիւն աղայոց զենուլ յաւազանս և ջերմ արեամբ լուանալ և ողջանալ:

Որոյ լուեալ զլալիւն մանկանցն հանդերձ մարցն կականմամբք, գթացեալ մարդասիրեաց զնոցայն լաւ վար-

Բայց հրապուրեալ ի քնոջէն իւրմէ Մաքսինեայ ի դասերէն Դիոկղեախանոսի, և արար հալածանս եկեղեցւոյ Կոստանդիանոս. և բազումք եղեն վկայք և (խոստովանողք) . . . Յայնժամ եղափանդական բորոտութիւն ըզբոլոր մարմին թագաւորին Կոստանդիանոսի ապականէր. վասն որոյ Արիոզեան՝ կախարդք և Արիստոսկեան բրժիշկ ոչ կարացին օգնել, աննոր, և ոչ Պարսից և (Հայոց) և սա տարակուսեալ արամէր:

Ըղձանային քուրմք ի գիւաց հրապուրանաց՝ յոլովից աղայոց զենուլ յաւազանս և լուանալ ջերմ արեամբ զանձն. և այնպէս առողջանալ (ասէին):

Մայրքն աշխարէին և ըստ յին զմահ մանկանցն. Եւ լուեալ թագաւորին . . . զըզ-

1. Երեք օրին. Մաքսինեայ. մի օրին. Մաքսիմիայ:
2. Բ. Մի օր. եղեփանդակն.
3. Վեն. ԱԳ. ապոստական.
4. Մի օր. քրմանք.

կուցեալ քան զիւրն փրկու-  
թիւն:

Յազաբա որոյ զփոխարէնն  
յԱռաուծոյ ընդունի. յանըր-  
ջական տեսութիւն առաքե-  
լոցն առեալ հրաման սրբել  
լուացմամբ կենսատու ա-  
ւաղանին ի ձեռն Սեղբես-  
արոսի եղիսկոպոսի Հռոմայ,  
որ ի նմանէ հալածանացն  
Թագուցեալ էր ի Սորակտինն՝  
լեառնն: Յորմէ և աշակեր-  
տեալ հաւատաց, զբռնաւոր-  
սըն ամենայն բառնալով Աս-  
աուծոյ յերեսաց նորո: որ-  
պէս համառօտ ուսուցանէ  
քեզ Ագաթանգեղոս:

Չացաւ և ելաց . . քաւ լիցի  
ինձ խոցեսդել զմանկունս . . .  
Թէպէտ և ի մահ ձգէ զիս  
ախա բորոտութեանս և ան-  
բժշկելի մնամ:

Եւ յայնմ գիշերի տեսա-  
ներ Թագաւորն Պոստանգիա-  
նոս ի տեղեան զառաքեալն  
Յեառն զՊետրոս և զՊաւ-  
ղոս, որք տէին ցնա: Առա-  
քեալք յԱստուծոյ ողորմու-  
թիւն քարսղել և բժշկու-  
թիւն մարմնոյ ախտի ընդ  
նմին զանն ողորմութեան զոր  
ցուցեր առ աղայան անմեղս:  
Եւ արդ՝ առաքեա կոչեա ըզ-  
Սեղբեսարոս, զՅեսուչն Հը-  
ռոմայ, զառ ի քէն հալա-  
ծեալն, որ կայ ի լերինն Սե-  
րապիոն ի յայրի անգ, որ ե-  
կեալ խօսեսցի ընդ քեզ բանս  
փրկութեան և լուացե ի հո-  
գևոր աւաղանին . . . .

Ինչպէս տեսնում ենք երկու պատմութիւնը միմ-  
եանց յար և նման են, սկիզբը աւելի բառացի, շա-  
րունակութիւնը միայն մտքով: բայց կան տարբերու-  
թիւններ: Այս հատուածը բաղդատելով նաև Մեծ  
Սոկրատի համապատասխան հատուածի հետ (էջ 720)  
և Ուխտանէսի (էջ 103) կամ որ նոյնն է՝ Յայսմա-  
ւուրքի հետ, գտնում ենք ակնյայտնի նմանութիւն  
բոլորի մէջ: Խորենացին և համառօտ օրինակը շատ

1. 2որս. օր. ի Սերապիոն. մի օր. ի Սերապիոնն:

ՄԴ.

տեղերում իրար ծածկում են. նրանք իրար գիտենն  
մեկը արտագրութիւն է միւսից. հայրը նրանում է  
թէ որն է բուն ընտղիրը:

| Խ որ.   | Համ.   | Ընդարձ.  | Յայտմ.   |
|---|--|--|--|
| Մաքսիմիայ և Մաքսիմոսայ.   | Մաքսիմոսայ.                                      | Մաքսիմիայ.   | Մաքսիմոսայ.                                      |
| Մաքսիմոսայ Մաք-<br>սենդայ.  | Արիսկեան արիսու-<br>կեան Արիստիկեան              | Արիսկիեան.   |  |
| Արիսկեան Մա-<br>րիսկեան. 1  |  | Մաքսիկեան.   | չէ.  |
| Մարցն կական-<br>մամբ.   | չէ.  | կականագոյ ոչ-<br>բով.  | չէ.  |
| Ի Պարսից և Ի<br>Հնդկաց.   | Պարսից և Հայաց.                                  | Ի Պարսից.  | Ի Պարսից.  |
| բայց հրապուրեալ<br>Ի կնոջէն իւրմէ.                                    | նոյն.  | չէ.  | նոյն.  |
| յարայց հալածանս.<br>զբազումս վկայեալ<br>Սղեփանգական բո-<br>բոսութիւն. | արար հալածանս.<br>տարբեր.<br>նոյն                | չէ.<br>զբազումս սատակէ<br>Սղափանգական բո-<br>բոսութիւն             | յարայց հալածանս-<br>չէ.                          |
| ըստ բուրբ ընկալ-<br>եալ մարմնոյն ա-<br>պականեցաւ.                     | տարբեր.  | ըստ բուրբ ըն-<br>կալեալ մարմնոյն<br>վիրաւորեցաւ.                   |  |
| Սւ այնք ոչ հասին<br>նմա յօգուտ.                                       | տարբեր.  | ոչ կարացին օգնել<br>նմա.   | ոչ կարացին բը-<br>ժշկել                          |
| չէ.   | չէ.  | և մարք մանկանցն.   | և մարք տղայացն.                                  |
| Սեղրեսարոս եպիս-<br>կոպոս Թագուցեալ<br>Ի Սորակտին լեա-<br>ւըն.        | Սեղ. անսուշ կայ<br>Ի լերինն Սերա-<br>պին.        | Հերարեակ<br>Սեղրեսարոս եպիս.<br>Ի լերինն Սերապտի-<br>ոն Թագուցեալ. | Հերարեակ<br>Սեղ. եպիսկոպոսա-<br>պեա.<br>չէ.      |
| գուրմք ոմանք Ի<br>զիւաց իբատուէ<br>տղայոց զենուլ                      | ոմանք առ Ի<br>գրմանց աւաղան<br>զինել արեամբ ման- | գուրմքն Ի զիւաց<br>հրապուրանաց Ի<br>տղայոց զենուլ յա-              | ձարտարք և Ս-<br>զանգաւօրք ժողո-<br>վեալ մանկունս |

1. Խոր. մարիսկեան ընթերցուածը տգէտ գրչի սխալ  
պէտք է համարել. Սոկ. համառօտողը ցանկացել է այդ ան-  
հասկանալի բառը հասկանալի դարձնել և շինել է արիս-  
տիկեան:

յուսուցանել է ինքի կողմը և ինքի գործը և լուս- սանտալյա և լու- սրեմաթ լուսանալ լուգ. լուսանալ: նաև ինքի սրեմաթ ասցես ինքիմաթիքի և սուղլանալ: սրեմաթն սղոյսցն և այնու սուղլ- լասցես:

Համեմատական տախտակը մեզ տալիս է հետևեալ պատկերը: Խորենացին Սեդրեստրոսի Համ. վարքի հետ համաձայնուելով հանդերձ, ունի ակն յայտնի տարբե- րութիւններ: Գուրս է գալիս այն, որ մանրամասնու- թեան մէջ ընդարձակին է նման, իսկ մի քանի դէպ- քում Խոր. և Համ. նման են ֆայսմաւուրքին: Խորեն. ընդարձակից չէ օգտուել, պատմութեան ամբողջու- թեամբ շատ տարբեր է նրանից: Նա չէ առել և հա- մառօտից. որովհետև ունի բառեր, նախադասութեան ձևեր, որ համառօտում չկան. այլ Խորենացին ունե- ցել է տարբեր աղբիւր, որ նման է ընդարձակին և ֆայսմաւուրքի աղբիւրին: Իսկ համառօտը՝ նա իւր ա- ռաջ ունի Խորենացուն. նրա համար վերջինս անպայ- ման հեղինակութիւն է: Համառօտողը ոչ թէ բաւա- կանացել է միայն Սեդրեստրոսի վարքի սկզբնական օ- րինակը կրճատելով ի մի ամփոփել, այլ նա նրան սըր- բազրել է համաձայն անպայման հեղինակաւոր Խորե- նացու պատմութեան:

«Մարցն կականմամբ» Խորենացու բառը չէ՛ այդ բառը չկայ համառօտի մեջ. յունարէնն է αλ Μιγάρως κοκ- κυτοθς ἀλαάγμα ἀφισοα որ ընդարձակում թարգմանուած է «մարցն կականագոչ սղոյսք»: Նոյն է ի Հնդկաց, որ ազգասէր համառօտողը «ի Հայոց» է զարձրել. ինչպէս շատ անգամ: Խոր. ընդարձակի հետ ունի բնագրի ու- ղիղ ձևերը. Մարսիկեան և Արիողական Μαροκοι 'Αρίοιοι,

ԾԶ.

մինչդեռ համառօտողը իբրև անձանօթ անհասկանալի բառեր փոփոխել է:

Տեսնում ենք թէ ինչպէս նոյն հատուածի զգուշաւոր և մանրազնին համեմատութիւնը բալորովին տարբեր եզրակացութեան հասցրեց մեզ քան պ. Կարինին: Սակայն այսքանով մենք չենք բաւականանալ շարունակենք և կը տեսնենք, որ ամէն անգամ եթէ կայ փոխառութիւն Խորենացուց է եղել:

3.

Խոր. Բ. ԳԼ 20. էջ 173. Մեծ. Սոկ. Ա. էջ 3. 5.

«Ի բառնայն Աստուծոյ ըզբանաւորսն ամենայն յերեսաց Կոստանդիանոսի՝ մեծարեաց նա զԼիկիանոս մեծութիւն յոյժ. և ետ նմա կնութեան զքջոր իւր ոչ համամոյր, ծիրանեօք և պսակաւ կայսերական զարդարեաց զնա. և յերկրորդականս հասուցեալ պատիւս, աղքայ ամենայն արևելից կացոյց»:

«Մաքսիմիանոս Գալերիոս վարեալ զտէրութիւնն ամենայն մեռաւ՝ յառաջագոյն եգեալ թագաւոր զԼիկիանոս, և յետ այսորիկ Լիկիանոս թագաւորակից նորա և փեսայ (Կոստանդիանոսի) որում ետ կնութեան զքջոր իւր ըզբանաւորսն, կեայր յարևելս»:

ՓՈՒՔ. ՍՈԿՐԱՏ

«Յորժամ էառ (Կոստանդիանոս) զյաղթութիւն միահամուռն թագաւորացն՝ զԼիկիանոս քեալոր իւր թագաւորեցուցանէր»:

Մեծ Սոկրատը շատ ընդարձակ է. մենք յիշատակեցինք կարևորագոյն մասը. նա համաձայն օտուզապատում պատմութիւն Լիկիանոսին համարում է յաջորդ Մաքսիմիանոս Գալերիոսին, իշխանութեամբ

Համահաւասար թաղաւորակից կոստանդին Մեծի: Իսկ ըստ Խորենացու նա արեւելքի կայսր է նշանակուում կոստանդինի ձեռքով, որը նախապէս իւր ոչ համամայր բրոջը նրան կնութեան է տալիս և մեծամեծ պատիւներով առանձին կերպով պատուում: Աչ համամայր դարձուածը անկասկած Խորենացու յաւելուածն է, որպէս զի Գլ. 2Գ. ի մէջ պատմածի հետ համաձայնեցրած լինի: <sup>1</sup>

Խորենացին օգտուել է Փոքր Սոկրատից: Փոքրը միայն այսքան է ասում. «լիկիանոս քեռայր իւր թաղաւորեցուցանէր», որով բացարձակ հակառակում այն օրինակին, սրից կրճատուել է: <sup>2</sup> Խորենացին օւնի մանրամասնութիւններ. նրան հարկաւոր էր աղբիւր, որ Փոքր Սոկրատը չէ. բայց ինքը իբրև հեղինակութիւն Սոկրատի համառօտողին պատճառ է դարձել, որ նա հակառակ իսկական բնագրին, կոստանդիանոսից է թաղաւորեցնել տալիս Լիկիանոսին:

Գոթախտարար մեր ձեռին չունենք Սողոմէնի, Լակաանիոսի պատմութիւնը և «Աղէքսանդրեան վրոնիկոնը», որպէս զի հնար ունենայինք որոշել թէ Խորենացու պատմածը դոցանից որին է համապատասխան:

1. Սոկր. Կ. 1 էջ. 218 «կոստանդինոս երկուս ունէ, միահարս եղբարս. ոչ ի նմին նորա մաւրէն եղեալս»:

2. Եւսեբիոս եկեղ. պատմ. համաձայն է Խորենացուն. «Արժանի համարեալ է Լիկիանոս ընդունել զերկրորդ աստիճան յիւր Մեծի ինքնակալին կոստանդեայ. և առնուլ ի կնութիւն զքոյր նորա, և այսպէս ի հոյակապ ընտանիս նորա ընդ սլեալ լինի»:

Մ. Խոր. Բ. զԼ. 2Ը. էջ 170

«Քանզի նախ առ ի հաւասան գառնի գրժող (Լիկիանոս) և երկրորդ առ բարեգործն իւր (Վոստանդիանոս) ապստամբ. Յարոյց հալածանքս եկեղեցւոյ (տես 2Գ. էջ 165). և նենգութիւն գաղանի ընդդէմ Վոստանդիանոսի. նաև շարին բազմազանս ամենեցուն հասոյց, ցանկատերն այս և դարշելի ալևոր . . . (ապա Գլափիռեայ պատմութիւնը).

Եւ իբրև յայանեցաւ դաւն և գիտաց թէ նմա լուռ ոչ լինի Վոստանդիանոս, ժողովեաց զօրս ընդդիմանալ պատերազմաւ . . . .

Իսկ իբրև եկն յաղթողն Վոստանդիանոս, մատնեաց Աստուած ի ձեռս նորա զԼիկիանոս, յոր խնայեալ որպէս ի ծերունի և ի քեռայր՝ ետատանելի Գաղղիոս և հանդերձ երկաթի կապանք, զընել ի մետաղս զի աղօթեսցի

Սոկր. Մեծ. Ա. 3 էջ 6—7.

Իսկ Լիկիանոս թագաւորակից նորա՝ հաստատուն հեթանոսութեանն առէր զքրիստոնեայս. Եւ յայանի հալածանս ի վերայ նոցա առ ահին Վոստանդիանոսի երկնէր յարուցանել, այլ ծածուկ զբազումս նեղէր, Ապա և յայանի վնասել նոցա ձեռնարկէր. և եղև հալածանք առ տեղեաւն՝ անդ ուր էր Լիկիանոս. Իբրև զայս և զայսպիսս բռնաբար գործէր, ոչինչ ծածկէր ի Վոստանդիանոսէս:

Գլ. 4. էջ 8.

Ի վերայ՝ այսոցիկ յոյժ ցասոյց զթագաւորն Վոստանդիանոս և եղև թշնամութիւն ի բաց եզեալ զառ երեսս բարեկամութիւնն, և պատերազմիլ սկսան ընդ միմեանս:

Եւ եղև մարտ բազում. և յաղթահարեալ անձնատուր եղև, Ըմբռնեալ զնա կենդանւոյն մարդասիրէ և ոչ բսպանանէ, այլ հրամայէ նմա կեալ ի Թեսաղոնիկէ հանդարտութեամբ. Իսկ նորա առ ժամ մի հանդարտեալ, ապա

1. Տես վերև «զԼիկիանոս քեռայր իւր կարգէր»:

առ Աստուած որում մեզան  
Թերևս երկայնամիտ լիցի առ  
նա:

ժողովեաց զհամախորհս իւր  
զբարբարոտն և խորհեր ի  
պատերազմ Ձայս գիտացեալ  
Թագաւորին հրամայեաց սպա-  
նանել զնա՝ և ըմբռնեալ սպա-  
նին:

Փոքր Սոկրատը այս գլխում շատ քիչ է տար-  
բերուում Մեծից, նա նոր մասեր չունի, այլ ուղղակի  
կրճատուած է, ուստի աւելորդ ենք համարում այստեղ  
կրկնել. հետաքրքրւողները թող բաղլատեն բնագիրը:

Կարիերի համեմատած գլուխներից մէկն էլ այս է.  
սակայն ոչ մի դէպքում նա այնքան չափազանց վատահ  
և անհիմն ենթադրութիւններ չէ արել, ինչպէս այս գլխի  
վերաբերմամբ, Հայերէն թարգմանութիւնը ձեռին չունէր,  
այլ օգտուում էր միայն յունարէն բնագրից: Թուենք  
նրա ենթադրութիւնները. բայց նախապէս նկատենք,  
որ Խորենացու և երկու Սոկրատների լիկիանոսի  
մասին պատմածների մէջ այնքան կապ կայ, որ իւրա-  
քանչիւր ոք ով կանխակալ կարծիք չունի, անկարող կը  
լինի որ և է փոխառութիւն մէկը միւսից գտնել. երկու  
պատմութեանց մէջ իրաւ է եղելութեանց նկա-  
րագրութեան մեծ նմանութիւն կայ. բայց զա այն-  
պիսի նմանութիւն է, որ ամեն մի անձ ցանկալով պատ-  
մել լիկիանոսի գործերը, ինչ աղբիւրից էլ առնելու լի-  
նէր, այնու ամենայնիւ անհրաժեշտապէս այդ չափով  
նմանութեան արդիւնքի կը հասնէր:

|                            |                     |                     |
|----------------------------|---------------------|---------------------|
| Խ ո Ր .                    | Մ Ե Տ . Սոկրատ .    | Փ ո Ք Ր . Սոկրատ .  |
| Ննդութիւն գաղտնի           | Ծածուկ զբաղումս նե- | Գաղտնի վնասել լա-   |
| ընդդէմ Կոստանդնուսի. չէր . |                     | նայր չգրիտունեայն . |
| Ն. չորիս բազմազանս         | Ն. եղև նախտանս      |                     |

4.

ամենեցուն հասոյց. որ այս առ տեղեւան. յիջ.

ընդ իւրով իշխանութեան  
էին:

Յազովեաց շորս ընդդէմնդ եղև միայն ուր էրն Յաբուցանէ գատերազմ  
Մանալ գատերազմու: Կիրանու: և գատե- առ նա:  
բազմել սկսան ընդ  
միմեանս:

Ահա միակ նմանութիւնները և այն էլ Մեծ Սոկրատին աւելի մօտ: Սակայն պ. Կարիերը բաւական սուր զուգահրոթիւններով գալիս է այն հետեանքին թէ ամբողջը՝ Փոքր Սոկրատից է առնուած: Նա այսպէս է դատում. Խոր. նոյն գլխում Գլափիւռոսս կոյսի և Ամասիայի եպիսկոպոս Բասիլիոսի պատմութիւնը կարող է առնուած լինել ս. Բասիլիոսի վարքից. ցաւն այն է, որ Խոր. և վարքը շատ են իրարից տարբերուստի ենթադրում է, Եւսեբիոսի եկեղեցական պատմութիւնն է Խորենացուն աղբիւր ծառայել: Սակայն այդ կարծիքն էլ իբրև ոչ բաւական հիմնաւոր, ստիպուած է մի կողմ թողնել: Այդ ենթադրութեանց վերայ երրորդն աւելացնելով եզրափակում է. Խոր. ՁԸ գլուխը գրելիս՝ օգտուել է սկզբում Եւսեբիոսից. Լիկիւնիոսի մասին տեղեկութիւններով, իսկ միջի մասը ս. Բասիլիոսի վարքից, ոչ անմիջապէս, այլ հայերէն փոքր Սոկրատի միջոցաւ: Ապացոյցներն են.

ա. Խոր. Կոստանդնի պատմութեան սկիզբը (գլ. 29.) առել է Փոքր Սոկրատից, շարունակութիւնն էլ անկասկած նոյն տեղից կառնել: Մենք ցոյց ենք տուել արդէն որ հակառակն է ուղիղ:

բ. Խորենացու գործածած «Քաղկիդուս» յատուկ անուան անսովոր ձևը անունները այլասեռող Սոկրատի

տից է՝ մենք տեսանք որ Սոկրատը (Մեծ և Փոքր) այդ անուան տեղ ի թեսադոնիկէ՝ ունին:

գ. Խորենացու գործ ածած «գնել ի մետադո»<sup>1</sup> դարձուածը կայ Սոկրատի մէջ և նա քանիցս գործ է ածում: Մենք տեսանք որ Սոկրատը այս անգամ այդ բառը չունի:

Այս դէպքումն էլ կարիերի ասածները իրանք իրանց ժխտում են: Խորենացին դժբախտաբար չէ ունեցել իւր ձեռին Սոկրատի պէս պարզ և ճիշդ տեղեկութիւններ տուող մի պատմագիր, այլ միայն և միմիայն Ամասիոյ եպիսկոպոս Բասիլիոսի վկայարանութեան նրման մի գրուածք, որից նա միտամանակ քաղել է ամբողջ գլուխը. և ոչ թէ մի մասը Եւսեբիոսից, մի քանի նախադասութիւններ Բասիլիոսի վարքից՝ այն էլ Սոկրատի միջոցաւ: Իսկ թէ վկայարանութիւնից է օգտուել և ոչ թէ լուրջ պատմութիւնից, հաստատ ապացոյց են Խորենացու հետեւեալ տողերը, որով նա փակում է կոստանդնի վարքը. «Ձի ի չորորդ ամէ հալածանացն սկսեալ թագաւորել (կոստանդիանոս) մինչև յերեքտասաներորդ ամն խաղաղութեամբ, զոր և այսօր տօնէ աշխարհ»,<sup>2</sup> վերջացած է ուղիղ այնպէս՝ ինչպէս լրանում է իւրաքանչիւր վկայարանութիւն:

Լիկիանոսի պատմութիւնից յետոյ Սոկրատը շարունակում է պատմել Արիոսի հերձուածի ծագելը և Արիւսի ժողովի պատմութիւնը, ապա կոստանդին

1. Գ. Կարիերը սխալ է հասկացել և սխալ թարգմանել «ի մետադո» տես այդ մասին Ն. Բիւզ. յիշ. յօդուածում գրած նկատողութիւնը:

2. Համեմ. Սոկր. Ա. 17 էջ 49 «Եւ տանն նաւակատիս ի ԺԳ. սեպտեմբերի»:

ԿՌ.

Մեծի աշխարհաշինութիւնը մինչքեռ Խորենացու մեջ  
առաջինը վերջինիս շարունակութիւնն է կազմում, իսկ  
Լլրիոսի պատմութիւնը հետևեալ ՁԹ գլխումն է գրած:

5.

Խոր. Բ. Գ. ՁԲ. էջ. Փ. Սոկ. էջ 42—44.  
174—175.

Եւ ոչ պարտ վարկու-  
ցեալ ի Հռովմ դառնալ, այլ  
ի Բիւզանդիոն անցեալ հաս-  
տատեր զարքունիսն, յանր-  
ջական իմն նախատեսութեանց  
հրամայեալ. գերապայծառս  
իմն առնելով շինուածս, հըն-  
գազատիկ յաւելեալ մեծա-  
ցուցանէ:

Իսկ Թագաւորն գառ-  
նայր յետ այսորիկ յարեմը-  
տից ի Պոստանգնուպոլիս ...  
և զհամանուն քաղաքն իւր  
... յարգարեր (շինուածս)  
ըստ տեսլեան ցուցակութեան  
նմա ...

Խոր. մէջ ուրիշ տեղեկութիւններէրից յետոյ որ  
չկայ Սոկրատի մեջ, շարունակուում է.

«Այլ Պոստանգինոս ամենա-  
պատիկ յարգարեաց և ան-  
ուանեաց նոր Հռոմ, իսկ աշ-  
խարհ կոչեաց զնա Պոստան-  
դիանու քաղաք: Ասեն զայս  
եթէ գազանի եհան ի Հռովմայ  
զպատեցեալն պազատիոն քեր-  
ծոյ, և եդ զնա ի փորանիններջոյ  
սեանն զառ ի յիւրմէ կանգ-  
նեալ. բայց այս մեզ անհա-  
ւատաղի է: այլոց որպէս կամք  
իցեն:

առաւելեալ յամենայնի քան  
զԹագաւորեալ քաղաքն Հռով-  
մայեցւոյ որ Պոստանգինա քա-  
ղաք անուանեաց հրամանաւ,  
և երկրորդ Հռոմ տիրացոյց ի  
վերայ աշխարհին ... և հիմ-  
նարկութիւն սուրբ Սոփեայ  
ըստ անրջոյս տեսութեան Քը-  
րիստոսի և զպատկերս կռօցն  
յորմս ըստ քարացն յար-  
մարեալ հրամայեր. և տեղ  
փորանեա զերեքստեայսն,  
յասպարիսի քաղաքին հը-  
րապարակեալ ... գներ: Զայս

այժմ աւելորդ է տսել ըզ-  
տեսեալ և զլուեալս զի յայ-  
նրմ ժամ օրինօք . . .

Մեծ. Սոկր. Ա. 16. էջ 42—44.

Իսկ թագաւորն յեա ժողովոյն ուրախութեամբ կեայր։  
Եւ ի կատարել քսան ամիս . . . յիկքեան իսկ համանուան  
որ յառաջն Բիւզանդ կոչէր, աննցոյց զպարիսպն մեծամեծս  
ածելով շուրջանակի հոլովիւք զարդարեալ շինուածովք,  
հաւասար թագաւորեցելոյն Հռովմայեցւոց Կոստանդնի քա-  
ղաք անուանելով. հրամանաւ և աւրինաւք երկրորդ Հռոմ  
տիրացոյց . . . և զգլխունն զերեքոտեանն յասպարիսիս  
ինորին քաղաքիս հրապարակեալ զնէր, Ջայս տսել այժմ  
աւելորդ թուեսցի. տեսնէք յառաջագոյն կամ լսէք։

Մեծ Սոկրատի և Խորենացու մէջ պատմութեան  
ընդհանուր կապ կայ. Սոկրատը իւր տեղեկութիւն-  
ներ, առել է Եւսեբիոսից «Որոց ի թագաւորին զո-  
վեստի մեծաձայն պատմութեամբ Եւսեբիոսի Պամ-  
փիլիա յիշատակ առնէ»։ Մոյնը չէ՞ արդեօք և Խորե-  
նացու աղբիւրը։

Այլ է Փ. Սոկրատը, որի մի շարք յաւելուած դար-  
ձուածները, որով դարձեալ հեռանում է իւր բուն  
բնագրից, հաստատում է, որ համառօտողը Խորենա-  
ցուն համարեա բերան դիտէ։ Նա պատմում է հա-  
մաձայն Խորենացու, թէ Կոստանդինը «գտնայր յա-  
րեմից ի Կոստանդնուպօլիս» և «ըստ տեսլիան ցու-  
ցակութեան» կամ «ըստ անըջոյն տեսութեան Քրիս-  
տոսի» ձեռնարկում է վերաշինել Բիւզանդիոնը, «որ  
Կոստանդինա քաղաք անուանեաց»։ Մեծ Սոկրատի մէջ  
ոչինչ չէ յիշուած, ոչ այն մասին թէ Կոստանդինը  
արեւմուտքից վերադարձաւ Բիւզանդիոն և ոչ էլ թէ նա

քաղաքը և եկեղեցիները շինուժ էր չլսած անընդհատ տե-  
 ութեան կամ յանընդհան իմն նախատեսութեան: Այժմ է  
 Խորենացին է փոխ առել Փոքրից, ինչպէս Կարիերն է  
 հաստատել ցանկացել, ապա որտեղից է նա վերցրել «Նոր  
 Հում»: «Պաղատիոն քերածոյ» (Փ. Ս. «զտեղ փորտո-  
 նեա զերեքոփեսայսն») և «ի փորոնին» յունարէն բառը՝  
 որի տեղ Փոքրը յասպարիսի ունի: Ինչ որ ասել ենք  
 պէտք է նորից կրկնենք. փոխառութիւն կայ, փոխա-  
 ռութիւնը եղել է Խորենացուց և ոչ հակառակը: Կոս-  
 տանդինը վերադառնում է Բիւզանդիոն, տեսած երազ-  
 ների ցուցմունքներով պայծառացնում և շինութիւն-  
 ներով զարդարում նորոգում է «Ստրատիգոնը»: «Զեւք-  
 սիպոն» բաղնիքը՝ մարգարաններ շինում, հին արձան-  
 ներով փորում կոչուած հասարակաց հրապարակը զար-  
 դարում:

Սոկրատը Ստրատիգոնը յիշում է այն առթիւ, որ  
 նրա առաջ Կոստանդինը Կոստանդինա քաղաքի հիմ-  
 նարկութեան արձանագրութիւն կանգնեցրեց և միւս  
 գործերից, որ նա դեղփեան երեքոտեանները «յաս-  
 պարիսի քաղաքին հրապարակեալ ղնէր»: Խորենացին  
 չէր կարող փոքրիկ հատուածի սկիզբը և վերջը Սոկ-  
 րատից վերցնել, միջի մասը ուրիշից, քանի որ Սոկ-  
 րատի տուած տեղեկութիւնն էլ նրան լիովին բաւա-  
 կանութիւն կտային: Սոկրատին աւելի նման է Միքա-  
 յէլ Ասորին (էջ 129):

Խորենացու ՁԹ. զլուխը «Յաղագս Արիստի չարա-  
 փառի» և ժողովոյն որ եղև ի Նիկիայ և սքանչելեացն:

որ երևեցաւ ի Նիկիոյ: Սոկրատի պատմութիւնից տարրեր ձևով է պատմած. պ. կարիերի ենթադրութիւնը այդ մասին նոյնպէս անհիմն է:

7.

Խ. Բ. Պ. Ղ. էջ 176—177

Երթեալ Ռըստակէս ընդ մեծին Ղևոնդի, հասանէ ի քաղաքն Նիկիացոց, ուր եղեն ժողովեալք հարք երեք հարիւր և ութ և տան ի քաքառմն Արիտնոսաց, զորո նզովեալ մերժեցին ի հազարգութենէ եկեղեցւոյ. սազէս և ինքնակալն արտասահմանեաց ի մետաղս: Ապա զարձեալ Ռըստակէսայ արժանահաւատ բանիւ և քոան կանոնեալ զլիտովք . . . .

Սոկ. Փ. էջ 39—40.

Եղև ժողով ի Նիկիոյ և յեա ժողովոյն և հաստատութեան հաւատոյն և սահմանի կանոնի ս. ժողովոյն արտաքրոսահմանութեանն Արիտի ի մետաղս ի թագաւորէն և ի նոյն խորհոյցոց, ամենայն ս. ժողովս գնացին յիւրաքանչիւր աշխարհ. ուղիղ հաւատովն և կանոնեալ սահմանադրութեամբն:

Մեծ Սոկրատի մէջ սոյն պատմութիւնը շատ ընդարձակ է. Փոքրը մի քանի նախադասութեան մէջ է ամփոփել, ինչպէս Վիկինսոսի թագաւորութեան և ամենութեան պատմութիւնը. նա նոյն իսկ սաստիկ համառօտութեան մէջ շեղուել է բուն բնագրից՝ ստորկաբար հեռեւելով հեղինակաւոր Խորենացուն, նրանից վերջնելով:

«Արտաքրո սահմանութեան Արիտի ի մետաղս» և «ամենայն ժողովն գնացին յիւրաքանչիւր աշխարհ ուղիղ հաւատովս և կանոնեալ սահմանադրութեամբն»:

Մեծի մէջ ասուած է. «Եւ հրամանաւ թագաւոր

ըին զԱրիոս և զորս ընդ նմայն և ընդ Թեոդոսիսի-  
յաքսորս առաքեցան»:

8.

Մով. Խոր. Բ. գլ. 2Ե.  
22 էջ 169—174.

Փ. Սոկ. էջ 61—67.

Բայց յաղագս հաւատոց  
Միհրանայ և աշխարհին Վրաց  
ասել կայ մեզ առաջի.

Ընդ ժամանակս և Վրաց  
լինի կոչումն ընծայութեան  
հաւատոյ ընդ նախանամու-  
թեան.

Կին ոմն անուն նունէ,  
յընկերաց որոց Լուիփոսիմ-  
եանցն իցրուելոցն, փախըս-  
տեամբ հասեալ յաշխարհն  
Վրաց ի Մծխիթոյ՝ ի նոյն  
քաղաքն նախագահ

Կին ոմն լի պարկեշտու-  
թեամբ հալածեալ վասն Բը-  
րիստոսի գայ ի Վիրս, ի քա-  
ղաքն նախագահ, ուր էր Թա-  
գաւորն Վրաց.

յոյժ ճգնութեամբ սասցեալ  
չնորհն բժշկութեան, որով  
և զբազում ախտաժեռա բը-  
ժշկեալ  
և գլխովին զկին Միհրանայ  
առաջնորդին Վրաց.

Ճգնաւորեալ պահօք և ա-  
ղօթիւք (պատմուած է Թգր.  
որգու բժշ. նունէի ձեռքով  
որ չկայ Խոր. մէջ),  
հիւանդացաւ կին Թագաւո-  
րին, կայր յաղօթս նունէ և  
իսկոյն ողջացեալ.

Խոր. պատմում է թէ ինչպէս հայոց քրիստոնե-  
ութիւնն ընդունելու լուրը հասաւ Վրաստան:

Սև եղև ընդ աւուրսն  
ընդ այնոսիկ ելանել  
Միհրանայ յորս, մուրեցաւ  
ի գժուարս լերանց խաւար-  
եալ օգով. այլ ոչ անսանել-  
եօք, ըստ այնմ թէ գոչէ  
զմէ գ բարբառով . . . .

Յետ աւուրցն ինչ ե-  
լանէ յորս Թագաւորն...  
ունէր մի գային խաւար,  
ուր էր որսն, զլերինս և ըզ-  
գաշտս. զի անպատ էր և  
անսանելի էր ճանապարհն.

Եւ երկիւղիւ մեծաւ պաշարեալ: Խնդրեաց ազօթիւք շուսաւորել օգոյն և դառնալ խաղաղութեամբ: պաշա ել զԱստուածն Նսենէի խոստանայր որում հանդիպեալ: կատարեաց զասացեալսքն:

Եւ յանհարութեան եղեալ կարգայր զաստուածս իւր և ոչինչ օգտեր: Գարձեալ մտախորհ եղեալ: կոչել զԱստուած յօգնութիւն: զոր հալածական կինն պաշտեր: և անդէն վաղվաղակի լուծանէր խաւարն:

Խոր. պատմում է: որ Նսենէն ս. Գլխիգորին հաւատարիմ մարդիկ ուղարկեց խորհուրդ հարցնելու թէ ինչ անի: և նրա խորհրդով կործանում է կուստներն և Քրիստոսի խաչը կանգնեցնում:

Նշան խաչի Գրիստոսի արարեալ կանգնեցին ի վերայ վայելուչ բլրոյն յարևելից կողմանէ քաղաքին . . . .  
Ոչ ճարտարաց ինչ գործ: յուլովք քան զսակաւս արհամարհեցին . . . . իսկ բարեսիրին Աստուծոյ նայեցեալ ի գայթակղութիւն նոցա: աւաքեծց յերկնից սիւն ամպոյ . . .

Եւ հրամայեր կանգնել ըզնշան խաչին Գրիստոսի և զի ոչ էր գործ ճարտարի: արհամարհեալ լինէր ի բազմաց: իսկ ս. կոյսն կայր յաղօթս զգիշերն ամենայն և ի վաղիւն լուսաւորեալ լինէր նշան խաչին . . .

Խորենացին շարունակում է պատմել Նսենէի քարոզութիւնը՝ առնելով Ագաթանգեղոսից «Որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»: իսկ Սոկրատը՝ պատմում է թէ ինչպէս նոր շինուելիք եկեղեցու սիւնը կանգնեցնում է ս. կոյսը իւր աղօթքով: շոր գործաւորքն ոչ կարէին կանգնել: Աւելի հեռաքրքիր է Փոքր Սոկրատի նոյն զլիւս վերջում կցած մի հատուածը: որը ամբողջովին Խորենացուց է առնուած:

«Աստուտ լինի գաշնաւորութիւն Վրաց առ Կոստանդինոս: որպէս զի առաքեացէ նոցա եպիսկոպոս և քահանայս: որ զկարգ եկեղեցւոյ ի նա հաստատեցին: ըստ առաքելուհւոյ կնոջն քարոզութեան: որում անունն էր Կրօնէ: յընկերաց սրբոյն Հռիփսիմեայ: որ ի Հայս կատարեցաւ: Թողում ասել: որ յաղագս նորա է պատմութիւն և հարատալն Հայոց մեծապէ՛ս սքանչելեօք ի ձեռն Գրիգորի Պարթևի Խոստովանողի: որ սասոյ գ ու ց ան է նորին գիրք: Եւ այս ամենայն լինէր ի նոյն ամս:»

Մեծ Սոկր. էջ 61—67.

«Բայց ի գեպ է արդէն ասել: թէ որպէս Վիրք ընդ նոյն ժամանակն քրոսոսնեացան: Կին ոմն ի Վրաց գերեալ լինէր . . . իսկ գերեալն կին կալով բազում ճգնութեամբ . . . կայր յաղաւթս: Իսկ զայս սքանչելիս տեսանելով բարբարոսացն ի գործողէն: սքանչանային (այա թագաւորի որդու բժշկուիլը): Իսկ հռչակ ասաուսա կանանց բարբարոսաց և կնոջ թագաւորին ընթանայր . . . Յետ բազում ինչ իրի և կին թագաւորին անկեալ գնէր ի հիւանդութեան ինչ . . . ասացեալն բժշկէր (ի կնոջէն) . . . Իսկ յետ աւուրց բազմաց ելանել նորա յորս . . . ունէր միգային խաւար զԱստուած գերեցեւոյն առնու և զսա կարգա օգնական և ի յաղթելն ի միգէն խաւարն լուծանի . . . (խաչ կանգնեցնելու պատմութիւնը չկայ: Փղբրի յաւելուածն է: բայց կայ եկեղեցու սեան՝ հըրաչքով կանգնելու պատմութիւնը): Չայս ասէ Ռուփին ի Բագրոյ լուեալ: որ յառաջ էր թագաւոր Վրաց: իսկ յետոյ եկեալ ի Հռոմ կարգապետ: որոց ի Պաղեստին զաւրացն եղեալ . . . »

Նունէի պատմութիւնը ունի նաև վրաց պատմագիր Ջոանշէրը: Երկար և մանրամասնաբար պատմած է նրա մէջ մանկան և թագուհու առողջանալը հա-

՛. Այգրանը Մեծ Սոկրատից է: իսկ շարունակութիւնը չկայ Մեծի մէջ:

մարեա Սահրասի խօսքերով<sup>1</sup>։ Եոյնպէս որտի գէտքը՝  
խաչի և եկեղեցի կանգնելու պատմութիւնը՝ բայց փոքր  
ինչ աարբեր։<sup>2</sup>

Արեք հեղինակ<sup>3</sup> Սարենացին, Սահրասը առնելով  
Ռուսիինոսից և Ջուանշէրը պատմում են Մուսէի գոր-  
ծերը նոյն կարգով և հետևողութեամբ՝ միայն աարբեր  
ընդարձակութեամբ։

Բաղդի ազգիւրը ակն յայանի նոյն է. մենք արդէն  
նկատեցինք անցողակի որ Ջուանշէրը մանկան և թա-  
գուհու հրաշքով առողջանալու պատմութիւնը Մու-  
սէի ձեռքով համարեա այն խօսքերով է գրում ինչ-  
պէս Մեծ Սոկրատը, աչքի ընկնող նմանութիւններ  
կան Սարենացու և Մեծ Սոկրատի մէջ։

Խոր. «Բայց յաղազս հաւատոյ աշխարհին վրաց  
ասել կայ մեզ առաջի»։ Մ. Ս. «Բայց ի դէպ է ասել  
թէ որդէս վիրք քրիստոսնէացան»։

Խոր. «Կին ոմն յոյժ ճգնութեամբ ստացեալ շը-  
նորհս»։ Մ. Ս. «Կին ոմն բազում ճգնութեամբ կայր  
յաղաւթ»։

Խոր. «Եւ եզէ ընդ աւուրս ընդ պնտոիկ ելանել  
Միհրանց յորս, լերանց խաւարեալ . . . զմէզ»։ Մ.  
Բ. «Իսկ յեա աւուրց բազմաց ելանել նորս (Թագա-  
արին) յորս ունէր միգային խաւար»։

Արանք բառացի նմանութիւններ են. ինչպէս Սեդ-  
րեարոսի վարքում, այստեղ էլ կրկնում է նոյն գէտք-

1. Տես Համառօտ պատմութեան Վրաց. Ա. են. 1884  
էջ 44, 54, 55, 60, 64.

2. Տես Սոկրատ էջ 62. են. 1. էջ 63. են. 1.

3. Խոր. Դ. «Եւ իսկոյն եհաս ի նա լուր պտնչելեացն  
որ եզէ ի Հայս».

քը: Խոր. և Մ. Ս. ոչ միայն առանձին բառերով, այլ և ամբողջ նախադասութիւններով կարծես միմեանցից արտագրութիւն են: Չնայած այս հանգամանքին, անհնար է ընդունել որ հեղինակներից մէկը միւսին գիտեմիակ օւղիղ ենթադրութիւնն է: Երկուսը ունեցել են աղբիւր: Սոկրատինը Ռուփինոսն է: Խորենացունը Ազաթանգեղոսը: Ռուփինոսը գրել է լեւելով վրացի Բակուր իշխանից, իսկ թէ սրտեղից է առել Ազաթանգեղոսը գժուար է ասել: քանի որ Ազաթանգեղոսի Մուսնէի պատմութիւն գրած լինելը միայն Խորենացուց գիտենք: Ասել ենք և կրկնում ենք. Խորենացին Սոկրատից չէր բաւականանալ լոկ նախադասութիւններ փոխ առնելով:

Բաշտրովին այլ է Փ. Սոկրատի հարցը. այստեղ միանգամայն հաստատուում է աւելի խօսուն փաստերով որ Սոկրատի համառօտողը Խորենացու ԶԶ գլխի մեծագոյն մասը յետ ու առաջ զննելով տեղաւարել է իւր համառօտութեան մէջ:

Խոր. «Լին ոմն անուն Մուսնէ, յընկերաց որոց Հռիփսիմեանց փախտեամբ հասեալ յաշխարհն Վրաց, ի նոցա քաղաքն նախազահ էին»: Փ. Ս. «Լին ոմն որում անունն Մուսնէ, յընկերաց որոց Հռիփսիմեանց (վերջիցն ենք վերցնում) հալածեալ գայ ի Վիրս ի քաղաքն նախազահ . . . էին»: Մ. Ս. ասում է: որ Մուսնէ գերուած էր. Փոքր, «հալածեալ էր, Մեծը՝ ոչինչ չգիտէ հրաշագործ խաչի մասին, չգի ոչ էր գործ ճարտարի»: Փոքրը առնում է Խորենացուց, ինչպէս նաև Հայոց քրիստոնէանալու յիշատակութիւնը Գրիգոր Պարթևի ձեռքով «որ ստոյգ ցուցանէ նորին գիրք», որ ուղղակի Խորենացու բառերն են, «որպէս ուսուցանէ քեզ Ազաթանգեղոս»:

Ն. Բ. Թարգսեանը իւր յառաջարանի վերջում (էջ 11 և 10) ենթադրում է՝ հիմնուած Խորենացու կրկնակի յիշատակութեան վրայ, որ կարող է Ազաթանգեղոսը իսկապէս գրած լինել Սեդրեատրոսի և Կոստանդնի ծննդեան և թագաւորութեան պատմութիւնը, բայց կասկածելով իւր ենթադրութեան ճշմարտութեան վրայ, յետ է վերցնում իւր ասածը: Վրաց պատմութեան մէջ մենք միջոց ունեցանք Մեծ Սոկրատի բնագրի նմանութիւններով համոզուել, որ Խորենացին ունի այնպիսի տեղեկութիւններ, բառեր և նախադասութիւններ, որ իւր հնարածը և ստեղծածը չեն, այլ անպատճառ յայտնի աղբիւրից վերցրած փոխառութիւններ են: Խորենացին երկու անգամ շատ որոշ կերպով յիշում է այդ հեղինակին և մենք ոչ մի հիմունք չունենք կասկածելու նրա ասածի ճշմարտութեան մէջ: Ազաթանգեղոսի մեր ձեռքը հասած պատմութիւնը չունի այն՝ ինչ որ կայ Խոր. 29 և 29 զլուխների մէջ. հետեւապէս Ազաթանգեղոսը ունեցել է այդպիսի մի պատմութիւն յունարէն և գուցէ վրացերէն գրուածքներից առնուած, որից օգտուել է Խորենացին և որը այժմ կորած է: Համառօտ Սոկրատը Վրաց գարշի պատմութեան գլխում, բացի առաջ բերած յաւելուածներից, ունի փոքրիկ յաւելուածներ, որգե՞՞ք նա ուղղակի Ազաթանգեղոսից չէ՞ առել:

Խոր. Գ. գլ. ԻԲ պատմուած է պարսից Շապուհ թագաւորի յարձակումը Միջագետքի վրայ. նրա դէմ գուրս է գալիս Կոստանդին մեծի որդի Կոստանդը: «Եւ առեալ ճակատ երկորուն կողմանք պարտեցան»: Շատ

անորշ և համառօտ է անցնում ՎՓ. Սոկրատը. «Ըստ  
 ժամանակին ոմն զօրաժար յառնէ ի վերայ արևմտից թագա-  
 ւորին»: Մեծի պատմածը յարմարւում է Խորենացուն.  
 (Բ. 25. էջ 156): «Պարսկական առ Լուսնայեցիսն շարժեցան  
 պատերազմ. ըստ որում Կոստանդոս ոչ գործէր բարեբախ-  
 տաբար, քանզի գիշերամտութիւն եղելոյ ի սահմանն Լու-  
 սնայեցւոց և Պարսից, հզարագոյն յայնմ Պարսիցն առ սա-  
 կաւ ինչ թուեցաւ լինել»: Երկու պատմագիրներն յիշա-  
 տակում են դէպքը միանգամայն անկախ իրարից:

Մոյն գլխի մէջ Խոր. յիշում է Կոստանդինի մահը.  
 «Իսկ Կոստանդեայ արարեալ կեսար զՅուլիանոս, յերկար հի-  
 ւանդացեալ վախճանեցաւ ի Մոփսուեստի քաղաքին Կիլիկիոյ»: Մոփսուեստի  
 անունը փոփոխուած է յունարէն Մոփ-  
 սուկրենոյի անունից. պ. Կարիերը ենթադրել էր, որ այդ  
 անունն ազաւաղութիւնը Փ. Սոկրատիցն է. բայց անհիմն  
 է նրա ենթադրութիւնը: Մախ Փ. Սոկրատի մէջ քաղաքի  
 անունը չկայ, իսկ Մեծում ուղիղ յունարէնի համապա-  
 տասխան ձևն է «ի Մոփսու ջրըողիսն», որի ջրըողիս բառը  
 յունարէն կոյա բառի ձիշտ թարգմանութիւնն է. երկ-  
 րորդ մեծ տարբերութիւն կայ Սոկրատի և Խորենացու  
 պատմութեան մէջ: Ըստ Խորենացու Կոստանդին ինքն  
 է կամաւոր կերպով իւր մահից առաջ Յուլիանոսին կե-  
 սար կարգում: իսկ Սոկրատը պատմական ճշմարտու-  
 թեան համաձայն՝ յայտնում է, որ Յուլիանոսը բար-  
 բարոսներին յաղթելուց յետոյ իրան կայսր է հրատա-  
 րակում. և երբ այդ ըուրը հասնում է Կոստանդին,  
 նա պատրաստուում է զօրքով գնալ և նրան պատժել,  
 բայց սրտի կսկծից ճանապարհին Մոփսու ջրըողիսն-

բում մեռնում է. «կատարեաց վարսն ի հնգամարիւ-  
թենէն ի սրտնեղութեան անկեալ»:

11.

Խոր. Գ. ԳԼ ԺԵ. էջ 202. Փ. Մսկ. Գ. 21. էջ 270, 271.

Պատմում են Յուդիանոսի պատերազմը պարսից  
գէտ և մահչր:

«Աէր ընկալեալ ի փորո- ԅայնժամ գայ սուր սըր-  
տին սասակի»: եալ և հարկանէ զսիրան և  
անդէն սասակեցաւ:

Մեծ Սոկր.

«Եւ յանկարծակի նիզակ լինէր բերեալ ընդգէտ նորա և  
ընդ բազուկս Թափանցիկ եղեալ ի կողսն մտանէր և յայտ  
վիրաց զվարսն շրջէր»:

Միջայ. Ասորի. էջ 145.

«Եւ յանկարծակի եկն նեա մի դիպեցաւ փորոտեացն  
Յուդիանոսի և վայթեցաւ արիւնն»:

Փ. Սոկրատի «սասակեցաւ» առնուած է Խորենա-  
ցուց, ինչպէս նաև հետևեալը:

Խոր. (Գ. ԳԼ ԼԳ. էջ 220):

«Ատղեսի հրակէզ եղեալ յԱզրիանապոլիս՝ սասակեցաւ»:

Փ. Մսկ. (Գ. 38. էջ 397):

«Եւ հասեալ յԱզրիանապոլիս՝ հրով այրեալ սասակեցաւ»:

Մեծ Սոկրատան ունի «մեռաւ»:

12.

Խոր. Գ. ԳԼ ԼԳ. էջ Սոկր. Փղբը էջ 414—415.  
220—221.

«Եւ ժողովեալ ս. հարըն Եւ առաքեաց հրաւիրակս

ի թագաւորեալ քաղաքն Բիւզանդիոնն, Գամատիոս Լուովմայ, (Նեքրատիոս Կոստանդնուպօլսի), Յիմոթէոս Աղէքսանդրի, Մելիտոս Անտիօքու, Կիւրեղ Երուսաղէմի:

Գրիգորիս Նիւսեայ (Գեղասիոս՝ Կեսարու), Գրիգորիոս Նաճիանձու, Ամփիւլղքսիոս Իկոնիու, և այլ եպիսկոպոսք, միանգամայն հարիւր և յիսուն հարք նշովեալ մերժեցին զՄակեդոն:

Խոր. նոյն գլխում.

Սա դարձոյց զամենայն հարըս սուրբս, որ յաղագս ուղղափառութեան արտասահմանեալ էին ի մետաղս. ընդ որս և զՄեծն Ներսէսանէեալ առ իւր ի Բիւզանդիոն պահեցաւ մեծաւ պատուով՝ մինչև ճըշմարտութեանն ստուգեսցի հաւատ:

զալ ի ժողով ի Կոստանդնուպօլիս, (Գամատոս ի Լուովմայ), Յիմոթէոս Աղէքսանդրի, Կիւրեղ Երուսաղէմի, Մելիտոս Անտիօքայ, (որ էր իսկ եկեալ յառաջագոյն առ Գրիգորիոս որ զտեղափոխութիւն ունէր) և Բասիլ Կեսարացի և Գրիգօր Նիւսացի եղբայր Բարսղի:

և Ներսէս Պարթև Լայոց մեծաց [զ]որ ի Վաղէսէէր արտաքասահմանեալ՝ և Թէոփոսի ածեալ ունի մեծ տրանօք մինչև հաւատարմութեանցի ի ժողովոյն: Եւ ժողովեցան հարիւր և յիսուն եպիսկոպոսուք ուղղափառութիւն խոստովանողք:

Մեծ Սոկրատը եպիսկոպոսներից միայն մի քանիսին է յիշում և այն էլ այնպիսիներին, որոնց անունը չկայ Փղբլում.

- 1. Ճառընտիրն յաւելու սուրբն Ներսէս ի Լայոց մեծաց:
- 2. Մի օր. և Ճառընտ. Բաւիլիոս:
- 3. Ա՛. Աքսորեալ:

Իսկ Թաղաւորին ոչինչ սպուծեալ ժողով եպիսկոպոսաց ուղղափառ հաւատոյն առ ի հաստատել զոր ի նիկիայն և ձեռնադրեալ Կոստանդնուպոլսի եպիսկոպոս:

Յուսացեալ կարող լինել և զորս ի Մակեդոնիս միւսարեւ յիւրսն և զորս նոցայ (Տերմուսեոյն) առաջկարգս քննեաց: Եւ ժողովեցան որ ուղղափառ հաւատոյն յԱզգերանդիմոյ Տրեթեոս: Իսկ յերեսուրեմեացեացն Կերիւղոս Մեղեարիոս Անտիոքայ, ի Թեսաղոնիկոյ Արողիոս և այլք բազումք թուով ԸԾ: Իսկ ի Մակեդոնացեաց կողմանէն համարեալ լինէր Եղևզիոս Գիւզիկոսի և Մարկիանոս Լամբուսակա, ամեներեան ԷԶ:

Մեծ և Փ. Սոկրատր այնքան տարբեր են իրարից, որ պէտք է եղբայրակենք. համառօտոցը Սոկրատի պատմութիւնը համապատասխան չգտնելով բուն ազգային պատմութեան, որի բացարձակ հեղինակութիւնը Խորենացին էր, ժողովի պատմութիւնը ուղղակի այդ սղբիւրից է առնում: Նաա հետաքրքիր է տեսնել թէ նա ինչպէս մտածելով և գիտակցաբար է կատարում իւր դրածը: Նա արտագրում է Խորենացուց անունները, չէ վերցնում «Նեկաառիոս Կոստանդնուպոլսի» անունը, որովհետեւ Մեծ Սոկ. որոշ ասում է, որ ժողովի նպատակն էր և Կոստանդնուպոլսի եպիսկոպոս ընտրել և ընտրում են սինկղիտոսի անգամ Նեկաառիոսին<sup>1</sup>:

Բաց է թողնում նաև Գեղասիոս Կեսարու, Գրիգորիոս Նազիանձու և Անփիլոքսիոս Իկոնիոյ, անուններ, որոնք բացի Գրիգոր Նազիանձուց, անյայտ անձինք էին, իսկ Գրիգորի յիշատակութիւնը կասկածելի է, որովհետեւ Խոր. մի օրինակի և ճառընտրի մէջ չկայ այդ անունը: Դառընտիրը զրա փոխարէն ունի «ս. Ներսէս

1. Տես էջ 418. Փարբը այդ գեղբուն էլ է նեկաառիոսի անունը բաց թողնում:

Դ Նայոց մեծաց, իսկ այդ ընթերցուածը հաստատում է Փ. Սոկրատը և միջոց է տալիս եզրափակելու. Սոկրատը օգտուել է Խորենացու այնպիսի ձեռագրից, որի մէջ կար Եւքսէս Մեծի անունը. համառօտը ոչ միայն անունն է վերցրել, այլ նաև նրա աքսորման և ազատման մասին տեղեկութիւնը Խորենացու նոյն ԼԳ զիւրից:

Եթէ կասկած կարող էր լինել մինչև հիմայ բաղդատած օրինակների իսկական աղբիւրի մասին, վերջի օրինակը գալիս է հիմնովին հաստատելու մեր յայտնած կարծիքը և փարատելու իւրաքանչիւր կասկած Խորենացու սկզբնականութեան մասին:

Ահա այսքան փաստական հիմունքների վրայ կարող ենք մեր բաղդատութեան սկզբում նախադասութեան հակառակ նախադասութիւնով եզրափակել մեր ասածները:

Մովսէս Խորենացին շատ յայտնի եւ համարեա կանոնական նշանակութիւն ստացած հեղինակն էր այն ժամանակ, երբ կրճատոււմ էր Մեծ Սոկրատը, եւ համառօտողը խոնարհելով նրա մեծ հեղինակութեան առաջ, նոյն իսկ իւր քննադիրը՝ ըստ այնմ է փոխում, շարունակ օգտուելով Խորենացուց:

## ԺԱ.

Փոքր Սոկրատին շատ անգամ համառօտ ասելով, ցանկացել ենք պարզ և որոշ կերպով յայտնած լինել որ Սոկրատը հայերէն միայն մի անգամ է թարգմանուել. իսկ միւսը՝ Փոքր կոչուածը, որը մինչև այսօր կամ երկրորդ կամ աղաւաղուած թարգմանութիւն է ճանաչուել, ոչ այլ ինչ է, եթէ ոչ առաջինից համառօտ:

առևձև տեղ տեղ նորամուտ յաւելուածներով, տեղ տեղ կրճատումներով: Ռէ յապաւուցն է թէ յաւելուածը աներկրայ են կացուցանում որոշ յայտնի վերաբերում, գիտակցական գիտաւարութիւն Համառօտողի կողմից: Ոտար գրականութիւնը մի կողմ թողնենք, Հայոց գրականութեան մեջ իսկ ունենք բազմաթիւ օրինակներ թարգմանուած գրքերի Համառօտելուն, երբեմն նոյն իսկ թարգմանողի կողմից. յիշենք մի երկու դէպք: Մեր մատենադարանում կան Յովհան Ոսկերերանի Գործոց Առաքելոցի մեկնութեան կրրկնաձև օրինակները. մէկը բուն թարգմանութիւնն է, հրամանաւ Գրիգորիս կաթողիկոսի և ձեռամբ Արապիկոսի և միւսը նոյն կաթողիկոսի ցանկութեամբ կատարուած Համառօտութիւնը: Ունենք Համառօտութիւն և մինչև անգամ ոտանաւորի դարձրած հոչակաւոր Բարադամ և Յովսափու պատմութիւնը, որի ընդարձակը մենք միայն վերջերս գտանք մեր մատենադարանի ձեռագրերում, ունինք բազմաթիւ հարանց վարքեր, ընդարձակ և կրճատուած. սովորական լինելով այդ երևոյթը, զարմանալի չէ որ միանգամ մեծ նեղութեամբ թարգմանած գիրքը կրճատուել է:

Համառօտողը՝ անուկ անյայտ ոմն, Խորենացուն լաւ ճանաչող, սրբոց վարքեր երկար ժամանակ քրքրած, աղանդների և հերձուածների դէմ զինուած, քաղկեդոնականութիւնը և Լեւոնի տոմարը ասող նեղ սիրտ կրօնական է: Սոկրատի պատմութիւնը նրան հետաքրքրել է. նա նրա մէջ գտել է եկեղեցական ամենամեծ ներկայացուցիչների, ամենամեծ դէպքերի յիշատակութիւնը, բայց Սոկրատն ունի պարզ ոճ, հեռու է հարանց վարքերում շատ գործածական ձևերից:

եկեղեցու հայրերին յիշելիս անպատճառ՝ երանելի սուրբ աստուածասէր Էլն. ածականները չէ գործածել, բուն պատմութիւնը թողած, գերբնական հրաշքներ չէ պատմել. համառօտողը լրացրել է կամ ձգտել է լրացնել այդ բոլոր կարծեցեալ պակասութիւնները: Նա շատ անգամ ամենակարեւոր դէպքերը մի գրչի շարժումով անցնում է, դրա փոխարէն երկարացնում, աւելացնում և փոփոխում է որոշ անձանց կենսքն ու գործերը համաձայն վկայարանական կանոններին: Այդպէս վարուելիս նա երբեմն իւր սիրելի ազգային սորիւրներէն է օգտուում, աւելի շատ անգամ ինքն է ուղղակի բառեր նախադասութիւններ աւելացնում, որոնք սակայն պատմութեան էութեան վրայ նոր բան չաւելացնելով, մնում են առանց որ և է նշանակութեան: Սոկրատը նրա համար բաւական կրօնական գիրք չէր, թէև եկեղեցւոյ պատմութիւնն է նրա նիւթը. նա ցանկացել է ստեղծել այդ կրօնական գիրքը. այս և միմիայն այս պատճառով է ձեռնարկել իւր աշխատութիւնը:

Վայ և միւս պատճառը. սկզբնական թարգմանութեան լեզուն ծանր, դժուարահասկանալի է, ոչ յունագէտները հեշտութեամբ չեն հասկանալ այդ լեզուն, համառօտինը անհամեմատ հեշտ թեթեւ լեզուով է գրած: Սակայն համառօտողը բացի իւր հայերէնից, այն էլ ոչ հիմնովին, ուրիշ բան չէ իմացել: Անընդհատ նկատելի է, թէ բնագիրը լաւ չհասկանալով, սկզբնական մտքին հսկառակ միտք է արտայայտել իւր համառօտութեան մէջ. յատուկ անունները ուղղակի անտանելի են, նա ալլանդակում է յունական անունները, գուցէ ցանկանալով հայացնել:

Մի բան շատ աչքի է ընկնում. գրքի ամբողջ շարունակութեան մէջ նա ձգտել է այնքան փոխել իւր կազմած օրինակը, որ վերի վերոյ նայողին նոյն իսկ կասկածելի կարող է թուալ. արգեօք համառօտը առաջի թարգմանութիւնից է ծագել, թէ ինքնուրոյն թարգմանութիւն է:

Տէր Շմաւոն քահանան առաջինն է, որ որոշել է թէ համառօտը աւելի ուշ և առաջինից՝ մեծից է ծագած. «Յուկաց լեզուէ թարգմանեցաւ, որ յետոյ համառօտեցաւ»: Մենք արդէն ցոյց տուինք որ նորագոյն պատմիչները Հ. Չամչեանն և ին. միայն մի թարգմանութեան գոյութիւնն իմանալով, սղաւաղեալ էին հրատարակել այդ թարգմանութիւնը, իսկ ոմանք մինչև անգամ պնտել են որ համառօտն է սկզբում թարգմանուել և ապա ընդարձակը:

Այդպէս պ. Ն. Բիւզանդը ծանօթանալով Տ. Շմաւոնի յայտնած կարծիքի հետ, առարկում է. «Հակառակն ինձ թուի առաւել հաւանութեան, անհաւատարմութիւն, խառնակութիւն և բազմապատիկ սխալանք համառօտին յորդորեցին զայլ ոմն վերստին յեզուլ ի հայ բարբառ զպատմութիւն Սոկրատայ հաւատարմութեամբ և ուղղագոյն»: ' Անծանօթ Տ. Շմաւոնի յայտնած ուղիղ կարծիքին, բայց նրա պէս միջոց ունենալով երկու խմբագրութիւնները միմեանց հետ բազդատելու, յայտնել էինք մենք ևս նոյն կարծիքը, որ Հ. Բ. Սարգսեանին անհիմն է թուացել, ուստի և կարիք է զգացել հակաձառելու և ըստ իւր թիւր կարծիք յայտնողին՝ վիրաւորելու: Ինչքան զգոյշ և

Վերջին է պ. Կորայրը իւր ենթադրութիւնը արտայայտելիս, այնքան աւելի ինքնավստահ և համարձակ է գտնուել Հ. Բարսեղը<sup>1</sup>:

Թէև ինքն ըստ ինքեան առանձին օրինակներէ և բացատրութեան կարիք չկայ ցոյց տալու Փ. Սոկրատի համառօտութիւնը Մեծից, բայց որովհետև ինչպէս ասացինք, համառօտողը ձգտել է անձանաչելի կացուցանել իւր գործը, աւելորդ չենք համարում մի քանի աչքի ընկնող օրինակներով պարզ կացուցանել այդ իրողութիւնը:

Մեծ Սոկրատի թարգմանը թուղթ չունենալով իւր տրամադրութեան տակ, բնագրից շատ թղթեր չէ թարգմանել. այդ չկայ և համառօտում. յատուկ անուանց սխալ ձևը Մեծի մէջ՝ կրկնուում է և Փաքրում. և վերջապէս մի քանի հատուածների համեմատութիւնը (Տես Ա. 22. էջ 60, 70. Սկիւթացի ոճի Ա. 24. էջ 79. Ճն. Զ. Ա. 26. էջ 85. Ճն. Ա. 86. Ճն. ա. Ա. 27. էջ 90. Ճն. Դ. Ա. 37. էջ 105. Ճն. Գ. Ա. 38. էջ 109. Ճն. Ա. 110. Ճն. Ա. Դ. 23 էջ 335 և ըն.) աներկբայ են կացուցանում մեր ասածը:

1. Հ. Բ. Ս. էջ 2. Ճն. 1. ... Առաջին կամ ընդարձակ թարգ. գոր Փ. Յ. Մովսիսեան «Արարատ. 1893 թ. Ա. Փիլոն Յիրակացւոյ կը համարի, ոչ միայն անկէ դարերով վերջ պէտք է եղած ըլլայ, այլ և ոչ Խորենացին անկախ ( ) գիտութեան յայտնի նշաններ են տնոր բանից և բառից կազմութիւնքը, զորս քիչ թէ շատ հայերէն գիտցնող կարէ իմանալ»:

Եթէ Հ. Բ. ներդրութիւն կրեր հասկանալ յունարեն բընագիրը՝ գտնէ իւր լաւ իմացած հայերենի միջոցաւ, արամադիր ենք ընդունելու, որ կարող կը լինէր ուրիշ կարծիք յայտնել:

Սեղբեստրոսի վարքը Մեծի մէջ վերջն է դրած. ամենայն հաւանականութեամբ 18 տարի Սոկրատի պատմութիւնից առաջ թարգ. Վարքը նոյն ինքը Փիլոն Տիրակացին է աւելացրել իւր Ձեռագրի վրայ, երբ ատել է «քարտ ու մագաղաթը» ոչ միայն բաւականացաւ, այլ և աւելացան: Երուսաղէմի Ձեռ. փոքր յիշատակարանը հաստատում է մեր ենթադրութիւնը.

«Այժմ պատշաճ համարեցաք առ նմին գրոց գրել ձեռամբ Թովմայ դպրի պտորասս լինելով մագաղաթիդ»:

Համառօտողը Սեղբեստրոսի վարքի հետ միացած օրինակիցն է կրճատել. միայն թէ ձեռագրի մէջ յետադաս վարքը ժամանակով Սոկրատի պատմութիւնից նախադաս լինելով, Փոքրի մէջ առաջ է դրուել:

Ուղհանուր դժերով որոշելով համառօտողի անձնաւորութիւնը, բնականաբար հարց պիտի տանք թէ երբ է կատարուել համառօտութիւնը. բայց որովհետեւ այս հարցը դրական անհերքելի փաստ չունի, այլ լոկ ենթադրութեանց վրայ հիմնուած կարող պիտի լինի որոշ եզրակացութեան դալ. ուստի անհրաժեշտ է նախապէս որոշել Մեծի թարգմանելու ժամանակը: Ժամանակի որոշման խնդիրը սերտ կապ ունի Խորենացու հետ:

### ԺԲ.

Փիլոն Տիրակացի է Սոկրատի պատմութեան թարգմանի անունը: Հին պատմագիրներից նրան յիշում է միայն Ասողիկը, իսկ այնուհետև ոչ ոք բացի երկու Ձեռագրերի յիշատակարաններից: Փիլոնի միայն անունն է յայտնի, իսկ նրա անձի մասին ոչինչ չբեր-

տենք: Եւ Տիրակն գաւառից էր ուստի և կոչւում է Յորտեացի: Այդ մահդիրը ունին Ասորիքը և Նր. Զեռս մեծ յիշատակարանը: Ոմանք այդ անունը խառնում են Շիրակի հետ Տերտեացի կամ Շիրակացի կոչելով նրան՝, բայց անհիմն կերպով. այդ անունով գաւառ կայ յիշուած և ուրիշ տեղ: Իբրև մաս Շիրակայ: 2

Արուստղէմի Զեռագրի մեծ յիշատակարանը տեղեկութիւն է առջիս գրքի ժամանակի և թարգմանչի մասին: Թարգմանութիւնը եղել է «Ճարտար» և ոչ ամբողջութեամբ և «առաջին ձեռնարկութեամբ»: գիրքը թարգմանուել է օտարութեան մէջ, որտեղ «քարա և մագաղաթ» պակասել է, ուստի թարգմանը ստիպուած գրքից մի մասը առանց թարգմանելու է թողել: Կեհարտի մէջ մեծ տեղ են բռնում պատմական թղթեր և վկայականներ, մանաւանդ սկզբի գրքերում. ահա այդ թղթերը և «ինքնախաւսութիւնը» են առանց թարգմանելու քննարկ պատմական մասից ոչինչ է կրճատուել: Թղթերի վերաբերմամբ թարգմանը այսպէս է վարուել. նա կամ փորձել է կրճատել և մի քանի նախադասութեանց մէջ ամփոփել թղթի բովանդակութիւնը (Ա. էջ 99. Բ. էջ 119, 177, 181, 202

1. Լ. Ալիշան Շիրակ. էջ 5. Անանիա և Փիլոն Շիրակացիք՝ Գ. Զարբ. Հայկ. հին Գպ. Պատմ. էջ 456—457.

2. Զեռ. Մայր Աթոռի թիւ 942. Ճառքնաիր 9. գըրած 21է (1277) թ.-ին. «Պատմութիւն գեաորգել Ս. Նշանին գերահռչակ ուխտին Խաւարձորո Վթագաւորն յունաց Վասիլ առաջի զնէ Յովհաննէս Հայոց թագաւորի . . . . . առ ի ձեռս իշխանութեան նոցա զքաղաքն Անի հանգերձ նահանգաւք Շիրակայ և Յիրակայ և Պաղակայ»: Այս տեղեկութիւնը ստացել եմ Միաբանից:

էին)։ Իսկ իւր աչքում փարեւոյ համարուած հասուածն է։ Թարգմանելով ումբոզ թղթից (Ա. 62 20. Բ. 128 էջն)։ և իսկ ուղղակի բաց է թողել ամբողջութիւնը (Բ. 128, 142, 143, 182)։ Արա այդ դարձողութիւնից շատ պարզ երեւում է որ նա սահմանափակ մէկն էր. կրճատումները անյաջող և անհասկանալի են. Թարգմանութեան համար ընտրած հասուածները չեն հաղմում թղթի էական մասը. և որ դիտարկն է։ անփոփոխ թողել է բնագրի այն նախադասութիւնները որոնցից յետոյ ընթերցողը սպասում է կարգաւ անմիջապէս թղթեր, որ սակայն չկան Թարգմանութեան մէջ։ Վերջի դրքերում Թարգմանուած են բնագրի թղթերը՝ ապացոյց, որ Թարգմանի «քարան և մագաղաթը» հաշուից աւելի են դուրս եկել։

Երբ է՞ Թարգմանուել Փիլոնը։ Յիշատակարանը տալիս է հինգ համաժամանակ թուեր, որոնց միջոցաւ որոշուում է ամենամիշտ կերպով Թարգմանութեան տարին։

1. «Յամի վեց հազարերորդի չորրորդի կենցաղում անցաւորի որպէս ունի ս. Սոփի աւագ եկեղեցի տիեզերական մայրաքաղաքին Վոստանդնուպօլսի» 6204—5508=696 Փրկ. թիւ։

2. «Եւ յեւթն հարիւրերորդի չորրորդի Քրիստոսի գալստեանն» (704). Այս միակ թիւն է, որ չէ համապատասխանում միւսներին. բայց ի նկատի առնելով որ համարեա բոլոր թուերը 4-ով են վերջանում, կարելի է ընդունել, որ այս գէպքում 700-ի վրայ 4-ը յետոյ է աւելացրած. իսկ Փրկի և աշխարհի ստեղծման թուերի մէջ միշտ երեք չորս տարի զանազանութիւն կայ, այնպէս որ կարելի է դարձեալ ուղիղ 696 թ. ստանալ։

3. «Եւ ի հարիւր քառասուն և չորս թուականին»  
(այսինքն Հայոց), որ է  $551 + 144 = 695 - 696$  Փրկ.:

4. «Ի յիններորդումն ընտիրտինի», եթէ ընտիրտինը հայկական թւից՝ 144-ից հաշուենք, կրտտանանք, ուղիղ 10-րորդ ընտիրտինի 9-րդ տարին  $= 695 - 696$  թ. իսկ եթէ յունաց ընտիրտինով հաշուենք, այն է կոստանդին մեծի Քրիստոսի խաչք տեսնելու 313 թ-ից 15ական տարի աւելացնելով կրտտանանք 26-ը՝ ընտիրտինի 9-ը տարին, որ է  $25 \times 15 = 390$ .  $390 - 7 + 313 = 696$  Փրկ. թ.:

5. «Յառաջնում ամի թագաւորութեան երկրորդ՝<sup>1</sup> Ղևոնդի ինքնակալի Աւգոստոսի», 695—696, <sup>2</sup> Ուրեմն Սոկրատի թարգմանութեան ուղիղ տարին 695—696 թիւն է:

Յիշատակարան գրողը շատ հաւանական է որ ինքը թարգմանը լինի, որը տալիս է շատ համառօտ, բայց այնպիսի տեղեկութիւններ, որ միայն թարգմանին կարող էին յայտնի լինել. նա խօսում է՝ «քարտի և մագաղաթի» պակասութեան մասին, յայտնում է թէ ինչ ձևով է թարգմանել և որտեղ, այն է օտարութեան մէջ: Առանձին ուշադրութեան արժանի է «Թարգմաննաց առաջին ձեռնարկութեամբ», որով ալընյայտնի զգալ է տալիս, որ գիտէր նաև երկրորդ ձեռնարկութեամբ թարգմանութիւնը, կամ ուրիշ խօսքով համառօտութիւնը:<sup>3</sup>

1. Չեռ. ունի երորդ, գրչի սխալն է անկասկած փոխանակ երկրորդի:

2. Սա թագաւորեց 695—698 թիւը:

3. Արդեւք հենց ինքը Փիլան Տիրակացին չէ եղել համառօտողը, բայց այս գեղքում գտուար է բացատրւում յատուկ անունների այլանդակութիւնը:

Հինգ համաժամանակ թուերը աւելի են հաստատում այդ ենթադրութիւնը: Փիլոնը Անանիա Արապացու ժամանակակից էր, երբ տոմարագիտութիւնը ըսկսեց ծաղկել, և կարծես հինգ թուերը իրար մօտ շարելով, ցանկանում է իւր տոմարագիտական գիտութիւնը ցոյց տալ<sup>1</sup>: Յայտնի է որ յիշատակարան գրողները սովորաբար գրքի վերջումն են դնում. բայց Փիլոնը մի տեսակ յառաջաբանի պէս Սոկրատի և Սեղբեստրոսի վարքի սկզբումն է տալիս:—Իւր մասին երրորդ գէմքով գրելով—Խիստ համառօտ բայց և խիստ կարևոր տեղեկութիւններ:

Ասողիկը Սոկրատի թարգմանութեան ժամանակը Անատաս կաթողիկոսովն է որոշում որը գահի վրայ էր 671—677 թիւը, յայտնի չէ Ասողիկը ինչ տեղից է առել այդ թիւը:

Սոկրատի թարգմանութեան ժամանակը որոշելուց յետոյ, միջոց ունինք ամենաճիշդ կերպով որոշելու նաև Սեղբեստրոսի վարքի թարգմանութեան ժամանակը: Սեղբեստրոսի վարքի համար ասուած է. «Յառաջ քան զութուտանն ամ ի թարգմանելոյ Փիլոնի զգիրսդ զայդ Սոկ. եկեղ. պատմ. թարգմանեալ էր զգիրս պատմ. վար. Ս. Սեղբ.», Սոկրատի թարգմանութեան տարուց 695—96 հանած 18—677—678 թիւ: Թարգմանողն է Աբաս կամ Աբբա<sup>2</sup> Գրիգոր Զորոփորեցին Արայ իշխանի փեսայ Ներսէհ կամնարականի առաջարկութեամբ, որը արժանի էր չընդ փառաւորս յիշելոյ»:

1. Հաս նման է մի յիշատակարան՝ ազած Յակ. Տաշեանի Մանր Ուսմունք. Վիեննա. 1895. էջ 70.

2. Աբաս ձեւը կայ Հարանց վարք Ց. Ն. Հայկ. բառ. նոյն բառը և Սոկրատի մէջ էջ 935. «Աբաս Աբսէնիոս»:

Այս Ներսէճին, որի մասին տրուած ամօղեկութիւնները ոտորև մենք ի մի կը հաւաքենք քիչուով և Ասողիկը թէ էքք Յունաց Յուսափնեան հայօրը իւր Թագաւորութեան չորրորդ տարին մեծ զօրքով արշաւեաց Հայաստան: զգրաբանքի ուղարկելով Վրաց և Ս. զուանից երկիրները: կանչեց նրանց իշխաններին և պատուեց: կայսերական պատիւներք արժանացաւ նոն: Ներսէճ կամարական: «Եւ զամեն յիշխանացն արքայապետք պատարագք պատուեալ: կացոյց իշխան աշխարհացն զՆերսէճ Ներակայ տէր և կապուտիրաց Հայոց իշխան (կացոյց) . . . Եւ Ներսէճ կամարական եկաց իշխան Հայոց ամն չորս. (Փսկ. 691—694) ի սորա աւուրս պայծառանայր Գրիգորիս Առշարունեաց քորնպիւղալու փիլիսոփայական արուեստիւ: որ ընթերցոածոց մեկնութիւն զարդարեաց ի ինպրոյ Ներսէճի կամարականի»: Այդ գիրքը պահուած է և ձեռագրերուով ունի այս վերնագիրք. «Մեկնութիւն ընթերցոածոց, զոր արարեալ է Տ. Գրիգորի Առշարունեաց քորեպիսկոպոսի»: Կասկած չկայ որ երկուք նոյն գործն է: բայց Ասողիկը դարձեալ տարբերուով է Չեռ. մէջ եղող յիշատակարանից, որի մէջ գիրք գրել տուողը վահան կամարականն է և ոչ Ներսէճը. մինչդեռ զբարոյքի և գրքի անունը նոյնն է, հետեապէս Ասողիկը ունեցել է հաստաք ազրիւր: Չամչեանը և Իմիր առաջարկուով են Ասողիի Ներսէճը՝ փոխել վահանի բայց չեն ասուով թէ ինչ հիման վրայ. մենք կարծուով

1. Տես Չեռ. Մար Աթոռ. Թի. 171 (Գ). 2ուրդ. պատմ. Գ. էջ 373, 375 և 562—642. Զարք. Գ. 4. Մ. էջ 455. Մալխասեան Պատ Ասողիան էջ 100—102 և 84.

ենք հակառակը աւելի ուղիք կը լինէր և այդ ենթադրութեան համար կայ հիմունք: Սեզը՝ յիշատակարանում յիշած Արաս Գրիգոր Զորափորեցին և Ասողկի յիշած Գրիգոր Արշարունեաց քորեպիսկոպոսը նոյն անձնաւորութիւնն է. նա նոյն Ներսէ՛հ: Կամնարականի հրամանաւ թարգմանում է Սեզը՝ վարքը և գրում՝ ընթերցուածոց մեկնութիւնը: Ներսէ՛հը ինչպէ՛ս կը տեսնենք շատ յայտնի անձ է, յայտնի գրասէլր և հովանաւորող գրականութեամբ պարապօղներին: Նա մինչև 694 թիւը Հայաստանի կառավարութեան մեծահոգ գործերը վարելով՝ ծերունի հասակում առանձնանում է շի վանս ս. Աստուածածնի որ ի Վաղարշակերտ յերկրին Բագրևանդայ՝ և յորդորում զլքեր թարգմանելու կամ շարագրելու: Գրիգոր եպիսկոպոսի մասին ունինք բաւական ճիշդ տեղեկութիւններ. նա ապրում էր Է-րդ դարում և ութներորդի սկիզբը՝ մեաւ 713 թ. (թիւ Հայոց ՄԼԻԲ). եպիսկոպոս էր ձեռնադրուել 684 թ-ին, երեք տարի առաջ՝ քան Ներսէ՛հի ընդհանուր Հայաստանի իշխան նշանակուելը: Մինչև 684 թիւը նա կոչուում էր արա, արաս պատուաւոր տիպառով, շնորհիւ իւր հռչակին՝ որ էր Վիլիսոփայեան արուեստիւ պայծառացեալ: Ներսէ՛հ դիմում է նրան և առաջարկում թարգմանել Աեղքեստրոսի վարքը և ապա իւր հովանաւորութեան տակ առնելով նրան է յանձնում Արշարունեաց՝ կամնարականների երկրի առաջնորդութիւնը: Մեր այս ենթադրութիւնը հաստատուում է գեղեցիկ կերպով Սեղրեստրոսի վարքի թարգմանութեան թուականով: Սա թարգման-

Ձ.

ուել է 678 թ-ին երբ Գրիգորիոսը ոտով վարդապետ էր, յետոյ եպիսկոպոս ձեռնադրուելով շարունակում է պարապել գրականութեամբ և հեղինակում է ընթերցուածոց մեկնութիւնը: Անյայտ մեծոց թէ որտեղից Հ. Չամչեանը և Մ. Էմինը վահանին Ներսէ՛՛հ Կամնարականի հայր են համարում: «Փաււազան եպիսկոպոսոց Կամնարական տանն», յիշում է վահան պատրիկի որդի Գազկին և Շուշան աղջկանը, որ Փրկ. 706 թուին խոստովանուեց Միջագետքում: բայց չկայ թէ Ներսէ՛՛հը վահանի որդին էր. Հ. Ալիշանը լռութեամբ է անցնում այդ խնդիրը:

ԺԳ.

Համառօտ Սոկրատը վերջանում է մի ուղերձով ուղղած առ «Տէր Ներսէ՛՛հ» «Ապհիւպատ պատրիկ» շինող եկեղեցեաց» որ խրախուսել է համառօտողին ի գլուխ հանել սկսած գործը: Վեցերորդ դարի «կղերներից մինչև իններորդ դարը, երբ Կամնարականների փայլուն տոհմը կորցնում է իւր նշանակութիւնը յայտնի են մի քանի Ներսէ՛՛հ Կամնարականներ:

ա. Փարպեցուց գիտենք վահան Մամիկոնեանի ամենաբաջ և յարատև գործակից երկու եղբայր «Ներսէ՛՛հ տէր Շիրակայ և Հրահատ նորին եղբայր» որդիք Արշաւիր Կամնարականի,<sup>2</sup> Երրորդ եղբօր անունը՝ Թահակ կամ վահան էր:<sup>3</sup> Սոցա երեքին յիշում է

1. Ալիշան Շիրակ. էջ 5 և 2ամ. յ. ա.

2. Դ. Փարպ. հրատ. Վենետ. 1891. էջ 420 ևլն.

3. Լամ. Ալիշան Շիրակ էջ 4.

Պատկերաստ յոյն պատմիչը 530 և 547 թ. Ռասլիայի պատերազմներում: <sup>1</sup>

բ. Աեցերորդ դարու վերջում և եօթներորդի սկզբում յիշուում է Ներսէ՛հ Դարայի և Միջագետքի կուսակալ: <sup>2</sup>

գ. Ն. Ալիշանի մօտ էջ 125 տպած է Ալաման այժմ Ալէմ թուրքարնակ գիւղի հին աւերակ եկեղեցու մի արձանագրութիւն «քսան և եւթն ամի Հերակլի թագաւորի Ներսէ՛հի Նիրակայ և Արշարունեաց Տեառն և Թէոփիղոսի [Արշարունեաց եպիսկոպոսի]: Այս Ներսէ՛հի իշխանութեան ժամանակը Ն. Ալիշանի հաշուով ընկնում է 636—637 տարին:

դ. Ասողկից յիշուած Ներսէ՛հ իշխան Հայոց 688—91 թ.

ե. Փ. Սոհրատի՝ Ներսէ՛հը:

զ. Արագածոտն գաւառի Թալին գիւղի աւերակ տաճարի արձանագրութեան մէջ յիշուում է դարձեալ Ներսէ՛հ ապիհիւպատը:

է. Սեղբ. վարքը թարգմանել տուող Ներսէ՛հ՝ Փրկչի 696 թ.

ը. Անանիա Նիրակացու հարցմանց մէջ ի և իԱ Խնդիրները կազմուած են Ներսէ՛հի մասին, մէկը (հարց իԱ) Արշաւրի որդին է, միւսը «անուանակից և նախորդ այսմ Ներսէ՛հի»: (հարց ի) «Ներսէ՛հի կամօարականի Նիրակայ և Արշարունեաց Տեառն բուն կանգնէր առ ստորոտով լերինն որում Արտին կոչեն: Եւ ի գիշերի միոջ մտին երամակք ցուուց բազումք: եւ ոչ լեալ ատակ որսորդացն՝ ընթացեալ պատմեցին նմա ի

1. Ալիշան յ. ա. էջ 5.

2. Lebeau Hist. Du Bas. Embire X 166, 259, 322, 147.



է քնթերցուածոց մեկնութիւնք. նրա համանով թարգմանում է Պիլոն Տիրակոցին Սպիրատի պատմութիւնքս որք շատ չանցած համառօտում է. նրա ամբողջութիւնքն էր բնակում Անանիա Շիրակացին,<sup>1</sup> և գուցէ նրա հրաժանով է կազմել այն խնդիրները ժողովածուն, որոնց նիւթը մեծաւ մասամբ Կամսարական իշխաններք գործերից է առնուած:<sup>2</sup> Արեւմն եռթններորդ դարու վերջում թորեմացու շարք պատմ. հայ գրագետներ շրջանում հանրածանօթ եւ հեղինակաւոր գիրք էր:

Այն հանգամանքը որ նա թարգմանել է տալիս յունարէն գրքեր, կարող է ապացոյց ծառայել, որ նա գիտէր յունարէն լեզուն և ծանօթ էր նրա գրականութեանը. իւր այդ ընդունակութեան շնորհիւ արժանացաւ յունաց Զուստինեան երկրորդ կայսրից կօմս և կերպարանաւոր տրտղոսները և Հայաստանի իշխանութեան ղէկը չորս տարի ժամանակով ստանալու:

Բայց նա յայտնի է և իւր շինութիւններով, որք համար համառօտ Սոկրատի վերջարանում կոչուում է «Շինողը եկեղեցեաց»: Արագածոտն գաւառի վերին—Թալին կամ Հայի—Թալին<sup>3</sup> կոչուած գիւղում մինչև այժմ կիսականգուն վիճակի մէջ մնացել են երկու փառահեղ եկեղեցիների աւերակներ, միմեանցից մօտ երկու հարիւր քայլ հեռու: Մէկը հաւասարակող խաչաձև փոքրիկ մատուռ է, առանց սեան, կարմրագոյն հրա-

1. Հարցումն է. «Իս ի Մարմետի էի, յոստանի Ամն տարեկանաց»:

2. Տես Անանիա Շիրակ. յ. ա. էջ 16 ԻԱ.

3. Այժմ Երևանեան նահանգ Էջմիածնի գաւառի Թալինի վիճակ:

ՂԲ.

բուխային քարից շինած. նրա միայն զմբէթն է իջել, իսկ ամբողջը պահուած է անձնաս. գեռ մօտ քսան և հինգ տարի առաջ ծառայում էր գիւղական եկեղեցու տեղ: Միւսը եօթից ութերորդ դարու հոյակապ և ամենանշանաւոր ճարտարապետական գործերից է: Այդ եկեղեցին, որին տեղացիք ս. Տովհաննէս անուէն են տալիս, խաչաձև է 25,82 մետր երկար, 24,45 մետր լայն՝ ներսից չափած. շինուած է լայնանիստ Արագածի արեւմտահարաւային փեշերի վրայ (Թալիի սարադաշտի սկսուածքում: Հիւսիսարեւելեան մասը կազմում են լեռնալանջերը, իսկ արեւմտահարաւայինում փոքրիկ սարահարթն է, որ Ներքին—Թալիի մօտ իջնելով միանում է Սարդարապատի դաշտի հետ: Դիրքը հրաշալի է, ճարտարապետութիւնը ճաշակով, կարելի է ասել կատարել: Տաճարի ճարտարապետական ոճը միանգամայն նման է նոյն գաւառի (Թալիշ գիւղում (հին Արուճ) Գրիգոր Մամիկոնեանի շինել տուած եկեղեցու ոճին. երկուսի վրայ աշխատող վարպետները միևնոյն պատրաստութիւն ունեցող անձինք են:

Գծրաղդարար շինութեան ժամանակ ցոյց տուող յիշատակարանը կորել է, իսկ Տնացած յիշատակարաններից, թուով 4, հնագոյնը ունի ՄԼԲ թիւը, միւսները անհամեմատ ուշ ժամանակից են: <sup>1</sup>

1. Հայր Ալիշ. Այրարատ էջ 137 սխալներով է տպել. «ՄԼԲ թուականութեան Հայոց ես Ուխտայտուր վանականս եւ Տուտի եղբայր իմ բերանք աղբիւրանիս ի քարկապի ուխտէն ի Թալիս, թէ յիշխանաց դք խլէ իմ մեղացս պարտական եղիցի»:

Գիւղի հիւսիսում ընկած է մի ձոր եկեղեցուց մօտ 100 քայլ հեռու. այդ ձորի բերանում մինչև այժմ էլ



ՂԳ.

Մերսէզը մասուռի յիշատակարանում թւում է իւր տխրողները: անլիճիւպատ արտարիկ տէր Շիրակայ և Արշարունեաց թո՛ւ Կոյսրից, օտաջած կոտճ և կիւրապաղած տխրողները չկան: անպացոյց որ փոքր և կեղեցի՛ն աւելի շուտ էր շինել տուել, երբ դեռ չէր ստացել այդ պատուանունները:

Մեզ հեռուն կը տանէր, եթէ հետամուտ լինէինք որսնելու թէ յիշածներից բացի, եօթներորդ դարու վերջի կիսում Մերսէզ կամարականի հովանաւորութեան տակ ուրիշ ինչ գրական յիշատակարաններ են ծագել: Թուելով միայն Սոկրատի պատմութեան հետ կապ ունեցող երկերը, կարծում ենք արդէն բաւական դաղափար տուինք Շիրակում՝ ծաղկել սխող գրականութեան մասին՝ երկրի իշխող տէրերի օրինակով և խրատուսանքով կենդանացած:

ԺԳ.

Փիլոն Տիրակացու թարգմանութիւնը ունի մեծ թերութիւններ: Թարգմանը հայերէն լեզուից ունի բառերի հարուստ պաշար, քիչ բացառութեամբ ուղիղ կերպով հասկանում է յունարէն բառերը, բայց շատ թոյլ է քերականութեան մէջ և անտեղեակ երկու լեզուների ոճական նրբութիւններին: Մրա թարգմանութիւնը կարգույն, այն տպաւորութիւնն է ստացում, որ կարծես շարունակ օգտուել է այնպիսի մի բառաբարձով, որի մէջ իւրաքանչիւր յունարէն բառի հանդէպ նշանակուած էր հոյերէն բառի մի կամ երկու նշանակութիւնը անանց ոճերի: բնական է, որ այդ սեսակ թարգմանութիւնը բառացի ստրկական է դուրս եկել: Մա առանց հասկանալու է թարգմանել յունա-

բևն յարանի եւ շատ քործածական ոճնր: օրինակ. «Ըստ  
 աղիտարհին աստորոտք աստ չօրսն ձրօմսն. կամ՝ «յոտից  
 նստուածն — եւ աստ կուսն. կամ քարձուածննր որ ուղ-  
 դակի չի հասկացել. Կոմսն յիստ — յատուկ անուան տեղ  
 է դնու. «Ռուզիի Նիկոմիդացոյ» Փ. Ս. «Ռուզին  
 Նիկոմիդացի» (էջ 15), կոմսն յիստ = կոմիդիանաւ (էջ  
 58) օտոս կոմսն նոս օն — Սախ Եհնադացի գրող, Փ.  
 Ս. Նիկոմիդացի գրող (էջ 355), Թարգմանիչը եր-  
 բնն յատուկ անուաները հասարակ կարծելով Թարգ-  
 մանի է օրինակ. «Աստուծոս Արծա քաղաք, նոյն Փ. Ս.  
 (էջ 52). Կրօնոս սխալմամբ: Երթնոս է կարգու. Ե  
 Թարգմանու. Սիսեպն (էջ 70), նոյնը Փ. Ս. Փիլօսօմոս  
 Սիրեցելոյ (էջ 89) Ալաօրոս — Արագիւ Էրն. կամ նոյն  
 իսկ յատուկ անուանը սխալ է հասկանու. Եպուստոս —  
 Սկիւթացի, փոխ. Սկիւթիանոս (էջ 68), նոյնը Փ.  
 Ս. Տուստոս յԱսորիայ Փ. Ս. յԱսորիայ (էջ 129),  
 Աստուծոս — Դադմանացի, (էջ 92) Նուստոս Նիկոմիդ-  
 ստղակաւս Էրն.

Չհասկացած բառերից են. տն աստ 'Արատ հասկացել  
 է. տն աստ, արժան — ըստ Թուոյ (էջ 1), աստ Թարգուս-  
 բաթիւնն աստքուր (էջ 30), Կրօնոս — Կրիստոս, նոյնը  
 Փ. Ս. (էջ 68), միւշտոս աստքն անգամ նոյն բառը  
 Թարգմանել է ուղիղ կերպով. — քաղցու. ընծարաքերիւր  
 (էջ 109, 114 Էրն.). մնծ փոխ. մնրծ ի (էջ 310),  
 պաւլինոս (էջ 480), ոչ ինչ այլ (էջ 434), Շատ բա-  
 ռեր յուճարէնից չէ Թարգմանել օրինակ, էքստրիոն,  
 էքստրել, անդրի, դեմոս, պրաստի, կապեղի Էրն.

Մի Թեթե ակնարկ ձգելով յատուկ անուանց  
 ցանկի վրայ, կարելի է տեսնել թէ ինչքան անհասկա-  
 ցած Ե քմահաճոյական ձևեր են ստացել յուճարին

անունները հայերէնի մէջ. ձայնաւորների փոփոխութիւն, սղուծներ, ամենատարբեր վերջաւորութիւններն ու նոյնը և բաղաձայների վերաբերութեամբ. ԼՂ, ՌՊ, ՏՊ, ԿՊ. նոյն անուանց մէջ շարունակ փոփոխուած են, և այդ բոլորը ցոյց են տալիս պարզ կերպով թէ ինչքան թոյլ է եղել թարգմանը քերականական ձևերի հասկանալու մէջ. նոյնպէս բազմատեսակ են նոյն բառերի հոլովութիւնները և խոնարհութիւնները, մանաւանդ սեռական հոլովի վերջաւորութիւնները յատուկ անուանց մէջ. Անտիոքայ, Անտիոքայ, Անտիքիպոյ, Անտիքույ, առաջ են գալիս միևնոյն երեսի վրայ:

Եթէ այս ուղղութեամբ սկսենք քննել և օրինակներով ցոյց տալ թարգմանութեան լեզուի բոլոր անկանոնութիւնները, ստիպուած կը լինէինք ամբողջ ուսումնասիրութիւն կատարել, որը դուրս է մեր նպատակից. առաջ բերած օրինակները բաւական են զաղափար տալու, թէ ինչ չափով լեզուական թերութիւններ կան գրքի մէջ: Իւրաքանչիւրին պարզ կացուցանելու համար թարգմանութեան ստրկական ձևը, մենք այստեղ կարտադրենք գրքի սկզբից մի քանի տող բնագիր, տակը դնելով հայերէնը: Նոյն իսկ յունարէն չիմացողն էլ կարող է մօտաւորական գաղափար կազմել և համոզուել մեր ասածների մէջ:

|                    |              |               |            |              |
|--------------------|--------------|---------------|------------|--------------|
| Εὐσεβίος           | ὁ Παμφίλου   | ἐν ἑλοῖς      | δέκα       | βιβλίοις     |
| Եւսեբիոսի          | Պամփիլեայ    | յամենայն      | տասնեսին   | գիրսն        |
| τὴν ἐκκλησιαστικὴν | ἱστορίαν     | ἐκδημένοσ     | κατὰ       | παρασκευασέν |
| զեկեղեցական        | պատմութիւն   | եղեալ         | գաղաբարեաց |              |
| εἰς τοὺς χρόνους   | τοῦ βασιλέωσ | Κωνσταντίνου, | ἐν ὧσ      |              |
| ի ժամանակս         | Թագաւորի     | Կոստանդինի    | յորս       |              |

καὶ ὁ κατὰ τοῦ Διοκλήτιανου κατὰ χριστιανῶν  
 և առ Ռիոկղեթիանոսիւ ի վերայ քրիստոնէից  
 γυνόμενος διαγμῶς ἀπεπαύσατο.  
 եղեալ Հալաժումն դադարեաց:

Ահա այս ձևով շարունակուում է ամբողջ Թարգմանութիւնը: բառը: հոլովը: Թիւը: դասաւորութիւնը ամենաչնչին փոփոխութեամբ բնագրինը պահելով: Մեր առաջ դրած է ոչ թէ Թարգմանութիւն, այլ յունարէն բնագրի ստորգծեայ բառերի բացատրութիւն հայերէն լեզուով: Այսքան ստրկական Թարգմանութիւնը եթէ չէ կարող հայերէն համարուել, ունի անկասկած մեծ նշանակութիւն յունարէն բնագրի համար. այսուհետև յունարէն բնագիր հրատարակողները պէտք է անպատճառ առաջնորդուեն հայերէնով ևս. հայերէնի բնագիր ծառայող ձեռագիրը առնուազն վեցերորդ կամ եօթներորդ դարու. օրինակ է ներկայացնում: Մենք հայերէնը ամբողջութեամբ բաղդատեցինք յունարէնի հետ, մեր նպատակից դուրս էր լեզուական տարբերութեանց նրբութիւնները առանձին կերպով շեշտել. բաւականացել ենք միայն խոշոր աչքի ընկնող շեղումները նշանակելով:

Հայ Թարգմանը ինչպէս տեսանք դիտաւորեալ կերպով կրճատում: հանում է բնագրից որոշ մասեր, բայց ընդհանրապէս երևում է, որ անհամեմատ աւելի լաւ օրինակից է Թարգմանել, քան ներկայ յունարէն հրատարակութեանց հիւր ծառայող ձեռագիրը. հայը երբեմն փոքրիկ հատուածներ, տեղ տեղ նախադասութիւններ և բառեր բնագրից աւել ունի, թէև զերծ չէ մնացել աղաւաղումներից:

Ձանազան հարցերի մասին երկար կանգ առնելով, կը ցանկայինք ծանօթացնել ընթերցողին Սոկրատի անձնաւորութեան հետ ևս, կցելով համառօտ տեղեկութիւն նրա պատմութեան նշանակութեան մասին: Սոկրատը ինքն է իւր մասին մի քանի տեղեկութիւններ տալիս գլքի մէջ, որով նա միակ և գլխաւոր պղքիւր է ներկայանում: Նա ծնուել է և սնուել կոստանդնուպօլսում (24.) մօտաւորական հաշուով Փրկչի 381 թ.: Ռամանակի սովորութեան համաձայն տասը տարեկան հասակից սկսում է սովորել քերական արուեստ Աղէքսանդրիայից քրիստոնեաների հալածանքներից կոստանդնուպօլիս Իպատանաժ երկու հեթանոս ուսուցչապետների՝ Իլատիոսի և Ամոնիոսի մօտ: «Յորոց և երկուքն քերթողք Իլատիոս և Ամոնիոս, առ որս ես մանուկ գոլով ի կոստանդնուպաւլիս հպեցայ» (Ե. 16 էջ 442):

Ապա յաճախում է Տրոյլոս իմաստակիրն և երիտասարդական հասակն առած, պարապում է դատաւարութեամբ, այդ պատճառով նրան կոչում են սքոլաստիկոս:

Մրա կեանքից ուրիշ մանրամասնութիւններ չք գիտենք. միայն մի հանգամանք առիթ է տուել գիտնականներին կասկածել նրա ուղղափառութեան մասին և ենթադրել որ նա հետևող էր Նաւատիանոսների աղանդին: Մա մանրամասն և առանձին համակրանքով է խօսում Նաւատիանոսների մի քանի եպիսկոպոսների մասին, օրինակ Աքեղիոսի և Ախինիոսի մասին, զորոււատում է այդ աղանդի հետևողների ջերմեռանդ եկեղեցասէր յատկութիւնը, բայց այժմ ոչ ոք չի ընդու-

նում թէ նա հեռեղ էր այդ աղանդին: Յայտնի է նրա մահուան տարին:

Սոկրատը գրել է 133 տարուայ պատմութիւնս ոհոսած Փրիչի 306 թուից մինչև 429 թիւը: այն է կոստանդինոս մեծի իշխանութիւնից մինչև Թէոդոս Փոքրի թագաւորութիւնը: Նա ցոյցարում է գրել երբ քրիստոնեայ եկեղեցին հիթանոսութեան, արիանոսութեան, Մակեդոնի ազանգի, նեստորականութեան և բազմաթիւ մանր ազանգների գէժ յամառ և երկարատև մարտման մէջ մտնելով, հաստատում ամբողջում է Հռովմական լայնածաւալ տէրութեան սահմաններում հովանաւորում և պաշտպանում Թէոդոս երկրորդ բարեպաշտ կայսեր իշխանութեան օրով: հալածուած հոգևորականները վերադառնում են իրենց տեղերը և ընդհանուր խաղաղութիւն է տիրում եկեղեցւոյ մէջ:

Պատմութեան մէջ ամենընդարձակ տեղը բռնում են կոստանդնուպօլսի եպիսկոպոսների գործերը: ուրիշ քաղաքների եպիսկոպոսներից մանրամասն պատմում է միայն Աթնաս Աղէքսանդրացու գործերը: Բայց կոստանդնուպօլսի հայրապետների շարքը կազմում են Յովհան Ոսկերեան, Նեստոր, Մակեդոն, Ատաիկոս, Պրոկղ և շնորհնայ արարքները ամենամեծ նշանակութիւն ունեցան ընդհանուր եկեղեցւոյ համար: որով մասամբ մեղմանում է պատմարանի մակողմանիութեան տպաւորութիւնը:

Սոկրատը գրել է Թէոդորոս անունով մի քահանայի յորդորանքով որին նա յառաջարանում քանիցս յիշում է. «Չհրաման քո կատարեցի: ով քահանայդ Աստուծոյ, այրդ Թէոդորէ»: Գրելու ժամանակ օգտուել է Եւսեբիոս կեսարացու վարք կոստանդնի գործից: Թուփինոսի եկեղեցական պատմութիւնից: Ա-

Ճ.

Թանասի գրուածներէց, ժամանակակից անձանց պատմածներէց և արխիւներէց. նա շատ թղթեր ամբողջութեամբ արտագրել պահել է:

Նա իրան նպատակ էր դրել գրելու միայն եկեղեցւոյ պատմութիւնը՝ բայց որովհետեւ «Թնթերցաւորացն ոչ յագուցն լինել յորմէ միայնով պարագել վիճարանութիւն եպիսկոպոսաց և որովք հակառակ մի՞եանց գործեցին», ուստի կարևոր է համարել պատմութեան մէջ մտցնել նաև քաղաքական դէպքերի յիշատակութիւն ինչ չափով նրանք կապ ունէին եկեղեցական գործերի հետ: Նա ասում է. երբ Թագաւորները «քրիստոնէանալ սկսան» և եկեղեցական գործերը քաղաքական կեանքի հետ սերտ կերպով կապուեցին, «եւ մեծքն ժողովք նոցա կամաւք եղին և լինին», այլ ևս դժուար էր բուն եկեղեցական երևոյթները անջատել միմեանցից:

Իրեւ գրքի սկզբում Սոկրատը համառօտ կերպով բնորոշելով Եւսեբիոսի գրելու եղանակը, դժգոհութիւն է յայտնում, որ նա ուշագրութիւն է դարձրել լեզուի «բարձրասացութեան» և «Թագաւորի գովութեան» վերայ, չհետեւելով իրերի ստուգարար ըմբռնմանը, իսկ իւր մասին ասում է. «Բայց ես ոչ Թագաւորին ծանաւթ գոյ փութամ, և ոչ պաճուճեալ բանիցս զցուցմունք կամիմ առնել, այլ պարզ բանիւ ճշմարտութեամբ զեղեալսն Թագաւորին յիշատակել յօժարիմ» (էջ 618): Նա ձգտել է գրել պարզ հասկանալի ոճով. չըլուել գովութեան արժանի դէպքերը, և ոչ վախենալով մեծացնել իշխանաւորների ոչ գովելի գործերը, նրա նպատակն է ճիշդ և ուղիղ պատմութիւն գրել. «Նախ ասեմք զի որոց առ մերով հասակովս եղելոց հուպօ արկեաք արդէն մի՛ ոչ հաճոյս բազմացս թուես»

ցուք զրել կամ ըստ առակին. եթէ ճշմարիտն եղիցի գառն կամ զի ոչ ըստ գովութեանն զանուանս որոց սիրենն ի զիր արկանեմք և ոչ զգործսն նոցա մեծացուցանեմք . . . . . զորս եսն տեսայ շարագրելով, զորս և տեսողացն կարացի ուսանել ընտրելով զճշմարիտն»:

Սոկրատը եկեղեցական չէր, սիրում էր եկեղեցին, սիրում ուղղափառութիւնը անվնաս, անվասն գտեսնել. հետեւելով Թէոդորոս քահանայի յորդորներին, սիրայօժարութեամբ յանձնառու է եղել ապագայից համար անմահանալի յուշարձան թողնել չորրորդ դարու ընդհանուր քրիստոնեայ եկեղեցու համար ամենափայլուն ներկայացուցիչների, Աթանաս Աղէքսանդրացու, Յովհան Ռակերերանի, Եպիփան Կիպրացու, Կիւրեղ Երուսաղէմացու, Ատտիկոս հայրապետի և նոցա հակառակորդների Արիստի, Մակեդոնի, Նեստորի անունները: Այդ անձանց հակառակութիւնից ոյժ ստացաւ և ընդ միշտ ամբացաւ հռովմէական տէրութեան կազմի հետ սերտ փանալով, հայածուած քրիստոնեայ եկեղեցին. ահեղ ոյժի առաջ ընկձուեցին խոնարհուեցին, «ամենայն սիրողք խռովութեան» որով գոհ սրտով պատմաբանը վերջացնում է իւր ծանր գործը աղօթելով եկեղեցւոյ խաղաղութեան համար. «Բայց մեր աստանաւր ուրէք զպատմութիւնս դադարեցուցեալ ի խաղաղութիւն կեալ զորս ամենայն ուրէք եկեղեցիս, քաղաքս և ազգս աղաթեսցուք»:

ՄԵՍՐՈՊ ՎՐԿ. ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ

1896 թ. 25-ն Օգոստոսի  
 Ի Ս. Ամբաստան.



100

101

102

103

104

105

106

107

108

109

110

111

112

113

114

115

116

117

118

119

120

121

122

123

124

125

126

127

128

129

130

131

132

133

134

135

136

137

138

139

140

141

142

143

144

145

146

147

148

149

150

151

152

153

154

155

156

157

158

159

160

161

162

163

164

165

166

167

168

169

170

171

172

173

174

175

176

177

178

179

180

181

182

183

184

185

186

187

188

189

190

191

192

193

194

195

196

197

198


199

200



1000

1000





## ԳՐԻԳՐԻ ԱՊՈՋՆԱՆՆԻ

ԳԼ. Ա.

**Ե**ւսերիս Պամփիլեայ յամենայն տասնեսին զիրսն եղեալ զեկեղեցական պատմութիւն, զաղարեաց ի ժամանակս Կոստանդնի թագաւորի՝ յորս և առ Դիոկղետիանոսիւ եղեալ հալածումն ի վերայ քրիստոնէից՝ զաղարեաց: Գրելով նորա և ի վարսն Կոստանդնի ըստ թուոյ՝ " յիշատակ առնէ թագաւորին և ~~վարձր ասացութեան~~ բարձր ասացութեան բանին մանաւանդ որպէս զի զովով թեան հոգ տարեալ " քան թէ ստուգաբար ըմբռնել զեղեալսն:

«... բնագ. ունի Դճոն κατ' Ἄρειον ուստի ըստ թուոյ-ի տեղ պիտի լինէր „ որոց ըստ Արիստին »-

բ. «Գովութեանց թագաւորին եւ ներրդական բարձրաստութեան բանից առաւել ճոց սարեալ» . . . համաձայն բնագ. ընթերցանութեան:

ԳԼ. ԺԳ.

Կոստանդիանոսի վկնի միահամուռ տիրելոյ Սաղաւորաց՝ զԼիկիանոս քրտայրն իւր Յաղաւորեցուցանէ, զոր յետոյ հալածանս առնելով քրիստոնէից ընդդիմանայ Կոստանդիանոսի ըմբռնի և սպանանի:

Եւսերի Պամփիլեայ ի տասներորդ զիրսն եղեալ « զեկեղեցայ պատմութիւնն, լռեաց ի ժամանակս Կոստանդիանոսի Մեծի և որ առ Դիոկղետիանոսիւ եղեալ ը հալածանք քրիստոնէից. Գրեաց նա և զվարս Կոստանդիանոսի ի Տէր ժողովական բարձր ասացութեամբք » զոր փոքր ինչ աստանօր յիշեսցուք

« Ա՝ ծգելս եկեղեցայ: Գ. Գ. եւ որ ի Դիոկղետիանոսէ եղև: Գ. Ա՝ Գ. բարձրասացութեամբ:

Իսկ մեր նախադրեալ շարագրել զառ ի նմանէ մինչև առ յեկեղեցեացն եղելոյ պատճառոյն:

Ահիզրն յորոց նոյն արասցուք ոչինչ պատմութեան զժարանւոյ հոգ տարեալք. այլ թէ զխարդ գտեալ գրով ի պատմողացն, և կամ թէ որպէս լուսաք պատմեսցուք. և վասն զի զառաջիկայն հասանէ մեզ յիշել, եթէ որով պատճառով ի քրիստոնէութիւն եմն թագաւորն փոքր ինչ վասն այնորիկ որպէս է վարկանել յիշեսցուք աստուսա ուստեք զսկիզրն արարեալ:

ԳԼ. Բ.

Զի՛ յայնժամ Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս որ կոչի Եռկուղիոս ի միաբանութենէ ի թաց ընկեցեալք զթագաւորութիւն զիւրեանցն փոխէին զվարս. Մաքսիմիանոս որ կոչի Գաղեռիոս նոցունց թագաւորակից եղեալ յիստաղիա կացոյց երկուս կայսերս. զՄաքսիմիանոս ի կողմանս արևելից, իսկ զՅելենոս յիտաղիայ:

Իսկ Բրիտիա կոստանդին՝ կոչեցաւ թագաւոր ի տեղւոջ կոստանդայ հաւր իւրոյ վախճանելոյ յառաջին ամին երկերիւրորդի եւթանասներորդի Խ Ողիմպիադայն

ա. Բն «դիրն ուն» πρῶτης αὐαυ. Երրորդի:

1) ՅՅս Սողոմնոս. Պատմութիւն եկեղեցական Ա. 2. 3. 4. Կաթիւ-գորոս. Պատմ. Եռամասնեայ (Tripartita historia) Ա. 4.

2) Եթէ Սոկրատին հետեւելով ընդունենք. որ կոստանդինը Դիոկղե-տիանոսից՝ եւ Մաքսիմիանոս Էռկուղիոսից անմիջապէս յետոյ է թագաւորել: Կաանանք որ նա 53 տարի է իշխել. մինչդեռ յայտի է. որ նա կառու-վարց երեսուն տարի եւ ասա ամիս. Թագաւորութեան ժամանակը որոշ-ւում է Փրկ 305 եւ 308 թ.

Զի յորժամ Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս ի թաց կա-ցեալ ի թագաւորութենէն ակամայ յաղթահարեալք ի կոս-տանդիանոսէ, վասն ամբարշտութեանն Խ նոցա.

ա. Բ. ամաստանութեան.

ի տասն և հնգին Յուզե ամսոյ. բայց՝ ի հնով՝ ի զաւ-  
րակահայտն Պրէտորիանոսաց, Մարսենտիոս որդի Մար-  
սիմիանու որդի Եռչուղիա եղև բանաստղ ճանաւանդ  
քան թագաւոր:

Ի յայտցանէ Եռչուղիոս դարձեալ ի ցանկութիւն  
թագաւորութեան ամբարձեալ, ձեռնարկեաց մերկա-  
ցուցանել՝ զորդին իւր զՄարսենտիոս. բայց զայս  
տանել արդիւն՝ ի զաւրակահայտն. յետոյ ի Տարսն  
Արիկիոյ [՝ զախճանէր՝:

Իսկ ի կայսերէն Սեւերեայ Գալբերիոս Մարսիմիոս  
տաւաքեալ ի Հոմ ունել զՄարսենտիոս՝ զերեցաւ մատ-  
նեալ ի զինուորաց իւրոց՝. ապա Մարսիմիանոս Գալբ-  
երիոս վարեալ զսէրութիւնն ամենայն՝ մեռաւ յա-  
ռաջադոյն եղեալ թագաւոր զԱրիկիոս: որ էր ի վա-  
ղաց անտի զինուորակցեալ նմա և սիրելի, Իսկեացի  
տղաւ: Իսկ Մարսենտիոս յոյժ նեղէր զՀռոմայեցիս՝  
կարեալ և վարեալ զիշխանութիւնն առաւել բռնա-  
բանի քան արքայաբար: Լիկէր լրբարար զհանայօ ազա-  
տաց, և զբազումս սպանանէր և գործէր զնմանիս: Չայս  
զիտացեալ թագաւորին Կոստանդիանոսի զՀռովմայեցիս

Հայտն է թէ  
Մարսենտիոս  
գալբերիոս  
գալբերիոս  
գալբերիոս  
գալբերիոս  
գալբերիոս  
գալբերիոս

... հարուսանել ἀπολέσσαι. ըստ բն.

բ. ս յամենոց սկսած գլխաւում է մեղ հին բարգամոթիւնը:

1. Սահրատը սխալում է. Մարսիմիոսն Հեռուլիոսը կոստանդինի  
հրամանով սպանուեց 310 թ. Գաղղիայում. իսկ Մարսիմոս կեսաբն էր  
որ երկու տարի յետոյ Լիկիոսից յաղթուելով մեռաւ Տարսնի մտ. Ինչ-  
պէս վկայում են Աւրելիոս վիկտորը. Եւսեբիոսը իւր Քրիստոսի մէջ եւ  
ուրիշները: Ահեբրե է որ Սակատը շվեթել է անունները՝ ինչ որ յա-  
ճախ է պատահում յսն հեղինակների կողմից Հռովմայեցոց անուններ  
ում:

2. Փոքի 307 թ.

3. Չարտագրութիւն է այդ տեւը. քանի որ Հոմում իշխում էր  
Մարսենտիոսը. իսկ կոստանդինը Գաղղիայում:

Թափել ի լծոյ ծառայութենէ նորա ջանայր. նոյն ժամայն զմտաւ ածեր, թէ զհարդ բարձցէ զբռնաւորն. և միշտ ի միտս իւր խոկայր, թէ զո՞ աստուածոցն յաւգնութիւն պատերազմին կոչիցէ. քանզի տակաւին ի մտի ունէր, զի ոչինչ աւգտեցան, որք առ Ռիոկղետիանոսիւ պաշտէին զաստուածս հեթանոսաց, և գիտէր իսկ զի հայրն իւր Կոստանդիոս զարձուցեալ զերեսս իւր ի սուտ հաւատոյն հեթանոսաց՝ կեանս երջանկագոյնս եկաց, Եւ ի նմին երկմտութեան եղեալ և հանդերձ զաւրաւքն յուղի անկեալ, զարմանալի իմն և անճառելի նշան երևեցաւ նմա. քանզի ի միջաւրէի մինչ արեգակն ընթանայր ի մուտն,՝ ետես յերկինս խաչաձև սիւն լուսոյ, յորում ընթեռնոյր զրեալ. «Այսու յաղթեալ»՝ Ահներև նշանս այս սքանչացոյց զԹագաւորն և ինքն աչացն իւրոց ոչ հաւատացեալ՝ հարցանէր որք մերձն էին. արդե՞օք և նոքա տեսին ըզնշանս, և նոցա ձայնակցեալ, թագաւորն հաստատեցաւ ի կարծիս իւր վասն աստուածային և սքանչելի տեսլեանն:

Եւ ի նմին զիշերի ի քուն մտեալ ետես զՋրիստոս, որ ասէր ցնա. «արա զնմանութիւն տեսեալ նշանիդ և ընդդէմ թշնամեացն կալ իբրև զլրոշ անպարտելի»՝ Հաւատացեալ պատգամին՝ արար զրոշ խաչաձև, որ ցայժմ պահի ի թագաւորական պալատան. և մեծաւ համարձակութեամբ երթայ ընդդէմ թշնամոյն և մը-

1. Այս տեսիլը բոլորովին նման է պատմումը Եւսեբիոսը Վ. Կ. Ա. 28, իսկ Ռուփինոսը Թ. 9. Եւ օրան հետեւելով Սոզոմենը. Ա. 3. 4-րդ թիւ տարբերում են:

2. Խոր. Գ. Բ. ԳԼ. 2Գ. . . նմանալ երևութացաւ նմա ի քուն խոչ աստեղաց յերկնից, պարունակեալ գրով. ասէ. Այսու յաղթեալ. զոր արարեալ սիւզնոյն եւ յառաջաբերեալ յաղթեաց . . . .

տեալ ի պատերազմ և առ դրունս Հռոմայ մերձ ի կա-  
մուրջն, որ կոչի Մուլքիա, յաղթեաց և զՄաքսենտիոս  
հեղձոյց ի գետն. և էր եւթներորդ՝ ամ թագաւորու-  
թեան նորա յորժամ յաղթեաց Մաքսենտեայ:

Յեա այսորիկ լիկիանոս թագաւորակից նորա և փե-  
սայ, որում ետ հնութեան զքոյր իւր զկոստանդեա,  
~~Յեա~~ յարեւելք<sup>2</sup> իսկ ինքն կալեալ զանչափ բարու-  
թիւնս յԱստուծոյ՝ գոհութիւն մատուցանէր բարերա-  
րին: Եւ դադարեցուցանէր զհալածանս քրիստոնէից և  
որք ի կապանս էին և յաքսորս արձակէր, և զինչս զը-  
րեալս յարքունիս տերանցն դարձուցանէր, կանգնէր  
զեկեղեցիս և ամենայն ինչ առնէր մեծաւ զգուշու-  
թեամբ: Եւ յայնժամ Դիոկղետիանոս, որ հրաժարեալ  
էր ի թագաւորութենէն, վախճանէր<sup>3</sup> ի Սալոնի՝ աշ-  
խարհին Բաղմասիոյ:

ԳԼ. Գ

Իսկ թագաւորն կոստանդիանոս զքրիստոնէութիւ-

- 1. կոստանդիոս Մաքսենտիոսին յաղթեց Փրիչի 312 թ.
- 2. Յեա Խոր. Գ. Բ. Գ. 2Բ. . . . մեծարեաց զԼիկիանոս . . . եւ  
եւ նմա կոսթեան զքոյր իւր . . . եւ արքայ ամենայն արեւելից կացոյց.
- 3. Սոկրատին համաձայն են Ողէքսանդրեան Գրոնիկոսի. հեռնակը  
եւ Ջոսֆանը. որոնց վկայութեամբ Դիոկղետիանոս մեծաւ Փրիչիակոն 316  
թուին իսկ Լակոսնիոսը եւ Եւսեբ. իւր Եկեղեց. պատմ. Թ. 11. ա-  
սում են որ նա մեռել է 312 թ.
- 4. Յեա Սոզոմէն Ա. 2 եւ 7. Եւսեբ. վ. Կ. Ա. 51. Սուլպիցոս  
Սեվ. Ս. պատմ. Բ. 33:

նա և զամենայն թագաւորոն զամբարիշտս և սատակեր և  
յաղթող երևեալ բ նշանաւ խաչին Գրիստոսի ընդ ամենայն  
երկիր 4 յեւթներորդ ամի թագաւորութեան կոստանդիա-  
նոսի. յորժամ էառ զյաղթութիւն միահամուռն թագաւորացն  
զԼիկիանոս քեռայր իւր թագաւորեցուցանէր:

—, Գ. զամբարիշտն. Բ. Բ. եղեալ:  
4 Գ. յաղթող երևեալ ամենայն ընդմակացն. Ա. նշանաւ խաչին ամենայն ընդ-  
մակացն:



Ապա և յայտնի վնասով նոցա ձեռնարկէր. և եղև հալածանս այս առ տեղեալն. անդ եղև միայն բւր էրն Լիկինիոս: Իբրև զայս և զայսպիսի իրս բռնաբար գործէր, ոչինչ ծածկէր ի կոստանդիանոսէ, և զիտէր զի ի վերայ այսոցիկ ի ցասման լիեալ նորա ջատագովէր զանձն իւր և կեղծաւորելով նմա առ երեսս սիրով զխաղաղութիւն պռնէր, երզնոյր երդումն յոյժ մի երբէք զբռնութիւն խորհիլ, այլ միանգամայն երզնոյր և ընդ նմին երդմնազանց գտանէր. քանզի ոչ դադարէր բռնաբար խորհել և ի վերայ քրիստոնէից հալածանս յարուցանել: Աւրէնս զնէր եպիսկոպոսաց մի հպել առ հեթանոսս զի մի աճեսցի քրիստոնէութիւնն. և էր հալածանքն պրողեալ և միանգամայն ակն յայտնի, զի բանիւք ծածկէր, այլ գործով յայտնի կացուցանէր. քանզի անպատմելիս կրէին հալածեալքն յանձինս իւրեանց և յըստացուածս:

1. Լիկինիոսի հրովարտակի բովանդակութիւնը մանրամասնօրէն առաջ է բերում Եւսեբ. Վ. Կ. Ա 51-66. Բ 1. 2. տես Խոր. Գ. գլ. 29 Ռուփեոսը եւ Ռփշիւրը:

կալէն, Գրէր և յղեր պատգամ մի՝ խորհիլ զքրիստոնէից և զշար, այլ զբարի, իսկ նա կեղծաւորելով պատճառէր զպատճառս սիրոյ և խաղաղութեան, և երզնոյր երդումն. սակայն կրգձնազանց լեալ ոչ դադարէր ի խորամանկութենէն զիւաց. և հրամայէ մի հպել քրիստոնէիցն առ հեթանոսս զի մի ութցին է աճէ քրիստոնէութիւն, բ զի խաւարեալ էր մտօք և օտարացեալ յԱստուծոյ, և ի ցանկութիւնս ընչից և ախտից հիմն արկեալ էր:

- ... Ա՝ քրիստոնէից:
- բ. Ա՝ աճեսցի:

ԳԼ. Գ. 1

h  
74

ի վերայ այսոցիկ յոյժ ցասոյց զԹագաւորն Կոստանդիանոս և եղև թշնամի, ի բաց եղեալ զառ երեսս բարեկամութիւնն և պատերազմել սկսան ընդ միմեանս: 2 Եւ եղև մարտ բազում ի ցամաքի և ի ծովու, և ի վերջոյ առ քաղաքաւն Քրիւսոպոլսոյ երկրին Բիւթինւոյ յաղթահարեալ անձնատուր եղև: Ըմբռնեալ զնա կենդանի մարդասիրէ, և ոչ սպանանէր, այլ հրամայէ նմա կեալ ի Թեսաղոնիկէ հանդարտութեամբ:

Իսկ նորա առ ժամ մի հանդարտեալ, ապա ժողովեալ զհամախորհս իւր բարբարոսս, խորհէր ի պատերազմ: Զայս գիտացեալ Թագաւորին հրամայեաց սպանանել զնա և ըմբռնեալ սպանին: 3 Եւ Կոստանդիանոս

1. Տես Սողոմ. Ա. 7. Կատող. Ա. 8. Նիկի. է. 44.

2. Պատերազմը սկսեց Փրկ. 323 եւ 324 վերջացաւ. տես Խոր. ibid.

3. Սպանման սյս պատճառը ուրիշ պատմագիրներ չեն յիշում. երեւի Սոկրատն է աւելացրել:

Եւ ստուգեալ զայս ինքնակալին Կոստանդիանոսի, ի ցասման լիեալ ջատագով Լ.ստուծոյ, յարուցանէ պատերազմ առ նա: Եւ ըմբռնեալ եղև Լիկեանէ յինքնակալէն ի պատերազմին և մարդասիրեալ առ նա ոչ սպանանէ, այլ հրամայէ նմա կեալ ի Թեսաղոնիկէ հանդարտութեամբ:

Իսկ նորա առ ժամ մի Ի հանդարտեալ, յետոյ ժողովեաց զհամախորհս իւր բարբարոսս, խորհէր ի պատերազմ և ի մահ թագաւորին Կոստանդիանոսի գաղտնի, Զայս ց իմացեալ Կոստանդիանոսի, առաքեաց զօրս ի վերայ նորա, և ըմբռնեալ զնա սպանին, և այնպէս բարձաւ չարն ի միջոյ: Եւ Կոստան-

ա. Ա. առ ժամանակ:  
բ. Բ. Ա. զհամախորհս:  
դ. Գ. զ-ր:

միահամուռն թագաւորեալ ինքնակալ թագաւոր կոչեցաւ և զքրիստոնէից զփրկութիւնն խոկայր միշտ և զայս առնէր բազմադիմի եղանակաւ, և էր քրիստոնէութիւնն ընդ իշխանութեամբ նորա ի խորին խաղաղութեան: Խաղաղութիւնս այս յարոյց ընտանի պատերազմ քրիստոնէից: Թէ զինչ էր, և վասն էր յարեալ պատմեցից:

Գլ. Ե. <sup>1</sup>

Չկնի Պետրոսի՝ եպիսկոպոսի Աղէքսանդրիայ, որ նահատակեցաւ ընդ Պիոկղետիանոսիւ՝ յաջորդէր զեպիսկոպոսութիւնն Աբելլէս, իսկ զկնի Աբելլայ՝ Աղէքսանդրոս, <sup>2</sup> յետ խաղաղութեանն զոր ասացաք, որ վարէր զեկեղեցին յանդորրու: Եւ եղև երբեմն՝ որ ընդ իշխանութեամբ նորա երիցունք և կղերիկոսք միձէին մեծաւ փութով ի վերայ սուրբ Ներորդութեանն, մի միութիւն է յՆերորդութեանն:

Իսկ Արիոս ոմն երիցանց, ընդ ձեռամբ նորա եղելոց, այր հմուտ յարուեստ ճարտասանական, խորհելով զեպիսկոպոսն ի կարծիս Սաբելայ Լիւբիացւոյ ածել, և

1. Տես Սողոմ. Ա. 15. Ռուփ. պատմ. Ժ. 1. Թէոդ. պատմ. եկեղ. Ա. 3. Կասիոդ. Ա. 12. Նիկիփ. Ը. 5:

2. Պետրոսը գահէ վրայ էր 310. 311 թ. Աբելլէսը 312 թ. մնաց փայն 5 ամիս. Աղէքսանդրը 313 թ.

զիանոս միահամուռն թագաւորեալ ինքնակալ կոչեցաւ և զքրիստոնէիցն միշտ զփրկութիւն խոկայր, և հաստատէր զթագաւորանիստն ի Բիւզանդիոն հրաշալի յօրինուածովք. և կոչեաց զնա կոստանդիանու քաղաք յանուն իւր և եղև խաղաղութիւն ընդ ամենայն երկիր քրիստոնէից:

Թանասի գրուածներէից, ժամանակակից անձանց պատմածներէից և արխիւներէից. նա շատ թղթեր ամբողջութեամբ արտագրել պահել է:

Նա իրան նպատակ էր դրել գրելու միայն եկեղեցւոյ պատմութիւնը, բայց որովհետև «Քնթերցաւորացն ոչ յագուցն լինել յորմէ միայնով պարագել վիճարանութիւն եպիսկոպոսաց և որովք հակառակ միժեանց գործեցին», ուստի կարևոր է համարել պատմութեան մէջ մտցնել նաև քաղաքական դէպքերի յիշատակութիւն ինչ չափով նրանք կապ ունէին եկեղեցական գործերի հետ: Նա ասում է. երբ Թագաւորները «քրիստոնէանալ սկսան» և եկեղեցական գործերը քաղաքական կեանքի հետ սերտ կերպով կապուեցին՝ «եւ մեծքն ժողովք նոցա կամաւք եղեն և լինին», այլ ևս դժուար էր բուն եկեղեցական երեւոյթները անջատել միմեանցից:

Ինչ գրքի սկզբում Սոկրատը համառօտ կերպով բնորոշելով Եւսեբիոսի գրելու եղանակը, դժգոհութիւն է յայտնում: որ նա ուշադրութիւն է դարձրել լեզուի «բարձրասացութեան» և «Թագաւորի գովութեան» վըրայ՝ չհետեւելով իրերի ստուգաբար ըմբռնմանը՝ իսկ իւր մասին ասում է. «Բայց ես ոչ Թագաւորին ծանաւթ գոլ փութամ և ոչ պաճուճեալ բանիցս զցուցմունք կամիմ առնել, այլ պարզ բանիւ ճշմարտութեամբ զեղեալսն Թագաւորին յիշատակել յօժարիմ» (էջ 618): Նա ձգտել է գրել պարզ հասկանալի ոճով. չըլուել գովութեան արժանի դէպքերը՝ և ոչ վախենալով մեծացնել իշխանաւորների ոչ գովելի գործերը, նրա նպատակն է ճիշդ և ուղիղ պատմութիւն գրել. «Նախ ասեմք զի որոց առ մերով հասակովս եղելոց հուպս արկեաք արդէն մի՛ ոչ հաճոյս բազմացս թուես»

ցուք զրել կամ ըստ առակին. եթէ ճշմարիտն եղիցի  
 գառն կամ զի ոչ ըստ գովութեանն զանուանս որոց  
 սիրենն ի զիր արկանիմք և ոչ զգործսն նոցա մեծա-  
 ցուցանեմք . . . . . զորս ենն տեսայ շարագրելով զորս  
 և տեսողացն կարացի ուսանել ընտրելով զճշմարիտն»:


Ասորաւոր եկեղեցական չէր, սիրում էր եկեղեցին, սի-  
 րում ուղղափառութիւնը անմիաս, անվտանգ տեսնել. հե-  
 տեւելով թէոզորոս քահանայի յորդորներին, սիրայօժա-  
 րութեամբ յանձնառու է եղել ապագայից համար ան-  
 մեռանալի յուշարձան թողնել չորրորդ դարու ընդհա-  
 նուր. քրիստոնեայ եկեղեցու համար ամենափայլուն  
 ներկայացուցիչների, Աթանաս Աղէքսանդրացու, Յով-  
 հան Ոսկերերանի, Եպիփան Կիպրացու, Կիւրեղ Երու-  
 սաղէմացու, Ատտիկոս հայրապետի և նոցա հակառակորդ-  
 ների Արիոսի, Մակեդոնի, Նեստորի անունները: Այդ  
 անձանց հակառակութիւնից օյժ ստացաւ և ընդ միշտ  
 ամրացաւ հռովմէական տէրութեան կազմի հետ սերտ  
 փանալով, հալածուած քրիստոնեայ եկեղեցին. ահեղ  
 օյժի առաջ ընկձուեցին, խոնարհուեցին, «ամենայն սի-  
 րողք խռովութեան», որով գոհ սրտով պատմաբանը  
 վերջացնում է իւր ծանր գործը ալօթելով եկեղեցւոյ  
 խաղաղութեան համար. «Բայց մեր աստանաւր ուրէք  
 զպատմութիւնս դադարեցուցեալ ի խաղաղութիւն կեալ  
 զորս ամենայն ուրէք եկեղեցիս, քաղաքս և ազգս ա-  
 ղաւթեսցուք»:


ՄԵՍՐՈՊ ՎՐԻՍԻՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ

1896 թ. 25-ն Օգոստոսի  
 Ի Ս. Ըմիածին.











## Գ Ի Ր Ք Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԳԼ. Ա.

**Ե**ւսերիս Պամփիլեայ յամենայն տասնեսին գիրսն եղեալ զեկեղեցական պատմութիւն, դադարեաց ի ժամանակս Կոստանդնի թագաւորի՝ յորս և առ Գրիգորեանոսիւ եղեալ հալածումն ի վերայ քրիստոնէից, դադարեաց: Գրելով նորա և ի վարսն Կոստանդնի ըստ թուոյ՝ " յիշատակ առնէ թագաւորին և ~~ժողովրդեան~~ բարձր ասացութեան բանին մանաւանդ որպէս զի գովութեան հոգ տարեալ " քան թէ սաուզաբար ըմբռնել զեղեալսն:

— Բնագ. ունի ԴՅՈՎ յատ՝ "Αρειον ուստ ըստ Թուոյ-ի տեղ պիտի լինէր „ որոց ըստ Արեոսին „  
բ. "Գովութեանց Թագաւորին եւ ներրոգական բարձրասութեան բանից առաւել ճոզ տարեալ, . . . . համաժայն բնագ. ընթերցանութեան:

ԳԼ. ԺԴ.

Կոստանդիանոսի վրիս միահամուռ տիրելոյ Սաղաւորաց՝ զլիկիանոս քիռայրն իւր Յաղաւորեցուցանէ, զոր յետոյ հալածմանս առնելով քրիստոնէից ընդդիմանայ Կոստանդիանոսի ըմբռնի եւ սպանանի:

Եւսերի Պամփիլեայ ի ասաներորդ գիրսն եղեալ ա զեկեղեցւոյ պատմութիւնն, լռեաց ի ժամանակս Կոստանդիանոսի Մեծի և որ առ Գրիգորեանոսիւ եղեալ ք հալածանք քրիստոնէից. Գրեաց նա և զվարս Կոստանդիանոսի ի Տէր ժողովական բարձր ասացութեամբք ՚ի զոր փոքր ինչ աստանօր յիշեսցուք

— Ա՝ ձգեալ նկեղեցւոյ: Գ. Դ. եւ որ ի Գրիգորեանոսէ եղև:  
գ. Ա՝ Դ. բարձրասացութեամբ:

Իսկ մեր նախադրեալ շարադրել զառ ի նմանէ մինչև առ յեկեղեցեացն եղերոյ պատճառոյն:

Ահիզքն յորոց նոյն արասցուք ոչինչ պատմութեան զժարանուոյ հոգ տարեալք. այլ թէ զիարդ զտեալ զրով ի պատմողացն, և կամ թէ որպէս լուսք պատմեսցուք. և վասն զի զսուաջիկայսն հասանէ մեզ յիշել, եթէ որով պատճառով ի քրիստոնէութիւն եկն թագաւորն փոքր ինչ վասն այնորիկ որպէս է վարկանել յիշեսցուք աստուստ ուստեք զսկիզբն արարեալ:

Գլ. Բ.

Զի յայնժամ Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս որ կոչի Եռկուղիոս ի միարանութենէ ի բաց ընկեցեալք զթագաւորութիւն զիւրեանցն փոխէին զվարս. Մաքսիմիանոս որ կոչի Գաղեռիոս նոցունց թագաւորակից եղեալ յիտաղիա կացոյց երկուս կայսերս. զՄաքսիմիանոս ի կողմանս արևելից, իսկ զՅելենոս յիտաղիայ:

Իսկ Բրիտիա կոստանդին<sup>2</sup> կոչեցաւ թագաւոր ի տեղւոջ կոստանդայ հաւր իւրոյ վախճանելոյ յառաջին ամին երկերիւրորդի եւթանասներորդի և Ողիմպիադայն

ա. Բնագիրն ունի πρῶτης առաջերորդի:

1) Յիս Մոզոմնոս. Պատմութիւն եկեղեցական Ա. 2. 3. 4. Կատեղորոս. Պատմ. եռամասնեայ (Tripartita historia) Ա. 4.

2) Եթէ Սոկրատին հետեւելով ընդունենք. որ կոստանդինը Դիոկղետիանոսն էր Մաքսիմիանոս Էռկուղիոսից անմիջապէս յետոյ է թագաւորել. կատանաք որ նա 52 տարի է իշխել, մինչդեռ յայտնի է. որ նա կատանվարեց երեսուն տարի եւ տաս ամիս. թագաւորութեան ժամանակը որոշուած է փրկ 305 եւ 306 թ.

Զի յորժամ Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս ի բաց կացեալ ի թագաւորութենէն ակամայ յաղթահարեալք ի կոստանդիանոսէ, վասն ամբարշտութեանն և նոցա.

ա. Բ. ամաստանութեան.

ի տասն և հնգին Յուզի ամսոյ. բայց՝ ի հետո՞ ի զաւ-  
րականացն Պրէտորիանոսաց, Մաքսենտիոս որդի Մաք-  
սիմիանու որդի Մուկուղիա եղև բանտիալ մանաւանդ  
քան թագաւոր:

Ի յայսցանէ Մուկուղիոս դարձեալ ի ցանկութիւն  
Թագաւորութեան ամբարձեալ, ձեռնարկեաց մերկա-  
ցուցանել՝ զորդին իւր զՄաքսենտիոս. բայց զայս  
տանել արգելո՞ւ ի զաւրականացն. յետոյ ի Տարսնի  
Արիկիոյ [՝ զախճանէր՝:

Իսկ ի կայսերէն Սեւերեայ Գալերիոս Մաքսիմիանոս  
աւարտեալ ի Հռոմ ունել զՄաքսենտիոս՝ գերեցաւ մատ-  
նեալ ի գինուորաց իւրոց՝. ապա Մաքսիմիանոս Գալե-  
րիոս վարեալ զսէրութիւնն ամենայն՝ մեռաւ յա-  
ռաջագոյն եղեալ թագաւոր զԱրիկիոս որ էր ի վա-  
զուց անտի գինուորակցեալ նմա և սիրելի. Գրակեացի  
ազգաւ: Իսկ Մաքսենտիոս յոյժ նեղէր զՀռոմայեցիս՝  
կողեալ և վարեալ զիշխանութիւնն առաւել բռնա-  
բարձր քան արքայաբար: Էլիէր լլրբաբար զհանայօ ազա-  
տաց, և զբազումս սպանանէր և դորձէր գնմանիս: Չայս  
գիտացեալ թագաւորին Կոստանդիանոսի զՀռովմայեցիս

Լուսինի  
Կայսր  
Մաքսենտիոս  
Մաքսիմիանոս  
Սեւերոս  
Սեւերեայ  
Գալերիոս  
Մաքսիմիանոս  
Արիկիոս  
Սեւերոս  
Սեւերեայ  
Գալերիոս  
Մաքսիմիանոս

...կորստանել ἀπολέσασ. ըստ բն.

բ. Այստեղից սկսած գրատու է մեզ հին թարգմանութիւնը:

1. Սեկրատը սխալում է. Մաքսիմիանոս Հեռուլիոսը կոստանդինի  
հրամանով սպանուեց 310 թ. Գաղղիայում. իսկ Մաքսիմոս կեսարն էր  
որ կրկու տարի յետոյ Արիկիոսից յաղթուելով մեռաւ Տարսնի մոտ. ինչ-  
դէս վկայում են Արիկիոսի վիկտորը. Եւսեբիոսը իւր Գրմեկանի մէջ եւ  
ուրիշները. Արիկիոս է որ Սեկրատը շվտեւ է անունները՝ ինչ որ յա-  
նութ է պատահում յայն հեղինակների կողմից Հռովմայեցոց անուննե-  
րում:

2. Փրկիչ 307 թ.

3. Չարեացիացութիւն է սղոտուելը. քանի որ Հռոմում էշխում էր  
Մաքսենտիոսը. իսկ կոստանդինը Գաղղիայում:

Թափել է ի լծոյ ծառայութենէ նորա ջանայր. նոյն ժամայն զմտաւ ածէր, թէ զխարդ բարձցէ զբռնաւորն. և միշտ ի միտս իւր խոկայր, թէ զո՞ աստուածոցն յաւգնութիւն պատերազմին կոչիցէ. քանզի տակաւին ի մտի ունէր, զի ոչինչ աւգտեցան, որք առ Գրիողէտիանոսիւ պաշտէին զաստուածս հեթանոսաց, և գիտէր իսկ զի հայրն իւր Աոստանդիոս դարձուցեալ զերեսս իւր ի սուտ հաւատոյն հեթանոսաց՝ կեանս երջանկագոյնս եկաց: Եւ ի նմին երկմտութեան եղեալ և հանդերձ զաւրաւքն յուղի անկեալ, զարմանալի իմն և անձառելի նշան երևեցաւ նմա. քանզի ի միջաւրէի մինչ արեգակն ընթանայր ի մուտն,<sup>1</sup> ետես յերկինս խաչաձև սիւն լուսոյ, յորում ընթեռնոյր գրեալ. «Այսու յաղթեա »<sup>2</sup> Ակներև նշանս այս պրանչացոյց զթագաւորն և ինքն աչացն իւրոց ոչ հաւատացեալ՝ հարցանէր որք մերձն էին. արդե՞ք և նոքա տեսին ըզնշանս: և նոցա ձայնակցեալ, թագաւորն հաստատեցաւ ի կարծիս իւր վասն աստուածային և սքանչելի տեսլեանն:

Եւ ի նմին գիշերի ի քուն մտեալ ետես զՔրիստոս, որ ասէր ցնա. «արա զնմանութիւն տեսեալ նշանիդ և ընդդէմ թշնամեացն կալ իբրև զդրոշ անպարտելի:» Հաւատացեալ պատգամին՝ արար դրոշ խաչաձև, որ ցայժմ պահի ի թագաւորական պալատան. և մեծաւ համարձակութեամբ երթայ ընդդէմ թշնամոյն և մը-

1. Այս տեսիլը բողոքովն նման է պատմում Եւսեբիոսը Վ. Կ. Ա. 28: Իսկ Ռուֆինոսը Թ. Գ. եւ օրան հետեւելով Սոզոմենը. II. 3. փոքր թիւ տարբերում են:

2. Խոր. Գ. Բ. ԳԼ. 29. . . . նշեալ երեւութացաւ նմա ի քուն իայ աստեղաց յերկնից, պարունակեալ դրով. ասէ. Այսու յաղթեա. զոր արարեալ սիւնոյն եւ յառաջաբերեալ յաղթեաց . . . .





Ապա և յայտնի վնասով նոցա ձեռնարկէր. և եղև հալածանս այս առ տեղեալն. անդ եղև միայն բւր էրն Լիկինիոս: Իբրև զայս և զայսպիսի իբս բռնաբար քործէր, ոչինչ ծածկէր ի կոստանդիանոսէ, և զիտէր զի ի վերայ այսոցիկ ի ցաման վիեալ նորա ջատագովէր զանձն իւր և կեղծաւորելով նմա առ երեսս սիրով զխաղաղութիւն պոռնէր, երզնոյր երզումն յցժ մի երբէք զբռնութիւն խորհիլ, այլ միանգամայն երզնոյր և ընդ նմին երզմնագանց զտանէր. քանզի ոչ զաղարէր բռնաբար խորհիլ և ի վերայ քրիստոնէից հալածանս յարուցանել: Աւրէնս դներ եպիսկոպոսաց մի հպել առ հեթանոսս զի մի ածեսցի քրիստոնէութիւնն. և էր հալածանքն սքողեալ և միանգամայն ակն յայտնի, զի բանիւք ծածկէր, այլ գործով յայտնի կացուցանէր. քանզի անպատմելիս կրէին հալածեալքն յանձինս իւրեանց և յըստացուածս:

1. Լիկինիոսի հրովարտակի բովանդակութիւնը մանրամասնօրէն առաջ է բերում Եւսեբ. վ. Կ. Ա 51-66. Բ 1. 2. տես Խոր. Գ. գլ. 20. Ռուբինսը եւ Թրժնեզը:

Կալէն, Գրէր և յղեր պատգամ մի՝ խորհիլ զքրիստոնէից և զշար, այլ զբարի, իսկ նա կեղծաւորելով պատճառեր զպատճառս սիրոյ և խաղաղութեան, և երզնոյր երզումն. սակայն կրզմնազանց լեալ ոչ զաղարէր ի խորամանկութենէն զիւաց. և հրամարդէ մի հպել քրիստոնէիցն առ հեթանոսս զի մի ուսցին է աճէ քրիստոնէութիւն, ք զի խաւարեալ էր մտօք և օտարացեալ յԱստուծոյ, և ի ցանկութիւնս ընչից և ախտից հիմն արկեալ էր:

ա. ա՛ քրիստոնէից:

բ. ա՛ ածեսցի:

ԳԼ. Դ. 1

Ի վերայ այսոցիկ յոյժ ցասոյց զԹագաւորն Կոստանդիանոս և եղև թշնամի, ի բաց եղեալ զառ երեսս բարեկամութիւնն և պատերազմել սկսան ընդ միմեանս: <sup>2</sup> Եւ եղև մարտ բազում ի ցամաքի և ի ծովու, և ի վերջոյ առ քաղաքաւն Քրիւսոպոլսոյ երկրին Բիւթինւոյ յաղթահարեալ անձնատուր եղև: Ըմբռնեալ զնա կենդանի մարդասիրէ. և ոչ սպանանէր, այլ հրամայէ նմա կեալ ի Թեսաղոնիկէ հանդարտութեամբ:

Իսկ նորա առ ժամ մի հանդարտեալ, ապա ժողովեալ զհամախորհս իւր բարբարոսս, խորհէր ի պատերազմ: Զայս գիտացեալ Թագաւորին հրամայեաց սպանանել զնա և ըմբռնեալ սպանին: <sup>3</sup> Եւ Կոստանդիանոս

1. Տես Սոզոմ. Ա. 7. Կատիզ. Ա. 8. Նիկեփ. է. 44.

2. Պատերազմը սկսեց Փրկ. 323 եւ 324 վերջացու. տես Խոր. ibid.

3. Սպանման սյս պատճառը ուրիշ պատմագիրները չեն յիշում. երեւի Սոկրատն է աւելացրել.

Եւ ստուգեալ զայս ինքնակալին Կոստանդիանոսի, ի ցասման լինել ջատագով Աստուծոյ, յարուցանէ պատերազմ առ նա: Եւ ըմբռնեալ եղև Լիկեանէ յինքնակալէն ի պատերազմին. և մարդասիրեալ առ նա ոչ սպանանէ, այլ հրամայէ նմա կեալ ի Թեսաղոնիկէ հանդարտութեամբ:

Իսկ նորա առ ժամ մի և հանդարտեալ, յետոյ ժողովեաց զհամախորհս իւր բարբարոսս, խորհէր ի պատերազմ և ի մահ Թագաւորին Կոստանդիանոսի գազանի: Զայս զիմացեալ Կոստանդիանոսի առաքեաց զօրս ի վերայ նորա, և ըմբռնեալ զնա սպանին, և այնպէս բարձաւ չարն ի միջոյ, Եւ Կոստան-

ա. Ա. առ ժամանակ:

բ. Բ. Ա. զհամախորհս:

դ. Գ. զօր:

ի ճակատակափրութենէ զրդեալ շեղէր ի տրամազօճէն թնդգէմ՝ զառնալով կարծեացն Լիբիացւոյ, և ուրպէս թուի ուժգին ընդդիմախօսէր բանիցն եպիսկոպոսին և ասէր.՝ « Եթէ Հայր ծնաւ զԱրդի, սկիզբն եղելոյ ունի ծնեալն. և այսու յայտնի, զի էր՝ յորժամ ոչ էր Աբրգին, և ակներև հետևի, թէ յոչնչէ էառ զգոյութիւնն»։<sup>1</sup>

ԳԼ Զ՝

Այսու նորաձև վարդապետութեամբ ընդդիմախօսելով զբազումս ի տարակուսանս ձգեցին. և ի շնչին կայծէ բռնկէր բոց սաստիկ: Եւ շարն սկսեալ յեկեղեցիսն Աղէքսանդրիայ, ծաւալէր ընդ ամենայն Եզդպտոս և ի Լիւբիա և ի վերին Թերա. և ի վերջոյ և յայլ քաղաքս և աշխարհս: Պաշտպանէին կարծեացն Արիոսի և այլք բազումք և մանաւանդ Եւսերիոս, ոչ կեսարացին, այլ նախկին եպիսկոպոսն եկեղեցւոյն Բիւրիտացւոց, որ յայնժամ եպիսկոպոսն էր ի Միկոմիդեայ՝ երկրին Բիւթինեայ: Զայս տեսեալ և լուեալ Աղէքսանդրի զայրանայր յոյժ. և ժողովեալ ի ժողով զբազում եպիսկոպոսունս,<sup>2</sup> նզովէր զԱրիոս և ոչք զգաւանութիւն նորա խոստովանէին և գրէր այլոց ի քաղաքս քաղաքս: ]<sup>3</sup>

15  
16  
17  
18  
19  
20

1. Տես. Խորեն. Բ. գլ 24. «Արիոս Աղէքսանդրացի . . . ուսոյց . . . ոչ քալ զԱրդի հաւասար Հօր. եւ ոչ ի բնութենէ եւ յեութենէ Հօր. եւ ոչ ծնեալ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս . . . եւ ժամանակի գոյացեալ . . .»  
 2. Տես. Սողոմ՝ Ա. 15. Թէոփ. Եւսեր. 1. Կ. Գ. 65. Կասեթ. Ա. 13. Գելազ. գործք ժողովոյն Նիկիա.  
 3. Ժողովին որ կայացաւ Փրկ. 321 Թ. ներկայ էին մտա 100 եպիսկոպոս. Ինչպէս յիշում է Աղէքսանդրոսը իւր թղթի մէջ.  
 4. Մինչև այդ տեղը չկար մեր ձեռագրի մէջ եւ մերք թարգմանեցինք Յունարէն բնագրից, բայց հետեւելով հայ թարգմանչի օրինակն մի կողմ թողինք բնագրում առաջ բերած Աղէքսանդրի գրած երկար թուղթը. որ «Թուղթ Վալէքսանդրի Աղէքսանդրացւոյ» վերնագրին ունի եւ աշխատեցինք, որ թարգմանութիւնը բառացի լինի:

...Աղէքսանդրի գրեալ գեղեցիկն. ամենայն քաղաքացի  
 վառվար ևս լինէր չարն. ի վիճաբանութիւն բարբառե-  
 ցելոց. զի յորս գրեալքն ճանաչէին: Ոմանք՝ հաղորդ  
 եղեալ յաւելուին ի զիրն, իսկ ոմանք զհակառակն առ-  
 նէին: յաւետ ևս ի բարկութիւն շարժէր Եւսեբիոս Նի-  
 կոմիդացի. վասն զի զնա չար արար, յիշէր Աղէքսանդ-  
 րոս ի գրեալն իւրում: Եւ քանզի էր ըստ ժամանակի  
 զաւրաւոր Եւսեբիոս վասն Թագաւորին ի Նիկոմիդաց  
 լինելոյն. զի փոքր ինչ յառաջի նմա էր Թագաւո-  
 րութիւն որ առ Ռիոկղէտիանոսիւ: «Վասն  
 այսորիկ բազումք յէպիսկոպոսաց Եւսեբէ լսէին՝ և  
 նա յաճախապէս գրէր Թուղթ առ Աղէքսանդրոս. զի  
 զաղարեացի ի շարժելոյ զխռովութիւնն, իսկ խնդիր 4  
 որոց ըստ Արիանոսին. իսկ ըսա քաղաքացն եպիսկո-  
 պոսացն. որպէս զի մի լինիլ հաղորդ առ ի Աղէքսանդրէ  
 զբեցելոցն: Ուստի էր ամենայն լի խռովութեամբ. վասն  
 զի ոչ էր միայն տեսանել զեկեղեցեացն ժողովս բանիւք  
 մարտուցեալս, այլ և զի խաժամուժ ամբոխն ի ներքս  
 եկեալ. ոմանց որպէս զսոսա. իսկ այլք յայլ խոնար-  
 հիլ. և յայնչափ խանդեղութիւն իրս հասան, որպէս  
 զի ի հրապարակս, և ի թեատրոնս ծաղր առնէր զքրիս-  
 տոնէութիւնն: իսկ ոմանք յորոց ըստ Աղէքսանդր քա-  
 ղաքի պարտեալք լինէին. վասն վերնագոյն հաւատոցն  
 մարտուցեալք. և բարէխաւսեալք լինէին որք  
 ըստ աշխարհին եպիսկոպոսուէնք: 4

«... 9այտ որ առ Գիով. կանգնեալ βασιλεια ἀπεποιήγτο ուի քաղ-  
 ք. «Էթեուսոք թնէին» διαφύκουσιν քեպրի միջ աւել է:  
 4. «Եւ խնդրէր զի ընկացի որց ըստ Ար...»  
 4. Առաջին գիտական առ եպիսկոպոսունս վիճակաց διαπραχθέντο etc.

Իսկ ոմանք ի յայլ մասն հատեալ ի նմանաբար շարժմանէն. զուգին ընդ արիանոսացն Մելիտիանոսքն՝<sup>1</sup> սակաւ ինչ յառաջ զատեալք յեկեղեցւոյն: Իսկ եթէ ոք են սոքա ասացից:

Ի Պետրոսէ եպիսկոպոսէ Աղէքսանդրւոյ առ Ռինկղետիանոսիւ վկայեցելոյ Մելետիոս ոմն՝<sup>2</sup> եպիսկոպոս՝ մի ի քաղաքացն Եգիպտոսի, նզովեցաւ յաղազս այլ բազում պատճառաց. և մանաւանդ զի ի հալածանսն ուրացեալ զհաւատսն զոհեաց: Սա նզովեալ բազում ասացուածս ունելով սկզբմունս հերձուածոց, որ կայ ի նմանէ մինչև ցայժմ Եգիպտոս՝ Մելիտիանոսաց կոչեցելոց: Պատասխանատուութիւնս. և ոչ մի ինչ ի դէպ ունելով զատելոյն յեկեղեցւոյն. բայց անիրաւեալ ինքեան ասէր. և ամբաստան յոլովիւք և բամբասէր զՊետրոս. այլ Պետրոս ի հալածանս վկայեալ կատարէր: Ապա փոխադրէ զբամբասանսն. և ի վերա Աբիղա. սա որ յետ Պետրոսի էր եպիսկոպոս. և ի վե-

1. Անհիմն է համարուում, որ Մելիտիանոսը այժմ միացած լինին Արիանոսաց հետ. այլ հաւանորէն հիփապի ժողովից յետոյ:

2. Ըստ Եպիփանի բաժանման պատճառն էր. Մելիտիոսը բացատում էր. որ չէ կարելի հեշտութեամբ անկեալ հոգեւորականներին նորից եկեղեցում հաստատել. ընդդէմ Պետրոս եպիսկոպոսի կարծիքին. որ աւելի մեղմ էր: Մելիտիոսի՝ Թերապի արքեպիսկոպոսի կամակիցները աւելի շատ էին եւ երբ Պետրոսը սպանուեց, նա աւելի շատերին էլ գրաւեց եւ հոգեւորական ձեռնադրեց. նորա հետեւողներն իրանց աղանդի անունը գրին: Մարտիրոսներն եկեղեցի. նա ինքը Արիոսին հակառակ էր եւ պաշտպանում էր Աղէքսանդրի հեղինակութիւնը. հաւատի դաւանութեան մէջ էլ անբիծ էր: Մելիտիոսի մահից յետոյ Աղէքսանդրոսը մտածեց նորա հետեւողներն նորից եկեղեցական կարգերին ենթարկել: մինչդեռ նոքա արդէն ինքնուրոյն էին. ուստի եւ նոցա գլխաւորներից ոմանք իւրեանց վերաւորուած կարծելով. օգնութիւն խնդրեցին Կ. Պօլսից եւ հիկոմոքիայից եւ Եւսեբիոսը կանչեց նոցա միանալ Արիանոսաց հետ եւ սոքա միացած ներկայացան ժողովին:

րա Աղէքսանդրի, որ յետ Աքիղա սա եղեալ: Եւ յայտոսիկ հաստատեալ նոցա լինի և որ ըստ Արիանոսին խնդիրն:

Իսկ Մեղիտիանոս հանդերձ իւրաւքն ընդունէր զԱրիոսին հակառակ եպիսկոպոսին համատոհմիլ ընդ նմա: Բայց որոց յայտնի եղեալ անտեղի չարափառութիւն Արիոսի, ընդունէին զԱղէքսանդրի « զառ Արիոս դատապարտութիւն, և որպէս զի իրաւ լինել հակառակս սոցա ասացուածիս եղելոյ » դատաստանրն:

Գրէին՝ և յԵւսեբիոսի Նիկոմիդացի և առ որս յԱրիոս ի փառսն մնացեալք որպէս զի լուծանել զհասեալ քարոզն 4 և վերստին մուծանել յեկեղեցի զքարոզեալսն 7 և ոչ փառաւորեալ չարաչար: Եւ այսպիսի հակառակաց թղթոյն յաճախապէս առաքեցելոց առ եպիսկոպոսն Աղէքսանդրոյ: Առնէին թրղթոյս այսորիկ ժողովս. Արիոս յաղազս ընքեան. իսկ Աղէքսանդրոս զհակառակացն: Եւ այս պատճառ եղև այժմու ծփեցելոյ հերձուածոյս Արիանոսաց, Եւ նոմինոսաց և որչափ ի Մակէդոնիոյ զմականունութիւնն:

Քանզի իւրաքանչիւր ոք վկաութեամբ թղթոցն արարին զընտանի հերձուածոյն:

ա. Հայ Թարգմ. մէջ սխալմամբ գրած է. «Արիոսի»:  
 բ. Ըստ բնագ. «նման նմա խորհողացն դատաստան»:  
 գ. Ջնախակազմեալ վճիռն:  
 դ. Զարտարսեալսն:

1. Այդ կատարուել է գլխաւորապէս այն ժողովի հիման վրայ, որ կատարեցին Արիոսականք Բիւթրիակում: Ցես էլ 10 Եանթութիւն 3.

## ԳԼ Է

Չայս՝ լուեալ թագաւորին և խաւթացեալ սգով-  
անցս ինչ ընտանի զիրն համարէր. նոյնժամայն զվա-  
ռեալ զչարն շիջուցանել փութայր: Թուղթ առ Ա-  
ղէքսանդրոս և առ Արիոս առաքէր ի ձեռն առն հա-  
ւատարմի ուրոյ անուն Ռսիոս. եպիսկոպոս գոլով Կո-  
ղոուբա միոյ՝՝ ամենեւեմ սիրէր զնա թագաւորն և  
պատուով էած զնա. որոց թղթոցն մասին աստանաւր  
կալ ո՛չ է ընդ վայր. քանզի բոլորովմբ թուղթն զԵւ-  
սեբիոսի ի Կոստանդնի վարուցն կայր զիրս:՝ Եւ մասն  
թղթոյն Կոստանդնի ուր ի զիրս կայ է այս. յաղագս  
զալ նոցա ի միաբանութիւն հաւատոյ: Վասնորոյ մեր  
զբազմազանութեամբ թղթոյն զանց արարեալ յիշա-  
տակեցաք միայն զվասն էրն. և որ ինչ զկնի թղթոյն  
պատմեցուք:

## ԳԼ Ը

Այսպիսի՝՝ սքանչելեաւք հասանէր թուղթ թագա-  
ւորին և իմաստութեամբ լի՝՝ իսկ չարն հզաւրագոյն

տ. Բնու. « Ի քաղաքաց Եպիսկոպոս »:

1. Տես Սողոմ. Ա. 16. Թէոդոր. Ա. 7. Եւսեբ. Վ. 4. Բ. 69. Կա-  
սիոզ. Ա. 11. Գեւազ. Բ. 4. Նիկեփ. Բ. 13:

2. Այդ թուղթը կայ բնագրի մէջ (Տ. Եւսեբ. Վ. 4. Բ. 61-2.) իսկ  
այստեղ միայն բովանդակութիւնն է դրած մի երկու խօսքով:

3. Տես. Սողոմնոս. Բ. 17. Թէոդորոզ. Բ. 7 Եւսեբ. Վ. 4. Գ. 4.  
Հիլարիոս. Հատուածք պատմականք Ե. 26. Ռուփին. Ժ. 1. Կասիւզաք. Բ.  
1. Գեւազ. Բ. 5. Նիկեփ. Ը. 14. Սուլպից. Սեւերոս. Պատմ. Սինոդաց.  
Բ. 35:

4. Ոգիտը կայսեր նամակը տարաւ Աղէքսանդրին եւ ներկայ եղաւ այն  
ժողովին որ հաւաքուեց այդ խնդիրը ըննելու համար. այդ ժողովով գա-  
տապարտուեցին եւ մերժուեցին Կոլոթոսը եւ նրա աղանդակիցները ի թիւս  
նոցա էր եւ Իռլիոսը: Տես. Աթան. Վերջէմ Արիանոսաց 74. եւ 75:

էր և թագաւորին փութոյ. և հաւատարմութեան սպա-  
 ւաւորեցելոյ՝ գրեցելովքն. քանզի ոչ Աղէքսանդրոս և ոչ  
 Արիոս ի գրեցելոցն ոմն էին: Ի Այլ որ էր անիրաւ  
 և առ այս և առ այլս ամենայն հակառակութիւն և  
 խռովութիւն:

Իսկ յառաջագոյն գոյր և այլ ախտ տեղեկան զեկե-  
 ղեցիսն խռովեցուցանելով. անմիաբանութիւն Չատիին  
 տաւնի<sup>1</sup>, որ միայն ի կողմանս արեւելից լինէր: Ոմանց  
 հրէականագոյն զտաւնն առնել փութացելոց. իսկ յի-  
 շեցելոցն յամենայն տեղիս երկցեղեալք այսպէս վասն  
 տաւնին. ի հաղորդութենէ ոչ երբէք որոշէին: Բայց  
 արտամահանագոյն զտաւնն յերկցեղութենէն գործէին:  
 Չերկաբանչիւրիցն այսուհետեւ տեսանելով թագաւորին  
 խռովեալ զեկեղեցին. առնէր ժողով տիեզերական ա-  
 մենայն ուստեք զեպիսկոպոստունան թղթովք ի Մովսիս  
 Ռիւթեննոյ հասուցանել աղաչելով: Եւ եկին ի բազում  
 աշխարհաց եպիսկոպոսունք: Յաղաքս որոց Եւսեբիոս  
 Պամփիլեա յերկրորդ<sup>2</sup> ի գիրսն ի վարսն Կոստանդնի<sup>3</sup>  
 զայս ինչ ըստ բանի՝ ասէ:

« Յորոց յամենայն եկեղեցեացն որք յԵւռոպիա և  
 « Պիրիայ և յԱսիայ եկեալք լնուին. զոյգ համաժողովե-

... ὁμοῦσάν ἐμαλλάσσοντο

բ. Բնագրի էՆ ԵՓ Երէպ ԲԵՅ՝ Երրորդ

1. Չատիի խեղճը Ծագել էր նաեւ Քրիստոսի մտ 190 թ. այդ մասին  
 տե՛ս Եւսեբ. Եկեղ. աղտմ. Ե. 25: Չատիի վերաբերմամբ վիճարարութիւնք  
 երբեք խեղճի մասին էին. առաջին՝ օրուայ մասին. արդեօք լուսնի 14 թն  
 պէտքէ տօնը տօնել. թէ ոչ. երկրորդ. թէ ինչպէս պիտի ժամանակը որոշել.  
 որով որոշուած կլ թէր այն լուսնի ժամանակը որի լրացմամբ ընկնում էր  
 տօնի շրջանը: Երկու խեղճին ել զճճուեցին նիկիոսի ժողովում:

2. Եւս. վ. Կոս. Գ. 7-9:

զոց զԱստուած պաշտելով ծայրանալ մին տուն  
 «աղաւթարան, որպէս յԱստուծոյ ընդարձակեալ»  
 «ի ներքս տանէր առհասարակ. Ասորիս և Կիլիկացիս.  
 «Փիւնիկացիս և Արաբացիս. և Պաղեստինացիս. և  
 «ի վերայ այնոցիկ Եգիպտացիս. և Թերեցիս. Արբացիս  
 «և զորս ի Միջագետաց զիմեալս. նա և ի Պարսից<sup>1</sup>  
 «լինէր ի ժողովուն եպիսկոպոս. այլ և ոչ Սկիւթացի  
 «պակաս լինէր ի ժողովուն. Պոնտոս և Ասիայ. Փռի-  
 «զիա և Պամփիլիւայ. զորս մերձ զինքեամբ զաւ-  
 «երագոյնս:» Այլ և Թուրակացիք. Աբայէցիք. և Մա-  
 «կեդոնացիք: Բ Յայսցանէ յեւս մաւտ բնակողաց՝ պա-  
 «տահէին Քրիստոսի. բայց ինքն շատին լինէր.  
 «որ ամենայն իւր գոչէր հանդերձ բազմաւք ժողովելով:»  
 «Իսկ Թագաւորեցիւոյ քաղաքին առաջնորդ<sup>2</sup> յա-  
 «ղագս ծերութեանն վերջանայր զ բայց երկու քահա-

- ա. Միտրէ. «Իւրեանց յայսնի ընտր ժողովանցը:
- բ. բնագիրն ունի աւել *καὶ Ἡπειρώται* եպիրոտացիք:
- գ. բնագ. է «եւ նա ինքն յերկրէն Սպանիոյ, մեծահոգիսն ի մէջ բազմաց ժողովեցոց»
- դ. բնագիրն ունի *ὕστερῶ* ուշանալ. ոչ գայր:

1. Մովսէս Խոր. Բ. գլ. 2Թ. յիշում է Յովհան Պարսից եպիսկոպոս  
 որի անունը կայ նաեւ ժողովի արձանագրութեանց մէջ.  
 2. «Թագաւորեցիւոյ քաղաքին. հակաճառութեան նիւթ է տուել. արգելօք  
 Հռովմն է. Թէ Կ. Պօլիսը: Սոկրատի հրատարակիչը առաջ է բերում մի  
 շարք Յոյն հեղինակների կարծիք եւ քննելով միայն ենթադրութեամբ վը-  
 ճըռում է. որ հրակիրակ եկել են Հռովմից անպատճառ. բայց չի մերժում.  
 որ Կ. Պօլիսի եպիսկոպոսն էլ է իւր կողմից հրակիրակ ուղարկել: Խոր. յի-  
 շեալ գլխում պարզ է վճռում խնդիրը ասելով «եւ ժողովեցան Ռիտոն  
 եւ Բիկենդ՝ երիցունք ի Հռովմ՝ քաղաքէ՝ ձեռնարկութեամբ արբոյն Սեղ-  
 բեստրոսի . . . Աղէքսանդրոս կոստանդնուպօլսի եպիսկոպոս. լստ հիկե-  
 փորոսի այն ժամանակ Հռովմի եպիսկոպոսի անունն էր Մետոփրանէս. որ յի-  
 շում է նաեւ Պելասիոսը, իսկ ըստ Սոզոմենոսի եւ Քէոփանէսի՝ Մետոփրո-  
 նէսը հիկեայի ժողովից առաջ արդէն վախճանուած էր: Եւ այս հաւանական  
 է թւում. քանի որ նրանից յետոյ Հռովմի գահը բարձրացաւ Սեղբեստրոսը  
 որ ժողովից յետոյ տանուամէկ տարի էլ ապրեց:

«նայք նորուն եկեալ զնոյն նորուն կարգն կատարէին: « Այսպէս միայն լինէր թագաւորն Կոստանդին յարեւելից քրիստոսի զպսակն կապելով հպէր ի խաղազութիւն. նոյն ինքն Փրկչին ընդդէմ թշնամեաց պատերազմականաց յաղթութեան աստուածաժայելուչ «փերստին եղաւ գոհարան. պատկեր դասու առաքելականի զայս ըստ մեզ կարգեալ: Չի և ըստ նոցա ժողովել սմենայն հեթանոսաց առ ի ներքոյ երկնից. «արք երկիւղածք յԱստուծոյ. յորս հանդիպէին. «Պարթևք. և Միդացիք. և Իլամացիք. և բնակեալքն «ի Միջագետս. ի Հրէաստանի և ի Կապպադոկիայ՝ զՊոնտոս, և զՓռիւզիայ. զԱսիա. և զՊամփիլիա. զԵռպատոս՝ և զկողմանն Ղիբիոյ. որ ըստ Կիւրինւոյ. և որք «դիմեալք Հռովմայեցիք և Հրեայք. և եկքն Կրէտացիք «և Արաբացիք: Սակայն որչափ ի նոսա յետանայ՝ որ «նչ յԱստուծոյ պաշտաւնէիցն լինել զամենեօն: Քանզի եկելոց դասու եպիսկոպոսացն բազմութեան էր «յԺԷ՝ թուոյ փերահամբարձեալ ճառեցելոցն ընդ սոսա. քահանայիցն և սարկաւազացն հետեցելոց և «այլց բազմաց որոց ոչ էր հասանել թուոյն: »

«Իսկ ի պաշտաւնէից Աստուծոյ ոմանք վայելէին իմաստութեան բանիւ. ոմանք վարուք պանչելեաւք և ժուժ-

ա. բնագ. եզրկոսոս:  
բ. բնագ. ΔΟΥΤΕΡΑΙ Հայ Բարդ. բառացի լինելով աննակահափ է. «իտքն է. «Սակայն այնպէս էր. որ բոլորն էլ Աստուծոյ պաշտօնիայք չէին.»

1. Այստեղ ունենք 318 թիւը. որ ունին նաեւ Խոր. եւ մեր մեւս պատմագիրները. եւ շատ յոյն հեղինակներ. իսկ բնագ. ունի. «եպիսկոպոսներ թիւը 300-ից. անց էր. Եւսեբ. 250. Անտիոքի եպիսկոպոս Եւստաթիոսը 270. իսկ ընդհանուր կարծիքը համաձայն է 318 թուի հետ: Արաբացի հեղինակ Իբն-Աբի յոնուֆէ. որ բոլոր ժողովուածները թիւը հաւասար էր 2408-ի. որեքոց Կոստանդինը ընտրեց 318 եպիսկոպոսներ:

«կալ համբերութեամբ՝ իսկ ոմանք չափու յեղանակաւ  
 «զարդարէին: Եին ոմանք ի սոցանէ ժամանակաւ երկայ-  
 «նութեամբ պատուեալք: իսկ ոմանք մանգական տիովք  
 «անմամբ հոգւոյ փայլակեալք: որք արդ անցեալք ի  
 «պաշտելութեանն ընթացս, որոց ամենեցունց թագա-  
 «ւորն յամենայն աւուր առատապէս զթոշակն հրամա-  
 «էր տալ:»

Այսպիսիս վասն արդար ժողովելոցն ամենեցուն Եւ-  
 սեբիոս Պամփիղեալ պատմեաց: Կատարեալ թագաւո-  
 րին զյաղթականն ընդդէմ Ղիկինայ, առնէ տաւն՝ ի  
 Ղիկիա: Վայելուչ էին ընդ էպիսկոպոսունսն Պար-  
 մութիս՝ որ ի վերին Թեբայիդոյ և Սպոնդոն, որ  
 ի Վիւպրոսէ. իսկ զորոց յիշեցիս ընքեմբ՝ յետ  
 այսորիկ ասացից: Եկին և ժողովրդականք բազումք ի փորձ  
 բանական արուեստիւ. երկաքանչիւր կողմամբք ջատա-  
 գով լինել յաւժարութեամբ. բայց զԱրիոսի գկար-  
 ծիսն ընդունէին Եւսեբիոս Ղիկովդացի, որպէս և  
 նախկին ասացաք, և Թեւերինիս՝ և Մառիսոն՝ որ

- ա. Բնագ. ունի աւել *ἀπὸ τῆς αἰῶν καὶ ἀπὸ τῶν εἰς τὴν* ..և ինքն գիայ ի Ղիկիա ա
- բ. Բնագ. զաֆնուտոս:
- գ. Բնագ. «Քէ վասն էր յիշեցի զսոսա ե.կուս յետ այսորիկ ասացից»:
- դ. Քէոզնիս:
- ե. Մարիս

1. Սոզոմենոսը պատմում է, որ եպիսկոպոսները արդէն շատ հարցեր  
 վճռել էին, իսկ կոստանդնիւը յետոյ եկաւ ժողով: Կոստանդնիւր իւր թշ  
 խանութեան քանասմեակը տօնից փրկ 325. Թ. Յուլիի 25ն. Եւսեբիոսը  
 վարք կոստ. մէջ պատմում է. կոստանդնիի իշխանութեան քանասմեակը  
 լրացաւ այն ժամանակ, երբ ժող. վի մէջ հայրապետները արդէն համաձայ-  
 նութիւն էին կայսրիւ վիճելի հարցերի մասին կայսրը եկեղեցու յաղթու-  
 թիւնը իւր իշխանութեան երկարոր. յաղթութիւն համարելով մեծ հոնգէտ  
 կատարեց ժողովի եպիսկոպոսներ ին իւր մտ հրակրելով: (Յես. Եւսեբ. վ.  
 Կ. Գ. 14. 15 Գ. 47.) Հաւանակօրէն նա ժողովին ներկայ է եղել Յու-  
 լիս ամսից փոքր ինչ յետոյ:

Միկիոյ եպիսկոպոս էր և Մառիս, որ Քաղկեդոնի Բիւթենոյ: Այսոցիկ ընդդէմ քաջարար Չանայր Աթանաս՝ սարկաւազ Աղէքսանդրաց եկեղեցւոյն, զոր մեծաւ պատուով էած եպիսկոպոսն Աղէքսանդրու. վասն որոյ նախանձ զինեցաւ հակառակ նորա, զոր յետոյ ասացիցցօ Քանզի փոքր ինչ յառաջ քան ի մի՛ ժողովելոյ եպիսկոպոսացն, բանաւորքն արուեստիւ առ բազումն հանդիսանային: Ի՛սկ բանիցն ձգելոց և բազմաց առ բանի՛ն վայելչութեան, ոմն մի ժողովրդական ի խոստովանողացն ողջ ունելով զիմաստութիւնն, ընդդիմանա բանականացն. " և ասէ ցնոսա. որպէս զի ուրեմն՝ Բրիտանոս և առաքեալքն ո՛չ բանական արուեստ աւանդեցին մեզ և ո՛չ սնոտի պատրանս, այլ մերկ գիտութիւն՝ հաւատովք և գործովք բարեաց պահեալ՝: Զայս ասացեալ ոմանք յորոց մերձ կային, սքանչանային և ընդունէին: Իսկ բանաւորացն՝ բարեբարոյազոյն արարեալ լռէին, պարզ բանին ճրջմարտութեան՝ լսող եղեալ: Եւ այսպէս յայնժամ որ ի բանականութենէն եղեալ ամբոյն դադարեաց: Իսկ ի վաղիւն եպիսկոպոսունքն առհասարակ ամենայն ի մի վայր ժողովէին: Եկն անդ և Թագաւորն ընդ նոսա, և իբրև էանց, կայր ի միջի նոցա. և ոչ նախկին նստել յանձն առնոյր յա-

.. διαλεκτικοί

բ. բնորդ ունի γνώμην, sententia՝ կարծիք, իսկ գիտութիւն.

γνώσις է, որ կայ մի սնուարում. γνώμη յարմար է համարում, որովհետև նուրազ գիտեցալ, ինչ որ նուրազումն է:

գ. ս = էլ է յոյի διαλεκτικός բարի բառ:

1. Այս պատմութիւնը ունի Ռուսիոյնսը գիրք Ժ. եւ աւելի մանրամասն եւ շարժազանցքած Գեղարքունիք:

2. Արդե՛ք ժողովարանում. Թէ կայսեր պալատում:

ուժ քան զէպիսկոպոսացն ակնարկեալ: Այսքան բարի  
և երկիւղած արանց յԱստուծոյ զթագաւորն ընդու-  
նէին: Քանզի վայելուչ ժամանակին լուսթիւն եղեալ,  
սկսաւ թագաւորն անդուստ յաթողոյն յորդորական  
բանիւք հպել առ նոսա, առ միաձայնութիւն յորդո-  
րել զնոսա<sup>1</sup>: Եւ զիւրաքանչիւր ուրուք զտրտմութիւն  
առ ծփումն. թողուլ խորհէր: Քանզի բողոք ունէին  
սմանք ընդ միմեանս. իսկ բազումք ի նոցանէ թուղթս  
աղաչանաց թագաւորին էին արարեալք: Վասն զի զա-  
ռաջիկայն վասն որոյ եկեալ էին. դասաւորիլ զիտա-  
ցեալ. իսկ աղաչեալ հրամայեաց զգրեալսն այրել:

Ասացեալ. աւրէնս զհրամայեալսն Քրիստոսի՝ թողուլ  
եղբաւր զթողութեանն հանդիպումն յառաջագոյն ա-  
սացեալ: Իսկ յայնժամ որ յաղազս միաբանութեան  
և խաղաղութեան բանսն ընդարձակեալ հանել. վասն  
հաւատոցն խնամողագոյն այց առնել նոցա կամաց հը-  
րամայեաց, որև վասն այսորիկ ի նոյն յերրորդ գիրսն  
Սոստանդնի վարուցն ասէ ինքն Եւսեբիոս. իսկ թագա-  
ւորն բազում յաւժարութեամբ և ժուժկալութեամբ  
մտադրէր ասացելոցն, և ասէր զնոսա ի միաբանութիւն:  
Իսկ վասն որբոյ տաւնին Ջատկի գնոյն ժամանակ խոս-  
տովանել առ ամենեսին ըստ պարտին, և ոչ անկարգ  
ինչ այլև գրով նշանակեալ իւրաքանչիւր ումք զհա-  
սարակաց կարգեալն<sup>2</sup>: Եւ յաղազս այսոցիկ նոցունց  
ձայնիւ Եւսեբիոս գրով եթող:

Իսկ մեք նոցա ոչ ընդ վայր հպեցաք, այլ որպէս  
վկայութեամբ հպեալք ի նորա ճառեցեալսն: Եւ զայս

1. Կարբը խոսացել է Լատիներէն. Թարգմանը կրկնել է Յունարէն:

2. Յունարէն բնագրում առաջ է բերուած նոյն իսկ Եւսեբիոսի նկարա-  
գրութիւնը. Հայ. Թարգմանը կրճատելով միայն բովանդակութիւնն ունի:

կարգեցաք զրով որպէս զի յորժամ որ ուրիշ զժողովոյն Արկիոյ զհաւատն սխալեալ ըստգտանեմ. ոչ ներեսցաւք նոցա, և ոչ լռեսցուք, և ոչ հաւատասցուք Սաբինոսի Մակեդոնացոյ. տգետս և ամբարիշտս կոչողէն զանդր ժողովեալ սուրբ հարսն: Քանզի Սաբինոս՝ որ յԵրակղիա (Թուակա Մակեդոնացւոց եպիսկոպոս. ժողովարար յորովից ժողովոց զրով իսկ զժողովեալսն ի Արկիա) որպէս զպարզամիտս և տգէտս ձգեաց. ոչ զգացեալ թէ և զինքն զԵւսեբիոս որոյ մե՛ծ փորձիւ զհաւատն խոստովանեալ. այլ և զսա՛ որպէս զտգէտ մատնէ: Եւ զոմն կամուք թողոյր և զոմն ձգէր. բայց զամենայն առ ընտանի գիտումն յաւէտ քարշէր: Եւ զովէ՛ որպէս արժանի վկայ հաւաասարմութեան Եւսեբիոս Պամփիղեայ. զովէ՛ և զԹագաւորն, որպէս կարող կրաւնաւորել զքրիստոնեայս. և պարսաւէ զեղեալն ի Արկիա զհաւասա, որպէս զտգիտաց և զո՛չ հանճարողաց եղեալ. և զոր որպէս իմաստուն և անսուտ կոչէ զսորա՞՞ զձայնն կամաւորութեամբ անտես առնէ:՝ Բայց զՍաբինոս, թէ որպէս պէտք են կոչել արասցուք յիշումն. իսկ ի Արկիայ՝ ժողովուն յԵւսեբիոսէ մեծա-

- ա. բնագիրը կրճատ է Թ-բղձմանով:
- բ. բնագ. ունի καλεῖ μάρτυρα «կոչէ վկայ զսորա...»
- գ. բնագ. ἡς μεγάλῃς συνόδου. «մեծ ժողովուն»:

1. Այս Սաբինոսը Մակեդոնացւոց Թրակիայի Հերակլեա քաղաքացի էր. նա մի ժողովածու կազմեց ժողովի գործերից սրից շատ անգամ օգտուում է Սոկրատը. բայց Չրան արհամարում է. ասելով որ վատ աղաւթներից է ժողովել եւ թշնամի է ուղղափառ եպիսկոպոսներին: Ժողովից դուրս եկազ գրութիւնները երկու տեսակ էին. առաջին՝ ժողովից, կամ առանձին եպիսկոպոսներից գրած նամակներ վիճելի հարցերի մասին. որ տարածւում էր ամեն տեղ. երկրորդ՝ ժողովի վճիռները եւ խօսակցութիւնները. որ գրի էր անցնում քարտուղարը:

ձայն դովեցելոյ համարանութեան հաւատն է այս <sup>1</sup> :  
 Զայս զհաւատ <sup>2</sup> յԺԸ սուրբ հարքն ծանեան. և հա-  
 տատեցին: Եւ որպէս ասէ իսկ Եւսեբիոս զուզաձայ-  
 նեալքդ և համափառաւորեալքդ զիր արար էառն.  
 իսկ հինգն <sup>3</sup> ի նոցանէ ոչ ընգալան. Եւսեբիոս Արկովի-  
 զոյ եպիսկոպոս. և Թէոֆիս Արկիոյ. Մառիս Քալկե-  
 դոնի, Թէոֆիս Մառմանիոյ. Սէկունդոս. Պտղոմիա-  
 զուոյ: Քանզի ասացիք մեզ ասն համագոյ լինել, յոր-  
 մէ է. կամ ըստ բաժանման, կամ ըստ հոսման. և  
 կամ ըստ յիմքէ աճման որպէս յարմատոյ բողբոջ:  
 Իսկ հոսման որպէս հայրական մանգուէք. իսկ ըստ բա-  
 ժանման որպէս զձոյլ ոսկւոյ ոսկէտեսակք երկու կամ  
 երեք. ոչինչ ըստ այսոցիկ է Որդի Աստուծոյ: Վասն  
 այսորիկ ոչ խոստովանեալ զհաւատն ասէին սղբա

1. Հաւատամքը չկայ Թարգմանութեան մէջ ուստի կարեւոր համարեցինք  
 Թարգմանելով բնագրից դնել Ծանօթութեան մէջ:

• Հաւատամք ի մի Աստուած. ի Հայրն ամենակալ. յԱրարչն ամենայն երե-  
 ւելեաց եւ աներեւութից, եւ ի մի Տէր Բիսուս Գրիստոս Որդին Աստուծոյ  
 Յնեալն ի Հօրէ. միածին. այսինքն յեութենէ Հօր. յԱստուած յԱստուծոյ.  
 ի լոյս ի լուսոյ. յԱստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ի Յնեալ եւ ոչ  
 յարարեալն յեութենէ Հօր. Որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի զերայ  
 երկրի. Վասն մեր մարդկոն եւ վասն մերոյ փրկութեան իջեալ եւ մարմնա-  
 ցեալ եւ մարդացեալ. չարչարեալ եւ յարուցեալ յերրորդ աւուր ելեալ յեր-  
 կինս. զալոց է ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Եւ ի սուրբ Հոգին. իսկ  
 որք աւեն. էր յորժամ ոչ էր Որդին եւ նախ քան զծնանելն ոչ էր եւ Թէ  
 յոչէից եղեւ. կամ յալմէ յեութենէ. կամ զպութենէ. ասն լինել կամ  
 արարեալ. կամ փոփոխելի զՈրդին Աստուծոյ. զայնպիսին նզովէ սուրբ կա-  
 Թուղիկէ եւ առաքիլական Լկեղեցի:

2. Աթանասը վկայում է. որ Ոսիոսն է այդ հանգանակի հեղինակը,  
 զոնէ այդպէս էին կարծում Արիստականք, իսկ ըստ Ս. Բարսեղի գրա հե-  
 ղինակը Հերմեզմնն է:

3 Ժողովում կազմած հանգանակի հետ չհամաձայնողները Թեոֆոպոսի  
 եւ Հիերոնիմոսի վկայութեամբ երկուս էին՝ Թէոնաս եւ Սեկունդոս. իսկ  
 ըստ Ռուփիկի այնպիսիները տասն եօթ հօգի էին:

Հինգէքեան: Բազում ինչ ապա զճառուսնն համազոյութեանն հատեալք. զնզոյն Արիոսի ենթադրել ոչ կամեցան: Վասն որոյ սուրբ ժողովն զԱրիոս և զնորին չարափառութեանն զհաղորդս նզովեաց. և հրամանաւ թագաւորին զԱրիոս և զորս ընդ նմայն և ընդ Թէոդոնիսիւ յաքսորս առաքեաց: Իսկ Եւսէբիոս և Թէոդոնիս սակաւ ինչ յետոյ յաքսորեացն գիրս զղջման արարեալ զհաւատ համազոյութեանն խոստովանէին. զոր նախակարծեցեալք յայտնեցուք: Իսկ յայնժամ էր ի ժողովոյն Եւսէբիոս որ զՊամփիլիա առ անուանութիւնն ունէր որ յէպիսկոպոսութիւնն կեսարւոյ Պաղեստինւոյ էր վիճակեալ. սակաւ ինչ ի վերահասուցեալ և այց արարեալ ընդալաւ զսահման հաւատոցն: Սա էր հանդերձեալ առ ամենեսին. որև շարադրեացն իսկ ոչ միայն. այլև որ առ նոքաւք ժողովրդեանն գրով զսահման հաւատոյն առաքեաց: Չհամազոյութեանն ճաթարզմանեաց. զի մի նենդութեան մի մտածութիւն յորոց ի վերայն հասոյց ունիցի որ յաղագս նորա զայս զըէ՝ Եւսէբիոս և առաքէ ի կեսարիա Պաղեստինոյ՝: Իսկ Աղէքսանդրացեաց եկեղեցւոյն և որոց յԵղիպտոս և ի Լիբիւ այ՛ և ի Ռենտապոդիս հասարակաց ժողովն գրեաց:

ԳԼ. ԹԻ. 2

Յորում թղթի կայ և այսպէս: «Եթէ նախ յամենեցունց քննեցաւ ամբարշառութիւնն Արիոսի. և նորաոցն սուա-

— Բնագրի մէջ կայ Եւսեբիոսի « Հաւատամք », իորա բացադրութիւնը ևւ Նիկիա- կոնց անշտն փոփոխութեամբ, ևա, Թարգմ. բոց է Թոզել:

1. Եւսեբիոսի այդ նամակը պահուած է Սթանաս. Նամականկը յաղագս ժողով. Նիկ. Թէոդոր. Պատմ. եկեղ. Ա, 12. Գեւուս. պատմ. ժողով. Նիկ. Բ, 35 եւ Նիկեոսի. պատմ. եկեղ. Հ. 22:

2. Տես. Սողոմ. Ա, 21. 24. Թէոդոր Ա, Բ. կատի.դ. Ա, 12 Գեւուս. Գործք ժողով. Նիկ. Բ. 31. Նիկեոսի. Հ. 24:

Չի թողաւ որիս և ամենեւին հաճոյ թուեցաւ նզովել զամբարշտութիւն նորա. զկարծիս և զբանս և զանուանս հայհոյութեանն. որովք հպէր հայհոյել զՍրդին Աստուծոյ: Եւ այսքան զաւրեաց ամբարշտութիւնն զի և անվաւել առնել զԹէոնաս Մառմառիկեցի և զՍեկունդոս Պտղոմեցի. զի և նոքա նոցաոցն հանդիպեցան:

Բայց շնորհն Աստուծոյ ի յարուցանելոյ ի չարափառութենէն ազատեաց զՅգիպտոս:

Այլ պակասեր որ վասն յանդգնութեանն Մեղիտինոսի և ձեռնադրելոցն ի նմանէ. և վասն այսորիկ թէ որպէս հաճոյ թուեցաւ ժողովոյն, յայտնեցից ձեզ եղբարք սիրելիք: Հաճոյ թուեցաւ վասն Մեղիտինոսի մարդասիրազոյն շարժեցելոյ ժողովոյն. քանզի ըստ ստոյգ բանին և ոչ միոյ կամակցութեան արժանի է կալ յիւրում քաղաքին. և ոչ մի ինչ իշխանութիւն ունել և ոչ նախաձեռնել և ոչ նախադրութիւնս առնել. ոչ յաշխարհս և ոչ ի քաղաքս աւտարս երեւի. այն պատճառոյ աղազաւ. բայց սուղ զանուն պատուոյն միայն ստանալ: Իսկ զորս ի նմանէն կարգեալս խորհրդականագոյն ձեռնադրութեամբ հաղորդեալ ընդ սոսա յաղազս ունելոյ սոցա զպատիւն, և զպաշտելութիւնն. բայց երկրորդս լինել յամենայնէ ամենեցունց որ յիւրաքանչիւր ի պանդխտութեան. և յեկեղեցոջն քննեցելոյ ի պատուականագունիցն պաշտաւնակցաց մերոց ընդ Աղէքսանդրիւ նախաձեռնադրեցելոց: Եւ որպէս զի և սոցա և ոչ ինչ մի իշխանութիւն լինել զհաճոյան իւրեանց նախաձեռնարկեալ. և կամ անուանս կոչել. և կամ բնաւին առնել ինչ առանց կամաց կաթողիկէ եկեղեցւոյն եպիսկոպոսին. որոց ընդ Աղէքսանդրիւ: Իսկ զորս շնորհիւն Աստուծոյ և աղաւթիւք ձերովք. և ոչ ի միում հեր-

ձուլածի գտեալք. այլ հաստատեալ ի կաթողիկէ եկեղեցի իշխանութիւն ունել. նախաձեռնել և անուանս կոչել արժանաւորացն վիճակին. և զամենայն առնել ըստ աւրինաց և կարգաց եկեղեցւոյ: Իսկ թէ ումէք պատահեսցի հանգչել յորոց յեկեղեցւոջն ի պատիւ վախճանեցելոյն, զորս արդ ընգալեալս. միայն արժանաւոր եղեսին. և ժողովուրդն ասասցէ հաղորդս լինել տեսաւնագրելով զսա եպիսկոպոսին Աղէքսանդրւոյ: Իսկ այլց ամենեցունց թողութիւն եղև: Բայց վասն Մեղիտոսի ոչ ևս նոյնս թուեցաւ հաճոյ. վասն վերստին նորա անկարգութեան և նախաձեռնելոյն, և յանդգնութեան կամացն. զի և ոչ մի իշխանութիւն անձնիշխան լինել տացի նմա. զի մի վերստին կարասցէ զնոյն անկարգութիւն առնել: Իսկ վասն միաբանութեան սրբոյ Զատիկին. եթէ ամենայն եղբարց որ յարևեալս յառաջագոյն առնողաց զտաւն. հաղորդ լինել չռովմայեցւոց և ձեզ և մեզ ամենեցունց. որք մի անգամ ընդ ձեզ պահեն Զատիկն երկրորդ անգամ զնոյն կարգեալ:»<sup>1</sup>

Բայց այս գիտելի է զի Արիոս գիրս համապրեաց վասն իւրոյ չարափառութեանն զոր վերագրեաց ի վերակոչեցելոյն (Թաղիա<sup>1</sup>). և է կերպարան զրոյն թոյլ և լուծեալ: Ուստի և զնա յայնժամ ժողովն հոգ տարաւ վասն եղելոյ խաղաղութեանն. այլ և ինքն թագաւորն թուղթս առա-

<sup>1</sup> Այս բնագրի մէջ երկար նամակ է. Թարգմանիչը է իրոս կրօնտէրով զիտաւոր միտքն է պահպանել:

1. Արիոսը գրում է **Θάλασσα** անուանով երգը զմեազա՛ն նիւթերի վրայ զմեազան եղանակով. որպէս զի երգի քաղցրութեամբ՝ անմեղ մարդկանց գրաւէր իւր տղանդի համար. Բայց գիրքը միանգամայն չընդունուեց. վատ բանաստեղծութեան համար որից մի քանի կտոր մնացել են:

քէ Աղէքսանդրացեաց եկեղեցւոյն ծանուցանելով 1. «Եթէ ոչ է պարզաբար և ոչ որպէս հանդիպեցաւ և եղաւ սահման հաւատոյս, այլ թէ մեծ խնդրով և փորձիւ ասացին զսահման հաւատոյս. և ոչ որպէս զի ոմն ասացաւ և ոմն լռեացաւ. այլ թէ զոր ինչ առ շինումն կարգացն ասել պարտ էր՝ ամենայնն ասացաւ. և զի ոչ պարզաբար սահմանեցաւ. այլ սսուգապէս քըննեցաւ նախկին: Արպէս զի զամենայն որ ինչ ընդդիմաբանութեան և կամ երկպառակութեան պատճառք թուէին լինել. զայս արմատաքի խլեալ և կատարեալ կամս Աստուծոյ զանդր ժողովելոց եպիսկոպոսացն կոչէ կամս. և չոգւոյն սրբով զայսքան եպիսկոպոսաց համաձայնութիւն լինել ոչ մերժէր աստուածասէր և սուրբ թագաւորն» 2 :

Ի այց Սաբինոս որ Մակեդոնացւոց հերձուածոյն առաջնորդ, զսոսա կամաւորութեամբ ոչ ընդունի. այլ պարզամիտս և տգէտս ասէ. հարկաւորելով և զինքն Եւսէբիոս կեսարացի տգիտութեամբ մատնել և ոչ ածէր զմտաւ որպէս զի թէ և պարզամիտք իցեն որք ի ժողովուն փայլակէին յԱստուծոյ և ի շնորհէ սրբոյ չոգւոյն ոչ երբէք նուագեցուցանել զձգմարտութեանն կարէին: Լուր արդ որպիսի և մեկայլ Բ թղթովս թագաւորն հակառակ Արիանոսի և որոց հաղորդ չարափառութեան նորա վարժեալ:

« II 17 Թուղթն էլ է կրճատուած: Բ. καὶ δι' ἑτερας

1. Ի: Լսեբիոսը վարք կոստ. չունի ոչ պս. ոչ էլ յետագայ թուղթը. ունի Գեղաս. Բ, 37. Նեկեփ. ունի միայն երկրորդը Ը 25. եւ կասեալ. Բ, 25. իսկ հայ թարգմանը ըստ իւր սովորութեան ամբողջը մի քանի նախադասութեան մէջ է ամփոփել:

Ամենայն ուրեք զեպիսկոպոսունան առաքեաց առ եպիսկոպոսունս և ժողովրդականս այսպէս: "

« Զարաց և ամբարշտաց նմանեալ Արիոս, իրաւացի է զնոյն զնոցունց ունել անարգանս. որպէս զի և այսուհետև Պորփիրոս աստուածպաշտութեանն թշնամի՝ կարգս անիրաւս և անաւրէնս հակառակ կրանից և կանգնեալ զարժանն էգիտ զվարձ. և այսպիսի որպէս զի զնախատող ինքն զնոյն հետայն լինիլ ժամանակին. և առաւել շնուլ չարափառութեամբ. այժմ հաճոյ թուեցաւ զԱրիոս և զնորուն համակամն զՊորփիրոսիանուս կոչեցեալսն որոց յեղանակացն նմանին, զայսոցիկ ունելով զյորջորջումն: Առ այս և եթ ինչ շարագրումն յԱրիոսէ կարգեսց գտանիցի. զսյս հրոյ մատնեալ. զի մի ընդ վայր միայն նորա վարդապետութիւնն ապականիցի. այլ զի և ոչ յիշումն նորա բնաւ ին մնասցէ: Զնոյն պատմեմ և այժմ. եթէ որ շարագրեալս ինչ յԱրիոսէ ունիցի համակարգութիւնս. որպէս զի թագուցեալ ինչ և ոչ նոյն ժամայն մատուցանել և հրով կիզուլ և զայսպիսիս սպանանել մահու վնասու: Քանզի առ ժամայն այլոցն ի սորա իսկ զլիոյս կացցէ պատիժն: Եւ այսպիսիս և ոչ միոյ թողութեան արժանաւորեցի ամենեւիմք »:

Եւ այլ թուղթս բազումս թագաւորն ընդդէմ Արիոսի և նորուն չարափառութեանն եղելոց հաղորդս ժողովականագոյն զրեաց ամենայն ուրեք ըստ քաղաքաց:

ա. Բնագ. մէջ վիրագիրը ասարբի է.

1. Այս թուղթը ամբողջութեամբ է բերած. որպէս բաց է թողել. մի թուղթ ուղղած եկեղեցիներն. մէկը Եւսեբիոսին. մէկը Եւսեբիոս կեսոբացուն եւ մէկը Մակարիոս Երուսաղէմացուն.

2. Հռովմայեցւոց կայսրները քաղաքացիներին գրած նամակները հրամայում էին հրապարակով կարդալ. ուստի եւ նամակի վերջում գրում էին *proponatur* « հաղորդս ժողովրդականագոյն գրեաց ».

Եւ նախկին ե՛ր գովեստիւք: Եւ զխորամանկութեանն ձեւ մատնելով զնա ոչ այս միայն այլև ընդ դէժ՝ Սբրիոսի և Թէոփիսի գրելով<sup>1</sup>. և հպի յԵւսեբիոսի չարափառութեանն: Ոչ միայն ի վերա արիանոսութեանն. այլ զի և բռնութեամբ յառաջագոյն բարեմտաբար ի գործսն խորամանկէր. և խրատէ զՆիկիոմիդացիսն այլ եպիսկոպոս առնել փոխանակ սորա:

Այլ զթուղթսն զորս վասն այսորիկ յաղագս երկայնութեանն որ ի նոսա աստանաւր զընել աւելորդ համարեցաւ. պարտ լիցի զխորհել խնդիրն յայտնել նոցումբք: Յաղագս այսոցիկ այսքսն ճառեցաւ:

#### ԳԼ. Ժ.

Բայց<sup>2</sup> զիս շարժէ փոյթ թագաւորին այլ գործոյ առնել յիշատակ որ զինքեան զկամսն յայտնէ. որպէս զի խաղաղութեանն հոգ տարեալ յանձն առնէ:

Քանզի եկեղեցական միաբանութեանն ինամ տարեալ կոչէ ի ժողովոյն՝ զԱկէսիոս ոմն<sup>3</sup> Նաւատիանոսաց աղանդոյն եպիսկոպոս: Վերագրութեան և ստորագրութեան ժողովոյն հաւատոյ հասցանէր թագաւորն զԱկէսիոս. թէ և դու խոստովանիցիս զհաւատ և գործունն սրբոյ Զատիկին տաւնի: Իսկ նա ասէ. ոչինչ նորագոյնս. ով արքա ժողովն սահմանեաց: Քանզի ան-

... Ըստ բնագրի, պէտք է ի ժողովն կոչել *κέκλητῃς* πρὸς τὴν σύνοδον

1. Ուր թուղթը կայ Գեղոս. Պատմ. ժող. Նիկիոսի. Գ. մասի զեք 20. մ.

2. Տե՛ս Սոզոմ. II, 22. Կասիոս Բ, 13. Նիկիոսի. Ը, 20.

3. Ըստ վալեսիոսի այդ պատմութիւնը անհաւատալի եւ հնարովի է. որովհետեւ յայտնի չէ թէ Ակէսիոսը ո՞ր քաղաքի եպիսկոպոս էր եւ երբ որդ անհաւատաւի է. որ կոստանդինը մի որ եւ է հերետիկոս եպիսկոպոսի կանչած ինն ժողով. ինչո՞ւ ուրիշներին չկանչեց:

զուտ իսկ իսկզբանէ յառաքելական ժամանակացն աւանդեցայ. և զսահման հաւատոյս և զժամանակ Զատկի տաւնի: Իսկ հարցեալ թագաւորին ասէ. զի՞ այսուհետեւ ի հաղորդութենէ մերժէ. նա զառ Ռիկկիոսիւ եղեալն ըստ հալածանացն ուսուցանէ. և զխստութիւն խիստ կանոնին ասէր. որպէս զի ոչ պարտ է ասէ զմեզուցեալսն ի յեա մկրտութեանն մեղանշումն զորս մերձ ի մահ կոչնն աստուածային զիրք՝ հաղորդութեան աստուածայնոյն խորհրդոց արժանաւորիլ, այլ ի զզջումն զնոսա յորդորել. իսկ յոյս թողութեան մի՞ ի քահանայից առնուլ. այլ յԱստուծոյ սպասել կարողին և իշխանութիւն ունողին թողուլ զմեղս: Զայս ճառեալ Ակիսոս. ասէ ցնա թագաւորն. դիր սանդուղոս, ո՛վ Ակիսիէ և միայն ել յերկինս: Իսկ բանից այսոցիկ ոչ Յւսեբիոս և ոչ այլ դք առնէ յիշումն: Բայց ես լուայ յառնէ յոչ երբէք ստեցելոյ. որպէս զի ծեր էր յոյժ. և որպէս զի զրեալ ըստ ժողովոյն ասաց. ուստի նշանակ է ինձ զայս կրել. որ լռութեամբ զայս ի բաց արձակին. զոր բազումք ի պատմութեանն շարադրողաց նշանակեալ կրեցին: Քանզի նպքա բազում ինչ պակասեցուցին, կամ առ վշտակցեալք, կամ ակն առնլով: Վասն Ակեսիոսի այսքան ճառեցաւ:

### ԳԼ. ԺԱ.

Արդ՝ յազագս Պափնութիսի և Սպիւռիզոնի առնել յիշումն վերագունիւ պատմեսցուք. ի զէպ է աստանաւր

1. Յովհ. Թղթ. Ե. 16. 17.

2. Յեո. Սողոմ. Ա. 23. Ռուփին. Ժ. 4. Կասիոզ. Բ. 14. Նիկեոս Ը. 19.



եպիսկոպոսացն աւրէնս նորս՝ յեկեղեցի մուծանել. որպէս զի քահանայացելոցն. այսինքն եպիսկոպոսացն, և քահանայից և սարկաւազաց և կէս սարկաւազաց.՝ մի նընջել ընդ ամուսինս իւրեանց. զորս ի ժողովրդականութեանն առեալս: Եւ յաղագս այսորիկ խորհուրդ կայր առաջի: Յարուցեալ Պափնութիս ի միջի ժողովոյ՝ եպիսկոպոսացն գոչէր հետի՝ մի ծանր լուծ դնէք քահանայացելոցն արանց. պատուական ասելով զամուսնութիւնն և սուրբ զանգողինս նոցա. զի մի գերազանցութեամբ ստուգութեանն յաւետ զեկեղեցին վնասեցին: Քանզի ոչ կարէք զամենէսին ածել յանախտութեան ճղնութիւնն որպէս զի ոչ դք պահեսցէ զպար-

1. Հին կանոն էր. τὴν βοήθειαν ἱερῶν ἐκβάλλων ἀποβαλλέσθω μὴ εἰς ἄγων δὲ καθαιρείσθω. կանոն Առաք. 2.

Հրատարակած բնագրի մէջ չկայ .իէս Սարկաւազ ծնածախնոց բառք Բ. 4 մի ձեռագր. ում կայ.

կոպոսաց՝ նոր աւրէնս ուսուցանել. զի պարտէ որք ասեն, որք յամուսնութենէ՝ կոչեցեալ՝ են ի քահանայութիւն և ի սարկաւազութիւն՝ մի ունել զամուսինս զի մի պարտաւորեցին: Եւ յաղագս այսորիկ էր տարակուսանք՝ ի մէջ նոցա. յարուցեալ Պափնոտի ի մէջ անցեալ եպիսկոպոսացն ասէ, մի ծանր է լուծ դնէք զի ճակեցն զոր ոչ եղ առարեալն՝ որ պատուական զամուսնութիւնն ասաց և՝ սուրբ՝ զանկողինս նոցա, զի մի գերազանցութիւն ստուգութեան յաւետ զեկեղեցին վնասեցին.՝ քանզի ոչ կարէք զամենեսեան ածել յանախտութիւն ճղնութեան. այլ առ ժամանակ մի ուխտիցն պարտ-

ա. Ա՝ Բ՝ 7. եպիսկոպոսացն. Բ. 7. չիք. Գ. Ա՝ 11. Ամուսնութեան Կ. բոյր կոչեալ. Ե. Բ. մի. Գ. 7. սարսկուս ս. Է. Ա՝ Բ՝. ծանար Ը. 7. եպիսկոպոսացն. Բ. Ա՝ Բ՝ զառարեալս. Ժ. 7. վնասեցէ:

յաղագս սոցա ասել: Պափնութիսէ եպիսկոպոս էր միոյ ի քաղաքացն վերին Թիրիոյ: Սա էր այր սիրեցեալ յԱստուծոյ, որպէս զի նշանաց պանչելեաց լինել ի սմանէ: Սա ի ժամանակս հալածանացն վիրաւորիւր զակնն. և պատուով ունէր զնա թագաւորն. և յաճախ առ թագաւորութիւնն առաքելւր՝ և զվիրաւորեալ ակնն համբուրէր: Այսքան էր կոստանդնի՝ երկիւղածութիւնն յԱստուծոյ: Եւ այս վասն Պափնութիսի ճառեսցի. իսկ մերձ առ կատարումն արձակման եկեղեցւոյն. և զարդու քահանայիցն. որոց յաղագս նորա խորհրդակցութեանն եղև պատմեցից: Թուեցաւ

... բնագ. 3πλ τὰ βασιλεια μεταπέμπετο կոչեի գրա ի պարտ

ԳԼ. ԺԵ.

Պատմութիւն Պափնոսի Սէ զինչ արար և սարկաւորաց և Սպիտիզոնի և Երաշխին իւր:

Յաղագս Պափնոսի և Սպիտիտենի՝ առնել յիշումն իդէպ է. Վերագոյն աստանօր գորրոցն՝ պատմեսցուք. Պափնոսի՞ եպիսկոպոս էր մի ի քաղաքացն՝ այր՞ Աստուծոյ, խոստովանող. է նշանօք ևս երեւելի որ ի հալածչացն վիրաւորեալ զակնն. և պատուով ունէր զնա բարեպաշտն կոստանդիանոս և ստեպ կոչէր առ ինքն՝ և ուսանէր՝ ի նմանէ զգործս բարիս՝ և ի գալն տայր ողջոյն և թագաւորն համբուրէր զվիրաւորեալ ակնն. և երկիւղիւ ընգունէր զսուրբն Աստուծոյ. իսկ առ յա կատարումն եկեղեցւոյ և օրինաց քահանայից որ յաղագս նորաէ՞ խորհրդակցութիւն ասացից: Թուեցաւ՝ ժողով եպիս-

... Գ. չ. ք. Բ. Ա՛ Ռ՛ Սպիտիտենի. Գ. օպիտիտենի. Գ. Գ. զորրոց. Գ. Կաթիկոսոս և. Ա՛ Բ. քաղաք թի մ. Բ՛ ի քաղաքէ մի. Գ. Ա՛ Ռ՛ և էր. է. Ա՛ ևս կրթ. Ե. Բ. Բ. Բ. Բ. Ա՛ Ռ՛ ուսուցանէր. Ժ. Բ. զարքա զորթեալ. Ժա. Գ. առ ի. Ե. Ե. Բ. Ժ. Ա՛ Ռ՛ ի՞ թվեցաւ:

եպիսկոպոսացն աւրէնս նորս՝ յեկեղեցի մոլծանել. որպէս զի քահանայացելոցն. այսինքն եպիսկոպոսացն, և քահանայից և սարկաւազաց և կէս սարկաւազաց.<sup>3</sup> մի նընջել ընդ ամուսինս իւրեանց. զորս ի ժողովրդականութեանն առեալս: Եւ յաղագս այսորիկ խորհուրդ կայր առաջի: Յարուցեալ Պափնութիս ի միջի ժողովոյ եպիսկոպոսացն գոչէր հետի՝ մի ծանր լուծ դնէք քահանայացելոցն արանց. պատուական ասելով զամուսնութիւնն և սուրբ զանգողինս նոցա. զի մի գերազանցութեամբ ստուգութեանն յաւետ զեկեղեցին վնասեցին: Բանզի ոչ կարէք զամենէսին ածել յանախտութեան ճգնութիւնն որպէս զի ոչ դք պահեսցէ զպար-

1. Հին կանոնն էր. τὴν βουθὸν ἱερῆς ἐκβάλλων ἀποβαλλέσθω μὴ εἰσάγων δὲ καθαιρείσθω. կանոն Առաք. 2.

Հրատարակած բնագրի մէջ չկայ .կէս Սարկաւազ Նποδίακόνος բառը Բուկ մի ձեռագրում կայ:

կոպոսաց՝ նոր աւրէնս ուսուցանել. զի պարտէ որ՞ ասեն, որք յամուսնութենէ՞ կոչեցեալ՞ են ի քահանայութիւն և ի սարկաւազութիւն՞ մի ունել զամուսինս զի մի պարտաւորեցին: Եւ յաղագս այսորիկ էր տարակուսանք՞ ի մէջ նոցա. յարուցեալ Պափնոսի ի մէջ անցեալ եպիսկոպոսացն ասէ, մի ծանր է լուծ դնէք վիճակեցնել զոր ոչ եգ առարեալն թ որ պատուական զամուսնութիւնն ասաց և՛ սուրբ՝ զանկողինս նոցա: զի մի գերազանցութիւն ստուգութեան յաւետ զեկեղեցին վնասեցին.<sup>3</sup> քանզի ոչ կարէք զամենեսեան ածել յանախտութիւն ճգնութեան. այլ առ ժամանակ մի ուխտիցն պարա-

ա. Ա՞ Բ՞ Դ. եպիսկոպոսացն. բ. Դ. չից. գ. Ա՞ Բ՞. Ամուսնութեան գ. բոլոր կողմայ. ե. Բ. մի. զ. Դ. սարկաւազ սն. է. Ա՞ Բ՞. ծանար. ը. Դ. եպիսկոպոսացն. Բ. Ա՞ Բ՞՝ զստորեալս. ժ. Դ. վնասեցէ

կեշտութիւնն իւրաքանչիւր ուրուք ամուսնութեան մերձաւորութիւն. բովանդականալ հասելոյն վիճակի հանդիպմամբ: Այլ ևս և յամուսնութիւն գալ ըստ առաջին ականգութեան եկեղեցւոյ. ոչ միայն ի բաց զասել սոցա մի անդամ նախկին ժողովրդականացն եկելոց: Եւ զայս ասել անփորձ գորով ամուսնութեան, և պարզ. որպէս է ասել կնոջ. քանզի ի' մանգութենէ ի ճգնութեան սնանէր: Հաւանի այս քահանայիցն ժողով Պափնութիսի բանիցն: Վասն որոյ զոր յաղաքս այսոցիկ խնդիրն դադարեցուցին. կամաւորութեամբք խորհեցելոց ի բաց կալ ի' մերձաւորութենէ ամուսնացելոցն թողեալք: Այս այսքան վասն Պափնութիսի:

Գլ. . Բ. 1

**Իսկ Սպարիզոն 2 հովիւ խաշանց հանդիպէր. որոյ**

- 1. Յոս Սողոմ. Ա. 11. Ռուփն. Ժ. 5. Նկեփ. Ը. 42.
- 2. Սպարիզոնի մասին ասես Սողոմ. Ա. 11.

պեալ և դարձեալ ի նոյն. դառնալ զի մի փորձեցին ի սասանայէ ոչ պահելով<sup>ա</sup> զպարկեշտութիւն ամուսնութեանն: Վասն անխառնութեան<sup>բ</sup> միաւորեալ են ընդ ամուսնութեամբ, այլ որ յանձին<sup>գ</sup> իրում վտանգ ոչ ունինախ քան զամուսնութիւն, և ուխտեաց ընդ Աստուծոյ պահել ըզկուսութիւն, և զայցէ ի քահանայութիւն կամ ի սարկաւագութիւն, ոչ ևս յամուսնութիւն գալ ըստ<sup>դ</sup> առաջին ականգութեանն եկեղեցւոյ և պարտաւորեալք արտաքս<sup>ե</sup> ելցեն ըստ անհաւատութեանն<sup>զ</sup> գաշանցն: Հաւանեալ այսմ ժողով եպիսկոպոսաց<sup>է</sup> Պափնոտի լուեցին Ը ի խնդրոյն:

Իսկ Սպարիզոնէր հովիւ խաշանց՝ բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ, թ Էր՝ երբեմն գողք ի վերայ ոչխարացն

ա. Ա՝ Բ՝ ոչ պակէ. բ. Գ. որ միաւորեալ. գ. Գ. անձին. դ. Ա՝ ընդ. ե. Բ. արտաքս. զ. Գ. ըստ ականգութեան, Ա՝ Բ՝ անխառնութեան. է. Գ. եպիսկոպոսացն. ո. Գ. գաղարցուցին. Թ. Ա՝ Բ՝ հոյնցաւ ի քահանայութիւն Գ. յԱստուծոյ հոյնցաւ ի քահանայութիւն պակաս է:

Հովուի այսքան գոլ սրբութեան որպէս զի արժանա-  
 ւորիլ նմա և մարդկան հովիւ լինել. քանզի մից  
 ի քաղաքացն Կիւպրոսի որում անուն Տոմիսթուն-  
 անս զեպիսկոպոսութիւնն ժառանգէր. և զանհպար-  
 աութիւնն բազում ունելով զեպիսկոպոսութեանն հո-  
 վուէր և ոչխարս: Բազում ինչ են վասն սորա ասա-  
 ցեալք. մինչդեռ ժամս է յիշեցից, զի մի արտաքս  
 յառաջիկայն թուեցայց մելորեալ: Արեմն հասարակ  
 գիշերի գողք ի գաւթի ոչխարացն գաղտաբար ելեալք  
 յափշտակել զոչխարսն փութային. այլ Աստուած որ  
 զհովին ասարեցուցանէր, ասարեցուցանէր և զոչխարսն  
 աներևոյթ զաւրութեամբն. առ գաւթն լինէին կա-  
 պեալք: " Իսկ առաւաւտուցն եկեալ ի հաւտն, և տե-  
 սեալ զնոսա ի յետս զձեռս իւրեանց ունելով ծանեալ  
 զերեւոյն և աղաւթեալ լուծանէ զգողն. և բազում  
 անգամ վարժեալ և խրատել զնոսա յարդար վաստակս  
 փութալ. և մի յանիրաւութենէ անոնու: Այս ար-  
 ձակէր. իսկ խոյ մի շնորհեալ նոցա ասելով. զի մի ըն-  
 դունայն տընեալք երևեսցին: Այս վասն Ապիւղոզոնի

... ԳՂԶԵ:

ընթացեալք ի յափշտակութիւն. այլ Աստուած, որ զհովին  
 պահէր ի մարտէ դիւաջն. և զոչխարսն նոյն յերեւելի աւազա-  
 կացն, և անգէն ի գիշերի կապեալ լինէին աներևոյթ " ձեռս  
 յետս: Եւ նորս գիտացեալ զեղեակն. կայր յաղօթս առ Աս-  
 տուած ի վերայ նոցա մինչև ցառաւօտն և լուծանէր զնոցա  
 աներևոյթ կապանսն յԱստուծոյ: Եւ անկեալ առաջի նորս  
 թողութիւն խնդրէին. և նա խրատեր զնոսա մի յափշտակու-  
 թենէ կեալ այլ յարգար զվաստակոց. և տայր խոյ մի և ար-  
 ձակէր: Պոչեցաւ և նա ի քահանայութիւն բազում գրուատօք "

... ք' Բ' ի մոս աներևոյթ պակս է. Բ. Բ. ի յետս. Գ. Գ. գեա: Գ. Գ.  
 յափշտակութեմ... արդար: Ե. Գ. գրուատօք:

սքանչելեացն: Իսկ այլ այսպիսի ինչ: Էր նորա դուստր մի կոյս զհաւրն ունելով զերկիւղածութիւնն յԱսասածոյ, որ անուն իռիսի: Մնա ոմն մի ծանաւթ զարգս բազմագինս յանձնէր. իսկ զգուշականագոյն որպէս զի ժամանակ արարեալ յերկրի զգանձն թագոյց. իսկ յետ բազմի ինչ զկենցաղս թողոյր: Իսկ եկեալ յետ ժամանակաց ինչ յանձնաւղն և ո՛չ էզիտ զկոյսն. պատէր զհարամքն երբեմն թէ ըստ պարտի է. և երբեմն սպառնալով. և լինել նմա անցիցս այսոց յետ դստերն մահուան: Եկեալ ի գերեզմանն կարգայր առ Աստուած. յառաջ քան զժամանակն ցուցանել նմա զպատմել յարութիւնն, և յուսոյն ո՛չ մեղաւ, քանզի կենդանի կոյ-

և սքանչելեօք. և հովեր զբանսւոր ոչխարսն. և դարձեալ յեպիսկոպոսութեան " շնորհ ՚ յամենայնի հռչակաւոր էր վարուք " և սքանչելեօք: Եւ էր դուստր մի նորա որբ մնացեալ ի մօրէ կուսութեամբ և ալ դարութեամբ նահատակէր ՚ ընդ հօրն ի հանդէս բարեպաշտութեան: Գ Յեսեալ զսա հաւատարիմ ոմն մի, եդ ի՛ պահեստի նա զարգս բազմագինս, և ինքն գնաց ծանուպորհ հեռ. Եւ կոյսն զգուշացեալ ծածկէր յերկրի, իսկ յետ ոչ բազում ամաց, կոյսն լուծանէր զկեանս Է և ոչ յիշէր վասն պահեստի Ք զարդուցն: Ապա եկեալ տէր զարդուն ՚ ոչ գտանէր զկոյսն և ոչ զպահեստն. կշտամբէր զհարն ՚ կուսին սպառնայեօք. ՚ և լինէր այս փորձութիւն մեծ ի վերայ եպիսկոպոսին՝ հօր կուսին: Իսկ սուրբ ՚ եպիսկոպոսն յարուցեալ պայ ի գերեզմանն կուսին ՚ դստերն իւրոյ. կայր յաղօթս առ Տէր. և խնդրէր զյարութիւն դստերն իւրոյ. որ զհարն ՚ գերձուցէ ի պարտեացն. և ինքն անպարա

ա. ՚ Բ եպիսկոպոսութեան Գ. եպիսկոպոսութիւն. Բ. Գ. չորսն. Գ. Ա՝ եպիսկոպոս Գ. Գ. վ. բիւշ. Ե. երբութեամբ. Ե. Գ. եպիսկոպոսից Գ. Գ. ի ճապահեստի Ե. Գ. բարեպաշտութեամբ. Զ. Բ. Գ. զկեանս. Բ. Գ. պահեստի. Ժ. զարդուցն Ժ. Բ. Գ. Ա՝ Բ՝ զհայր Ժ. Գ. սպառնայեօք. Ժ. Բ. սուրբ յիշ. Գ. սրբո եպիսկոպոսի. Ժ. Բ. կուսի յիշ Ժ. Ա՝ Բ՝ հայր:

սըն երեւի հաւրն. և զտեղին նշանակեալ ուրանաւր  
գանձն կայր:

Այսպիսի արք ի ժամանակն Կոստանդնի արքայի  
փայլակէին յեկեղեցիսն: Իսկ զայս և ես ի լրոյ ի բա-  
զում Կիւպրացոյ աւանդեցա. և շարագրութեամբ որոյ  
ուրումն Ռուփինոսի քահանայի ընթերցա. Հռոմայեցի  
զրով շարագրեալ: Յորոց զայս և այլս ոմանս հանդերձ  
բազում ճառեցելովք ժողովէին:

Գլ. ԺԳ. 1

Լուա ես և վասն Եւտիւքիանոսի աստուածասիրի  
առն. ի նոյն ի ժամանակին աճեցելոյ. որպէս զի և նա  
եկեղեցոյն Մաւառիանոսաց մերձաւորագոյն գործս առ-

1. Տես Սողոմ. Ա. 14. Կեկեփ. Ը. 41.

լիցի վասն պահեստին, ուր էր պահեստն և ցուցանէր հօրն  
և ինքն անդրէն? գառնայր ի գերեզմանն իւր. և հոգին առ  
Աստուած որ այնպէս արար:

Ձայս տեսեալ բազմաց սքանչացան. և որք լուան? հիանա-  
լին ընդ այսպիսի սքանչելիսն և և փառաւոր լինէր? անուն  
Ցեառն. Եւուվեալ զայս Կոստանդիանոսի, Բ կոչէր զսուրբն և  
օրհնութիւն ընդունէր ի նմանէ, և սիրէր զնա առ իւր օւնէր Բ  
իսկ նա ոչ առնոյր յանձն յաղակս պատւոյն, զի ՚ խոնարհա-  
գոյն էր և անպատուասէր քան զամենայն՚ս սուրբն՚ք Աստուծոյ. ՚ք

Գլ. ԺԶ.

Յազոզս Տիկիանոսի ճղխուորի եւ սքանչելիաց նորին:

Լուիցուք ժ՛ղ վասն Ցիբիանոսի միայնական ՚ե վարուք ճըզնա-  
ւորեալ. որ զբազմաց ՚ղ զհոգիս լուսաւորէր և զցաւս մարմ-

ու. Գ. ի պակասեմ. Բ. Գ. ի տեղիէ չիք. Գ. Գ. չիք. Գ. Գ. որպէս. Բ.  
որ այնպէս արար չիք. Ե. Գ. լուսեմ. Գ. Ա՛ Բ՛ լինէ ցաւուն. Ե. Գ. Ես. Ը. Գ.  
Կոստանդիանոս կոչեաց. Բ. Բ. ունելով. Ժ. Բ. քակի ժա. Գ. քակ զամենայն  
չիք, ԺԲ. Բ. սուրբան. ԺԳ. Գ. յԱստուծոյ. ամբողջ մի գլուխ պակասում է.  
ԺԳ. Գ. լուսալ չիցուք. ԺԵ. Գ. միայնակ. ԺԶ. Ա՛ Բ՛ Գ. գրագմաց չիք:

ներով սքանչացեալ լինէր. իսկ զոր վտան այսորիկ պատմեացն ասացից յայտնարար և ոչ թագուցից. թէպէտ և թուիմ ոմանց աստ անբասացեալ :

Աւքսան ոմն Նաւատիանոսաց եկեղեցւոյն ծեր բազմամեա՛ եղեալ. սա որ և ի Նիկիայ ժողովն եղեալ էր ընդ Ակէսի. և որ ինչ ըստ Ակէսին պատմեաց ինձ: Սա յայն ժամանակաց մինչև ցթագաւորութիւնն նոր Թէոդոսի էհաս յոյժ նորագունիւք խաւսողի ինձ. զոր յաղագս Եւտիքեանոսին պատմեաց ինձ. բազում անգամ անցանելով յաղագս անցանելոյ ի նա աստուածային շնորհիս, այլ և էր և նա յիշման արժանի գրով : Առ Կոստանդնիւ թագաւորաւ յընծայարեացն ոմն, զորս ընտանիս կոչէ թագաւորն, բռնականս ինչ գործել երկուցեալ փախստեան հպեցաւ. իսկ թագաւորն հրամայէ սպառնալեալք սպանանել զնա ուրանաւր և զտանիցի: Եւ խնդրել ամենայն ուրեք զտանէին ի Բիւթինոն Ողիւպոս. և կապեալ ծանր և դժնդակ երկա-

նայ՝՝ բժշկէր. յաղագս եղելոյ ի նմա շնորհին Աստուծոյ. և զբազմք Բ զանց արարեալ ի նորա սքանչելեացն, զի մի՛ ինչ պատմեցոցւք,՝ զի յամենայնի հոչակաւոր էր այրն. Յնծարեաց՝ ոմանց թագաւորին Կոստանդիանոսի ոմն զինուորեալ բռնականս ինչ գործել՝ ի յափշտակութիւն ընծարեացն առեալ փախեալ ստահակեալն՝ ուր և կարիցէ. Լուեալ զայս թագաւորին առաքէ զինուորս սպառնալեալ զկնի, ուր և զբացի մահու մասնել. և յետ բազում յուզմանց գտեալ լինէր ի Բիւթանիա. Բ և կապեալ ծանր և դժնդակ՝ երկաթի կապա-

ա. Ա՛ Բ՛ Գ. Բ. մարմնաց. բ. Ա՛ Բ՛ Գ. բազմաք. գ. Ա՛ Բ՛ զմի. գ. Գ. պատմեաց. ե. Ա՛ Բ՛ ընծարեաց. Գ. ընծարեաց. զ. Ա՛ Բ՛ Գ. գործեալ. ի. Ա՛ Բ՛ ստահակեալ. ը. Գ. մատնեալ. բ. Գ. Բուրաճա. ժ. Ա՛ Բ՛ Գ. ի Գժնդակ:

Թագք. ի կապարան արգելեալ լինէր, ի սկ ի կողման-  
 արն Ողիւմպոսի և Եւտիւքիւանոս՝ ոմն միայ-  
 նական վարուք ճգնութեամբ զբազմաց մարմնս և զհո-  
 զիս բժշկէր: Ընդ նմին և երկայնկեացն Ալքսանոս մանուկ  
 գողով ամենեւեմբ. և զմիայնութեան վարուց խրատեալ  
 ի նմանէ: Առ այս ժամ ածեալ զԵւտիքիանոս բազումք  
 աղաչէին փրկել զկապեալն ի կապարանէն թագաւո-  
 րին աղաչանս մատուցանելով. քանզի և ի լաեկիս թա-  
 գաւորին էհաս յԵւտիքիանոսէ եղեալ սքանչելիքն:  
 Իսկ նա պատրաստաբար խոստանայր առ թագաւորն  
 երթալ, քանզի կապեալն ի կապարանսն անժուժալիս  
 կէր, իսկ աղաչաւորն առ նորա հասանել ասէին. և  
 զառ ի թագաւորէն պատիժն և զոր վասն նորայ աղա-  
 չանքն որ ի կապարանացն կայր ի վերա նորա մահ: Իսկ  
 Եւտիքիոս արձակեալ աղաչէր զպահապանսն ներել  
 մարդոյն, իսկ նոցա ասացեալ թէ վիշտս բերեմ զնե-  
 բում կապեցելոյս. նա ինքն հանդերձ Ալքսանոսիւ ի կա-  
 պարանն գնայր. և նոցա ոչ կամեցեալ բանալ զկապա-  
 րանն, նախկին եղեալ շնորհն Եւտիքիանոսի յայտ-  
 նագոյն լինէր: Քանզի ինքեամբ զրուկք կապարանին

ա. Ըստ բնագ. արգելեալ լինէր ի կողմանս Օլիմպիոսի. սեպ ուր էր Եւ-  
 տիքիանոս:

նօք,՝ եգին ի բանտի զգուշութեամբ, Բազում աղաչանս Բ  
 առ Յիքիանոս առնէր այրն զի փրկեցէ ի մահուանէ. Եւ նա  
 խանարհեալ յաղաչանս առնն՝ Գ յանձն առ Դ երթալ առ թա-  
 գաւորն և փրկել զնա ի մահուանէ. Եւ ծանրանայր ի վերայ  
 կապելոյն կապանքն. և նա դարձեալ աղաչէր թեթևեցուցա-  
 նել,՝ Ե զկապանսն զի համբերեալ Զ կարացէ. և յղեաց այրն

ա. Բ. կապանօք երկարեօք. բ. Ա՝ Բ՝ Գ. աղաչանօք. գ. Բոլոր առն.  
 Գ. Ա՝ Բ՝ էառ. ե. Բոլ. բերեացուցանել. գ. Բ. Ա՝ Բ՝ համբերել.

բանային. պահպանացն առ ընթեանս ունելով զբանա-  
լիսն. և մտեալ Եւտիւքիանոսի հանդերձ Աւքսանով և  
բազմաւք որք մերձն կային. ընթեամբ և կապանքն զկա-  
պեալն թողին:

Յետ այսորիկ որ նախ Բիւզանդն կոչէր, իսկ այժմ  
Կոստանդինապոլիս. հանդերձ Աւքսանոսիւ եկեալ  
ընգալեալ լինէր ի Թագաւորական սրահն. փրկեաց ի մա-  
հուանէ զմարդն. քանզի պատրաստապէս Թագաւորն  
պատուելով զայրն ակնարկեաց առ խնդիրն, բայց այս  
յետոյ եղեաւ: Իսկ յայնժամ որք ի ժողովուն եպիս-  
կոպոսք և այլ ինչ գրեալք զորս կանոնս անուանեալ  
աովորականս. աստուտ ընթեան քաղաքաց իւրաքանչիւր  
ոք գնային: " Իսկ ժամանակ ժողովոյն որպէս ի նշանա-  
դիրսն զապք ի հիւպատոսութեան Պաւղինայ և Յու-  
լիանոսի քսանին Մախս ամսոյ: 2 Աստանաւր էին ամք

ա. Թագաւոր Գրատ է ժողովն մասնակցոյ Գլխաւոր Էպիսկ. անունները:

1. Ժողովում խմբագրած 20 կանոնն է ակնարկում.

2. Ընդհանրապէս ընդունուած է որ ժողովը կայացել է Կոստանդինի  
Քաղ. 20 տարում. ֆրկչի 325 Ք. իսկ օրը ճիշտ որոշ չէ: Սովորաբար Մայիս  
20-ն գնում, ուրիշ գրողներ ժողովի սկիզբը նշանակում են Յունիսի 19 ին.  
նա շարունակուել է մինչև Օգոստոսի 25 ը:

Աստուծոյ առ պահանջողսն " Թեթևեցուցանել զկապանս. և ոչ  
կամեցան. ասէ. 2 վտանգ բերէ մեզ ներումն ի Թագաւորէն:  
Իսկ սուրբն Աստուծոյ երթայր ի կապանն 4 Աւքսանոսիւ աշա-  
կերաիւ իւրով և նորա ոչ բացին զկապարանն իսկ նա զնշանն  
խաչին առնէր ընգրէմ գրանն. և իսկոյն բանայր գուռն 4  
բանաին և մտեալ ի ներքս և կապանն լուծանէր երկաթի 5 և  
ա՛հ կալաւ զամենեսեան: Եւ առեալ զստահակեալ այրն ընդ իւր

ա. Գ. պանանդոս. Բ. Բ. ասեն Գ. Ա՛ Բ՛ Բ. կապարանն. Գ. Բ. զգուռն.  
Ե. Ա՛ Բ՛ կապանն յոսեա երկաթի. Բ. կապանքն:

«Չ» Աղէքսանդրա Մակեդոնացւոյ թագաւորութեանն ի սկի կոստանդնի թագաւորութենէն տասն և ինն ամ էր: Արդ զայս ժողովոյն կատարուին ունէր. բայց այս զիտելի է. զի յետ ժողովոյն թագաւորն ի կողմանս արևելից երթայր:

ԳԼ. ԺԴ՝

Իսկ Եւսեբիոս և Թէոդոսիոս թուղթս զղջման զըլխաւոր եպիսկոպոսացն առաքեցին. և կոչեցան յաքսոբեաց ի թագաւորական հրամանէ. և զիւրեանց եկեղեցիս ընգալան. և զորս ի նոցա տեղիսն հանին զԱմփիոն Եւսեբիոս, իսկ զԲախտոս՝ թագաւորն: իսկ ի բա-

— Բնագ. 656 տարի. Բ. Այս երկրորդ բուսկանը չիայ տպատ բնագրում. — քս պահուած է մի մետաքրի մէջ: Գ. Քոք պատենք կայ բնագրի մէջ. Գ. Բնագ. — սեյի ուղիղ գրատ է այդ բառի տեղ. « Թեոդոսիոս » որ է « իսկ զԲախտոս եւսեբիոս »:

1. Տես Սոզոմ. Բ. Ա. կատողար Բ. 17. Նեկեփ. Բ. 43:

« Թանէր ի Կոստանդնուպոլիս. և յանդիման լեալ փրկէր զնա ի սպառնալեաց թագաւորին. զի գիտէր զնա այր Աստուծոյ, և քաղցրութեամբ լսէր սրբոյն, և պատուով ընկալեալ » և մեծարանօք յուզարկէր օրհնեալ ի նմանէ:

ԳԼ. ԺԵ.

Յաղափս ժողովոյն սր ի Նիկիոս. արտաքսուումն ի մետաղս Արիոսի եւ ըստը նախապուշակումն ՎՊանասի սրբոյ.

« Եղև ժողով ի Նիկիոս ի վեց հարիւր և Լ. ամի թագաւորութեանն Աղէքսանդրու » Մակեդոնացւոյ. Բ և ի Ժ. ամի թագաւորութեանն Կոստանդիանոսի բարեպաշտի. և յետ ժողովոյն և Գ հաստատութեան հաւատոյն և սահմանի կանոնի սուրբ ժողովոյն արտաքսասահմանութեանն Արիոսի ի մետաղս ի թագաւորէն

... Գ. քննալ. Գ. Գ. Աղէքսանդրի. Գ. Ա՝ Բ՝ Գ. Բ. Մակեդոնացոյ. Գ. Ա՝ Բ. ժողովոյ:

նկցն նոցա նշանակ է ինձ. սոքայ ասացելոց հաւատոյն լուսորանշանէին՝ բայց նզովիցն Արիստի հաղորդ լինել ոչ կամեցան: Եւ զի Արիստ երևի յառաջ քան զսա կոչեցեալ: այլ և սմա այսպէս ունել թուի: Սակայն յԱղէքսանդրոյ վերա ելանել արգելեալ լինէր: Իսկ այս ցուցանի յորոց յինքեան յետոյ ըստ ճանապարհին յեկեղեցին և յԱղէքսանդրիա հնարէր ի ստեղծական զըզջումն հպեալ: զորս ըստ աշխարհին ասացուք յազագըս ամենեցունց լսողացդ:

ԳԼ ԺԵ 1:

Յետ այսորիկ Աղէքսանդրի Աղէքսանդրացեաց եպիսկոպոսի վախճանեալ յաջորդէ եկեղեցւոյն Աթանաս:

« Միտք է ևս երանց գրած քրդից ժողովրդում եմ. որ նոքա եւամարտաբան ըսց սո ին նիկիայի ժողովի որոշումներին: »

1. Տես Սողոմ. Բ. 17. Թէոդորոս Ա. 26. Ռուփին. Ժ. 44. 14. կա. սիող. Գ. 4. Նիկիփ. Ը. 44. Փիլոստորգ. Բ. 11:

և ի նոյն « խորհողաց. ամենայն սուրբ ժողովն՝ գնացին յիւրաքանչիւր աշխարհ՝ ուղիղ հաւատովն և կանոնեալ սահմանադրութեամբն: Եւ թագաւորն Կոստանդիանոս երթալ յաբեմուտս կոյս յետ ժողովոյն՝ Եւսեբիոս, և Թէոֆնիս գլխաւոր եպիսկոպոսօքն թուղթս զղջման առ թագաւորն առաքեն, զի զարտաքսաճմանեալսն դարձուցէ յիւրաքանչիւր տեղիս. և հաւանել՝ դարձոյց զարտաքսաճմանեալսն՝ յիւրաքանչիւր տեղիս: Իսկ զԱրիստ արգելեալ յԱղէքսանդրիա երթալ, կալ ուր և կամիցի: Իսկ նա հնարէր ըստ ամենայնի ստեղծական զըզջմամբն երթալ յԱղէքսանդր: Յայսոսիկ վախճանեալ լինէր է Աղէքսանդրի եպիսկոպոսն, և յաջորդէ Ը զաթուռն՝ Աթանաս:

« Ա՛ Բ՛ Գ. քոյն. բ. Բ. ամենայն սուրբ ժող. յիջ. Ա՛ Բ՛ Գ. ժողովոյն. Գ. Գ. իւր աշխարհ. Գ. Բ. յետ ժող. յիջ. Ե. Ա՛ Բ՛ Գ. Գ. եւամեալ չ. Գ. Բ. զարտաքսաճմանեալսն յիջ. Ե. Գ. եր. Ը. Ա՛ Բ՛ յաջորդէր. Բ. Գ. նորս:

Չաս, ասէ Ռուսիին, մինչ ման ու կ էր՝ ընդ հասակակիցոն  
 իւր խաղալով խաղ քահանայական, և զայս գոլ նմա-  
 նութիւն քահանայութեան և որ ըստ բանի քահանա-  
 յացելոց արանց: Իսկ ի խաղուս յայս Աթանաս զեպիս-  
 կոպոսութեան ընդալաւ զաթոռ, իսկ յայլ մանգանցն  
 իւրաքանչիւր ոք կամ քահանայ, և կամ սարկաւազ  
 նմանեալ լինէր: Չայս խաղալով մանգուկքն յաւուր  
 որբոյ Պետրոսի մարտիրոսի և եպիսկոպոսի կատարման  
 յիշատակի: Յայնժամ Աղէքսանդրի եպիսկոպոսի ան-  
 ցանելով տեսանէ զեղեալ խաղն, և արձակեալ զման-  
 գունսն և հարցեալ ի նոցանէ զոր ի խաղսն վիճակեալ

... քննարում գրած է: «Թոփի նկիմիտացոյ, որ ասաց է եկէլ բնագրի  
 յօլմծջ՝ νήπιον բառերի սխալ հակացութից, այսինքն հասարակ յօլմ ծի՛  
 առեւեր, յստուկ ահուակ տեղ է ընդունել բարբառեր:

որ էր ընդ Աղէքսանդրի ի ժողովին սուրբ Նիկիա՝ կատարեալ  
 հասակաւ սարկաւազ: Եւ մեծարեալ ի սուրբ ժողովոյն՝ ուղիղ  
 հաւատովն խոստովանեալ և արժանաւոր վարուք բարեբանեալ  
 զսա կոչեն ուղղափառքն՝ հրամանաւ թագաւորին Աոստան-  
 զիանոսի, ի Մարկոսի աւետարանչի աթոռն, ոչ բռնաբօսեալ զ  
 այլ աստուածային ազգեցութեամբն զհրաւիրեալն՝ կոչել, որ  
 յազազս նորա պատմի: Չի էր երբեմն եպիսկոպոսին Աղէք-  
 սանդրի երթալ յեկեղեցի յաւուր յիշատակի Պետրոսի եպիս-  
 կոպոսի և վկայի, և տեսեալ զհասակակից մանկունս ի խաղ ըստ  
 քահանայական խորհրդածութեանն և միտ զնէ մանկանցն և  
 զայս գոլ նմանութիւնս տեսանէ ըստ նմանութեան խորհրդեա-  
 նըն: Ի կոչումն քահանայապետութեան զԱթանասի մանկանցն  
 ժողով՝ կոչեն և նստուցանեն յաթոռ, իսկ այլքն իւրաքանչիւր  
 ոք ընդունի ի նմանէ զեպիսկոպոսութիւն կամ քահանայութիւն  
 կամ սարկաւազութիւն կամ այլ ինչ ի ժողովորաց՝ եկե-  
 ղեցոյ: Չայս տեսեալ Աղէքսանդրի և մըտախոհ եղեալ, սքան-

... Բ. Նիկիոյ ք. Գ. Նիկիա. Գ. Գ. ուղղափառք: Գ. Ա՛ Բ՛ Բ՛ Դ՛ բռնա-  
 քրտեալ: Ե. Գ. զհրաւիրեալսն: Գ. Ա՛ Բ՛ Գ. ժողովի: Ե. Բ. ժողովորաց:

տեղի իւրաքանչիւր ուրուք նախացուցումն զեզեւղան համարեցաւ. ապա հրամանաց յեկեղեցի հանել զնոսաւ և խրատու հաղորդս առնել պանչելապէս զԱթանաս: Իսկ կատարեալ հասակաւ եղեալ սարկաւազ ձեռնադրեալ էսժ զնա ի Նիկիայ համաջանաւղ. և ընդալեալ զնա ժողովոյն: Ջայս Ռուփին վասն Աթանասայ համակարգեալն իւրում ճառեաց. ոչ անդէպ ինչ լինել, վասն զի բազում ինչ այսպիսի եղեալք յուով ինչ զբառանի յաղագս որոյ այսքան ճառեցաւ ինչ: Արդ զամենայն առաքինութիւն սրբոյ առնն և զվաստակ մեզ սրուն էր յաղագս ամբիծ և ուղիղ հաւատոցն յետ այսորիկ ասացինց:

ԳԼ. ԺԶ

Իսկ թագաւորն յետ ժողովոյն ուրախութեամբ կայր: Եւ ի կատարել քսան ամին,՝ անդէն կանգնեալ զեկեւս. ծիմոտելի թորտիւ եստարեայ տծ:

1. Իւսերթուք. Սոկրատէսը եւ Սոկրատէսը միաձայն վկայումն. որ Աստուծոյն ժողովը արձակելուց քիչ յետոյ, նախ քան եպիսկոպոսները իրենանց տները դառնալը հանգիստար կերպով տօնեց իւր իշխանութեան քանանակալը: Բայց հաւանական է, որ դեռ ժողովի շարունակութեան ժամանակ կատարած լինի այդ տօնը:

Հանայր և ցուցումն յԱստուծոյ ստուգապէս զպատահեալսն ասէր. « որ եղև իսկ յետոյ, որպէս ետես նախ և հրամայեացն զմանկունսն ասնել և բազում հոգաբարձութեամբ Ցեառն: Ջայս և Ռուփին նիկոմիտացին յուչ առնէ ի կոչմանն Աթանասի և համակարգութեանն իւրում ճառեաց:

ԳԼ. ԺԴ.

Ջկոստանդնուպօլսոյ շինումն ևւ նոր Հռոմ անուանելն եւ շինուածքն:

Իսկ թագաւորն դառնայր յետ այսորիկ յարեմաից ի Վոստանքինուպօլիս Բ ի Ե. ամի իւրոյ թագաւորութեանն և նորոգել զեւս. Բ. ի իր. Ա. Ի. ի իր:

զեցիս փութայր. և առներ զայս և ըստ այլ քաղաքաց-  
 իսկ յընքեան իսկ համանուան որ յառաջն Բիւզանդն՝  
 կոչէր, աճեցոյց զպարիսպսն մեծամեծս ածելով շուր-  
 ջանակի հոլովիւք զարդարեալ շինուածաւք, հաւասար  
 թագաւորեցելոյն Հռովմացւոց, կոստանդնի քաղաք  
 անուանելով. հրամանաւ և աւրինաւք երկրորդ Հռովմ  
 տիրացոյց:՝ Արպէս և աւրէնք իսկ ի քարեղինում  
 զբին արկանի. ի կոչեցելումն Ստոպատիգի՝<sup>2</sup> հանդէպ նո-  
 քին ի վերա ձիոյ կալով առ ի յընթեռնուլ զհանդիպ-  
 եալոն ամենայն: Եւ յայսմ ի սմին քաղաքի երկուս շի-  
 նեաց եկեղեցիս. մին զանուանեալն Իռին.՝ իսկ այլ  
 զհամանուն Լուսքելոցն: Այ մայն որպէս է ասել, ա-  
 ճեցուցանէր զքրիստոմէկիցն, այլ և զհեթանոսացն տա-

— 26. ոսկի տիրացոց, սիւլմամբ, ուղեցիէք ըստ բճ. ԵՄՐԱՍԵՄ.

բ. Եւրոյոյ խաղաղութեան բառն է:

1. Պաղատեան Գրողիկոնը պատմում է, որ քաղաքի պարիսպները սկսել են շինել Գ. 328 թ. աւարտել եւ վերակոչել են 330 թ.:

2. Ստոպոտիգոսը հասարակական շինութիւնն էր. որի մէջ ըստ սովորու-  
 թեան նստում էին Ստրատիկները՝ էպն երկապետները, որոնք առաջ կա-  
 ռավորում էին Բիւզանդ. քաղաքը:

կեղեցիսն փութայր ըստ քաղաքաց քաղաքաց, Եւ զհամանուն  
 քաղաքն իւր մեծացուցանէր բարձր պարսպօք և ամենապատիկ՝  
 հրաշալի յօրինուածովք, զշինուածս՝ յարդարէր ըստ տես-  
 լեան ցուցակութեան նմա յաներևութից զերևելիս՝ արարեալ,  
 առաւելեալ յամենայնի քան զթագաւորեալ քաղաքն Հռով-  
 մայեցւոց որ կոստանդինու քաղաք անուանեաց, հրամանաւ և  
 երկրորդ Հռովմ տիրացոյց ի վերայ աշխարհին, որպէս և յար-  
 ձանի՝ գրեցաւ ի մուսս քաղաքին. որք յնթեռնուլ է ի միտ  
 առցեն զամենայն հանդիպեալսն: Եւ ի սմին ամի շինէր եր-

— 27. Բ՝ ամենապատուալան բ. Բ. Գ. գլխուածան Գ. Գ. գրեթեյիտս.  
 Գ. Ա՝ Բ՝ արմաթի. Ե. Գ. զբրեծեալով:

ճարս քակտէր. և զգարչելի նուէրս նոցա խափանէր. և զկուռս նոցա զարդ փողոցացն կոստանդնի քաղաքիս կացուցանէր. և զՌլլիսունսն զերեքոտեանսն յասպարիս ի նորին քաղաքիս հրապարակեալ դներ: Չայս ասել այժմ աւելորդ թուեցի. տեսանէք յառաջագոյն կամ լսէք: Զի յայնմ ժամ աւրինաւք զմեծ աւանդութիւնն զքրիստոնէութեանն էառ. քանզի ի ժամանակս արքային կոստանդնի և այլ ևս առաւել Աստուծոյն պահեալ լինէր նախահնամութիւն: որոց ի թագաւորին գովեստի մեծաձայն պատմութեամբ Եւսերիոսի Պամփիւլիա յիշատակ առնէ: Արով ժամանակ համարիմ և մեզ յազազս նոցա որպէս է վարկանիլ ի ձեռն սղից ասել:

կուս՝ եկեղեցիս ի կոստանդնուս՝ քաղաքի. և յարդարեր հըրաշաղան գեղեցկութեամբ և զարդու յարգարել պաշտօնեք՝ որք միշտ փառաբանեն՝ զԱստուած. Եւ հիմնարկութիւն առնէ՝ մեծագոյն և բարձրագոյն սուրբ Սոփեա ըստ անրջոցն տեղութեան Գրիստոսի Աստուծոյ. Եւ յամենայնի աճեցուցանել զջանայր զբարեպաշտութեան կարգս քրիստոնէից և զեկեղեցեաց է Աստուծոյ և քակէր զմեհեանս կռոցն և զնուերս նոցա և ըզպղծութեան ը զպաշտամունս՝ գարշելեացն՝ խափանէր և ըզպատկերս կռոցն յորմս ըստ այլ քարանցն՝ յարմարեալ հրամայէր. և զզեզ Փորոզանեա՝ զերեքոտեայսն՝ յասպարիսի՝ քաղաքին հրապարակեալ դներ. Չայս այժմ աւելորդ է ասել գտեսեալս և զլուեալս. զի յայնմ ժամ օրինօք զմեծ աւանդութիւն քրիստոնէութեան ուներ քաղաքն և աշխարն ամենայն ի ժամանակս կոստանդիանոսի թագաւորի. և այլ ևս առաւել նախահնամութիւն Աստուծոյ պահեալ լինէր ի գովեստ թագաւորին զոր լսէ ոք ի պատմութեանց. որպէս Եւսիբէ՝ պատմութիւն. և իմ սուղ ինչ անցանելով ասացից:

ա. Գ. Բ. երկու. Ա՝ Բ՝ զերկուս. բ. Ա՝ Բ՝ կոստանդնուպոլիս. գ. Ա՝ Բ՝ պաշտօնեք. դ. Գ. փառասորէի. ե. Գ. առեր. զ. Գ. անցուցեալ. է. եկեղեցոյ. ը. զպղծութեան. բ. Ա՝ Բ՝ զպաշտմունս. Գ. պաշտաման եոցա. ժ. Ա՝ Բ՝ գիշերացն. ժա. Գ. ի յորմս. ժբ. Գ. փոտնեայն. ժգ. Բ. Գ. զերեքոտեայսն. Գ. զերեքոտեայսն. ժդ. Ա՝ Բ՝ Բ. յասպարիսի. ժե. Գ. զլուեալս. ժզ. Գ. Եւսիբէ. Բ՝ Բ՝ Եւսիբի:

Գ.Լ. ԺԷ.՝

Եր մայր Թագաւորին Հեղինէ. որոյ համանուամբ զա-  
հանն Ռաէպանի՝ քաղաք արարեալ Թագաւորին՝ Հե-  
ղինէի քաղաք անուանեաց: Այս երանելիս Հեղինէ  
ի ձեռն երազոց՝ հրաման առեալ յԱրուսաղէմ երթայր:

1. Տես. Սողոմ. Բ. 1: Թէոդորեոս. Ա. 18: Եւսեբ. Վ. 4. Գ. 25:  
Ռուֆին յ. 7: Կատող. Բ. 18: Սուլպուցիոս Սեղերոս Բ. 33:

2. Գուէպանը Բիթիւնիայի քաղաք է. որ շինել տուեց Կոստանդինոս  
Փրկ. 327 թ. Լուկիան Կահառայի յիշատակին. որտեղ նա Թաղուած էր:

3. Եւսեբիոսը ոչինչ չէ պատմում այս երազի մասին. ասումէ միայն.  
որ նա բարեպաշտութիւնից դրդուած է գնացել Երուսաղէմ: Կար. Բ. 44.  
Չէ. ասուքեաց (Կոստանդինոս) զՀեղինէ զմայրն իւր յերուսաղէմ ի խմբ-  
դէր պատուական խաչին. զոր եւ եզիտ իսկ զփրկական փայտն հանդերձ  
հինգ բուեռօքն:

Գ.Լ. ԺԹ:

Պատմութիւն Հիլյինէի մօր Կոստանդիանոսի արժանի յիշատակի. շի-  
նեին զսնորինականն, որ յերուսաղէմ. գտանելն զխաչափայտն սուրբ  
եւ բիրիւն ի Կոստանդնուպոլիս եւ մեռանելն:

Եւ Հեղինէ մայր Թագաւորին ևս առաւել բարեաց գործոց  
արժանի յիշատակի. որ յազագս նորայ է պատմութիւնն. «  
որք կամիցին ուսանիլ բայց սուղ ինչ ճառեցից՝ զնորայսն. Կոս-  
տանդինոս զմօր իւրոյ զաւանն՝ Դաիպան քաղաք հռչակաւոր ՚  
յարդարեաց շինուածովք և մեծութեամբ և յանուն մօր իւրոյ  
Հեղինէի՝ քաղաք անուանեաց զաւանն. և սա՞ յամենայնի  
հռչակեալ է երանութեամբ աստուածատէր և բարեպաշտն և  
իմաստուն ըստ ամենայնի Է հաստատուն ի հաւատս և վարուքն  
ևս առաւել գովելոյ արժանի: Այս երանելիս Հեղինէ առնու  
հրաման Աստուծոյ ի տեսլեան գիշերոյ երթալ յերուսաղէմ և

«. Գ. Կոստանդինոս: Բ. Գ. Եւսեբոսը: Գ. Գ. Գուսման: Գ. Ա՝ Բ՝ Էր-  
յափեր: Ե. Ա. Հեղինէ: Բ. Հեղինէայ: Գ. Գ. Հեղինէ: Ե. Գ. Կամբերուքեամբ եւս  
Ը. Գ. յամենայնի:

և զերբեմն զՆրուսաղէմ որպէս հուղս մրգապահաց ըստ մարգարէին բանի՝ գտանէր. իսկ զգերեզմանն Քրիստոսի ուրանաւր թաղեալ, յարեաւ փութանակի խնդրէր թեև դժարով, այլ հանդերձ Աստուծով գտանէր: Իսկ զպատճառն դժարագտութեանն ի ձեռն սղից պատմեցից: Արք զՔրիստոսն իմացեալք յետ ժամանակի չարչարանացն պատուէին զգերեզմանն. իսկ նոքա փախուցեալք, քրիստոսեանքն ծածկէին զգերեզմանն. Ափոռդիտա՞ ըստ տեղւոյն տաճար յարդարեալ կանգնեցին կուռս: որպէս զի տեսեալ քրիստոնէիցն զկուռսն մի՛ արասցեն զյիշատակս տեղւոյն. սա ևս յառաջ էր ի մոլորումն յարդարողացն: Իսկ մայրն արքայի յայտնագոյն յայնժամ լինէր, քանզի աւերեալ գտաճարն, և զտեղի սրբել ի հողոյ և մաքուր գործեալ երիս գտանէ խաչս՝ ի գերեզ-

1. Եսայ. Ա. 8.

2. Այս տաճարը շինել էր տուել Հաղործանը.

3. Խոյի գիւտի ամենա՛ւառարիմ պատմիչը համարոււմ է Կիւրեղ Երուսաղիմացի եպիսկոպոսը. որը իւր նամակում (350 թ.) ուղղած Կոստանդինոս պատմումէ. որ Ս. Խաչը գտնուել է նոս հօր Կոստանդինի օրով: Բայց ոյնչ չէ պատմում միւս խաչերի եւ պատահած հրաշքի մասին: Հերոդէի ճանապարհորդութեան ժամանակը համարում են 326 թ.:

Խնդրիւ զՓայտ խաչին Քրիստոսի և շինել զեկեղեցիսն Աստուծոյ, Զմատուռն և զՊիոն և զՅարութիւն և զԳողգոթայն և զՆամբարձումն՝ զՄանուկն Քրիստոսի՝ ի Բեթղեհէմ՝ զՍուրբ Աստուածածին՝ թե եկեղեցին. ուր հանգիստն է զՆապարտոսն և զՍուրբ Գ. Ստեփաննոս զոր և պատմեաց Կոստանդիանոսի գտնսին և զյրսմանն յԱստուծոյ. Գ. Եւնա յօժարութեամբ և հաւատով ընկալեալ ի մօրէն զառացեալսն տա՞ ոսկի և արծաթ բազում և առաքէ յԵրուսաղէմ բազում ամբոխիւ.

ա. Գ. եւ Գ. Բեթղամի. Գ. Գ. Աստուածածին. Գ. Բ. գողգոթ. է. Գ. Բ. Աստուծոյ. Գ. Գ. զառացեալն տա՛յր:

մանին, մին զերանելին յորում Քրիստոս Փրկիչն մեր  
 արածեցաւ, իսկ զայլսն, յորս խաչակիցքն Քրիստոսի  
 երկու աւազակսն մեռան: Ընդ նոսին գտանէր և Պիղա-  
 տոսի տախտաֆն, յորում թագաւոր Հրէից զխաչելեալն  
 Քրիստոս նախագրեալ յոլովիւք գրովք քարոզեալ: Եւ  
 վասն զի անյայտ էր խաչն խնդրեցեալ, ոչ սակաւ տրրտ-  
 մաւթիւն զմայր թագաւորին ընդունէր. այլ ոչ ընդ  
 երկարս ինչ դադարեցուցանէ Աստուած զխռովութիւնս:  
 Ձի Երուսաղէմացեաց եպիսկոպոսն որում անուն Մա-  
 կառիոս լուծանէ հաւատով զտրտմութիւնն զանյայ-  
 տութիւնն, քանզի նշան խնդրէր յԱստուծոյ և առնոյր:  
 Իսկ նշանն էր այսպիսի ինչ: Կին մի ի գեղիցն յեր-  
 կար ախտ ըմբռնել առ նմա անցաւ և մահն լինէր:  
 Իսկ մատուցեալ ի մեռեալն զիւրաքանչիւր ոք ի խաչիցն  
 եպիսկոպոսն յարդարէր, հաւատացեալ յարուցանել  
 զկինն. հպեալ բնոյ խաչին. և յուսոյն ոչ մեղաւ. քան-  
 զի մատուցելոց ոչ տերունականացն խաչից լինէր ոչ  
 աւելի կնոջն մեռուցելոյ. իսկ իբլև ճշմարիտ խաչն մա-  
 տուցաւ. կինն մեռեալ նոյն ժամայն յարեաւ. և ի յա-  
 ռողջանալն փառաւորէր զԱստուած:

Խնդրել զփայտ խաչին և շինել զեկեղեցիսն՝ զտեսլեանն որ-  
 պէս ցուցաւ. Եւ եկեալ գտանէր զԵրուսաղէմ ըստ մարգա-  
 բեւութեան. որպէս զտաղաւար միգապահաց և որպէս հովանի՝  
 ինչ ի մէջ սեխենեաց և որպէս զքաղաք՝ պաշարեալ յազգաց  
 օտարաց: Եւ ժողովեալ՝ զհրեայսն խնդրեաց զփայտ խաչին  
 Քրիստոսի որպէս ցուցանէ պատմութիւն զգիւտ խաչին և բե-  
 ռացն. և ես աւելորդ համարեցայց գրել: Եւ մայր թագաւո-  
 րին շեղինէ վերսահն նորոգէր զնորն Երուսաղէմ՝ եկեղե-  
 ցեօքն՝ ըստ ցուցական է տեսլեանն Աստուծոյ. և յարդարէր  
 հրաշալի յօրինածովք և բազում փառօք ըստ իւրաքանչիւրոցն  
 խորհրդածութեան ի փառս անուանն Քրիստոսի: Եւ երկիւղա-

— Ա՝ Բ՝ քիւրթեցիւ Բ. Բ. զնովանի. Գ. Ա՝ Բ՝ զքաղաքն. Գ. Գ. ժողովեաց  
 Ե. Ա՝ Բ՝ Գ. յերուսաղէմ Գ. Գ. եկեղեցուսն. Է. Ա՝ Բ՝ Գ. Բ. ցուցակի:

Այսու յեղանակաւ լինէր գտեալ խաչին փայտ: Իսկ մայր Թագաւորին տուն աղաւթարան ի գերեզմանին տեղի առաւել կատարուին յարդարեաց: Կոր՝ Երուսաղէմ՝ զտեղին անուանեաց, փոխանակ հնումն այնորիկ աւերեցոյ: Իսկ զպատուական Խաչին զմասն պատէնիւք արծաթովք շուրջանակի պատեաց. յիշատակ որոց պատմին կամիցին աստուստ Թողոյր. իսկ զմիւս ևս զմասն առաքէր Թագաւորին: զոր ընգալեալ ուրախութեամբ մեծաւ հաւատացեալ միշտ պահել զքաղաքն ուրանաւր և պահի նա: Յինքեան անգրւոջն՝ « Թաքուցեալ » որ ի Կոստանդինուպոլիս կայ, ի կոչեցելուսն վաճառ Կոստանդինի, ի վերա ծիրանի և մեծ սեանն: Զայս այսուհետև զլուր՝ գրեալ ունիմ. զի գրեալ է.

- ա. Ե՞ն ճատօ՛ս անծրւանա:
- բ. Անօղ՛ի Իւրօ:

1. Այս տեղեկութիւնը վերցրած է Եւսեբ. բայց սխալ է ասել. Թէ այն տաճարը որ չեղինէն. կամ ճիշտը Կոստանդինոյ շինեց Կոր Երուսաղէմ կոչեցին Եւսեբիոսը միայն ակնարկում է Յովհաննու յայտնութեան մէջ յիշուած « Կոր Երուսաղէմ »:

2. Կոստանդինի այդ Երուսաղէմ արձանի մասին պատմում է փիլոսոփոս գիտը. Թէ Ժողովուրդը սովորութիւն ունէր նրա առաջը միմեր վառել եւ պաշտել. եւ այդ վկայութիւնը հաստատում է նաեւ Թէոդորիզոսը պատմ. եփեղ. Ա:

Ծովթեամբ և ահիւն Աստուծոյ միշտ լինէր ի պահս և յաղօթս հանգերձ բազում կանամբք և յուղ սուրբ կուսանօք. որովք զհանապազօրդ աղօթսն ճիշտ կտտարէր և զաղքտաս և զկարօտեալս՝ լցուցանէր և զարգարեալ՝ զեկեղեցիսն երևելի սպասօք՝ սոն մեծ ուրախութեան՝ ըստ խորհրդածութեան միոյ միոյ ըստ իւրաքանչիւր եկեղեցեացն ունէր. և կարգէր՝ պաշ-

ա. Գ. լրացանէր. բ. Գ. գնդարեցոցնայ. գ. Ա՛ Բ՛ Բ. սպասուց. Գ. երևելի փասօք և սպասեպ: Գ. Ա՛ Բ՛ Գ. ոտրախութեամբ. Ե. Ա՛ Բ՛ կարգաւոր:

Թէ ամենայնք որ բնակեալք են ի Կոստանդնի քաղաքին ճշմարիտ այսմ լինել սասցին: Իսկ զբեւեռսն Քրիստոսի սր ի խաչին ցցեցան առնոյր Կոստանդին: Քանզի և զայտոսիկ մաւր Թագաւորին գտեալ ի գերեզմանին առաքեաց, սանձս և սաղաւարտ արարեալ ի պատերազմունսն հպեալ լինէր: Եւ տայր այսուհետև Թագաւորն զամենայն նիւթս ի յարդարումն եկեղեցեացն. զրէր՝ և առ Մակարիոս եպիսկոպոսն փութալ ի շինուածսն: Իսկ մաւր Թագաւորին արարեալ զՆոր Երուսաղէմն, և ի յայրին՝ Բեդղաեմա՝՝ ուրանաւր ըստ մարմնոյ ծնունդն Քրիստոսի. միւս այլ շինէր եկեղեցի. և ոչ զայս միայն. այլ և ի լերինն Համբարձման: Եւ այսպէս ունէր երկիւղածարար յԱստուծոյ առ այս. որպէս զի աղաւթել նմա հանդերձ բազում կանանց դասու. և զկուսանսն վերագրեալս եկեղեցեացն կանոնաւ ի գիտութիւն յորդորելով, ընքեամբ իւրովի գործեալ. զերեկորնական սե-

1. Թուղթը կայ Յունարէն բնագրի մէջ գլ. Թ. վերջում:

2. Եւսեբ. Վ. Կ. Գ. 42 եւ 43 վկայումէ. Հեղինէն Կոստանդնի դռդրմամբ եւ օգնութեամբ տաճարներ է շինել. նոյնը հաստատում են Թէոդորոսը եւ Սողոմէնը:

առնեայս, որ անհատ կատարի՝ պաշտօնն Աստուծոյ, և հրաժարիլ ի պաշտօնէիցն և ի սուրբ եկեղեցեացն, Եւ մասն ինչ ի սուրբ խաչէն Թողոյր յԵրուսաղէմ, և զայլն առեալ ընդ իւր ամէր ի Կոստանդնուպօլիս բեւեռքն, Եւ առնեն նաւակաթիս ի ԺԳ. Սեպտեմբրի և յերկրորդ աւուրն ի ԺԴ. Սեպտեմբրի առ սրբոյ խաչին: Եւ ապա ցուցանի սուրբ խաչն Թագաւորին և բազմութեան ժողովոյն և համբուրէր Թագաւորն, և փարէր Բզնովաւ և որպէս խաչագետս՝ լինէր՝ և զուարճանայր, օրհնէր զԱստուած. և այդպիսի հոգևոր՝ վայելչութեամբ և ցընծութեամբ գովէին՝ զԱստուած: Այսոցիկ այսպէս եղելոց ի փառս Աստուծոյ, երանուհին Հեղինէ գնաց ի քաղաքն իւր և ուխտաւոր կուսանօք կեայր՝ անսրաղապէս պահօք և աղօթիւք:

ա. Գ. կատարեցի. բ. փառասորեր. գ. Գ. խաչագետս. Գ. Գ. լեալ: Ա՝ Բ՝ Գ. յիք. ե. Գ. յառի. զ. Գ. եւ օրհնէիւ. է. Գ. կայր.

դանսն մատուցանելով : Բազում ինչ շնորհեալ եկեղեցեաց և աղքատաց. և այսպէս բարեպաշտապէս հանեալ զկեանսն կատարեցաւ ի յութսուներրորդի ամին, ի սոյ մարմինն նորա ի թագաւորացեալ քաղաքն՝ Հոռոմ տարեալ ի թագաւորականսն դնելով դերեզմանի :

ԳԼ. ԺԸ<sup>2</sup>

Իսկ յետ այսորիկ թագաւորն խնամողագոյն առնէր որոց վասն քրիստոնէից, քանզի ի բաց դարձոյց զամենայն աղանդս հեթանոսականսն, կանկնեալ տաճարս ար-

ա. ըստ νέαν Ρώμην նոր Հոռոմ :

1. Հեղինէի մահուան տարին ճիշտ յոյսնի չէ : Սմանք ասուածն Կոմանել է 326 թ. ուրիշները 327 կամ աւելի ուշ :

2 Տես Սողոմ. Ա. 8. կասեղ. Բ. 18 :

Եւ ութսուն ամեա լուծանէր՝՝ զկեանս իւր : Եւ թագաւորին Բ բարձեալ զմարմինն հանգուցանէր ի Հոռոմ, ի գերեզմանս թագաւորացն : Վեծաւ պատուով ի փառս և ի գոհութիւն Վստուծոյ մերոյ : Յետ այսորիկ ևս առաւել յորդորէ քրիստոնէից խնամակալութիւն և յեկեղեցեաց պայծառութիւնս. և դարձուցանել ջանայր զամենայն հեթանոսական աղանդս և զընքեան պատկերս որ ի մեհեանս Բ եղծանէր և խափանէր զպաշտամունս. Վ և խրատէր պաշտել զԱստուած կենդանի և թողուլ զկոտցն բաջաղմունս և զհմայս և զգիւթուութիւնս : Այլ թ ի ձեռն խաչին Քրիստոսի հաւատով առնէր զյաղթութիւնն ամենայն վնասակարացն, որք ի դիւացն դըրժին : Զի մարդասիրին Աստուծոյ խնամակալութիւնն ոչ թողաւ չեզարարածս իւր միշտ յերևելիս ի յաներևոյթան :

ա. Գ. վախճաներ : բ. Գ. բազաւորն գ. Գ. բազաւորաց. գ. Բ. Գ. գոփորիւն. է. Գ. յորդորէր քրիստոնէութեան զ Գ. եկեղեցեաց պայծառութեան. ե. Բ. ազանգան. ը. Գ. պատկերս բ. Ա՛ Բ՛ մեհեանն. ժ. Բ եւ Գ. պաշտամունսն. ժա. Ա. դիւարիւնս. ժբ. Բ. այլեւ. ժգ. Գ. առնուց. ժդ. Բ. գիւթիւն. ժե. Գ. բողոյց. ժզ. Գ. քրեւելիսն :

գեղոր. ասելով հեթանոսացն. որպէս զի արդեաւք Սա-  
բապիս իցէ՝ որ զՄիդոս հանէ ի յարգիայ՝<sup>1</sup> Եզիպ-  
տոսի. և զի զպիքիւն՝ ի տաճարն Արապիսոյ տանել. այլ  
նա յեկեղեցւոջն Աղէքսանդրացւոց զպիքիւն՝<sup>2</sup> փոխեալ  
հրամաէր: Իսկ հեթանոսացն հռչակեալ ոչ ելանել Մի-  
դոսի, վասն բարկութեան Սարապիսայ: Այլ մարդասի-  
րին Աստուծոյ և զամենայն արարողին՝ նախախնամու-  
թեամբ միշտ հանելով զմեզ յանդնդոց երկրէ. և փրո-  
կել զմեզ ի մեղաց մերոց: Եւ զորս այժմս արար. քան-  
զի հաս յորոց զինին ևս, և յորոց յետ այսորիկ լինէրն  
միշտ և լինի: Բայց գործով ցուցանի որպէս զի ոչ վա-  
սըն ազանդոցն. այլ վասն սահմանաց վերին նախախը-  
նամութեանն Միդոսի երումն լինի:

Իսկ յայս ինոյն ժամանակս և բարբարոսաց Սաւու-  
մացեաց՝<sup>3</sup> և Գրաց՝<sup>4</sup> ընթացելոց ի Հռոմակցւոց աշխարհ:  
Բայց ոչ երբէք որ առ եկեղեցիսն էին կամք թագաւո-  
րին հատանէին. այլ երկաքանչիւրիցն զպարտն գոլ  
առնէր նախախնամութիւն: Քանզի զոմանս քրիստո-  
նէականն արիւղենիւ հաւատարմապէս ըստ զաւրութեա-

— ἐπὶ ἀρδείᾳ καὶ ἰουδαίᾳ: ρ. Գեղիւն ԽՊՄՍ էիւզ. Բէս (շրանքի)  
Գ. Σαρματῶν

1. Յուլիանոսը վերջում կարգադրում է Պիտիւն-ճիւղը՝ նորից գէտի  
Արապիս տանել եւ այդպէս էլ մտումէ մինչեւ Թէոդոսի ժամանակները:  
2. Գթաց մասին տ. Վ. Կ. Դ. 5. Յոյն հեղինակները Գոթերին ՏՊՄԹԱ  
Սիւթացի են կոչում սովորաբար, իսկ լատիները՝ Գոթեր: Հռովմայեցւոց  
զօրը Գոթերին յաղթեց ֆրկ. 333 թ. Սարմատացւոց երկրումը:

Գ. Լ. Ի.

Յրձակումն բարբարոսաց ի Հռովմայեցւոց աշխարհն և և յաղկելն նոցին

Եւ եղև ի ժամանակին՝ յարձակումն բարբարոսաց՝ ի Հռ-  
ովմայեցւոց աշխարհն.՝<sup>1</sup> այլ ոչինչ լինէր վնաս՝<sup>2</sup> առ քրիս-  
տոնեայս և առ եկեղեցիս Աստուծոյ և ըստ՝<sup>3</sup> հաւատոցն Աստ-

— ρ. Բ. ի ժամանակի՛ն յայժմի՛: ρ. Բարբարոսացն: Գ. Գ. Դ. այնպիսի:  
Գ. Գ. ոչինչ վնասեր, և Գ. ըստ յուսի:

նրն յաղթէր. որպէս զի և զսովորականն ի հի'ն թագաւորացն տուեալ ոսկի բարբարոսացն հատանել, և զնոսա սրտախոցեալս պայմանազանցութեանն ի հարմամբ հաւատալ. յայնժամ նախ քան զքրիստոզնէութեանն կրաւնս. ի ձեռն որոյ և կոստանդին ապրեալ լինէր:

Այլ նա և այլ ևս եկեղեցիս առնէր. մին ի կոչեցելու մն կաղնի Մամբրէի. ընդ որով զհրեշտակն ընդունէր Արրահամ, զոր աստուածաբն բանն նշանակէ յարդարէր:

Իսկ լուեալ թագաւորին բազին ընդ կաղնեաւն արարեալ. և զոհս հեթանոսականս կատարել ի նմա. մեղադրէ թղթով Եւսեբի եպիսկոպոսին կեսարւոյ. և հրամայէ գրագինն կործանել. իսկ ընդ կաղնեաւն յարդարէր տուն աղաւթից: Եւ միւս ևս եկեղեցի յԱրեգ:

«. 'Ελιου πόλις

աանդիանոսի. այլ ախոյանիւ խաչիւն " Գրիստոսի յաղթել Բ յետա դարձուցանէր " բազում անարգանօք և ինքն դաւնայր ի քաղաքն իւր փառաւորապէս ի գոհութիւն Աստուծոյ:

ԴԼ. ԻԼ:

Կոստանդիանոս կայսր առ կաղնեաւն Մամբրէի եկեղեցիս շինել ի ձևոն Եւսեբւոյ կեսարու եպիսկոպոսին, Փիւնիկիցւոյ չար սովորութիւն բառնայ, շինէ եկեղեցի յԱրեգ քաղաքի, ի կիսիկիսոյ հարցուկ զիսին զբազինս բաննայ:

Եւ առաքեաց զԱնբեոս կեսարու " եպիսկոպոսն ընչիւք ուր երևեցաւն " Աստուած Արրահամու՝ առ կաղնեաւն Մամբրէի " շինել եկեղեցի. և զի էր բազին ընդ կաղնեաւն և զոհք. զոր քակել է հրամայեաց. Ը և ի միջոյ ի բաց բառնալ զհեթանոսաց պաշտօնն, և շինել զեկեղեցիս " յանուն Տեստոն, և առնել պաշտօնեայս որ հանապազորդ պաշտօն Աստուծոյ լիցի ուր երևեցաւն " Աստուած Արրահամու. Եւ գարձեալ հրամա-

«. Գ. խաչիւն. Բ. Գ. խաչիւն յարաւարեալ Գ. յարեալ: Գ Ա' գարձուցանէ, Գ. Գ. գիւսարու Ե. Բ. Գ. Գ. երևեցաւ. Գ. Գ. Մամբրի. Ե. Ա. Գ. քակեալ: Ը. Գ. երամանի. Բ. Գ. եկեղեցի. Ա' Բ. գիւսեցիւն. Ժ. Բ. Գ. երևեցաւ:

քաղաքի Փիւնիկեցւոց հրամայեաց շինել<sup>1</sup> յաղագս այս պատճառոյս: Արեգ քաղաք ունէր զոմն նախկին աւրէնրագիրս՝ բայց ոչ ունիմ<sup>2</sup> ասել, թէ ո՞վ էր. այլ սովորութենէ ի սովորութիւն քաղաքին ցուցանի: Քանզի հասարակաց ասաց լինել զկանայսն. զորս ի գիւղն ատենադրեալ հրամայէր. և վասն այսորիկ խառնակութիւն լինէր վասն ծնեցելոցն ի նոցանէ: Քանզի ծնաւդացն և մանգանցն և ոչ մի ինչ էր խիղճ: Իսկ զկուսանս զոր առնէին աւտարաց տային պոռնկել: Չայս հնոցանէ զիսկզբանէ կալեալս լուծանել փութայր: Քանզի պարկեշտ աւրինաւք զզազրալին էրաւրձ մոլորութիւն, և զիւրեանց ազգ ճանաչել յարդարեաց: Եւ եկեղեցի շինեաց, եպիսկոպոս ձեռնադրել յարդարեաց:

1. Եւսեբ. Վ. Կ. Գ. 58. Եւսեբ. զարմանումէ. որ Կոստանդինը պետե՞զ. ուր եւ ոչ մի քրիստոնեայ չկար. շինել տուեց եկեղեցի կարգեց եպիսկոպոս եւ հոգեւորականներ. Բայց այդ շատ չօգնեց, բնակիչները չփոխուեցին:

յեաց երթալ ի Փիւնիկէ լուծանել զչար սովորութիւնն, զոր ունէին ի նախնեացն յԱրեգ քաղաքի: Քանզի հասարակաց զկանայս արանց օրինադրեցին, և յաշխարհի զնոյն օրէնս ուսուցանէին, յորս բաղում հակառակութիւն վասն ծննդոցն լինէին, զի ոչ գիտէր ծնօղն զծնեալն յինքննէ՞ր ի կնոջէն: Եւ զկուսանս<sup>3</sup> օտարաց եկելոց<sup>4</sup> տային ի պոռնկութիւն և բազում չարիք, որ ի գիււացն էր խաւարեցուցանէր<sup>5</sup> զքաղաքն և զաշխարհն, զոր հրաման թագաւորին<sup>6</sup> լուծանէր, և քարոզութիւնն Քրիստոսի՝ զխաւար մեղաց: Եւ շինեցաւ եկեղեցի յԱրեգ քաղաքի և եպիսկոպոս<sup>7</sup> ձեռնադրեալ և քահանայս. որք ըստ քրիստոնէութեան էին օրինագրեալք, իւրաքանչիւր այր զիւր

ա. Գ. զհասարակաց. բ. Գ. յիւրեան եւ ի կնոջն. գ. Գ. կուսանս: գ. Բ. նկնարք. ե. Գ. Գ. Ա՛ խառնեցուցանէր. զ. Գ. հրամանի գրիմ: է. Գ. եպիսկոպոս:

ժիճակ քահանայական ըստ կարգի. և այսպէս զանբաւ շարինս քաղաքացեացն Արեգ քաղաքի ի բաց ընգեց: Բայց մերձագոյն յեղանակաւ և որ յԱփակ՝ Լիբանտնու մեհեանն Ափռողիտայ աւերեաց և զանդ եղեալ զժնդակ արուագիտութիւնն ի բաց էհատ: Եւ զինչ ասացից, որպէս զի և որ ի Կիլիկիայ հարցուկ դեն վարել և զտունն, յորում բունաւոր էր, ի հիմանց կործանեալ հրամանաց<sup>2</sup>: Այսքան էր սուրբ Թագաւորին նախանձ առ քրիստոնէութիւնն, որպէս զի և պարտականին<sup>3</sup> հանդերձեալ շարժիլ պատերազմի: Յարդարեալ խորան ի պէսպէս կաւառաց զեկեղեցւոյ՝ աւրինակ պատմել. որպէս և Սովսէս յանապատին առնէր. և

1. Այդ անարդ պաշտամունքը անյայտ էր. կայսրը հրովարտակով ոչեւ շացրեց եւ զինւորներն ձեռքով ցրուեց հետեւողներին:

2. Կիլիկիայում կար էսկուլպտ տաճար. ուր իբր Թէ բժշկուում էին հիւանդները եւ ապագան նախատեսում. կոստանդինը իւր զինւորներով ձեռքով քանդել տուեց. Եւսեբ. Գ. 56

3. Այս պատերազմի լուրը տարածուեց կայսեր կեանքի վերջին օրերում. բայց ամեն բան շուտով խաղաղուեց. Եւսեբ. Գ. 57:

կին և զորդիս ուներ առանց ամբոխի՝ և գոհանայր զԱստուծոյ. Եւ որ մերձ էր՝ յԱփրիկեա Լիբանտի՝ մեհեանն Ափրողիտեա հրամայէր՝ Թագաւորն աւերել. և զոր անդ էր դժժնդակ արուագիտութիւն՝ ի միջոյ ի բաց բառնայր. և զողջախոհութիւն ուսուցանէր. Եւ որ ի Կիլիկիա էր բագին՝ հարցուկ գիւին, զոր բռնացեալ ունել, է հրամայէր քակել և ի հիմանց ի միջոյ ի բաց բառնալ զչար սովորութիւնս ը նորա. Եւ ամենայն ուրեք զեկեղեցիսն փութայր ընդդէմ մեհեանիցն կանգնել և աճեցուցանել զքրիստոնէից կարգս՝ և զեկեղեցիս՝

ա. Գ. ամբոխի. բ. Գ. մերձ էր Գ. Լիբանտի. Գ. Բ. եւ հրամայէր. Ե. Ա. արուագիտութեամբ. զ. Գ. բագին է Գ. ոսկեր. Ը. Բ. Գ. Գ. սովորութիւն. Բ. Բ. զորքան ժ. Բ. զեկեղեցիս:

զայս բերել ուր և լինիցի ըստ անապատ տեղեաց աղաւթարան պատրաստական. այլ ոչ լինէր յայնժամ պատերազմն: Քանզի շիջեալ լինէր աղաւթիք թագաւորին: Վասն զի և առ կանկնումն եկեղեցեացն՝ փոյթ էր թագաւորն: և որպէս զի բազում աւանս քաղաքս էցոյց, որպէս զԲուհայան աւան՝ համանուն մաւրիւրոյ. իսկ ի Պաղեստին զՎոստանտիանայ անուսբ քեռն իւրում Վոստանտիանայ. որքան այսուհետև և զայլսն ոչ ի դէպ համարիմ գրել: Քանզի ոչ կայ առաջի զգործս սուրբ թագաւորին արկանել ի կիր, որքան առ քրիստոնէութիւն են անկք. այլ որչափ ինչ միայն առ եկեղեցիսն լինէր: Վասնորոյ զուղղութիւն թագաւորին այլ իրիք պատճառս զոլ, առ անձինն պարտ լինելոյ իրողութեանն,

ա. Թագ. πόλις . քաղաքաց. ունի եկեղեցացի տեղ. որ անդի է մտքի՞ն շարժար.

բ. Մուրր. լիայ բնագրում:

զարդարէր զանազան երևելի պայծառ սպասուք, " որպէս և Մովսէս անդ զխորանն. " և յանուպառ տեղի " աղօթարանս Պ որք այնպէս՝ կամիցին " աղօթել առ Աստուած: Եւ ոչ յուժեքէ գրգուէր ի բարեպաշտութենէն. և ի հաւատոյն. Եայսոսիկ ի սատանայէ շարժի պատերազմ ի Պարսկաց առ Վոստանտիանոս. այլ աղօթիք սրբոց է բազմաձեռնութեամբ և հաւատովք թագաւորին ի խաղաղութիւն և փոխարկէր. Զի զրազում Ք քաղաքս և զաշխարս ածէր յուղղութիւնս՝ եկեղեցօք և պաշտօնէիք յարդարեալ.՝ ա և զի անձառք են յաղագս նորա բարեգործութեանցն ասել, որքան սակաւուք յիշել և զայլսն այլոց

ա. Գ. երեսնի սպասիչ. բ. Գ. զխորան. գ. Գ. տեղիս. գ. Գ. աղօրջարանս. ձ. Գ. որ մեա աջպէս. զ. Գ. կամեսցին. է. Գ. սրբոց. ը. Գ. բազու շորին խաղաղութեան. բ. Բ. բազում. ժ. Բ. յուղղութեան. ժա. Գ. արդարեայ. Գ. զարդարէր.

այլոց թողից կարողացն այսքան շարագրել, Բայց զան-  
անջատելի մնացեալսն յեկեղեցւոջ պատմեցից: <sup>1</sup>

### ԳԼ. ԺԹ <sup>2</sup>

Արդ այսուհետև յիշելի է և եթէ որքան որպէս առ  
ժամանակաւ թագաւորին քրիստոնէութիւնն ընդար-  
ձակէր: Քանզի այսքան Հնդկաց և ներքսագոյն Հնդկաց,  
Հառոց: <sup>3</sup> Վրաց առ քրիստոնէականն ասեն սկիզբն:  
Իսկ եթէ ո՞ր աղագաւ ի յաւելումն ներքսանգոյն Հնդ-  
կաց հպեցայ, ի ձեռն սակաւուց ասացից:

Յորժամ առաքեալքն վիճակաւ զառ ի հեթանոսս ճա-  
նապարհն առնէին, Թովմաս զՊարթևաց առաքելու-

... Հայոց բարգմանն է ասելացրել:

1. Թարգմանիչը դարձեալ բաց է թողել բնագրի մի կտորը, ուր հեղի-  
նակը մանրամասն պատճառաբանում է, թէ ինքը միայն եկեղեցական գոր-  
ծերը պիտի յիշի:

2. Տես Բ. Թ. Ի. Ե. Գ. Սողոմ. Բ. 24. Թէոդ. 49. Ա. 23. Կա-  
սող. Գ. 1. Նիկեի. Ը. 35:

Թողեալ ի լսել, որ նորա է պատմութիւն. և սուղ ինչ զնորայան  
առ <sup>4</sup> եկեղեցւոյ՝ յիշմունս ասացուք:

### ԳԼ. ԻԲ.

Յաղապս Հնդկաց եւ ներքսագոյն Հնդկաց հաւատալն յԱստուած ի ձեռն  
սուրբ արանց:

Ասացից և որ ըստ նորա <sup>5</sup> ժամանակս Քրիստոսի քարոզու-  
թիւն ընդարձակեցաւ, յերկրի: <sup>6</sup> Քանզի Հնդկաց և ներքսա-  
գոյն Հնդկաց և Վրաց <sup>7</sup> ինոյն ժամանակս առին սկիզբն հա-  
ւատոյ, յորժամ առաքեալքն վիճակեցան յաշխարհ ի հե-  
թանոսս ի քարոզել, Թովմաս <sup>8</sup> զՊարթևացն ունէր զառաքե-

... 4. առել. ք. Գ. եկեղեցւոյ պատմութիւն յիշումն: Գ. Ա՝ Գ. եւ որ ըստ  
առ. Գ. Գ. յերկրի. Ե. Գ. ներքսագոյն Հնդկաց լուսնի. Գ. Գ. Թովմաս. Բ. Թովմաս:

Խիւնն ընդունէր. Մատթէոս զԵթիովպացն. իսկ Բար-  
 դուղիմէոսի վիճակեալ լինէր որ են զոյգ ընդ Հայս՝  
 Հնդկաւ: Իսկ վասն միւս այլ Հնդկաց յորում բնակէր  
 բարբարոսաց ազգ բազում. յոյովիւք հպեալ լեզուովք,  
 զի չէ՛ ևս յառաջ քան զժամանակն Կոստանդնի քը-  
 րիստոսնէութեան բան լուսաւորէր: Իսկ թէ ով է պատ-  
 ճառ և զնոսա քրիստոնէացանելոյն, այժմ եկից բա-  
 նիւ: Մեռսպիոս ոմն իմաստասէր, ազգաւ Տիւրացի,  
 պատմել զաշխարհն Հնդկաց փութայր. սնփոյթ արա-  
 բեալ առ իմաստասէրն Միտոպոտոսն, որ յառաջ քան  
 զնա պատմեաց վասն աշխարհին Հնդկաց և վասն նորա:  
 Առեալ ապա երկուս մանգոնս համազգիս. ոչ ան-  
 մասն ի հեթանոսական խրատուէ, հասանէ  
 նաւելով յաշխարհն. նկարեալ որքան կամէր դադարէր

- ա. Թարգմանիկն է:
- բ. ἐρομαι καταλέξων լափագանք բառացի:
- գ. Ἠλληνικῆς οὐκ ἄμοιρα διαλέκτο) հմուտ լեզուից յունս:

1. Այս Գեորգիոսին յիշումէ Հերոնիմոսը իւր քրոնիկոնի մէջ. սա  
 Գաւուարով Հնդկական ճանապարհորդութիւնից՝ Կոստանդին Կայսեր ներ-  
 կայացնում է ըստ հազուադէպ ընծաներ եւ խաբումէ, որ նրա ունեցածի  
 մեծ մասը խլել է Պարսից Շապուհ Թագաւորը եւ ըստ Ամիանոս Մարտի-  
 լեանի տոսի պատճառ է դառնում պարսկական պատերազմին, բայց անհա-  
 լաւաւ ակն են համարում պատմագրերի առաձները:

Ըստ թիւն. Մատթէոս զԵթիովպացն, Բարդուղիմէոս զՀնդկաց  
 և զմիւս ևս Հնդկաց, յորում բնակէր բարբարոսաց՝ ազգ  
 յոյովիւք՝ հպել լեզուովք յառաջ քան զժամանակն Կոստան-  
 քըրիստոսի՝ բարոգութեան բան լուսաւորէր՝ ըստ առաքելոյն  
 ըստ Քրիստոսի աւետարանութեան. Իսկ եթէ ով է պատ-  
 ճառ նոցա հաւատոյն է ասացից, Մեռիպոս ոմն իմաստասէր և  
 աւետացետլ յնստուած, և ազգաւ Տիւրացի՝ առեալ ման-  
 գոնս ու շեղս՝ և համազգիս երթալ է ի Հնդկիս, որք էին ի

ա. Գ. Ա՛ ի Հնդկաց. բ. Գ. բարբարոս ազգ. Գ. Գ. հոյովքը հպեալ. Գ. Գ.  
 քաղաւորութեան եւ. Ե. Գ. լուսաւորութեան. Գ. Գ. բե. Ե. Գ. հաւատոցն.  
 ը. Գ. Աստուած. Գ. Գ. Տիւրացի Գ. Տուրացի. Ժ. Բ. ուղիմա. Ժա. Բ. Գ. եր-  
 րեալ:

ի պէտս ինչ ի պատշաճ տեղւոջ, ունելով նաւահանգիստ զգուշագոյն: Գրեպաւ յայնժամ առ սակաւ ինչ ժամանակ դաշինք, որ էին ի մէջ Հնդկաց և Հռովմացւոց խանգարեալ լինէին: Իսկ ըմբռնեալ Հնդկացն զիմաստասէրն, և զորս ընդ նմայն նաւէին, և զերկուս զբարէզարդ ի մանգունան զամենէսեան սպանանէին, իսկ զերկուս մանգունս զփոքունս ասրեցուցանէին: " Իսկ հաճոյ երեսաւք եղեալ մանգանցն, զմինն ի նոցանէ, որում անունն Եդէսիոս, " մատուակ իւրում սեղանոյն կարգէր, իսկ զմիւսն ևս, որում Փոռմէնտոս " անունն, թագաւորականացն դիւանացն հոգ տանել կարգեաց: Յետ բազում իրի վախճանեալ թագաւորին առ որդւոջն Կոմիդիոնեաւ, և կնոջն ազատս զնոսա թողոյր: Իսկ կին թագաւորին աղաչէր զմանգունան, զորդին ըզհասեալ ի փոքր հասակ մի թողուլ. այլ հոգաբարձութիւն առնել նմա մինչև կատարեալս արս եկեսցէ:

ա. Բնագ. աւել ուճի և եւ ընծակե՞ն բագաւորին շնորհաց:

բ. Αἰδέσιος.

գ. Φουρμέντιος.

դ. ἐπι σὺν κομιδῇ νηπίω մի: մանակ էր որդին Այս սխալը կտր-

նուել է. տես էջ 41:

Հեթանոսաց. և նաւեալ և հասեալ " ի նաւահանգիստ կղզի ինչ, ուսուցանէր զմանկունսն անդ ըստ Քրիստոսի քարոզութեան իմաստիք: Գայնժամ զինուորք " ի վորոյ անկեալ յափըշտակեցին " զմանկունսն և տարան թագաւորին Հնդկաց որք բարիւք երևեալ " թագաւորին. զմինն արար մատուակ, " որում անունն էր Եդէսիոս. և զմիւսն դիւանաց դպիր, որում անունն էր Փոռմինդիոս: " Յետ բազում իրի և ամաց զարկացան մանկունքն. և էին սիրեցեալք ի թագաւորէն և ի կնոջէն. Ապա լինի " վախճան թագաւորին և առնէ զնոսա ազատս: Եւ էր մանուկ որդի թագաւորին, որ ժառանգէր զաթոռն իւր: Իսկ մայր թագաւորին աղաչէր. զարսն մի թողուլ զհոգս թագաւորի որդւոյն. որում հաւանեալք յանձն առնուին մինչև զարգատ-

ա. Ա' հասե՞ն գ. եւ անջեալ. բ. Ա' զինուորքն. գ. գ. գ. յափըտակե՞ն. դ. գ. երեսեցան. է. գ. մատուկ. զ. գ. փախմեցախոս. է. բ. լիճեր:

Հաւանին ապա մանգունքն նախախնամութեանմբ ոչ ան-  
 տես առնել զթագաւորին ինչս: Իսկ Փռումէնտիոս էր  
 սր առաւել կարգէր: " զամենայն գործ առնէր. ըզ-  
 գիմեալսն յաշխարհէն Հռովմացեաց վաճառականս  
 խնդրել, ի քրիստոնէացելոց գտեալ. իսկ գտեալ ըստ  
 ինքեան ուսուցանելով՝ աղաչէր ի տեղիս ինչ  
 հասանել: " Իսկ ըստ յառաջ ինչ եկելոյ ժամանա-  
 կին և աղաւթարան շինեցին. և զոմանս ի Հնդկաց ու-  
 սուցեալ ընդ ընքեանս աղաւթեալ յարդարէին՝ բա-  
 զում բացմամբ սրտի: Իսկ թագաւորին մանուկ ի կա-  
 տարեալ հասակ ելեալ և Փռումէնտիոսի յանձն արա-  
 րեալ զբարիօքն ի նոցանէ կարգեալ իրս. խնդրէին ապա  
 յիւրեանց հայրէնիսն երթալ: Իսկ թագաւորին և մաւ-  
 րըն նորուն յամառելոց աղաչեցելոց և ոչ հաւանացե-  
 լոց. զնային ցանկութեամբ տարեցելոցն: Եղէսիոս որ-  
 պէս զի ի Տիւրոսն փութայր տեսանել զճնաւդս և զհա-  
 մազգիս իւր, իսկ Փռումէնտիոս հասանելով յԱղէքսան-  
 դրիայ առ Աթանաս եպիսկոպոս, յայնմժամ նորա-

- ա. որ գլխաւոր էր գործոց.
- բ. յայտեմք եղցա զանէ իւր. թեպէր ժիտքն է.
- գ. որոշել տեղի ազգարան քրիստոնէից:

ցի մանուկն. և հոգային զհոգս թագաւորականս և զքրիստո-  
 նէութիւն ունէին սուրբ սրտիւ. զհանապազորդ աղօթան " կա-  
 տարէին, ազգեցուցանէին յիւրեանց աշխարհն՝ զալ առ նոսա-  
 որք եկեալք՝ աղօթակիցք նոցա լինէին. և աղօթարան շինե-  
 ցին. և զոմանս ի հաւատս ածին. " որք միարանեալք օրհնէին՝  
 զԱստուած. Իսկ յեա այսորիկ աղաչեցին զթագաւորն և զմայր  
 նորա. զի արձակեսցին յիւրեանց՝ աշխարհն աեսանել զընտա-  
 նիսն է և դառնալ զարձեալ անդրէն. որոց հաւանեալ կատարէին  
 զինգիրն. և և նորա գնացեալք եկին յԱղէքսանդր. Եղբօիոս  
 գնա՞ ի տես ընտանեացն. իսկ Փռումէնտիոս մնայր անդէն և  
 ծանուցանէր Աթանասի սուրբ հայրապետին՝ զոր ինչ

- ա. Ա՞ Գ. Գ. ազգոս: բ. Ա՞ իւրեանց իւր՝ առնալ զայլ: գ. Գ. որ  
 եկեալ. զ. Գ. ածէին. է. Ա. Գ. օրհնէ. զ. Ա՞ իւրեանց. է. Ա՞ զմասնիւն.  
 ը. Գ. զնայն եկին. բ. Գ. Ա՞ Գ. գնաց. ժ. Գ. ա. հայրայ. փոխ եպիսկոպոսիմ՝

զունիւք եպիսկոպոսութեանն արժանաւորեցելոյ. զամենայն իրն ծանուցանելով ուսուցանելով՝ իւր զտարաշխարհութիւնն և որպէս զի յոյս ունին Հնդիկք զքրիստոնէութեանն ընդունել, և որպէս զի արձակեալ եպիսկոպոս և ուխտ և մի՛ երբէք անտես առնել զկարողսն ապրիլ: Իսկ Աթանաս ի մի՛տ առեալ զկատարեալ յարձակումն Փռոմէնտիոսի՝ իսկ զեպիսկոպոսութիւնն ընդունել յորդորէր ասելով. ոչ ունելով պատեհագոյն քան զնա: Իսկ այս լինի: Փռոմէնտիոս արժանաւորեալ եպիսկոպոսութեանն, նոյնժամայն ի Հնդիկս երթայ. և քարոզ քրիստոնէական բանին եղեալ աղաւթարանս բազումս շինէ: Արժանաւորեալ և աստուածային շնորհին. վասն զի բազում նշանս Աստուած ի ձեռն նորա արար. և զբազմաց հանդերձ հոգւով և զմարմինս բժշկէր ի փառս Աստուծոյ: Իսկ զայս Ռուփինոս վասն Եդէսիոսի ասէ, որպէս զի և յետոյ նորայ արժանաւորեալ քահանայ ի Տիւրոս լսէ:

միանգամ դիպեցան. և զայն ևս. զի չէ արժան վասն աշխարհին՝ աչն անփոյթ առնել՝ զհաւատս: Իսկ իբրև լուաւ զայն սուրբն Աթանաս զնոյն ինքն Փռոմենդիոս յորդորէ՞ յեպիսկոպոսութիւնն՞ աշխարհին շնորհաց. զի ընդ հոգևոր մշակսն վարձս՝ ասցէ ի քրիստոսէ. Եւ անդէն յազգմանէ սուրբ հոգոյն ձեռնադրէ յեպիսկոպոսութիւնն՞ զՓռոմենդիոս. որ անդէն վաղ վաղակի երթեալ քարոզեաց զաւետարանն. հանդերձ քահանայիւք. և որ ընդ իւր տարաւ. և և յօժարութեամբ ընկալան թագաւորն և ամենայն աշխարհն. որ ի հաւատարիմ յառնէն բարոյեցաւ. և շինէր եկեղեցիս.՝ և և միծանայր անուն Տևաոն բազում նշանիւք և զօրութեամբք՝ զոր ցոյցանէր ատէր՝ ի ձեռն նորա յաշխարհին. ի որ և նդեսիոս նոյն

ա Ա՛ զ եպիսկոպոսութիւնն: բ. Դ. վարս. Գ. Ա՛ եպիսկոպոսութիւնն Գ. Դ. քահանայիւք. Ե. Դ. բնալ. Զ. Գ. զեկեղեցիս. Դ. եկեղեցիս Ե. Ե. Դ. գործեամբ. բ. Դ. գործ արար Աստուած. Ժ. Դ. Գ. աշխարհիւք. Ժա. Դ. ի շնորհիւք. Ժբ. Դ. երկոցոց. Ժգ. Դ. նստատար քիւն. Դ. նստատար քիւն:

ԳԼ. Ի 4:

Բայց ի դէպ է արդէն ասել, թէ որպէս Վիրք ընդ նոյն ժամանակաւն քրիստոնէացան: Աին՝ ոմն վարս պարկեշտս և զգաստս ունելով, աստուածային նախախնամութեամբ ի վրաց գերեալ լինէր: Իսկ վրացիքս այս բնակեն յԵւքսինոս Պոնտոս. բայց զայն են յայն վրաց

1. Տես Ռուփին. 2. 10. Սողոմ. Բ. 7. Թէոդ. Ա. 24. Նիկիոյ. Ը. 35. Մ. Խորեն. Բ. գ. 22:

2. Սոկրատի պատմութեան այս կտորը շատ հետաքրքրական է Մ. Խորենացու պատմութեան համար. Մանրամասնութիւնը յառաջաբանի մէջ էրստ սովորութեան կտորներն ենք դնում իրար հանդէպ դիւրութեամբ բազմաթիւ համար. Ակներու է համառոտ Սոկրատի նմանութիւնը Խորենացու հետ: Տ. Խոր. Բ. 22. « Կիև ոմն անուն Նունէ յընկերաց Սրբոց Հրեկիսիմեանցն ցրուելոցն փախստեամբ հասեալ յաշխարհն վրաց ի Մըծիկիթայ. ի նոցա քաղաքն եսխագան. յոյժ ճգնութեամբ ստացեալ շնորհս բժշկութեան. որով եւ զբազում արտաժեշտս բժշկեալ եւ գլխովին զինն Մէհրանայ առաջնորդին վրաց . . . »

Նոյն պատմութիւնն ունի վրաց պատմագիր Զուանշիրը. բայց աւելի ընդարձակ եւ ծաղկեցրած (Տ. Հրատ վենետ. 1884 էջ 44 եւ հետ):

Չնորհի արժանի եղեալ գայ ի նոյն քարոզութիւն ի Հնգիկոս = և յերկոցունց՝ հաւաստութենէ՞ հաւատոյ փառաւոր լինէր Աստուած:

ԳԼ. Ի Դ.

Քոչուսն վրաց ի հաւատոս ֆրիստոսի ըստ նախախնամութեան Աստուծոյ ի ձեռն կնոջն Նունիայ, ընկերաց սրբուհոյն Հովփոյիսի եւ կանկնելի զխաչս:

Ընդ նոյն ժամանակս և վրացի լինի կոչումն ընծայութեան հաւատոյ՝ ըստ նախախնամութեան: Աին ոմն լի պարկեշտութեամբ զաստուածային վարս ստացեալ ունէր: հալածեալ վասն ֆրիստոսի գա ի վիրս՝ ի քաղաքն՝ նախագահ, ուր էր թագաւորն

= Գ. Գ՝ աշխարհի. Բ. Գ. զի անփոք առե՛ գնատոս Գ. Ա՝ Գ յորդոյր. Գ. Ա՝ ի վրաց. Ե. Ա՝ հաստոց. Գ. Գ. քաղաք:

ցեացն, որք ի Սպանիայն: Իսկ գերեայն կին ի միջի բարբարոսացն կալով, իմաստասիրէր: Քանզի էր հանդերձ բազում ճգնութեամբ պարկեշտիւ և պահովք խորագունիւք և անձանձիր կայր յաղաւթս, իսկ զայս սքանչելիսս տեսանելով բարբարոսացն ի գործողէն, սքանչանային: Ապա պատահէր նոցա թագաւորական մանգան միոյ տղայոյ ի հիւանդութիւն անգանել: Եւ սովորութեամբ իւրք ի գեաւդն առ այլ կանայսն կին թագաւորին զմանուկն առ ի բժշկութիւն առաքէր, եթէ ուրեք ինչ դեղ առ ախտն ի փորձականութենէ մատուցանել մանգանն: Իսկ իբրև շրջեցուցեալ լինէր մանուկն ի դաեկէն իւրմէ և ոչ և ի միոյ ումեքէ կանանցն բժշկութեան հանդիպէր. յետոյ ապա տծին և առ կինն գերեայ: Իսկ նա առաջի բազում կանանց վայելչաբար զգեզն մատուցանէ. " զի և ոչ գիտէր ինչ. այլ

... ὄλιγον μὲν βοήθημα προέφερον οὐδέν և. և. ոչ մատուցանէ գեղ ճիւղափակ:

1. Տ. Պատմ. Վրաց էջ 54. • Յաւուրն յայտարի կին ոմն շրջեցուցանէր զմանուկ ախտացեալ անբժշկելի ցաւք. թերեւս թէ գտցէ զքապարեցուցի տղայոցն՝ հնարիւք դեղոց . . . տարաւ ընկեց մանուկն առաջի սրբոյն Նունեսայ. . . Եւ եղեալ զտղայն ի մահիճս իւր խաչակնքեաց ասելով. Աստուած իմ Յիսուս բժշկեա զմանուկ. . .

Վրաց, Այս ոչ այն Վերք են որք " ի Սպանիայն, այլ ի կողմն Բհիւսիսոյ մերձ ի Պոնտոս: Եւ կինն " ի ուէջ բարբարոսաց " ընկէր լի պարկեշտութեամբ ճգնաւորեալ պահօք և աղօթիւք, պաշտէր զԱստուածն երկնի և երկրի " և զարմացուցանէր զբարբարոսն: Ապա լինէր մանկան տղայոյ թագաւորին հիւանդանալ. կինն հրամայէր դայեկին շրջեցուցանել զմանուկն ընդ կանայսն թէ գտցի դեղ ինչ. և ոչինչ գտեալ. է գա առ հալածեալ սուրբ կինն: Ե Իսկ նորա " զմանուկն ի գիրկս իւր եղեալ առաջի բազ-

... և. Գ. որ. Բ. Գ. հողմք: Ա՛ է. սա ի հողմե. Գ. Գ. կին. Գ. Գ. Գ. բարբարոսացն. Ե. Գ. յերկր. Գ. գրաբարաոս ազգն. Ե. Գ. գտեալ ազտութեան. Զ. Գ. աղիւքն. Բ. Գ. ևս:

ընդարեալ ապա զմանուկն և ի մազեղէն իւրում անկողին եղեալ՝ ասէր պարզաբար. Քրիստոս, ասէ, որ զբազումս բժշկեաց և զայս մանուկս բժշկեացէ: Եւ ազաւթել այսու բանիւ և կարդացեալ զԱստուած, առ ժամայն մանուկն առողջանայր. և կեայր յայնմանէ բարուոք: Իսկ հռչակ աստուատ կանանց բարբարոսաց և կնոջ թագաւորին ընթանայր և յայտնազոյն լինէր գերեալն: Յետ բազում ինչ իրի և կին թագաւորին անկեալ զնէր ի հիւանդութիւն ինչ. 1 և զկինն զերեալ կոչէր. իսկ նորա հրաժարեցելոյ ոչ ելանել ի չափաւորեալ իւր սովորութենէն, այլ ածեալ զնա և առնէր նմա զոր արար ի վերայ մանգանն յառաջագոյն. և նոյն ժամայն անտացեալն բժշկէր և գոհանայր զկնոջէն: Իսկ նա ասէր. ոչ իմ գործս, այլ Յիսուսի Քրիստոսի՝ զաշ-

1. Տ. Պատմ. Վրաց էջ 55. « Ընկաւ թագուհին հանա յախտս անբժշկելի եւ տարեալ եգին զնա (ղթագուհին) ի մահիծան հունեայ. եւ նորա աղօթեալ յերկար եղ. զիսան ի վերայ նորս չորեքկուսի. եւ նոյն ժամայն նստաւ ողջացեալ ».

ձութեան ի հանգեղծս մազեղէնս զոր ունէր. և ամբարձ զաշնս՝ յերկինս՝ և պարզ նոցա բարբառով նասէ. 2 Քրիստոս Աստուած, որ զբազումս բժշկեցեր, բժշկեա զմանուկս զայս յանուն 3 քո. զի ծանիցեն 4 սոքա. թէ դու ես Աստուած. Եւ կնքեաց 5 նշանաւ խաչին զմանուկն և իսկոյն առողջ եղև. և ետ անդէն ի դայեակն. և տարաւ առ մայր իւր. և պատմեաց որ ինչ եղև. 6 Եւ զարմացաւ և ել հռչակ զնմ. նէ ընդ ամենայն երկիրն Առաց: Եետ ոչ բազում ինչ աւուրց հիւանդացաւ և կին թագաւորին և կոչեաց զսուրբ կինն. և նա ոչ կամեցաւ երթալ յապարանս թագաւորին. այլ ածել զնա յիւր 7 տառապալապետ 8 անիին. Եւ իբրև ածին յարուցեալ կայր՝ յաղօթս առ տէր, և զնոյն բանս 9 ասաց. և կնքեալ նշանաւ խաչին. և իսկոյն ողջացեալ 10 յարեաւ զնաց և պատմեաց թագաւորին զեղեալսն. և առաքէ

ա. Գ. զայս իւր. բ. Ա՛ Գ. ի յերկինս. գ. Գ. ասէ. զ. Ա՛ Գ. Ա՛ անուև. ե. Գ. ծանիցեն. զ. Գ. կնքեալ. է. Գ. երևև. ը. Գ. Ա՛ ի յիւր. բ. Գ. տառապեչ Ա՛ Գ. տառապեալ. Ռ. յիչ. ժ. Գ. եկաց. ժա. Գ. բանև. ժբ. և. ողջացաւ յարուցեալ

յարգարէր

խարհս արարողի: Զսա կարդալով յարգարէր ճշմարտիւ զԱստուած ճանաչել: Իսկ սքանչացեալ թագաւորն Վրաց վասն զառ ի հիւանդութենէն առողջութիւն վաղվաղակի փոփոխութեամբ. և հարցեալ թէ ո՞վ է որ բժշկեացն. պարգևս գերելոյն թագաւորն առաքէր: Իսկ նա ասէր: ոչ հայել ի մեծութիւնն. քան զի ունէր մեծութիւն զաստուածպաշտութիւնն և մեծամեծս ընդունել պարգևս զի ծանուցէ զԱստուած զառ ի նմանէ ծանուցեալն: Զայս ասելով նորա զպարգևս անդրէն առաքէր: Իսկ թագաւորն զքանսն շտեմարանէր: Իսկ յետ աւուրց բազմաց ելանել նորա յորս պատահէ այսպիսի ինչ. զկատարսն ամենայն և զգաշտսն, ուրանաւր որսն, ունէր միգային խաւար բազում. քանզի անապատ էր որսն և անանցանելի ճանապարհն և յանհնարութեամբ բազմի եղեալ, կարդայր առ Աստուածն, զոր պաշտէրն, և որպէս ոչինչ լինէր ուռա-

1. Տ. Գ. Վ. էջ 58. Վրաց պատմագիրը մասամբ սարքեր է պատմում թագաւորի հետ պատահած անցը: Նա առաջուց արդէն հաւատացել էր քրիստոսին. որսի ժամանակ միտքը մոլորում է եւ իսկոյն ստուգում է ճանապարհը կորցնելով յանկարծակի միգով ծածկուած լեռների մէջ եւ ապա զղջալով ազատուում է եւ վերջնականապէս ընդունում քրիստոնէութիւնը: Խորհնացին յիշու ալ գլխում նման է Սոկրատին. բայց ոչ այնպէս բառացի ինչպէս նախկինացում:

Թագաւորն պարգևս բաւումն շնորհալից՝ կնոջն. Իսկ նա անդէն՝ Գարձուցանէր զպարգևսն: Ասէ. իմ պարգևատու է քրիստոս Աստուած զոր պաշտեմն. որ ընու զպետս իմ որպէս կամի. Իսկ թագաւորն սքանչացեալ շտեմարանեալ զայս ի միտս իւր ոչ մոռանայր: Յետ աւուրց ինչ ելանէ՝ յորս թագաւորն. Պատահէ նմա այս ինչ. ունէր միգային խաւար, ուր էր որսն, զլերինս և զգաշտս, զի անապատ էր և անանցանելի էր ճանապարհն, և յանհնարութեան՝ եղեալ կարդայր զԱստուածս իւր, է և ոչինչ՝ օգտէր: Գարձեալ մտախորհ եղեալ

ա. Ա՝ յեռնայի. բ. Ռ. Գ. անգլիէ. գ. Ռ. Գ. պարգեւատուսն. գ. Գ. պաշտեմն. ե. Գ. էլաներ. գ. Գ. անհնարութիւն. գ. Ա՝ անհնարութեան. ե. Ա. խորեանց. ը. Գ. ոչ:

նել. յետոյ ապա մտախորհ լինէր. զԱստուած գերեցելոյն առնու և զսա կարդա աւգնական. և ի յաղաթելն ի միգէն խաւարն լուծանի: Եւ սքանչանալով ընդ եղեալն ուրախութեամբ ի տուն իւր երթայր. և զպատահումն պատմէր կնոջն իւրում: Եւ զգերեալն կոչեալ հարցանէ, թէ ո՞վ է Աստուածն, զոր պաշտես. իսկ նորա յանդիման եկեալ քարոզ Քրիստոսի զթագաւորըն Արաց արար: Քանզի հաւատացեալ ի Քրիստոս ի ձեռն բարեպաշտ կնոջն. այլ և զորս ըստ որոցն պատմեալս յորդորէր զնոսա զԱստուած գերեցելոյն պաշտել: Եւ լինէր այսուհետև իւրաքանչիւր ոք քարոզ Աստուծոյն բանի, թագաւորն արանցն. իսկ կինն կանանցն. ուսեալ ի կնոջէն և զձեռ եկեղեցեացն Հռոմոց. տուն աղաւթարանի հրամայեաց շինել. և նոյն ժամայն ի շինումն պատրաստ էր: Եւ տունն կանկնեալ

կոչել զԱստուած յօգնութիւն = զոր հալածական? կինն պաշտէր, և եթէ նովաւ լինի ելք խաւարիս. պաշտեցից զնա. Եւ ասէ. օգնեալ ինձ Աստուած կնոջն, որ վասն յո հալածեալն է. Եւ անգէն վազվաղակի լուծանէր խաւարն. և գնայր? զձանազորհն ի տուն ըւր ուրախութեամբ և օրհներ զԱստուած: Եւ եկեալ պատմեաց կնոջն իւր? և նախարարացն զեղեալ իրն. Եւ սքանչանային. Եւ աղաչեալ զկինն կոչեաց ի տունն իւր. իսկեցաւ ընդ նմա. թէ ո՞վ է Աստուածն զոր պաշտես սքանչելիք: Իսկ նա սկսեալ ի գրոց՝ աւետարանեաց նմա զՔրիստոս Աստուած Փրկիչ? աշխարհի առաջի ամենայն բազմութեան. և հաւատացին ասացելոցն ի նմանէ. Բազում և այլ նշանս եցոյց Յէր ի ձեռն սուրբ և պարկեշտ կնոջն. Եւ լինէր այնուհետև թագաւորն է արանցն քարոզ. և կինն Բ կանանցն ի նրմանէ վարդապետեալք. որ ի փառս Աստուծոյ. Եւ հրամայէր ուրեմն կանգնել զնշան խաչին Քրիստոսի. [և զի ոչ էր գործ

ա. Գ. յօգն-կանուրիս. բ. Գ. հալածեալ. գ. Ա՛ զնա. դ. Գ. կնոյ իւրոյ. ը. Գ. բազմութիւն. զ. Գ. զփրկիչ. է. Ա՛ յազաւորիս. ը. Գ. արանց. զ. Գ. Կն. Կն. Կն.

լինէր, և իբրև զսիւնն կանկնէին համբարձեալ լինէին, տնտեսութեամբ ինչ առ հաւատն զբնակեալսն քարշէր նախախնամութիւնն: Քանզի մինն ի սեանցն անշարժ մնայր. և ոչ մի ինչ գտանէր մեքենա կարել շարժել զնա. այլ և փոկքն կտրեալ լինէին և մեքենայքն տնկեալ. ապա անյոյս եղեալ գործողացն զնացին: Եւ յայնժամ ցուցանի հաւատ գերեցելոյն. քանզի գիտացեալ հասանէ ի տեղին և զգիշերն ամենայն յաղաւթս պարապեալ: Նախախնամութեամբն Աստուծոյ կանգնի սիւնն և բարձրագոյն զսարիսին յաւդսն հաստատէր. ոչ իրիք ի ծայրն հպեցելոյ: Իսկ ի տուրնջեանն կայր թագաւորն ի վերա շինածին հոգ տանելով, և տեսեալ զսիւնն ի յիւրմէ կախեալ՝ զարմանայր ի վերայ եղելոյն. պքանչանային և որք առ ընթերն կային. քանզի յետ սակաւ ինչ ի յայտ նոցա բնքեամբ շարժմամբ իջեալ սիւնըն հաստատէր: Գոյումն բազում աստուատ հետեւեցաւ մարդկանն. Ճշմարիտ զհաւատ թագաւորին վերակոչեցելոյ և աւրհնելով զԱստուած գերեցելոյն: Ապա

Այս հրաշքի մասն սես Պատմ. վր. էջ 80:

Ճարտարի. արհամարեալ լինէր ի բազմաց. իսկ սուրբ կինն կայր յաղթմս զգիշերն ամենայն և ի վաղիւն լուսաւորեալ լինէր նշան խաչին, որ հիացոյց զհեռաւորս և զմերձաւորս. և հաստեցան ի հաւատս:]<sup>1</sup> Յայնժամ հրամայէ շինել տուն աղօթից. և ոչ յապաղեն՝ առնել զստացեալսն: Եւ գործաւորքն ոչ կարէին կանգնել զսիւնս՝ աղօթիցն մեքենայիւք իրիք, և բազմութեան՝ հանգերձ թագաւորան, թէպէտ և բազումս մրցեցան և ոչ կարացին կանգնել: Իսկ սուրբ կինն կացեալ ի տեղւոջն կայր յաղթմս. և իսկոյն սիւնքն կանկնեցան ի վերայ խորըսիացն առանց մարդոյ և մեքենայից: Աղաղակեաց ամենայն բազմութիւն՝ Ճշմարիտ զԱստուած կնոյն խոստովանեալ է և մեծ գոլ զհաւատ թագաւորին և տիկնոջն: Եւ մեծամայր

ա. Գ. ի նաստան. բ. Գ. յապաղէին. գ. Գ. զստացեալն. գ. Գ. զսիւնն  
 մ. քնեացեալ խաչն. ն. Գ. և ի բազմութեանք. Դ. բազմ. արեանք. գ. Ա՛ չիք.  
 Ա՛ Գ. կանգնել լիք. է. Գ. բազմութեան. ը. Բ. խոստովանել. բ. Գ. զտիկնոջն:

հաւատացեալք յաւժարութեամբ բազմաւ նա և զայլ սիւնան կանկնէին. և ոչ ի յերկարս ինչ նոցա գործն կատարէր: Եւ բարէխաւսութիւն աստուսա առ թագաւորն Կոստանդին լինէր. աղայելով զաշնաւորք անտի յառաջ Հռոմայեցւոցն լինել և առնուլ եպիսկոպոս քահանայական վիճակ. քանզի ստուգապէս հաստատլ ասեն Քրիստոսի: Չայս ասէ Ռուփին ի Բաղրայ՝ լսեալ. որ յառաջ էր թագաւոր Վրաց, իսկ յետոյ եկեալ ի Հռովմ կարգապետ՝ որոց ի Պաղեստին զաւրուցն եղեալ և յետայսորիկ զաւրավարացն. որ ընդդէմ Մաքսիմոսի բռնակալի պատերազմն՝ Թէոդոսի թագաւորի համաջանաւ լինէր: Այսու պատճառով ի ժամանակն Կոստանդնի և Վիրք ի քրիստոնէութիւն եին:

- ταξίάρχος

1. Չորեմոք վկայումէ. որ այդ Բաղրը ազգաւ հայ էր եւ յայտնի էր իւրամանկութեամբ և պատերազմական գործերով: Բայց Ռուփիոսը (Պատ Ա. գլ 10) ասումէ. որ նա Վրացի իշխան էր. հաւատարիմ եւ պաշտպան կրօնի եւ ճշմարտութեան. կարծումեն որ Մոս. Խորենացուց յժուած (Գ գլ Գ - է) Ողմեաց բզեշխ Բաղրը այստեղ յժուածն է:

2. Սեկրտը սխալումէ. Բաղրը ոչ թէ կուտւմ է Մաքսիմոսի դէմ յարուցած պատերազմում. այլ Եւզեմիոսի դէմ:

«Ինչու՞ն՝ ճեառն: Աստուսա լինի գաշնաւորութիւն Վրաց առ Քոստանդիանոս, որպէս զի առաքեացէ նոցա եպիսկոպոսս և քահանայս, որ զկարգ եկեղեցւոյ՞ ի նոսա հաստատեցեն ? [ըստ առաքելուհւոյ կնոջն քարոզութեան. որում անուն ? էր նաւնի, յընկերաց սրբոյն Հռիփսիմեա, որ ի Հայս կաաարեցաւ: Թողում ասել որ յաղագս նորա է պատմութիւն և հաւատալն Հայոց մեծամեծ՝ սքանչելեօք ի ձեռն ? Գրիգորի Պարմեի խոստովանողի, որ՝ ստոյգ ցուցանէ նորին գիրք: Եւ այս ամենայն լինէր է ի նոյն ամս:՞ ]

« Ա՛ յանան Գ. անան Գրիստոսի. Բ. Գ. եկեղեցւո Գ. Գ. ուղղեցե Գ. Գ՝ անուսն. է. Գ. մեծաբ մեծ սքանչելեաչ. Գ. Գ. սրբոյն. է. Գ. որպէս. Բ. Գ. յեի. Բ. Գ. ամբն:

ԳԼ. ԻԱ.

Իսկ թէ ո՞վ էր առ այն ժամանակաւքն միայնն Անտոն՝ յանապատին Իզիպտոսի կելով և որպէս զի յայտնապէս դիւացն ընդդիմամարտ լինելով, գտանելով զառուեստ և զնենգութիւնս նոցա. և որպէս արար նշանաբազումս աւելորդ է մեզ ասել. քանզի էհան Աթանաս Աղէքսանդրացեաց եպիսկոպոսն ի միազիր մի բոլորովեմէ՛ զնորա վարսն եղեալ. այսպիսի բարեաց բերէ. բերութիւնք ի ժամանակսն Կոստանդնի լինէր:

ԳԼ. ԻԲ.

Այլ ի մէջ ցորենոյն Քրիստոսի՝ սովորութիւն և որոման բուսանին. քանզի նախանձ ի բարիսն դարանազործեալ սիրէ. քանզի առնութեր բուսաներ յառաջ

— Գրիտոսի բնագ. խրհիստո; օրարոյ; քարգմանք չիտբէլ Ե:

Յես Սողոմ. Ա. 13. Բուպին. Ե. 8. Կապուզ. Ա. 11. 54. Եկեօփ. Ա. 48.

ԳԼ. ԻԿ.

Յազուպ Անտոնի անապատականի պատմութիւն եւ վարք:

Էր և Անտոն անապատական յանապատս՝ Եզիպտացւոց մեծամարտեալ՝ ընդգէմ՝ դիւացն ի պատերազմ.՝ և յաղթեալ և յաղթող լեալ՝ առ նոցա նանրութեան հնարքն. և յուզեցոյց նշանս և սքանչելիս այրն Աստուծոյ սուրբն՝ Անտոն անապական.՝ որպէս նորայն իսկ ցուցանէ է գիրք զոր գրեաց Է երանելին Աթանաս յուզվից իրաց՝ տեսող և լսող, որ աւելորդ է զնորայն պատմել:

Բայց զժամանակն՝ բարւոյ յուշ արարի. այլ ի մէջ ցորենոյ ստոյգ հացի՝ Քրիստոսի և որոմն բուսուցանէ թշնամին ար-

— Կ. Գ. յանապատս. Գ. Ա՛ մեծամարտեալ. Գ. Ա. Գ. պատերազմ. Գ. Գ. ցածուլ. Ե. Ա՛ սուրբ. Գ. Բ. անապատական. Ե. Ա՛ ցուցանէր. Ը. Գ. գրեալ ես Գ. Գ. ցորովից իսկ տեղոյ եւ լսող ելեալ որ յանելորդ . Ժ. Գ. ժամանակն:

ի ժամանակն ի ճշմարիտ քրիստոնէութեանն քրիստոնեա նման հեթանոսութիւն. որպէս և ի մարգարէսն սուտ մարգարէք. և յառաքեալսն սուտ առաքեալք առ ընթեր բուսանէին: Քանզի այսքան էր, որ յինպեղովղէսէ առ հեթանոսն իմաստասիրի աւրէն ի ձեռն Մանեա զքրիստոնէութիւնն կեղծաւորէր. յաղագս որոյ Եւսեբրիոս Պամփիւլեա յեւթներորդ պատմութեան եկեղեցականին յիշեաց. այլ ոչ ստուգարար պատմեաց: Ատոն որոյ զմնացեալսն ի նմանէ վերստին ընու կարևոր համարիմ. քանզի ծանուցի թէ ով յորոց Մանիքէոս՝ և թէ ուստի զայսպիսիս յանդգնել ձեռնարկեաց: Սկիւթացի՝ ոմն տաճիկ կին ունէր գերեալ ի վերին Թեբայոյ. և զի էր յըգիպտոս բնակեալ, և զըգիպտացեացն ուսեալ խրատ, զԵմպէղովղիսին և զՊիւլ-

տ. Σχυσθαιονός ցի Եւանակի Սկիւթացի. ալ այդ անձի յստուկ առնն է. Սկիւթիանոս:

գորութեան. որպէս առակն՝ Յեառն ցուցանէ. որ յեա այսորիկ բան. որպէս ի մարգարէսն Աստուծոյ՝ սուտ մարգարէս՝ առ ձեռն պատրաստէր. նոյնպէս առաքեալսն՝ Քրիստոսի սուտ առաքեալս այսպէս և առ ստոյգ վարդապետն. հերձուածս կորստեածս առնէ. յեա ամենայնի ինքն նեռն գայ հախուակ Քրիստոսի: Եւ յաղագս այսորիկ զգուշացուցանեն աստուծային զիրք. մանաւանդ նոյն ինքն Քրիստոս. որպէս և յուետարանն՝ քարոզի Ասացից և վասն Մանիքեցւոյն. որ զքրիստոնէութեան անուն ստութեամբ ունին:

ԿԼ. ԻԵ.

Յարսոս Մանիսայ եւ առասպելական բանիցն եւ սատակումն նորին:

Սկիւթացի ոմն տաճիկ կին ունէր. և բնակէր յԵգիպտոս. ուսանէր զնոցա արուեստէ և զՊիւլթագարայն և կարծիս թ

ա. Ա՞ Գ. Դ. առակ. բ. Դ. այսորիկ ցուցանէ բան. գ. Ա՞ մարգարէն այդ մեծ. Դ. Խառնեոյ մեծ. Գ. Ա՞ Դ. առ առաքեալսն Բ. յառաքեալսն. Ե. Գ. յուետարանն. Գ. Բ. ուսուցանէր. Ե. Դ. զարուեստն. Ա՞ զնոցա արուեստը. Ա՞ Բ. զԹագորայն. Գ. Զիպիգորայն. Բ. Դ. կարծիսն:

Թագորայն կարծիս ի քրիստոնէութիւն ածել. էմիջ երկուս բնութիւնս ասելով. զբարի և զչար. որպէս և Յնպէզդոկղէս. յաղթութիւն՝ անուանելով զչար. իսկ սէր զբարին: Այս Սկիւթացոյս աշակերտ լինի Բուզան յառաջ Սիսեոն՝ կոչեցեալ. որոց ի Բարեկացեաց աշխարհն զիմեալ որ ընդ Պարսկաւքն՝ բնակի: Բազում ինչ յաղագս ընքեան առնէր նշանս. ասելով ի կուսէ ծնանիլ և ի լերին սնանիլ: Ապա շարագրէ գիրք չորս.՝ զմինն անուանեալ խորհրդոց. իսկ զմիւսն աւետարան. իսկ զերրորդն գանձ. և զչորրորդ զգլուխսն: Եւ նուէրս ինչ առնել ձևացուցել՝ ապա հարեալ

ա. Բնագ. ՎΕΙΧΟΣ երկաստուորիւն. և այրերէի յարտարիւն բառը միւսը յետոյն:

բ. Բնագ. այդ անուանը գրած է Τερέβινθος: Երէ այդ յատուկ գրեանք իջրեւնասարակ բարգմանեց. որ է Լ Ե Կ Ե Ի Ե Ժ. Կ՛ընաւի: Իսկ Սիսեոն. յոմարեւն 'Ερέβινθος բառն է:

գ. Ի պարսկաց պետքէ լիքի նո՞ք Ρερωών οίκαίται շեղ. ի այդ մշտնաջող գործարարիւնը անուանը է:

դ. τελευτάς δέ τινας ποσίν σχητιζόμενος սիւն: Գաղտնի իմե վարդապետարիւն խորհրդ ստեղծել:

1. Եպիփանը եւ Կրիլը զկայումսն. որ Սկիւթիւնն է գրում այդ չորս գրքերը Յունարէն. Տերեբինթոսը Թարգմանում է արեւելեան լեզուներով. իսկ Մանէսը նոյն գրքերը Ժառանգութիւն ստանալով փոփոխում է:

Ի քրիստոնէութեան ցոյցս ածէ՝ զինքն. և երկուս բնութիւնս մտածանէ. բարւոյ և չարի: Սորա աշակերտ լինի Բուրտոս. զոր յառաջ՝ Սիսեոն կոչի: որոյ ի Բարեկացեաց յաշխարհն գիմեալ որ ընդ պարսկաւքն բնակի: Բազումս ցուցանէր. ի մոգութիւնս և ասէր՝ զինքն ի կուսէ ծնանիլ և ի լերին սնանիլ: Եւ շարագրեաց գիրս չորս և անուանեաց զմինն խորհրդոց և զմիւսն աւետարան. զերրորդն գանձ. և չորրորդն՝ գլուխատարայտէս և նուէրս ինչ առնել՝ ձևացուցեալ. զ և անդէն այսա-

Այլ այս ոչ երբէք լինելո՞ւ քանզի զաւրագոյն էր ընդդէմ Այեաի ատելութիւնն, քան զփոյթն Եւդոքսիոսի: Բայց ոմանք յարեւելականացն յԱմինոն ժողովեցան ըստ Աթանասայ. լռեալեացն առաքեալք յազազս հաւատոյն միաբանիլ ասէին. յորոց փոյթ զուգեալ լինէին Ուռսակիոս և Վաղէս որք նախ զարիտաուութեանն ունէին զաղանդ. ապա զհամագոյութեանն Խոստովանեցան ի ձեռն տուեցելոյ գրոյն եպիսկոպոսին Հռովմայ, <sup>1</sup> զի միշտ սոքա առ զաւրագոյնան խոնարհէին: Զուգէին ընդ նոսա ապա և այլք որպէս զի ապա ի ժողովուն որոց մերձն. այլք այլ ինչ առաջի արկանելով զումարէին: Այսքան որք Ուռսակայն և Վաղենտին զոր ընդդէմ ասէին նախկին յազազս հաւատոյն կարգաւորութեանն, զոր փոքր ինչ ի Սիռիմ ժողովեալքն արտադրեցին: Զայս ասէին և զքարտ գրոյն ունելով տային ընթեռնուլ. քանզի ի Սիռի որպէս և նախկինն ասացի շտեմարանեցին, բայց անդ Ամինոն յայտնեցին: Իսկ այսորիկ ընթերցելոյ յարուցեալքն, որոց ոչն այս եղև հաճոյ. մեք ասեն ոչ հաւատոյ կարաւտեալք ժողովեցաք աստանաւո՞ւ վասն զի ողջ պահեմք զոր ի սկզբա-

1 Բնագիրը գործնալ կրճատ է Թարգմանուած եւ բաց է Թողնուած նոցա գրութիւնը Հռովմա եպիսկոպոսին:

Ոչ կարէր ածել որպէս կարծէր, այլ յամենայն ուրեք մարտ և հակառակութիւն և ոչ կարաց զժողովն " ի կամօ իւր առնել այլ Բ և ոչ գագարէր յայնցանէ, որոց յուսայր, <sup>2</sup> և զի երկայնագոյն է ըստ ժամանակին պատմել զփիճմունս եպիսկոպոսացն ի ժողովրդոցն զասելս և զլսելս վասն հաւատոյ, <sup>3</sup> ըստ Արիոսի

ա. Որպէս կարծէր զժողովն. Բ. Ա. Բ. Ն. շունի այս նախադասութիւնը. գ. Դ. յուսայրն. Բ. Ա. յուսար. Ն. ուսար. դ. Ա. Բ. Ն. շունի. ժ. Ա. հաւատոց:

նէն առաք, այլ զի թէ առ այն ինչ լիցի հատուճն նոր՝ արգելցուք: Իսկ արդ եթէ ընթերցեալդ ոչ ինչ հատանէ նորագոյն յայտնապէս այժմ՝ զարիանոսականն նզովեցիք հերձուած, ըստ որում աւրինակի և զայլ հերձուածսն հինն կանոնն որպէս զհայհոյիչս էհան. քանզի հայհոյականն աղանդ Արիոսի շարժեաց զիսառնակն ընէս եկեղեցւոյն, և զոր մինչև ցայժմ եղեալ խռովութիւնսս, և զայս յայտնի կացոյց տիեզերաց: Իսկ այս պատճառոյս յորոց Ուռսակայն և Վաղէնտին, Գեռմինիոսին և Աբսէնտին և Դիմոփիլին և Գայ[ր]ոսին ոչ եղեալ ընդունելի կատարելապէս կորզեաց զեկեղեցին. քանզի սոքա յայնժամ յԱռմինոնի ընթերցեալսն յաւելուին, բայց որք զՆիկիոյն հաւատ հաստատեցին առժամայնն: Ծաղր արարին և զնախադիրսն ընթերցմանցս, մանաւանդ Աթանաս որով և առ իւրսն ծանաւթս գրեալ ասէ բազում ինչ: ա Բայց այս գիտելի է զի ժող(ով)ն ընդեաց զորս Վաղէնտին և Ուռսակայն և այլոցն. քանզի զարիոսական չարափառութիւնն նզովել յանձն ոչ առին: Վասն որոյ զայրագնեալք ի նզովիցն առժամայն ցթագաւորն ընթացան տանելով զընթերցեալ ի ժողովուն զգիր հաւատոյն. բայց ժողովն զճանմունսն յիւրմէ յայտնեալս կարգեաց թագաւորին և առաքեաց ի ձեռն եպիսկոպոսաց: Իսկ ապա որք Ուռսակայն և Վաղէնտին հասեալք նախ մասնին զժողովն ցուցեալք զոր տանէինն զհաւատոյն կարգադրութիւնն, ք իսկ թագաւորն ի նախկին ըմբռնմանէն յԱրիանոսի կարծիսն շինալով, զայրագնէր ընդդէմ ժողովոյն և զորս Վաղէն-

ա. Բնագրում կայ Աթանասի գրութիւնը.

բ. Բնագրում կայ Սրիանոսաց կայսեր ուղղած թուղթը:

տին և Ուռսակայն պատուով ընդունէր բազանաւ վասն որոյ առաքեալքն ի ժողովոյն յամէին: ոչ հանդիպեալք պատասխանուոյ: Իսկ անագան ուրեմն երբեմն փոխանակազրեալ Թագաւորին առաքեաց ի ձեռն որոց մերն: զոր ընգալեալ ժողովուն ստէպ այլ գրէին: « Եւ փոքր ինչ յամէին ժամանակ:

Եւ իբրև ոչ արժանաւորեալ զնոսա Թագաւորին պատասխանուոյ զնաին յիւրաքանչիւրքն իւր ըստ քաղաքս իւրեանց: Իսկ Թագաւորն և յայնժամ նախագիտէր զարիանոսական կարծիսն սերմանել ցեկեղեցիսն. և զայս ունել փութացեալ պատճառս Թշնամանաց զնոցայն գնալ առնէր: արհամարհեալ ասելով զի արտաքոյ կամաց նորա լուծան: Սակս որոյ ուննց որոց Ուռսակայն որքան ինչ նոցայն թուէր հանդերձ համարձակութեամբ հակառակ եկեղեցեացն գործեալ հրամայեաց, իսկ զկարգադրութիւնն հաւատոյն ընթերցելոյ յՊտաղւոյ յեկեղեցիսն կոյս հրամայեաց առաքել չհրամայեալ ոչ կամաւղացն ստորագրեալ արտաքսիլ յեկեղեցեացն, և ի տեղիս նոցա հաստատիլ այլոց: Բայց նախ Կղիբեա ի ոսբ Հռովմա ե գիսկոպոսն հրաժարեալ ի միաբանութենէ այն հաւատոյն արտաքսիլ, իսկ ուրք Ուռսակայն և Վաղէնտին ի տեղին հաստատէին զՓիլիքս: որ էր սարկաւազ եկեղեցւոյն Հռովմա և եղև յաւելեալ ի կարծիսն Արիոսի. բայց են ուրք ասեն, թէ ոչ յաւելաւ ի կարծիսն, այլ բռնութեամբ և վշտաւք ձեռնադրիւր: Զամենայն սպա յարեմուտս նորահատեալն խռովութիւն ընդունէր, ոմանց արտաքսիլ և առաքիլ յեքսո-

ա. Բնագ. կան կայսեր գրութիւնը ժողովին եւ նոցա պատասխանը  
բ. 213երօց.

ըիս, իսկ այլոց ի տեղիս նոցա հաստատիլ: Եւ այսք լի-  
նէին ի բռնութենէ թագաւորական հրամանացն որ  
ապա և յարեւելային կողմնունան առաքէին: Բայց Ղիբե-  
ռիոս ապա փոքր ինչ յետոյ յերսորեայն կոչեցեալ զըն-  
տանին էառ զաթոռ, ի Հռոմ ժողովրդի աղմկեցելոյ և  
արտաքսեցելոյ յեկեղեցւոյն զՓիլիքս, բայց թագաւորն  
ակաւմա այսոցիկ լինէր համակարգիչ, իսկ որք Ուռսա-  
կայն գնացեալք յԽտալիա ևս յարեւելականն անցեալ  
կողմունս հասանէին ի քաղաքն Թիրակա Նիկի, և սա-  
կաւք ինչ յամեալք ի նմա ժամանակ, այլ նստուցանեն  
ատեան և զընթերցեալսն յԱռփնոն զհաւատոյն գիր  
յՆլադացի թարգմանեալք լեզու, զոր աւրինակ վե-  
րագոյնն ճառեցաւ և աշխարհալուր արարեալ, հաստա-  
տեցին վերահռչակեալք ի հաւատոյն որ ի Նիկիայ առա-  
կաւ անուանն յափշտակել զպարզամիտսն կամեցեալք  
և զՆիկիոյ հաւատսն բազմաց կարծելով ասել: Այլ ոչ  
նոցա եղև շահ իմացումնն. քանզի յետ բազում ինչ  
իրի յանդիմանեցաւ, վասն որոյ և կատարէին իսկ այ-

մոլորութեանն և ըստ<sup>ա</sup> Մակեդոնի հոգեմարտութեանն, (Զի  
Արիոսեանք բ արարած ասնն՝ զՈրդի, այլ ոչ ի բնութենէ Հօր,  
այլ հետ ժամանակի գոյացեալ, և Հայր մեծ քան զՈրդի, և  
Հոգի նուազ, ոմն քան զոմն խոնարհագոյն ի Հօրէ և յաս-  
տուածութենէն, ՝ զի թէպէտ և սուրբ ժողովն Նիկիայ՝ նզո-  
վեալ՝ արտաքսեցին զԱրիոս, և գարձեալ զպատիժ է պատու-  
հասի ընկալաւ, սակայն սերմն չարին ի ձեռն թագաւորին որ  
պարտեցաւ ի յարիոսեան է քահանայէն, ոչ գաղարէր ի թիւ-

ա. ն. վասն բ. Գ. արիանոսեանք. գ. Դ. ասէին. դ. Ա աստուա-  
ծութենէն. ե. Բ. շիք. զ. Ա. Գ. նզովել. է. Դ. զպատիժս. ը. Բ. Ա.  
ի ձեռն ի յարիոսութեան քահանայէն. Գ. ի ձեռն ի յարիոսեան քահա-  
նայէն. Դ. ի ձեռն շարին արիոսեան քահանային:

պանեալք: Յաղագս յարևմտասին կողմունս եղելոց այս-  
քան ճառեցաւ:

Բայց փոխադրելի է առ ժամայնս ի պատմութիւնս  
ըստ նմին ժամանակաց յարևեալս եղելոցն, աստուստ  
իսկ սկսանել:

Գ. 1. 1 Ը. 1

Որք Արիոսի կողմանն եպիսկոպոսունք մեծ քաջա-  
լիրութիւն ի թագաւորականն Հրամանէ առնուին, և  
յարդարէին ընդունել զժողովս. սակս որոյ փոքր ինչ  
յետոյ ասացից, բայց յառ ի նոցանէ յեղեալսն յառա-  
ջինն ժողովու, նախկին ընթացուք: Քանզի Ակակիոս<sup>2</sup>  
և Պատարիզոս զՄաքսիմոս զԵրուսաղեմացեացն եպիսկո-  
պոս արտաքսեալք զՎիւրիղոս փոխանակ նորա կարգեցին:

1 Տէր Սող. Դ. 20. Թէոդ. Բ. 27 կսս. Ե. 31. Նիկ. Թ. 42.

2 Սո յաջորդեց Կ'սարիայի եպիսկոպոսութիւնը Եւսեբիոս Կեսա-  
րացուց յետոյ:

րե քոյ զուղիղ հաւատաս) և որք Արիոսեանքն էին համարձակու-  
թ թուն առին առ ուղղափառս. որ և զՄաքսիմոս Երուսաղեմի  
եպիսկոպոսն արտաքսեցին և զՎիւրեղ ի նորա տեղին՝ կարգե-  
ցին եպիսկոպոս: Բայց ունիմ ասել զպատճառսն զբազումս և  
զայլս զոմանս՝ արտաքսելին, 1 և զոմանս ի տեղիս նոցա կար-  
գէին եպիսկոպոս 1 թագաւորան:

Գ. 1. ԽԳ.

Յաղագս Մակեդոնի եպիսկոպոսի զաւրութիւն որ ունէր ընդ սուրբս  
Աստուծոյ եւ սատակումս իւր:

Իսկ Մակեդոն հոգեմարդ և աստուածամարտ՝ կոչեցեալ Ծ  
ի Թարկաւազութենէ յեպիսկոպոսութիւն Վոստանդինուպօլսի,  
ա. Բ. Դ. ի տեղն. ք. Ա՛ զայլ ոմանս. գ. Դ. արտաքսեցին զ. Դ.  
կարգեցին եպիսկոպոս. Ե. Դ. կոչեալ:

Իսկ Մակեդոնիոս զմերձագոյնսն ի Կոստանդնուպաւաւսի աշխարհս և քաղաքս խախտէր, սպասաւորս զընտանի զիսմուհնսն հակառակ եկեղեցեացն նախակարգեալ: Իսկ Կիզիկոյնի զԵղեւսիոս<sup>ա</sup> ցուցեալ եպիսկոպոս, և Նիկոմիդոյ զՄառաթոնիոս, որ նախկին իսկ սարկաւազ էր կարգեալ ի Մակեդոնէ, որ էր փոյթ առ շինել արանց և կանանց վանորա: Բայց թէ որպէս Մակեդոն զշուրջ Կոստանդնուպաւսի աշխարհս և զքաղաքս քանդէր, այժմ ճառի. քանզի սա, որպէս ասացի, ըմբռնեալ յեպիսկոպոսութիւնն բիւրս առնէր չարիս, զխորհաւազացն նորայն. և ոչ միայն զեկեղեցւոյն իւրոյ զխղճաւորս վարէր, ք այլ և զՆաւատիանոսս, տեսեալ զնոսա զհամագոյութիւնն խորհելով, ընդ նոսին ապա վարէին և նոքա և ընդ նոսին կրէին զանուպայսն: Փախչի ապա և եպիսկոպոսն նոցա Ռեզիոս<sup>գ</sup> անուհ: Իսկ բազում<sup>բ</sup> ապա և ի նշանաւոր և յերկիւղած արանց ըմբռնեալ տանջէին, զի ոչ կամէին վայելել ի հաղորդութենէ նոցա: Իսկ յետ չարչարանացն ըմբռնութեամբ հաղորդել ի խորհրդոյն հարկաւորէին, քանզի փայտիւ բացեալ զբերանս արանցն արկանէին զխորհուրդն: Իսկ զսյս կրաւղքն մեծագոյն ևս քան զայլ զպատժոցն տանջանս զայս համարէին. կանայս և մանգուհս ըմբռնեալ պղծել

ա. 'Ελεῦσιον'

բ. Ջուղափառս հալածէր:

գ. 'Αγέλιος'

Հակառակ Պօղոսի, որ ընտրեցաւ յԱղէքսանդրէ երանելոյ, սա բազում<sup>բ</sup> չարիս եցոյց ի Կոստանդնուպօլիս և ի մերձաւոր յաշխարհն և ի քաղաքսն, բազում<sup>բ</sup> ի նշանաւոր<sup>բ</sup> արանց ըմբռնեալ տանջէին, որ<sup>գ</sup> ոչ կամէին ընդ նմա հաղորդիլ, և յետ

ա. Դ. բազմութիւն. բ. Գ. նշանաւորս գ. Բ. որք.

հարկաւորէին, իսկ թէ որ հրաժարէր կամ այլազգ ինչ ընդդիմաբանէր. նոյնժամայնն հետեւէին վերք և յետ վիրացն կուպանք և կապարանք և այլքն դժնդակք, յորոց մին կամ երկուս յիշել յայտնագոյն զչարագործութիւն և զսխալանսն Մակեդոնի, և զորոց յայնժամ աճեցելոցն յանլաւազացն կարգեցից: Ասան զի կանանցն ոչ առեալ յանձն հաղորդիլ ի նոցաոցն, զստինս նոցա եղեալ ի տապանակի սղոցէին, և այլ կանանց զնոյն անմտութիւն առնելով, զոմանց երկաթովք և զոմանցն ձուանք ծայրագունիւք ջեռուցանելաւք ի հուր մատուցեալք այրէին. և աւտարագոյն քան զհեթանոսացն պատիժս այս ի քրիստոնէիցն կոչեցելոց լինէր: Իսկ զայս ես ի բազմամէէն Աւքսանոնէ լուս, զոր յառաջնումն յիշեցուցի գիրս, որ էր քահանայ յաւատեանոսացն աղանդոյ: Եւ կրել ասէր և սա յարիանոսացն ոչ սակաւ չարչարանս, և ևս այսքան քահանայութեան հասեալ պատուի. և հանդերձ Աղէքսանդրաւ Պեփղագոնեաւ ճգնակցաւ իւրով ի բանտ մասնել, և վէրս առնուլ բազումն և կրեալ ապա տանջանսն նա ասէր. իսկ զԱղէքսանդր ի բանտի ի վիրաց վախճանել

չարչարանացն բռնութեամբ փայտիւ բացեալ զբերանն զհաղորդութիւն նոցա աային. « որք չար քան զտանջանսն զայն Բ վարկանէին և զկանայս Գ ի պղծութիւն զինուորաց հրամայէր. և որք ընդդիմանային հարուածք նոցա լինէր, և կիսոց զստինսն՝ հատանէին, և կիսոց այլ ինչ դառն տանջանս առնէին: Եւ այս էր նորա փոյթ, զի զամենեան աստուածամարտութեան արասցէ հաղորդս, և ևս չարագոյն քան զհեթանոսացն սուռէր տանջանս, և զգործիս տանջանացն կազմէր հրով և սրով և փայտիւ, և ոչ դադարէր ի չար բռնութենէն և յաստուա-

ա. Ա տարին Գ. տացին. ք զտանջանս զնոսա կարկանէին Գ. Գ. զկանայսն: Դ. Գ. լինէին. եւ կիսոց զստինս:

ասէր, որ և Թաղին իսկ յաջու կողման նաւագնացուն Բիւզանդիոյ գողին որ կոչեն եղջիւր, հուպ ի դէտօրայն, ա ուրանաւր և եկեղեցի է Մաւատիանոսաց Աղէքսանդրի համանուն: Բայց բառնային ապա և արիանոպն հրամանաւն Մակեդոնի և այլս բազումն ըստ քաղաքացն եկեղեցիս և զի զՄաւատիանոսացն որ հուպ ի կոչեցեալն էր Ադիլկա, ք ի կոստանդնուպաւլիս: Բայց այսորիկ աղագաւ զայս ինքնաբար յիշեցի և կամ ճառելով որքան ինչ ի ծերոյն Աքսանա լուա:

Թագաւ որին հրամանն և Մակեդոնի բռնութիւնն քանդել զհամագոյութեանն խորհողաց եկեղեցիս հրամայէին, և հասանէին ապա հրամանն և բռնութիւնն հակառակ եկեղեցւոյն. և ճեպէին հրամայեալքն զայն առնել, բառնալ զնախակոչեցեալն եկեղեցի: Բայց սքանչանալի է ինձ այսուհետև և յինքեան ի վերա ժողովրդեանն Մաւատիանոսաց, եթէ զորպիսին ունէին զնախանձ և զփոյթ առ իւրեանցն եկեղեցիս. և զբարեմըտութիւնն զոր ունէին առ ինքեանս, և զի որք յայնժամ յեկեղեցւոյն յարիանոսացն արտաքսեալք, այժմ խաղաղութեամբ ընդունին զեկեղեցին: Քանզի իբրև ճեպէին քանդել զեկեղեցին որոց հրամայեալն էր, ժողովէր բազմութիւն մարդկան Մաւատիանոսաց՝ և ոմանք ի համագոյութեանն խորհողաց ընդ նոսա, և աւերեալք զեկեղեցին յայլ փոխեցին տեղի իսկ տեղիս այս յայնկոյս է քաղաքիս որ Սիւկասն ք անուանի և է երեքտասաններորդ գաւառ՝ կոստանդինուպաւլի: Բայց փոյթ

ա գետորայն ποταμῶν·

բ. Παλαργός·

գ. Συχαί·

դ. ἄλιμα·

լինէր եկեղեցւոյն փոփոխումնն ժողովուրդի մեծաւ յաւ-  
ժարութեամբ փոխաբերել զնա. քանզի մինն բերէր խե-  
ցի, իսկ միւսն քար, իսկ միւսն փայտ և այլ ոք այլ ինչ  
և առեալք տանէին ի Սիւկաս: (Ն)պաստաւորք լինէին և  
կանայք և փոքունքն տիովք աղաւթս համարեալք, և կա-  
աարէին և մեծ առնուլ շահ, զի որոշեցելոցն յԱստուած  
պահասպանք ողջք արժանաւորէին լինել: Եւ այսպէս  
ապա յայնժամ Նաւատիանոսացն եկեղեցի ի Սիւկաս  
փոխաբերեալ լինէր: Բայց ժամանակաւ ինչ յետոյ յեռ  
վախճանին Կոստանդիոսի, Յուլիանոս թագաւոր զյայն-  
ժամու տեղին ի բաց հրամայեաց տալ, և նոյնժամայն վե-  
րստին շինել հրամայէր և ժողովուրդն անդրէն ըստ նմին  
աւրինակի տանելով զնիւթսն, զեկեղեցին յառաջնումն  
շինեցին տեղւոջ և վեհազունացուցեալ Անաստասիայ՝  
համանուան կոչեցին: Բայց եկեղեցին ապա որպէս ասացի  
առ Յուլիանոսի կանգնեցաւ, իսկ յայնժամ երկաքանչիւր-  
ոք եկեղեցւոյն և որք Նաւատիանոսացն առհասարակ  
վարեալք լինէին, վասն որոյ և որք եկեղեցւոյն պիղծ  
համարէին յաղաւթարանն աղաւթել տեղիս յորս ա-  
րիանոսքն ժողովէին, իսկ յայլ երիսն քանզի այսքան  
ի ներքս ի քաղաքին ունէին եկեղեցիս Նաւատիանոսքն,  
յայնոսիկ եկեալք առ միմեանս աղաւթէին, և փոքր ինչ  
միջոցաւ միաւորիլ նոցա, եթէ ոչ Նաւատիանոսացն  
պարհեալ զնախկինն պատուէր հրաժարեցին, սակայն  
զայլ բարեմտութիւն պահէին առ միմեանս յաւժարու-  
թեամբ յառաւել քան զմեռանելն ընդ միմեանց նկրր-  
տեալք: Վարեալք լինէին ապա ի նոյն Կոստանդնու-  
պաւլսի և ըստ այլ աշխարհաց և քաղաքաց և նոյնժա-

1 Այսպիսի անունով մի երկրորդ եկեղեցի շինեց Կոստանդնու-  
պոլսում՝ Կրիզոր հաղիանդացին:

մայն ի Կիլիկոնի Եղևսիոս՝ Եպիսկոպոս զնմանս Մակեդոնի չարեացն առնէր վքրիստոնէիցն՝ ամենայն ուրեք վարելով և շրջելով զնոսա, և զՆաւատիանոսացն եկեղեցի որ ի Կիլիկոն աւարեաց յատակ: Իսկ Մակեդոնիոս զկռփիչս չարեացն որովք ըմբռնէրն առաւել յաւելոյրօքանցի լուեալ ի Պէփղազոնացեացն աշխարհին բազում լինել Նաւատիանոսականն աղանդոյ և առաւել ի Մանտինոնի, պատեհ վարկանէր որպէս զի ոչ զայսքան բազմութիւն արանց է վարկանիլ վարել: Եւ չորս գունդ զաւրականաց կամաւք Թագաւորին ի Պէփղազոնեայ առաքէր, որպէս զի յահէ վառելոցն զարիոնոսականն ընգալցին զկարծիս: Իսկ բնակեալքն ի Մանտինոն նախանձու աղանդոյն զայրագնեալք հպեցան հակառակ զաւրականացն: Եւ ելեալք միանգամայն բազմութիւն յոյժ, և առեալ մանգաղս և գերանդիս, և կացինս և ամենայնիւն դիպեցելով զինու հանդիպեալ պատահէին զաւրականացն: Եւ եղեալք միանգամայն և լինել խառնակութեանն բազումք ի Պէփղազոնացն մեռան, բայց ի զաւրականացն առ սակաւ ինչ ամենեքեան:

Զայս ես ի վայրաբնակ Պէփղազոնացւոյ լուս որ ասէր լինել ի մարտին, և ասնն զայս և այլք բազումք ի Պիփղազոնացեացն: Այսպիսիք այսուհետև Մակեդոնի յաղագս քրիստոնէիցն ուղղութիւնք և մարտք և ցեղական պատերազմունք: Բայց այս իր ոչ միայն յանիրաւիցելոցն, այլ և յորոց ընտանեբար եղելոցն զիրաւն ատելութիւն հակառակ նորա գործեաց, սու հարաւ և ընքեան Թագաւորին, և վասն այսորիկ և վասն միւսոյն պատճառոյ այսպիսի ինչ յառաջագայի:

Ի Սա առաջ գինուորական էր եւ յայտնի իւր բարի բնութեամբեամբ, բայց յետոյ եպիսկոպոս ձեռնադրուելով սկսեց խստութիւններ գործ գնել:

Տունն<sup>1</sup> ուրանաւր տապանակն յորում մարմին թագաւորին Կոստանդնի կայր, էր մերձ յանկանել, և էին ապա յաղագս այնորիկ դարան[ա]եալքն ի նմա և որք աղաւթէինն յերկիւղի մեծի: Մակէդոնիոս ապա կամեցաւ փոխել զոսկերս թագաւորին որպէս զի մի ըմբռնեսցի յանկմանէն տապանակն: Ջայս ծանուցեալ ժողովրդին արգելուլ ձեռնարկէին, ասելով ոչ ումք փոխաբերել զմարմին թագաւորին, որպէս զի մի ըմբռնեսցի, քանզի հաւասար նզովիցէ լինել: Եւ պատառեալ լինէր յայնժամ վաղվաղակի յերկուս հատուածս. և սմանք ոչ ինչ ֆնասիլ ի փոխաբերելն զմեռեալն ասէին, իսկ այլք սնսուրք եղեալն ասէին. ժողովէին յայնժամ և որք համագոյութեանն խորհրդոյ եղելումն ընդդիմացեալք:

Իսկ Մակէդոնի փոքր ինչ ընդդէմ ասաւղացն իւր հոգ տարեալք, բերէ յեկեղեցին զմարմին սուրբս թագաւորին, ուր մարմին վկային Ակակա<sup>2</sup> կայր: Այ-

ա. Բնագիրը չունի:

1 Այդ տաճարը առաքելոց անունով շինել էր տուել ինքը Մեծն Կոստանդինը իւր մահուանից փոքր ինչ առաջ եւ որոշել էր, որ իրան այնտեղ թաղեն (Տես Կ. Ա. վերջ Կոստ. Դ. 6):

2 Վկայների մէջ շատ Ակակներ են յիշուում թէ որն էր սա յայտի չէ: Ծամարութեանէն Մակէդոն. բայց սակայն ոչ եթող զնա Աստուած առանց վրէժխնդրութեան: Էր հանգստարան թագաւորին Կոստանդինոսի, յորում էր տապանն, և էր կարծիք անկման տան ի վերայ տապանին: Իսկ Մակէդոն կամեցաւ փոխել զտապանն յայլ տեղի. իսկ որք համագոյութեանն էին Բեռատովանոզք, ոչ արժան վարկանէին զայն առնել: Իսկ նորաւր համարհեալ զնոսա իւրովքն. 4 արար զոր կամեցան: Լինի մարտ մեծ յամբոխին, 7 և բազումք մուռան, որպէս զի գաւիթ

ա. Գ. այլ. բ. Ա՝ համակցութիւն: գ. Դ. նա արամամոհեաց զնոսա իւրովին հանդերձ. դ. Բ. ամբոխի.

սորիկ եղելոյ ընթացումն երկւմախցն ա փութանակի  
 յեկեղեցին լինէր, և ընդդիմանային միմեանց կողմունքն,  
 և անփութարար ըմբռնեալք ապականէին և լինի սպա-  
 նումն մարդկան յոյժ, որպէս զի և գաւթի եկեղեցւոյն  
 այնորիկ ընդ արեամբ, և Ջրհորոյն որ անդ վերաբխիլ  
 յարենէն և հոսիլ նմա և մինչև ի սրահն որ կայր, և  
 մինչև ցփողոցն նորուն: Ջայս զանցս լուեալ թագաւո-  
 ըին բարկանայր ընդդէմ Մակէդոնի և վասն կորուսե-  
 լոցն, և զի զմարմին հաւրն նորա շարժել արտաքոյ կա-  
 մաց նորա յանդգնեցաւ: Թողեալ ապա զարեւմտայինցն  
 կողմանցն հոգալ Յուլիանոսի, ինքն յարեւելս կոյս գը-  
 նայր. որպէս զի ապա Մակէդոն յետոյ անկաւ, դոյզն  
 ինչ փոխանակ այսքան շարեաց զայս տալով դատաս-  
 տան զոր յետոյ ապա ասացից:

ԳԼ. ԼԹ. 4

Բայց յաղագս երկրորդ ժողովոյն որում ընդդէմ  
 Արմինոնի ժողովոյն ըստ արեւելից լինել հրամայեաց  
 թագաւորն, այժմ պատմեցից: Ընդունելի լինէր նախկի  
 Միկովիդիայ Բիւթինւոյ զեպիսկոպոսունսն ժողովել,  
 իսկ անդ զնոցայն մուտ էհատ շարժն մեծ եղեալ ի վերա  
 յորմէ և պատահեաց Միկովիդացեացն քաղաքին անգանել:

ա ՃϫΟΟΟΒΥΣΩΝ կրկնակի խորհողացն:

1 Տես Սողոմ. Գ. 16. 22. Թէոդոր. Ի. 27. 10. ԼԳ Ս վ. Ի. 42.  
 Նիկիե. Բ. Թ. 43. Փիլաստ. Գ. 10. 11.

եկեղեցւոյն ընդ արեամբ սպանելոցն: Կ Ջայս լուեալ թագա-  
 ւորին բարկացաւ ի վերայ նորա, Բ որպէս ի վերայ մահապարտի,  
 և զի առանց նորա փոխեաց զտապանն, և առաքեաց ընկենուլ  
 զՄակէդոն յաթոռոյն, և մերժել զնա որպէս դատապարտեալ

ա. Ա՛ սպանանելոցն Դ. սպանողաց. Բ. Ա՛ ի վերայ Մակեդոնին:

Այս եղև առ հիւպատոսաւքն Գատիանոսի և Կե-  
 ռաղիոսի քսան և ութն սեպտեմբերի ամսոյ. խորհէին  
 այնուհետև փոխել զժողովն ի հուպն ի նա ի Նիկիայ.  
 Իսկ այս առժամայն ոչ թուեցաւ, այլ ի Տարսոն Կիւղի-  
 կեցւոց թուեցաւ ժողովիլ: Ապա և ոչ այսորիկ եղելոյ  
 հաճոյ ի Սելևկիայ Սաւուոյ՝<sup>ա</sup> ի կոչեցեալն Տռաքիայ ժո-  
 ղովեցան. իսկ զայս ի նմին ամի արարին առ հիւպա-  
 տոսաւքն՝ Եւսէբիոսի և Իւպատոյ. և էին ժողովեալքն  
 թուով հարիւր և վացուն:՝<sup>բ</sup> Էյ ընդ նոսա մին յա-  
 քեւելականաց առ Թագաւորն Գ Ղէոնաս անուն, որոյ առա-  
 ջի դնէր զյաղագս հաւատոյն խնդիր Թագաւորին ասեր-  
 հրաման հրամայեալ լինէր զալ և Ղաւոթիկոս որ ըստ  
 Ասորոց՝ զաւրականացնառաջնորդ, սպասաւորելով պի-  
 տոյից եպիսկոպոսաց: Առ այսուիկ ժողովեալք ի Ուլ-  
 Սեպտեմբերի ամսոյ հրապարակաւ խաւսէին. քանզի առ-  
 ընթեր էին և երագագրաւղք զառ ի յիւրաքանչիւրոցն  
 ասացեալս նշանակել, յորոց ըստ իւրաքանչիւր ուրուք  
 և ժողովուն զՍարբելին՝ ի խնդրեցեն ուս(ու)մնասիրու-  
 թիւն ի ձեռն երկայնագունից եղեալ. բայց մեք ի գլուխ-  
 արն միայն եղեալ ընթացեալք զիցուք: Յառաջնում  
 առուր ժողովեցելոյն Ղէոնաս զիւրաքանչիւր ուրուք  
 զթուեալսն առաջի դնել հրամայէր, բայց որք մերձն  
 ոչ ասացին շարժել խնդիր ինչ յառաջ քան զժողո-

ա. Ἰσαυρία·

բ. Τραχεία·

գ. Բն. Այր մք ծանօթ ի պ' լատան արքայական:

դ. Առաջնորդ զօրացն իսաւրիոյ:

ե. Σεβείον·

1 Փրկ. 359 Թ:

2 Թեոդորոսը ժողովականների թիւը 150 է տալիս:

վել պակասեցելոցն. քանզի էին պակաս եպիսկոպոսունքա : Մակէդոնիոս յախտ անգեալ պակասիւր, իսկ Պատուոփիլոս աչացաւութիւն ասէր, և վասն այսորիկ ի պըռաստին Սիլեկիոյ հարկ լինէր բանակիլ. իսկ յայլոցն յիւրաքանչիւր ոք պատճառ ինչ վերջացելոցն նախակարգէին: Եւ վասն զի սոցա ոչ եկելոց, Ղէոնաս առաջի դնել պատրաստէր զխնդրոցն իրս, որք առնթերն առժամայն ձեպէին, իբր զի ոչինչ շարժեսցեն խնդիր, եթէ ոչ նախ վարք ամբաստանելոցն՝ զննեսցին: Քանզի ամբաստանեալք լինէին յայնժամ նախկին Աիւրիղոս Երուսաղէմի, Եւստաթէոս Սերաստիոյ Հայոց և այլս ոմանս: Յայսմանէ վիճաբանութիւն յորս առնթերն անկաւքանզի ոմանք զվարս ամբաստանելոցն յառաջ քննել ասէին, իսկ այլք զյաղագս հաւատոյն առաջի դնել խնդիր: Բայց շարժէր զվէճն յորովն թագաւորին՝ կամք, քանզի թուղթ նորա բերիւր յառաջագոյն. այժմ զայս նախկին խնդրել հրամայելով, և այլ ժամ՝ զմիւսն: Եւ յաղագս այսորիկ վիճոյն ձգտեցելոյ հերձուած յոր առնթերն մտանէր: Եւ այս եղև սկիզբն պատճառոյ, և զՍիլեկիոյ ժողովն յիւրկուս պատառեալ մասունս. և

ա. Թարգմանութիւնը թերի է, բաց է Թողած Մակեդոնի եւ Բարսեղ Անկիւրիայի եպիսկոպոսները, որ կայ էլ 196 ում:

բ. ըստ քն. ամբաստանելոցն:

և արժանի մահու. Եւ նա ի նիհարութենէն սրանեղեալ " յախտ մահու անկեալ, սատակեցաւ չարաչար. և ասաց ամենայն ոք՝ եթէ է Աստուած որ դատեաց՝ զնա յերկրի. սակայն զսերմն չարին հոգեմարտութեան եթող ի խորհրդականս իւրոյ անաստուածութեան:

ա Գ. եւ նային արհամարտութենէն Ա՛ եւ նա արհամարտութիւն ի նեղութիւն. Գ. եւ նա յարհամարտութենէն նեղեալ, ք. Ն. որ դատի:

համարեալ լինէին մին կողմանն Ակակիոս Կեսարւոյ որ ի Պաղեստինն, Գւորգիոս Աղէքսանդրւոյ, Ուռանիոս[աւ] Տիւրոսի, Եւզոքսիոս Անտիոքայ, որոց լի միայն յայլոցն ընգերէին: Իսկ միւսոյ Վիորգա Լաւոզիկեցւոյ որ Մասրիան, Սոփոնիոս Պոմպիլուպոլսի Պեփղագոնացւոյ, Ելէսիոս Կիւզիկոնի որոց հետեւէին բազումք:

Եւ մինչդեռ ունէր խնդրիլ նախկին յաղագս հաւատոյն, որք կողմանն Ակակայ. զՆիկիոյն հաւատ յայտնապէս արհամարհեցին, այլ իմն հաւատ ի մէջ բերեալ աւրինակէին: Իսկ միւսոյ կողմանն որք թուոյն աւերագոյնք, զամենայն զՆիկիոյ հաւատոյն ընդունէին բայց միայն զհամագոհութիւնն պարսաւէին: Բազում ինչ ապա մինչև ցանազանսւ երեկորին սու միմեանս յաղագս այսորիկ մարտուցելոց, յետոյ Սիղբանոս Տարսոնի եկեղեցւոյն առաջնորդ մեծամեծս գոչէր. ոչ պարտ լինել ասելով կարգել նոր գիր հաւատոյ, այլ զոր յայնժամ նախկին յԱնտիոքիայ ի նաւակատիսն կարգեալ, զոյն պարտ է ընդունել: Սորա ասացեալ զայս ոյք Ահակայն ելին: Իսկ միւսոյ կողմանն բերեալ զհաւատն Անտիոքայ և ընթերցեալ լուծին յայնմ աւուր զժողովն: Եւ զնոյնհետայն ի Սելեկիոյ եկեղեցին մտեալք և փաշեալ զդրունան զընթերցեալն հաւատ ենթադրելով հաստատէին: Ստորագրէին և սակս պակասիցն ոմանց առընթերքն ընթերցաւոյք և սարկաւագունք, ի ձեռն որոց պակասքն հաստատեալ զսահման հաւատոյն խոստովանեցան:

Գ. Լ. Խ. 4

Բայց Ակակիոս և որք նորա կողմանն գեղեպան

1 Յես յընեալ տեղերը:

պարսաւէին եթէ զեկեղեցին փակեալք ենթադրէին. քանզի ասէ որ ի բռնադատանաց եղեալն անփորձ է և կասկածանաւք լի:

Ձայս ասէր կամելով այլ կարգադրութիւն հաւատոյ փոխանակ մուծանել, զորս ունելով պատրաստ ընթեռնոյր իշխանացն Լաւորիկիոսի և Ղէոնասայ, զի միայն զայն ընդունել փութայր: Բայց այսոցիկ աւելի ոչինչ յաւուրն երկրորդի եղև. իսկ յաւուրն երրորդի Ղէոնաս զկողմունան ժողովեալ փութայր: ըսա որում ոչ պակասեաց Մակէդոնիոս Կոստանդնուպաւլսի այլ և ոչ Բասիլ Անկիւրիոյ: Եւ զի ապա որք միւսոյ կողմանն յայս ժողովեցան, անդէն որք Ակակայն պատահեալ ոչ կամէին ասելով պարտ լինել ի ժողովոյն զյառաջագոյն ընգեցեալսն և գառժամայն ամբաստանեալսն. իսկ վիճեցելոց, այս մանաւանդ եղև ընգալեալ, և լինի պատճառուն հանդիպեալքն, և փոխանակ մտին որք Ակակայն: Յայնժամ ապա Ղէոնաս գիրս ասաց տալ նմա յորոց Ակակայն թագուցեալ իբր թէ հաւատոյն հրաման իցէ այսորիկ եկելոյ: Իսկ այսորիկ և յայտնապէս մարտուցելոյ յառաջացելոցն, որպէս զի ոլք առնթեր լուցին, այլ զի առաւել հաւատոյ ինչ իրս ունել զգիրսն կարծեսցուք. այսքան և Ակակայ հաւատոյն շարակարգութիւն հանդերձ յառաջարանաւքն եղև ընթերցեալք, զայս ունելով աւրինակ հաւատ որոց Ակակայն:

«Մեք ժողովեալք ի Սելևկիայ Սաւուրոյ թագաւորական հրամանաւ յերեկեան աւուրն, որ էր յառաջ քան «զհինգ կաղանդացն Ոկտորուի, և զամենայն զփոյթ մուծաք ամենայն բարեկարգութեամբ զխաղաղութիւն «եկեղեցւոյ պահել և յաղագս հաւատոյն բարեկացաբար ընդունել, որպէս և հրամայեաց աստուածասէրս

« Դեր թագաւոր Կոստանդինոս ըստ մարգարէական ձայնից, և ոչինչ արտաքոյ աստուածային գրոց մուծաւնել յեկեղեցական հաւատ: Բայց վասն զի ոմանք ի ժողովուն զոմանս ի մէջ թշնամանեցին, իսկ զայլս արգելին ակամայս, իսկ զընդեցեալսն ի յուզից նահանգաց ունէին ընդ ինքեանս, և զարտաքոյ կանոնին կարգողն ածէին առ իւրեանց, որպէս զի ամենայն ուստեք ի խռովութիւն գոլ ասէին, ա որպէս և պայծաւացեալսս Կոմս ք Սէոնաս, և Լաւրիկիաս առաջնորդ աշխարհիս յանդիման տեսլեամք ընդալան, այսորիկ տակա խաւք իմ զայս: Որպէս զի ոչ թէ փախչիմք յերեալ տանուտէրականն հաւատոյ, զոր ի նաւակատիսն Անտիոքայ երեալ, որ թէ մանաւանդ և հարքն մեր յայնմ ժամանակի առ ենթակացեալքն խնդրոյն ընթանային: Վասն զի զբազումս ամբոխեաց համազոյուութիւնն և նմանազոյութիւն յանցեալսն ժամանակաւ և մինչև ցայժմ, այլ և արդ որպէս ասի նորա հատիլ յոմանց աննմանութիւնն Որդւոյ առ Հայր, յաջազս այսորիկ զհամազոյութեանն և զնմանազոյութիւնն թրաց հանեմք որպէս զաւտար գրոց: Իսկ զաննմանն Տօղովեմք և ամենեքեան որք այսպիսիս հանդիպին աւտարըս համարիմք եկեղեցւոյն. իսկ զնմանութիւն Հաւրառ Որդի յայտնարար խոստովանիմք ըստ առաքելոյն տեսելոյ, որ պատկեր Աստուծոյ աներեւոյթի և հաւատամք և խոստովանիմք »: <sup>1</sup>

Իսկ ընթերցելոյ Սոփոսնիոս Պամպիուպոլսի Պեփազանիոյ եպիսկոպոս, այսպիսի բանիւք վերագոչեաց.

ա. Ձեռ. ունի . ատէն . ք. ԿՅԻԴՅ.

<sup>1</sup> Ետրուանութեան մէջ դրաս է նոյն ժողովի հայրերի հաւատոյ հատեալը. որ թարգմ բաց է թողել

« Եթէ զհանապազաւր առանձին դնել խորհրդաւք հաւատոյն լինիցի զիր, պակասէ ի մէնջ ճշմարտութեանն ստուգութիւն »: Զայս Սոփոսոնիոս ասաց, բայց ես ասեմ, որպէս զի թէ իսկզբանէ այսպիսս որք յաղագս Միկիոյ հաւատոյն որք յառաջ քան զնոսս, և որք յետոյ նոցա իմացեալ էին, դադարեալ էր արդեւք ամենայն վիճական խնդիրն, և ոչ արդեւք զեկեղեցին անիրաւի էր կալեալ խռովութեան: Այլ որպէս ունի զայս դատեսցեն կարողքն իմանալ զայս: Իսկ յայնժամ բազում ինչ առ միմեանս յաղագս այսորիկ և սակս ամբաստանելոցն ասացեալք և լսեալք արձակէին: Իսկ ի չորրորդում անդէն աւուրն ժողովէին ամենեքին ի նոյնն, և անդէն վերստին շարժէին հակառակաբանութեամբ զբանսն, որովք Ակակիոս այսպիսս ըստ բանի էւոյժ խաւսս: Եթէ միայնգամայն հաւատն Միկիոյ փոխեալ եղև և յոլով անգամ, յետ այսորիկ ոչինչ արգելու և այժմ այլ կարգել հաւատ: Առ այսորիկ Ելեւսիոս Աիւզիկանի եպիսկոպոս այսպիսիս ասաց. ժողովս ընգալեալ եղև այժմ, ոչ զի ուսցի զոր ոչն ուսաւ, և ոչ զի հաւատ ընգալցի, զոր ոչն ստացաւ. այլ հարանցն հաւատով բաւականացեալ մինչև ցկեանս և ցմահ ոչ արտաքակաի: Այսոքիւք և Ելեւսիոս առ Ակակայն պատահեցաւ բանս զհաւատ հարցն յԱնտիոքա եղեալ կոչելով ի հակառակութենէ, իսկ թէ հակառակքն, և առ այս զիսորդ զորս յԱնտիոքա եկեալսն հարս կոչես, Ելեւսիէ, որոց և նոցա զհարս ուրացեալ:

Քանզի ի Միկիայ ժողովեալքն և զհամագոյութիւնն հաւատով համաձայնեալք տիրագոյն արդեւք հարք էին ասացեալքն, և ի վերանալ ժամանակացն, և զի արդ

ա. ἐξίσταται յետս կացոյ:

եղեալքն յԱնտիոքիայ ի նոցանէ ի քահանայութիւնն կարգէին: Իսկ թէ որք յԱնտիոքիայ զիւրեանց զհարսն արհամարհեցին. լուծին զինքեանս որք յետ այսորիկ հայրալուծիւքն խաւսեցեալքն: Իսկ զիաւրդ զորոց հաւատ նոքա որպէս անփորձ արհամարհեցին, զնոցունց ձեռնադրութիւնն որպէս զփորձ յանձն առին. իսկ թէ նոքա զհոգին ոչ ընդունէին, և ոչ սոքա զքահանայութիւնն առնէին. քանզի զիաւրդ առնուին յոչ ունողացն զտուեալն Հոգի Սուրբ: Այսպիսիս ինչ թերևս ընդդիմադրիցէ առ ճառեալսն Ելևսիսսի: Իսկ յայնժամ անդէն ի միւս այլն եղեն տարեալ խնդիր. քանզի որք Ակակայն և յընթերցելումն հաւատուն նման զՈրդի Հաւր ասացին և հարցանէին զմիմեանս զըստ որում նմանին Որդի Հաւր: Եւ որք Ակակայն ասէին ըստ խորհրդոյ միայն, և ոչ և ըստ էութեան ասացին Հաւր նման լինել Որդւոյ. իսկ այլքն ամենայն և ըստ էութեան ասացին: Եւ վասն այսորիկ վիճէին զերկուս աւուրս. ա և զորս Ակակայն յանդիմանէին. որպէս զի թէ ի բանսն իւր զորս շարադրեացն և էետ նման ըստ ամենայնի ասացեալ զՈրդի Աստուծոյ: Եւ զիաւրդ, ասեն, ուրանա այժմ զըստ էութեան Որդւոյն առ Հայր նմանութիւն, ոչ ի շարադրեցելոց ասաց, և ոչ նա: Բազում ինչ առ միմեանս յաղագս խնդրոյս այսորիկ ստուգաբանեցելոց և ոչ ուրեք համաձայնեցելոց, Ուննաս յարուցեալ արձակեաց զժողովն: Եւ զայս ունէր կատար ի Սելևկիայ եղեալն ժողով, քանզի ի վաղիւն աղաչել ոչ ևս յայս ժողովել նոցա կամեցաւ. ասաց առաքիլ ի թագաւորէն առընթեր լինել ժողովոյն համաձայնութեամբ, բայց

ա. Թ. ἐνδευήρευσον· անցուցանէին զորն ողջոյն:

վան զի ոմանք պատահեցան այսորիկ աղազաւ ոչ կամիմ գալ, երթայք այսուհետեւ և յեկեղեցւոջն լեզուագրեցարուք Ե :

Այսորիկ եղելոյ, որոց Ակակայն գիւտ զայս համարեալ, և ոչ նոքա պատահեալ կամեցան: Իսկ միւսոյն կողման խղճացեալ, և ժողովեալ կոչէին յեկեղեցին զորս Ակակայն առ ի դատել զորս Աիւրիին ըստ Երուսաղէմացեացն եպիսկոպոսին. քանզի գիտելի է զի Աիւրիոս նախկին ամբաստանիւր, իսկ թէ ընդէր, ոչ ունիմ ասել. բայց նզովեցաւ զի բազում անգամ կոչեցեալ առ ի դատիլ զնոյն հետայն երկուս ամս ի փախստի եղև յամբաստանութենէն երկուցեալ: Բայց նզովեալ սակայն թուղթ առ նզովիչսն առաքէր զմեծագոյնն կոչեաց ատեան, որոյ խոտորման և թագաւորն եղև ընտրակից:

Արդ զայս նախ միայն անսովորականաւ եկեղեցական կանոնաւն Աիւրիոս արար. կոչէր յորս որպէս ի դատարանի հպեալ, իսկ յայնժամ ի Սելևկիայ էր դատեցեալ: Եւ սակս այսորիկ եպիսկոպոսունքն զորս Ակակայն կոչէին, որպէս փոքր ինչ յառաջն յիշեցի, որպէս զի արդեւք յամբաստանեցելոցն ծանուցեալք զհասարակականն արտաքսաբերեսցեն ընտրութիւն. քանզի կոչէին և զայլս ոմանս յամբաստեցելոցն, որք առ Ակակայն սպառնեցան: Եւ զի ապա բազում անգամ կոչեցեալք ոչ պատահեցան, ընգենուին և զինքեանն Ակակիոս և զԳիորպ Աղէքսանդրոյ, զՈւռանիոս Տիրոսի, զԹէդոուլ ի Քեռէտապոնի Փռիւգիոյ, զԹէոդոսիոս Փիլադեղիիոյ ի Ղիւ[ի]լայ, զՆազոնիոս Միւտիդիոնայ կըղզոյն, զՂէւոնգիոս Տաիուպոլսի Ղիւգիոյ, Բ և զԵւգոք-

ա. φλυαρετα.

բ. Μιτυλήνη.

սիոս որ նախ Գերմանիկոյն և ապա զԱնտիոքա Ասորեաց զեպիսկոպոսութիւնն ընգալաւ. նզովէին և զՊատառ/իլոս, զի և նայ ի Գոռոթիոսէ քահանայէ ամբաստանել կոչեցեալ ոչ եղև յաւար: Զորս ապա նզովէին. բայց անհաղորդս առնէին զԱստեռիոս, զԵւսեբիոս, զԱբառոս.<sup>ա</sup> զԲասիլիկոս, զՓիբոս, զՓիդիդեոս,<sup>բ</sup> զՄադնոս և զԵւստաթիոս, սահմանեալք այսպէս կալ մնալ մինչև պատասխանեալք զամբաստանութիւնն արձակեցին աստանաւր: Զայս գործեցեալք և ի ձեռն թղթոց զորս յաղագս նզովեցելոցն նոցաոցն պանդիտականաց ծանուցեալք, կարգեն ի տեղւոջն Եւդոքսիոսի Անտիոքացեացն եպիսկոպոսին զԱնանոս անուն, զոր ըմբռնել որոց Ակակայն էտուն Ղէոնասն և Լաւռիկիոս, իսկ նոքա զնա արտաքսեցին: Այսորիկ եղելոյ, որոց Անիանոսին կարգող եպիսկոպոսունք վկայութեամբ հրպէին հակառակ որոց Ակակայն առ Ղէոնաս և Ղաւռիկիոս. Ի ձեռն որոց աներաւիլ ի ժողովուն իրաւունս ազդեցին: Բայց իբրև ոչինչ առաւել լինէր, ի կոստանդնուպաւրիս դիմեցին առ ծանուցանել թագաւորին զդատեցեալսն ի նոցանէ:

Գլ. ԽԱ. 1

Քանզի եկեալ էր յարևմտից կողմանց թագաւորն դարձեալ, և յայնժամ նախ եպիսկոպոս կարգեաց Կոստանդինուպաւրիս զՌնոռատոս անուն, զընդդիմահիւպատոսութեանն դադարեցուցեալ զիշխանութիւնն.

ա. Ἀβραῖος 260. ունի Զեւեքիոս, զԱնդառոս:

բ. բաց է թողած քնազրի. Ծւտիքիոս. անունը:

1 Տես Սող Դ. 23. Թէոդ. Բ 27. 28. Փիլոսոս. Դ. 41. 42.

Պուլպ Սեվ Բ. 45. Եկեփ. Թ. 44.

իսկ հասեալք որք Ակակայն մատնեն զնոսայ թագաւորին ուսուցեալք, մի ընդունել զառ ի նոցանէն եղեալ հաւատ: Յաղագս որոյ ցասուցեալ թագաւորն խորհեցաւ ցրուել զնոսա, աւրինաւք հրամայեալ զորս ընդ իշխանութեամբն ի նոցանէ հարկացն պատշամամբ իւրումն տալ հանդիպմամբ. քանզի ոմանք ի նոցանէ պաշտամամբ ենթակացեալք. ոմանք խորհրդականացն, իսկ այլք նահանգացն կարգաց: Այսորիկ այսպէս խառնակելոց որք Ակակայն ի կոստանդինուպոլսի այլ նստուցին ատեան, զԲիւթինուոյն կոչեցեալք եպիսկոպոսունք: Եւ եղեալք ապա ամենայնքն թուով Ծ<sup>2</sup>, ընդ որս համարեալ լինէր և Մառիս Քաղկեդոնի, հաստատէին զընթերցեալն յԱրիմիոն հաւատ, զոր աւելորդ արդեւք էր աստանաւր դնել եթէ ոչինչ էին յաւելեալ: Բայց վասն զի բանս ինչ աւելագրեցին կարևոր է արդէն զայն աստանաւր յարարել: Իսկ զայս յայնժամ ի կոստանդինուպոլսի ընթերցան, բայց մեք զԹիւն նոցա ժողովեացուք:

Քանզի յես Նիկիոյ ժողովոյն յԱնտիոքիայ էր

ա. Բնագրում եղած հաւատոյ անգանակը բաց է թողած. Թարգմանի տգիտութեան փայլուն ապացոյցներէց մէկն էլ այս կրճատման եղանակի մէջ է:

1 կոստանդնուպոլսում տեղի ունեցած երրորդ ժողովն էր, որ սկսուեց 359 թ. եւ շարունակուեց նաեւ հետեւեալ տարին: Այս անգամ երկու կուսակցութիւն էին իրար դէմ. կիսա-Արիմեոն եւ Աէտիոսէ հետեւողներ, վերջինները յազիւ ունեցին:

2 Ուրիշները 70 են յիշուում:

ԳԼ. 70Դ.

Յուցանի մասնատր ժողովոցն թիւ, թէ քանիք են:

Իայց պարտ է զԹիւ ժողովոցն ասել, Յես Նիկիոյ սուրբ ա. Ա՛ ժողովոյն.

ի նաւակատիսն երկուս գիրս հաւատոյ կարգեցին. իսկ երրորդ է տուեալն յորոց ի Նարկիսոսէն ի Գաղիա Կոստանդիոսի. ա իսկ չորրորդ Նւղոքսին, որոյ Խաղիայն առաքեալ. իսկ ի Սիւրմի՞ երիս կարգեցին յորոց մինն յԱռմինն ընթերցաւ. իսկ ութերորդ է զոր ի Սելեկիա որք Ակակայն ընթերցան. իսկ յետոյ <sup>1</sup> ի Կոստանդիանուպաւլսի յաւելուածովն ընթերցան. քանզիկ այլ ի նմա ոչ էութիւն և ոչ գոյութիւն ի վերա Աստուծոյ ասել: Չայս և Ուղիկիղաս Գրաց եպիսկոպոսն յայնժամ նախկին յանձն էառ: Քանզի զառաջին ժամանակն զՆիկիոյ հաւատն ողջունէր ասացեալ Թէոփիլիոսի, որ Գրացն եպիսկոպոս գոլով ենթադրեաց. այսքան վասն այսորիկ ասացաւ:

ա. Ի ժամանակ Կոստանդիոսի Թագաւորի:

բ. Չեռ. ոմնի Տիւմրի:

<sup>1</sup> Աթանասը յիշուած է իւր Վասն ժողովոյնի մէջ այս առաջին ժողով: Եւ այց աւելացնում է նաեւ 41-երորդ որ կայացաւ 361 թ. Անտիոքում:

ժողովոյն որ ոչ ամենայնիւ ըստ նոցա սահմանադրեցին զհաւատ և զկանոն. երկուս յԱնտիոքայ՝ նաւակատիս, երկուս գիրս հաւատոյ եղին. իսկ երրորդն ի Գաղիայ՝ ի Կոստա ժողով, որ զԵթանաս և զՊողոս դարձուցին, յորոց ի Նարկիսոսին՞ է խորհուրդ. իսկ չորրորդ Նւղոքսին որ յԻտալայն առաքեալ եղեն՞ ի Թագաւորէն ժողով. իսկ ի Սերմի՞ երիս կանգնեցին ժողով, յորոց մինն Առիմիոյն՞ ընթերցեալ. իսկ ութերորդ որ ի Սելեկիայ որք Ակակայն են ընկեցեալ հաւատ. իսկ իններորդ զոր ի Կոստանդնուպոլիս, զոր յաւելուածով ընթերցեալ. որ կայր ի նմա, ոչ էութիւն և ոչ գոյութիւն ի վերայ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ճշմարտապէս խոստովանէին:

բ. Ա՛ Անտիոքայ. Խ. եւ զկանոն: ՅԱնտիոք նաւակատիս գիրս հաւատն եղին. բ. Բուլ. Չեռ. ի Նարկիսոսէն. գ. Ա՛ եղեւ. դ. Ն. Սեմի. ծ. Բուլ. Չեռ. առ միոյն:

## ԳԼ. ԽԲ. 1

Բայց ա գիտելի է զի ոչինչ այլքն յազագս կրաւնից, այլ ի ձեռն այլ պատճառոյ զնզովն առնէին: Քանզի խղճացեալք յաղագս հաւատոյն ի նզովելն զմիմեանս և զհաւատն, զմիմեանս ոչ անգոսնէին. զուզահակալք որք Վկակայն թագաւորին բարկութեամբ, որ հակառակ այլոց և մանաւանդ ընդդէմ Մակեդոնի պահելով կատարեալ փութայր, նզովեն նախ զՄակեդոն, որպէս զպատճառս բազում սպանութեանց եղեալ, և որպէս զի զսարկաւազ ոմն ի պոռնկութեան ըմբռնեալ ի հաղորդութիւնն ընգալաւ: Իսկ զԱլեքսիոս Կիւզիկոնի, քանզի զՀեռակէոս քահանայ Հեռակիւայ որ ի Տիրոս. Բ ի կախարդութեան ի քահանայութիւն ըմբռ(ն)եալ, ժկըրտեալ ի սպասաւորութիւն կարգէր. իսկ զՔասիդիոս որ և Բասիդոս, քանզի և այսպէս անուանէր, Անկիրայոյն ի տեղոջն Մարկեղոսի կարգեալ, որպէս զի անիրաւաբար զոմանս տանջեալ, և կապանաւք երկաթեաւք ի բանտ արկեալ, և իբր զի զյուպարտութիւն ինչ յարմարեաց, եւս և զի ի ձեռն թղթոց զՎփրիկեոյ զեկեղեցիսն խռովեցոյց, իսկ զՌուակոնտիոս, Գ զի ի Գաղատեոյ փոխեցաւ

ա. Բնագրից երեք տող բաց է թողել թարգմանը:

բ. τὸν ἐν Τύρῳ Ἑρὰκλέους. Ձեռ. ունի. քանզի զհարկողսն քահանայի ռակղոյ ի կախարդութեան. բաւական աղչատուած ընթերցուածք:

գ. Ձեռ. զԳուակոնտիոս:

1 Տես Սողոմ. Գ. 24 25 փխտտ. Ե. 1. Սուլպ. Սեվ. Բ. 45. Կաս. Ե. 98. Նիկեփ. Բ. 45:

Բայց զՄակեդոն նզովէին, որպէս զբազում մահաւոց ապրտաւոր և զի զսարկաւազ ոմն ի պոռնկութեան գտեալ, ոչ որոշէր. զորոյ՝ յառաջագոյն զմահու ասացաք:

ա. Ա՛ մահու. ք. Դ. զքաղում պարտաւոր. գ. Գ. զորս. Դ. զորս:

ի Պետգամոն: Ընդէնուին և զՆէոն Սելեկոյ, յորում ժողովն եղև, ևս և զՍոփոռոնիոս Պոմպիլպոլսի Պեփղազոնւոյ, և զԵրպիղիոս Սատաղացեացն՝ որ ի կապապադոկիայա և զԵրուսաղէմացեացն կիւրիղոս. զայս վասն այլ պատճառոյ հանէին:

Գլ. ԽԿ. 2

Քանզի Եւստաթիոս Սերաստւոյ Հայոց և ոչ ի պատասխանատուութիւն եղև ընդալեալ, վասն զի յԵղադիոսէ ի հաւրէն իւրմէ և եպիսկոպոսէն կեսարու կապադոկիոյ յառաջագոյն նզովիւր, վասն զի անպատշտճ քահանայութեանն հանդերձ ազանէր, Բայց այս գիտելի է. զի ի տեղւոջն Եւստաթայ Մեղիտոս կարգեցաւ եպիսկոպոս, վասն որոյ սակաւ ինչ յետոյ ասասցուք: Իսկ Եւստաթիոս և յետ այսորիկ յորում սակա նորայ եղելումն ժողովու ի Գանգրա Պեփղազոնիոյ դատապարտեցաւ, վասն զի յետ նզովելոյն զնա ի կեսարւոյ

ա. Ե՛՛՛ϛ Μακεδονίας.

1. Վալե, որը իւր ծանօթութեան մէջ նկատում է. Սատաղան Հայաստանի քաղաք էր եւ շատ անգամ յիշուում է հին հեղինակների կողմից. մինչդեռ այդ անունով քաղաք Մակ դոնիայում յայտնի չէ. ուստի առաջարկում է Մակեդոնիայի տեղ Հայաստան գրել: Մեր ձեռագրի ընթերցանութիւնը որք ի կապապոկիայ, ռիանակ. որ ի Մակեդոնիայ, անկասկածելի է կայրւ. անու. հանճարեղ մեգիչի են՝ աղբութիւնը.

2 Տես Սողոմ Դ 21. 25. 26. կասիող. Ե. 39 Նիկ. Թ. 45. 46.

Լինի ժողով ի Գանգրիայ վասն Ստաթէոսի, որ զամուսնութիւն արգելչոր, և զմիս ուտելը պիղծ ասեր, և զբազումս

ա. Դ. Նատաթէոսի. Բ. Ստաթէի. Բ. Ա՛ միս ուտելն.

ժողովուն բազումն ինչ առ եկեղեցականնսն տպաւորմունսն գործէր: Բանգի զամուսնանալ արգելոյր և ի կերակրոց ի բաց կալ աւրինադրէր: և այսօրիւք զբաւղում ամուսնացեալս ի զուգարնակութենէն որոշէր: և զեկեղեցիան թողեալ ի տունս տայր սունել հաղորդութիւն: և զծառայս ձևով աստուածաշտուութեա ՚բ ի տէրանց մեկնէր: Ինքն զիմաստասիրի ունելով զձև և հետեաւ զսցն իւր աւտար պատմուճանի տայր հպել: և զկանայս կտրիլ յադարէր: և զմանս որոշեալս ի պահս խախտէր: իսկ ի տէրունականնս պահել ուսուցանէր: և ի տունս ամուսնացելոցն աղաւթս առնել արգելոյր: և քահանայ որ կին ունէր յոր արինաւք ժողովրդականութեանն եղեալ լինէր յաւրհանութենէն և ի հաղորդութենէն որպէս ի պղծոց խոտորեալ հրամայէր: Եւ այլս բազումս հուպս առնելով և ուսուցանելով նորա՝ ժողով որպէս ասացի ի Գանգրա Պեղիզագոնիոյ՝ եղեալ, զնա ընդեսց: և զաղանդն նորա նզովեսց: այս յետոյ եղև:

1 Այս ժողովի ժամանակը ճիշտ յայտնի չէ. նրա մէջ ի միջի ալը, որոշուած է մի թուղթ գրել: Այդ, եպի կոպուսներին, կուսերիոսի, Հեպատիոսի, Եւլալիոսի, Գրիգորիոսի, Էլիանոսի եւլն: Իպի կոպուսների կողմից, որի պատճէնը կայ: Ե՛թադրութեամբ ժամանակը որոշուում է մտաւորապէս 361 կամ 362 թ.

որոշէր ի մակերաց և յօրինաւոր ամուսնացելոյ. « զեկեղեցիս թողեալ ի տունս կատարէր՝ զխորհուրդն, և զծառայս՝ մեկնէր ի տէրանց՝ պատճառով աստուածաշտուութեան, և կանանց զհերս կտրել: 7 և ի տունս՝ տէրունականս պահել, և ի տունս ամուսնացելոց ոչ՝ աղօթել. և քահանայ որ կին ունի խորշիլ ի նմանէ

ա. Դ. ամուսնաւորաց. բ. Դ. կատարեալ. գ. Ա՛. ծառայս. դ. Գ. կտրեալ. ե. նոր. սրբազրում է. ի տունս. զ. Գ. օթել: եւ աղօթել. Դ. ոչ պահել եւ կամ օթել:

Իսկ յայնժամ Մակէդոնի արտաքսեցելոյ Եւզոբ- սիոսի կրկնակի զԱնտիոքայն եղեալ աթոռ, Կոստանդ- նուպաւսի ցուցանիւր եպիսկոպոս, որոց Ակակայն ձեռ- նադրեցելոյ զնա: Որք մոռանային զինքեանս ընդդէմ աւրինադրելով որոց ի նոցանէ դատեցելոց: Քանզի զՌուակոնտիոսա ընգեցեալք վասն զի ի Գաղատոյ փոխեցաւ ի Պեռգամոս, ոչ համարէին, զի զԵւտիբիոս երկրորդ յայնժամ արարեալ սփոփումնն ձեռնազրեալք, զհակառակն ընտանին աւրինաց գործէին զայս արա- յեալք: Իսկ ընթերցեալն յԱռմինոն եղելովն յաւելուա- ծովը օրպէս զի ուղղեալք առաքեցին պատուիրելով զոչսն ստորագրաւդս ի նմա էքսորել ըստ հրամանի Թագաւորին: Բայց ծանաւթս կարգեն զառ ի նոցանէ գործեցեալն այլց ըստ արեւելից համափառացն և Պատ- առփիլոսի ի Սկիւթիոյպաւսի, քանզի սա ի Սելեկիոյ յընթանին դիմեաց քաղաք: Իսկ Եւզոբսի յայտնեցելոյ եպիսկոպոս մեծիս քաղաքի, այսքան և մեծս եկեղեցիս որ Սոփիս անուանեալ նորոգեցաւ ք ի հիւպատոջն Կոստանդիոսի տասներորդին, և ֆուլիանոսի երրորդին տասն և հնգին Փետրուարի ամսոյ: Բայց Եւզոբսի նըս- տեալ յաթոռն նախ զայս զբազմամբոխս էթող զձայն ասելով. Հայր ամպարիշտ, Որդի բարեպաշտ: Իսկ խռ- վութեան և աղմկի առ այս եղելոյ, մի ինչ ասէ Եւզոբ- սիոս խռովիք առ ի ճառեալսս յինէ(ն), քանզի Հայր

ա. Δρακόντιος. 260. ունի Գոակոնտիոս:

բ. ἐνεκαυλοθη.

† Փրկ. 360 Թ.

օրպէս ի պղծոյ, զժողովն օրինադրէր. որք ժողովեալ նզովեցին զՅաթոթոս և զՄեկրիոս Անտիոքայ եկեղեցւոյն ձեռնադրեն, "

ա. Գ. ձեռնադրեալ են. Գ. ձեռնադրեցին:

ամուսնացած զի ոչ զոք պաշտէ, իսկ Ուրբի բարեպաշտ զի պաշտէ զՀայր: Այսպիսիս ասելով Եւզոքսի խռովութիւնն դադարեաց, և ծաղր բազում փոխանակ խռովութեանն զեկեղեցին ընդունէր. և կայր ծաղրն մինչև ց. քան: « Զի այսպիսիսս իմաստնացեալ Հերձուածովքն, և յայսպիսիսս պարապել բան զեկեղեցին կորզէին: Յայնժամ այսպիսի կատար ի կոստանդինուպաւլսի եկեալն ժողով ունէր:

ԴԼ. ԽԿ. 1

Բայց ապա արդէն և զորս յաղագս Մեղիտոսին ճառեցից. քանզի սայ որպէս յառաջն ասացի, որուքն ի հարսն Սերասուոյ եպիսկոպոս կարգեցաւ Եւստատի նշովեցելոյ. իսկ ի Սերաստիոյ ի Բեռիայ<sup>2</sup> Ասորեաց փոխեցաւ: Եւ եղեալ ի ժողովուն Սելեկիոյ և ի հաւատուն յորոց Ահակայն ստորագրեալս որպէս կայրն Պ Բեռիան գնաց: Իսկ եղեալ ի կոստանդինուպաւլսի շողովուն որոց յԱնտիոքայն իմացեալ զԵւզոքսիոսի արհամարհեալն զնոցայն եկեղեցի, վասն զի ի մեծութիւնն կոստանդինուպաւլսի խոնարհեցաւ, կոչեցեալք զՄեղիտիոս ի Բեռոյ ք, յԱնտիոքա եկեղեցւոջն ձեռնադրեն:

ա. ցայժմ:

բ. Նոյն անունն եւ անմիջապէս իրար մօտ, երեք տարբեր ձեւով թարգմանելը քնորոշէ մեր թարգմանի համար. յունարէնում . Բերոյա-է:

Տես Սող. Կ. 26. Թէոդ. Բ. 31. Եպիփան. Աղանդ. 2Գ. 28. Կաս. Ե. 47. Նիկ. Թ. 28. Փիլոսո. Զ. 1.

Ձ Եւստատի տիղափոխուելը Հայաստանի Սերաստայց Ասորոց Բեռիա քաղաքը անհաւանական է համարուում:

որ զտոժորական վարդապետութիւն ըստ բարեպաշտութեան վարուց « ուսուցանէր. իսկ զհաւատոցն ք բան ոչ յայլ ինչ խոտորեալ ի ժողովոյն հաւատ. այլ զՆիկիոյն խոտորվանեալ հաւատս:

ա. Դ. վարուցն. ք. Բ. զհաւատոյն. Ա. հաւատոյն Ն. զհաւատ:

Իսկ նայ նախ յաղագս հաւատոյն խոտորէր խաւսել, և միայն զսովորական վարդապետութիւնն լսաւդացն մատուցանէր, իսկ նախակարգեալ զՆիկիոյնս խոս(ո)տովանէր հաւատ և ուսուցանէր զհամագոյութիւնն: Ջայս ծանուցեալ թագաւորին զՄեղիտոս պքսորել հրամայեաց, իսկ զԵզոյիոս զնախկին Անտիոքա եպիսկոպոսն ի տեղւոջն էետ ձեռնադրել: Բայց որք զՄեղիտիանոսի տարահերբութիւնն կրէին, թողեալք զարիանոսականն հաւաքումն առանձին զթողովան առնէին, որոց զհամագոյութիւնն իսկըզբանէ խորհողացն ոչ կամեցելոց ընդ նոսա հաղորդիլ. քանզի յարիանոսական աղանդոյն զձեռնադրութիւնն Մեղիտիոսի էր առեալ. և զի նորուն հետևողքն ի նոցանէն մկրտեալք հանդիպէին: Այսու աւրինակաւ և որ յԱնտիոքիա եկեղեցին յայլ համափառական անջատեցաւ կողմն:

Իսկ թագաւորին լուեալ շարժիլ անդրէն ի թշնամութիւն Հռովմայեցւոցն Պարսիցն ազգի, փութանակի յԱնտիոքիայ դիմեաց:

Գլ. Խե. 1

Իսկ Մակէդոնի ի Կոստանդնուպաւսէ արտաքսելոց, և ոչ բերելով զդատապարտութիւնն, ոչ ելբէք

1 Տես Սողոմ Դ. 27 Կաս. Ե. 41. Նիկեփ. Թ. 47.

Իսկ թագաւորին՝ զայս ծանուցեալ առաքէ արտաքսելք զնա պքսորս. այլ որք ճշմարտութեան էին նորա աշակերտեալք, յիմեքէ՞ խոտորէին նորա՞ լուսաւոր վարդապետելոյն.՝

ա. ն. թագաւորն. Ա՛. ք. Ա՛. ծանուցեալ արտաքսէ. Դ. առաքել զնոսա պքսորս. գ. Գ. դրդէն զ, Գ. ի նորա. Ե. Դ. վարդապետութենէն. Ա՛. Նիկիոյն հաւատ:

լուել յանձն առնոյր, այլ խոնարհի առ որս միւսոյն կողման որք ի Սելեկիայն ընգեցին զորս Ակակայն: Բարեխաւսեալ լինէր և առ Սոփոնիոս և Եղեւիոս փոխանակ ընդունել զնախկին յԱնտիոքիա եղեալ հաւատն և զյետ այսորիկ ի Սելեկիա հաստատեալն, և նշանակաւոր անուամբ զհամագոյութեանն հաւատ վերահռչակեալ յորդորեաց: Ժողովէին բաղումբ ի ծանաւթից նորա առ նայ, որք Մակեդէանոսքն կոչէին ի նմանէ: Որքան ի Սելեկիոյ ժողովուն զԱկակայսն դատապարտեցին, և յայտնապէս զհամագոյութիւնն աւրինադրեցին: նախկինն ոչ պարզաբար ասացեալք զնայ: Բայց հռչակ իմն ունի ի բազմաց. որպէս զի ոչ Մակեդոնի է այս զիւտ, այլ մանաւանդ Մառաթոնիոսի <sup>1</sup>, զոր փոքր ինչ յառաջն ի Նիկովիդոյն առնէր եպիսկոպոս, վասն որոյ Մառաթոնիանուս կոչեն զսոսա: Առ այսոսիկ ապաւինի Եւրասաթիոս ի Սեաստուոյ <sup>ա</sup> արտաքսեալ, <sup>բ</sup> վասն որոյ պատճառաց՝ փոքր ինչ յառաջ ասացի: Որպէս զի Մակեդոնիոս զչոզին Սուրբ զուգավերառիլ <sup>գ</sup> յաստուածաբանութիւն Երրորդութեանն խոտորեցոյց. իսկ յայնժամ և Եւստաթիոս, Ես, ասէ, ոչ Աստուած անուանել հաճիմ զչոզին Սուրբ, և ոչ ստացուած կոչել յանդգնիմ: Յաղագս այսորիկ պատճառոյս հոգէմարտս զնոսա կոչեն համագոյութեանն խորհուրք. որպէս զի ապա որք ի Մակեդոնէն յԵլեսպոնտոս բազմանան, ըստ աշխարհին զայն

ա. Σεβαστία.

բ. Զեռագրում գրած է Երտաքսեալ:

գ. συναναλαβειν.

<sup>1</sup> Մառաթոնիոսի Զեռագրով մեծ ջանքով հալածուեցին Կ. Պօլսոց Մակեդոնի եւ Ուրիոսի հետեւողները:

ասացից: Բայց որք Ակակայն փոյթ դնէին առժամայն  
 յԱնտիոքիա ժողովեալ զղջացեալք զի բնաւ զՈրդի նման  
 Հաւր ասացին: Եւ զնոյնհետայն ի հիւպատուոջն որ էր  
 Տաւառսի և Փղոռենտիոսի և եղեալք յԱնտիոքիա  
 Առորոց Եւզոյիոսի ունելով զեկեղեցին որ անդ. և թագա-  
 ւորին անդ լինելով. սակաւք ոմանք վերաշարժէին զկար-  
 զեալսն ի նոցանէն ասելով պարտ լինել բառնալ զհա-  
 մաբոյութեանն բանս ի գրեցելոցն հաւատոյ յԱռիմի-  
 նոն և ի կոստանդինուպալսի. ոչ ևս թագուցեալ,  
 այլ յայտնարար ասացեալք. զի ըստ ամենայնի ան-  
 նման զՈրդի Հաւրս, ոչ միայն ըստ գոյութեան, այլև  
 ըստ կամաց, յոչէից զնայ որ զԱրիոս ասէր. և նոքա լի-  
 նել ասացին: Զուգառեալք լինէին յայս կարծիս որք  
 յԱնտիոքիա յայնժամ զԱյետին խորհողք. վասն որոյ  
 ունելով զարիանոսականն համանուանութիւն, տակաւին  
 և աննմանք և յոչէից եղև կոչեցեալք յորոց յԱնտիոքայ  
 Խորհողացն զհամագոյութիւնն. իսկ անջատեալք եղև  
 յայնժամ յաղազս եղելոյն պատճառոյ ի վերս Սեղի-  
 տիոսի, որպէս և յառաջն ասացի: Բայց սակայն հար-  
 ջեալք ի նոցանէ թէ ընդէր կարգադրութեանն ձերոյ  
 հաւատոյն Աստուած յԱստուծոյ զՈրդի ասացեալք.  
 աննման և յոչէից յանդգնին անուանեալ: Իսկ նոքա  
 այսպիսի իմաստամբ ձեռնարկէին զընդդիմադրութիւնն  
 մերկացուցանել: Զի այսպէս, ասեն, ասի յԱստուծոյն,  
 որպէս յառաքելոյն ճառի. բայց ամենայն ինչ յԱստու-  
 ծոյ, մին այսուհետև յամենեցունց և Որդի է Աստու-  
 ծոյ և վասն այսորիկ նախակաի ի կարգադրութիւնսն  
 զըստ գրոցն: Այս իմաստմանց առաջնորդ էր Գիորգիոս  
 Լաւադիկիոյ եպիսկոպոսն, որ առաջնորդս գրով այս-  
 պիտեացս բանից, անգիտացաւ թէ որպէս զայսպիսիս

առանձնականս առաքելոյն ի վերագոյն ժամանակսն Ռոմ-  
գենի անդորրագոյնն<sup>ա</sup> քննեալ թարգմանեաց: Այլ սա-  
կայն թէ և այսպիսիս ձեռնարկէին իմանալ զնախա-  
տինսն և զըստգտումնն ոչ բերելով ընթերցան զիւրեանցն  
հաւատ զոր և ի կոստանդինուպաւսի: և այսպէս ըստ  
քաղաքաց իւրեանց զնացին: Բայց Գիորգիոս յԱղէք-  
սանդրիա կոյս դիմեալ զորս յայնժամ եկեղեցիսն ըն-  
դունէր: Աթանասայ տակաւին անյայտ եղելոյ և զորս  
յԱղէքսանդրիա զխորհողսն զնորայն վարէր: Իսկ յԵրու-  
սաղէմ<sup>բ</sup> փոխանակ Վիւրղի ձեռնադրեցաւ Եւինիոս: Բ  
Բայց զիտեքի է, զի յետ նորա Հերակղ<sup>գ</sup> կարգեցաւ և ապա  
Իղառիոս. իսկ յետոյ Վիւրղուոս էել<sup>դ</sup> յԵրուսաղեմէ և  
կալաւ զեկեղեցիսն որ անդր: Այս որպէս ասացիս յետոյ  
եղև. բայց յայնժամ և միւս այլ առընթեր բուսաւ  
հերձուած յայսպիսի պատճառոյ:

Կ. Ի. ԽԶ. 2

Ի Լաւողիկիա Ասորոց երկուք արք էին համանունք.  
վասն զի երկաքանչիւրաբար էր անուն Ապողինառիս  
հայր և որդի. հայրն զքահանայի ունէր կարգ յեկեղեց-  
ւոջն իսկ որդին զընթերցողի: Եւ երկոքինն էին հեթա-  
նոսականացն բանից վարդապետք, քերականացն հայրն,  
և ճարտասականացն որդին: Իսկ հայրն Աղէքսանդրացի

ա. Ձեռ. ունի .անդորրագոյնն. πλανύτερον.

բ. Ἀρχηγιος

գ. Փոխանակ .ել. — ἐπέβη.

1 Երուսաղէմի եպիսկոպոս Մաքսիմոսը իւրեան յաջորդ էր Նշանակել  
Հերակղին. բայց Արևանունբը յաջողեցրին այդ տեղը տալու Կ'Լքդին.

2 Տես Սողոմ. Զ. 25. Կասիող. Ե. 44. Նիկ. Թ. 7.

գուլ՝ ազգաւ, նախ ի Բեռիւայ ա ուսուցեալ<sup>1</sup>, ապա փոխեալ ի Լաւորիկիայ, և կին առեալ անդ, ընդունէր զորդին Ապողինաօխոս: Եւ երկոքեանն յայնժամ լինէին աճեցեալք Եպիփանա իմաստնասիրի մտերիմ եղեալք, սիրելիք ընդունեցին զնա: Իսկ երկուցեալ Թէոդոտոսի Լաւորիկիոյ եպիսկոպոսին. զի մի՛ յաճախ խաւսք առնն՝ առ հեթանոսութիւնն խոնարհեցուցեն, արգելոյր զհրպեալն առ նա. իսկ նոցա փոքր ինչ հոգ տարեալք եպիսկոպոսին, Եպիփանա սիրոյն ողջոյն տային: Իսկ յետ այսորիկ Գիորգիոս Թէոդոտոսի փոխանորդն փութացեալ մերժել զնոսա և ոչինչ պատճառով հաւանեցուցեալ կարացեալ, զերկոսինն անհաղորդութեամբ վնասեաց: Թըշնամանս համարեալ ապա մանգանն զեղեալն, և վստահանալով ի զաւրութիւն իմաստականին բանից, նորաձեւաց և նա հերձուած որոյ այժմ վերայածի զանունն ի գտաւղէն ունելով:

Բայց ասեն ոմանք ածել զնոսա առ Գիորգիոս. ո՛չ այլքան յաղագս նախաճառեալն պատճառոյ, այլ տեսանէին զնա այլ ինչ ընդ վայր աւրինադրելով: Իսկ այժմ նման խոստովանելով զՈրդի Հաւր որպէս ի Սելեկիայն խոստովանեցաւ, իսկ այժմ յարիոնոսականն խոնարհելով կարծես: Վասն որոյ ի դէպ առեալք պատճառ առնեն զզնայն: Բայց ապա իբրև ոչ ոք զնոսա համարէր մուծանեն ձև ազանդոյ: Եւ նախ ասէին ոչ առնուլ հոգի յաստուծոյն բանէ տնաւրէնութիւն մարդեղութեանն: Ապա որպէս ի զղջմանէ ուղղեալք յաւելին հոգի ընդունել, բայց միտս ոչ ունել նմա. այլ լինել աստուծոյն բանի, փոխանակ մտաց ի յառելուամն մարդում:

ա. ին էմ Եղրտօ՛

1 Բերիւում պն ժամանակ հաշակուոր ս. սուրմարան կար:

Յաղագս այսորիկ միայնւոյ ասեն տարբերիչ որք այժմ ի նոցանէ զհամանուանութիւն ունին. քանզի զՆորորդութիւնն համազոյ ասացին լինել: Բայց վասն Ապողինոսաց և անդէն ըստ աշխարհին ասասցուք:

Գլ. 101. 4

Իսկ Թագաւորին կոստանդինոսի յԱնտիոքիա կելով՝ կայսրն Յուլիանոս ընդ բազում բարբարոսաց խառնակեալ, և յաղթեալ ամենայն զաւրականաւքն իւրովք, և ի ձեռն այսորիկ ի նոցանէ յորջորջի Թագաւոր: Այսորիկ պատմելոյ Թագաւորին ի ջան մասնէր. և մկրտեալ յԵզոյիոսէ՝ առ ի նորայն գնաց պատերազմ: Եւ եղեալ ի մէջ կապպադոկիոյ և կիւլիկոյ ի Մոփսուջրբուղիսան կատարեաց զվարսն ի հոգատարութենէն ի սրանեղութիւն ըմբռնեալ ի հիւպատուոջն Տաւռոսի և Փղոռէնտիոսի երիցն Նոյեմբերի ամսոյ:

ա. εν ταῖς Γαλλίαις· Ի Գաղղիա

1 Յե. Սոգ. Ե. 4. կաս. Ե. 50. հիկ. Թ. 50.

2 Հիւլարիոսը վկայում է, որ կոստանդինը առաջ մկրտուած չէր: Այդ կայսեր մասին հին պատմագիրներից որևէք գովասանքով են խօսում ուրիշները նրան հերոսի հետ են համեմատում:

Իսկ Թագաւորն կոստանդինոս եկեալ յԱնտիոքայ ի տեղի փոխանորդէ այլոր՝ ունէր զաղանդ Արիոսի: Եւ իսկոյն՝ հասանէ նմա լուր վասն Յուլիանոսի կեսարու, որ ընդ բազում բարբարոս պատերազմեալ յաղթեաց. և ի ձեռն պսր յաղթութեան՝ յորջորջեցաւ նա յամենեցունց՝ և ի ջան՝ մտեալ մեծաւ ուժով՝ ի նորայն գնայր պատերազմ, և եղեալ ի մէջ կապպադոկիայ՝ և կիլիկիայ, հասանէ նմա վախճան մահու. կա-

ա. Դ. յԱնտիոք ի տեղի վոխանորդեալ եպիսկոպոս, որ ունէր Ն. յայլ որ ունի զաղանդն. Բ. Գ. Ա՛ իսկ: Գ. Ն. ամենեցունց. Դ. Գ. իման. Ե. Ա՛ յուժով. Գ. Դ. Կապուտիկոս:

Իսկ այս էր ամ առաջին երկկրիւր ութսուն և հինգ Ողիմպիադումն. և եկաց Կոստանդինոս ամս քառասուն և հինգ: Թագաւորեաց ամս երեսուն և ութ, ընդ հաւրն Թագաւորեաց ամս քսան և երեք: Իսկ յետ վախճանի նորա ամս ԻՆ. որքանեաց սղագաւ և գիրքս ունին ժամանակ: <sup>1</sup>

1 Տես Մէք. Ասորի (Երուս. դպ. 1871. էջ 139) • Իսկ Յուլիանոս գնացեալ ի Փաւլիս ընդդէմբարբարոսացն, յաղթեաց, եւ հզարտացեալ թագաւոր քարոզիչս և ի գորակն: Եւ յուեալ զայս Թագաւորն Կոստան, զարհուրեցաւ եւ մկրտեցաւ ի Գրիգորէ եպիսկոպոսէ Անտիոքու. որ էր Արիանոս եւ եւ ընդդէմ Յուլիանոսի եւ ընդ մէջ Կիլիկիոյ եւ Կապադոկիոյ մեռաւ Հէնցեալ ամս քառասուն եւ ութ եւ Թագաւորեալ ամս քսան եւ հինգ: Այս հաստատեց շատ կարճւոր է. որովհետեւ պալզ ցոյց է տալիս, որ հեղինակը աչքի առաջ է ունեցել Սոկրատի ընդարձակ Թարգմանութիւնը կամ քննադիրը. իսկ մի ուրիշ սեղ. Մէք. Ասորին (էջ 26) մատնացոյց է անուամբ շեղ համառօտ օրինակը:

տարեալ զկեանս իւր ոչ ուղղափառութեամբ, որ ունէր ամս ԻՆ. « Թագաւորեալ ամս ԼԸ. Բ ՄՁԵ ողիմպիադայն, (ոչ բարեպաշտութեամբ. <sup>2</sup> որպէս և նորին հայրն Կոստանդինոս ինքնապէս Թագաւոր. <sup>3</sup> ) Այսպէս կատարեցաւ ի նոյեմբերի ամսան <sup>4</sup> յերիսն:

ա. Բու. Չեռ ԽՆ. ք. Բուրր Չեռ ԼԾ. գ. Գ. Ա՛ քարեպաշտաբար. դ. Գ. Թագաւորին. ե. Ն. ամսոյ.





# ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ԳԼ. Ա. 1

**Վ**ոստանդիոս Թագաւոր ի սահմանսն Վիւլիկոյ  
Էրիցն Նոյեմբերի ամսոյ առ հիւպատոսաւքն Տաւառսիւ  
և Փղոռէնտիոսիւ կատարէր զվարսն: Իսկ Յուլիանոս առ  
Տոյն հիւպատոսաւքն ի մետասանին զկնի նորուն ամ-  
սոյն Դեկտեմբերի յարեմտայինցըն կողմանց գնացեալ  
ի Վոստանդինուպաւլիս եմուտ: և ի նմա ինքնակալ<sup>2</sup>  
Տուցանիւր: Բայց վասն զի Յուլիանոսի Թագաւորի բա-  
Շաւորին՝ առն՝ սակաւս ինչ պատմել կայ առաջի:

Մի՛ որ ի նորայոցն ծանաւթից խնդրեցէ զճոռո-  
ւտութիւն պատմութեան, որպէս զի պարտ գոլ յաղագս

ա Ռս. Էλλόγμος հռչակաւոր, անուանի:

1 Տես Սոզոմ. Ե. 2. Թէոդ. Գ. 1.

2 Յուլիանոսը արդէն առաջ էր Գաղղիոյում զուր հրատարակուած:

ԳԼ. ԾԵ.

Թէ որպէս Յուլիանոս Թագաւորէ եւ արարցն իւր:

Իսկ Յուլիանոս իբրև լուաւ զմահն իսկոյն գնաց ի Վոս-  
տանդնուպոլիս, և մտեալ ի ներքս Թագաւորեաց, և ինքնակալ  
զինքն եցոյց՝ աշխարհի. վասն որոյ պատմել հարկաւոր է զնո-  
րա ազգատոհմ. <sup>Բ</sup>

ա. Դ. կոչեաց զինքն. Բ. Դ. Ն. ազգագատոհմ:

այսորիկ բանն ո՛չ պակասեցուցանել, զորս յաղագս որոյ բանս: Ասան զի քրիստոնէական գորով պատմութեանն, վասն յայտնութեան խոնարհագոյն յուղարկել զբանն, և այս ի սկզբանէ պատմեցաւ: Բայց սակայն ճառելի է յաղագս նորա և ազգին և խրատուն, և եթէ որպէս ի թագաւորութիւն եկն. և զայս արասցուք մեք փոքր ինչ ի վերուստ սկսեալ յաղագս ամենեցունց:

Առստանդիոս որ զԲիւզանդիոն իւրոջն յորջորջեաց անուամբ, երկուս ունէր միահարս՝ եղբարս, ոչ ի նմին նորա մուրէն եղեալս. մեկին Գաղմատիոս անուն, իսկ միւսոյն Առստանդիոս: Եւ Գաղմատիոս որդի ունէր համանուն ընքեան: Իսկ Առստանդիոսի երկուք եղեն որդիք, Գաղաս Բ և Յուլիանոս: Արպէս զի ապա յետ վախճանին շինողին զԱռստանդինուպոլիս զաւրականքն սպանին զԳաղմատիոս. 1 յայնժամ նոքա որր մնացեալք յընտանին հաւրէն առ փոքր ինչ ընդ Գաղմատիոսի վշտանային. եթէ ոչ զԳաղոս ախտ ինչ ակնկալութիւն

ա. Ուղիղը՝ Առստանդին:

բ. Γάλλος.

1 Յուլիանոսը ձեռել է 331 թուին. Գաղմատիոսը սպանուեց 387 կամ 338 թ.:

ոչ հեռագրոյն ի ճանաչելոյ զԱստուած եղեն: Վասն զի առ որս աննախախնամութիւն մուծողս Եպիկուրոսոն, այլ որպէս զհակառակս բանականն իմաստութեամբ քաջաբար պատահեցան զանաստուածութիւնս նոցա խափանելով: Եւ ի ձեռն այսոցիկ բանից պիտաւորեալք սիրողացն, զբարեպաշտութիւնն կարգեցան, և ոչ ևս զբանէ գլխոյն կալան առ ի չգիտեք զԾած(կե)ալն յազգացն և յաւիտեանցն ըստ Քրիստոսեանն խորհրդոյ: Եւ զայս այսպէս ունել ի Հռովմայեցւոցն թղթի<sup>1</sup> առաքեալն ցուցանէ, <sup>2</sup> որովք ասէ: Քանզի յայտնելոց է բարկութիւնն Աստուծոյ յերկ(ն)ից ի վերա ամբարշտութեան և անաւրէնութեան մարդկան, որք զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին. վասն զի գիտութիւնն Աստուծոյ յայտնի է ի նոսա: Քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա. քանզի աներևոյթք նորա ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսնի, զի մշտնջենաւոր նորա զաւրութիւն և աստուածութիւնն առ ի լինել նոցա անպատասխանողս. զվասն զի ծանուցեալք զԱստուած ոչ որպէս զԱստուած փառաւորեցին: Այսոքիկ երևին գիտութիւն ճշմարտութեան ունելով զոր Աստուած նոցա յայտնեաց, իսկ պար-

ա. Քն. ԺաԺԵ. անուսումնութիւն:

1 Տես թղ. Ա. 18:

2 Զեռագրի այս էջի կէս լուսանցքը չէ գրուած. բայց ոչինչ պակաս է:

զհաւատացեալս և արդարև Աստուածաշունչ գիրք առաքելոցն սուսել ըսն զառաւելս արգար, և ունին զաստուածայնոցն սքանչելիս և զկարգս յերկրաւորութեան, և յուղիղ վարս և ի հաւաքս աստուածասիրաց<sup>3</sup> ունողացն և լսողացն սահմանեցին, և ոչ ըստ արուեստի բանակուացն, որք ընդ ճշմարտութեան

ա. Դ. աստուածսիրացն:

տաւորք լինին, զի ծանուցեալք զԱստուած ոչ որպէս զԱստուած փառաւորեցին: Ապաքէն ոչ արգելուլ զհեթանոսացն ուսանել կամաւ խորհեցելոցն զուսանելն թոյլ ետուն. բայց մին այս բան ճառեցաւ մեզ առ նախակայսն, իսկ միւսն ևս այսպիսի: Աստուածաշունչ զիրք կարգս սքանչելիս և արդար և աստուածայինս ուսուցանեն, և ի բազում արդար և երկիւղածութիւն և վարս ուղիղս լսողացն եղին, և հաւատս աստուածասէրս փութանակի ունողացն, և ոչ ևս արուեստ ուսուցանեն բանական առ ի կարող լինել պատահել կամողացն ընդ ճշմարտութեանն պատերազմել: Զի յոյժ պատերազմին պատերազմունքն, յորժամ նոցաովքն զինուք հպիմք ընդդէմ նոցա, իսկ այս ոչ յաւգուտ քրիստոնէիցն որովք Ապողինարքն գրէին: Զայս և թագաւորին Յուլիանոսի դիտեալ աւրինաւք խափանէր զքրիստոնեայսն զհեթանոսացն խրատիլ, քանզի քաջ զիտէր, որպէս զի այսպանեալք նորա առասպեալքն բարէմատնելի զնորայն առնելոց են զկարծիս: Յորոց ըստգտեալ և Սոկրատիոս, որ ըստ նոցայն զխաւոր իմաստասէրն, որպէս զի պակասագրելով զորս ի նոսա դէսն ա դատապարտեցաւ:

Արդ իբրև զգուշացուցանեն զմեզ յորժամ Քրիստոս և նորուն առաքելն. թէ լինել սեղանաւորս փորձրս, որպէս զի զամենայն փորձել և զբարին ընդունել. <sup>1</sup> և զգուշանալ. Մի որ <sup>2</sup> իցէ որ զձեզ խաբեսցէ ճարտարմտու-

ա. Բն. τὰ δαιμόνια:

1 Տես թղ. Ա. Թ. սաղ. Ե. 21:

2 Տես թղ. Կողոս. Բ. 8:

պատերազմին, որպէս Յուլիանոսն որ ոչ միայն իշխանաճանաւն վարէր ի մարտ քրիստոնէութեան, <sup>1</sup> պերճարան <sup>2</sup> բանիւք ա-

ա. Ա իշխանականով. ք. Դ. այլ. դ. Դ. պերճ:

Թեամբ և սնտոի պատրանաւք: Իսկ այսոցիկ հաւանեալք ապա զզէնս պատերազմացն ստացուք<sup>ա</sup> և ստանալն ո՛չ պատերազմացն տարցուք հոգ: այլ զչարն արտայեղեսցուք, իսկ զճճմարիտն և զբարին ընդունելով զամենայն ընդալցուք: փո՛ւձելով զբարին ուրանուր ընտանի ճճմարտութեանն իցէ: Իսկ թէ որ զայս մեզ բռնաբար ասել վարկանի, զմտաւ ածցէ զի առաքեալն ո՛չ միայն ոչ արգելու ուսանել զհեթանոսական խրատ: այլ երևի և ոչ իւր անփոյթ արարեալ զխրատոյն, սակս զիտելոյն զբազում ճառեալսն հեթանոսաց: Զի ուստի՞ ասէր. Կրիտացիք՝ հանապազասուտք, չարածրճիք, և դատարկապորտք. եթէ ոչ զԵպիմինիդոսի առն Կրէտացւոյ ընթեանոյր: Կամ ուստի՞ գիտէր. Գորոյ և ազգն իսկ եմք,<sup>2</sup> եթէ ոչ Զերեւելիսն՝ աստեղաբաշխողին Առայտայ՞

ա. Բն. այս նախադասութիւնը բացասականով է գործածել. - Իսկ այսոցիկ ոչ հաւանեսցուք, եթէ ոչ զզէնս պատերազմացն ստացուք:

բ. τα Φαινόμενα գրքի տիտղոսն է:

գ. Ἀράτου.

1. Տես Տիտ. Ա. 12:

2. Գործք Առաք. Ժէ. 8:

Նարգէր զբրիստոնէութիւն, և զհեթանոսական մեղրութիւնն ի պարզմիտս ահաւոր և իրաւացի ցուցանէր. զի այնպէս է խորամանկութեան մարտք. Բայց զնոցայն գիտել և նորօք ըզնոցայն յանդիմանել, որջախոհաց<sup>ա</sup> և իմաստասիրաց անձանց է. որպէս Բ առաքեալն Պօղոս նոցա զԵպիմինիդոսէ առ Կրետացւոյն, ասէ զբան. Կրետացիք հանապազասուտք, չարածրճիք, դատարկապորտք. և սոոյք ասէ զվկայութիւնս. Եւ բազումս է ասել զառաքելոց: Գ Զի պարտ է ասել բարի և յարտաքնոցն

ա. Ն. ողջախոհացն. բ. Ա՛ եւ առաքեալն. գ. Դ. առ Կրէտացին. զ. Ա՛ զառաքելոցն.

գիտէր: Այլ և զսպականենն՝ զբարս քաղցունս բանք չարք, ցուցանէ ոչ անյուր Եւռիպիդեայ Արարածին՝ հանդիպեալ: Եւ զի՞նչ պարտն է սակա այսորիկ ասե երկայնել. որև երբեմն կանկնեալ եղև. որպէս զի յու մեմնէ անարգել սովորութենէ որք ըստ եկեղեցեաց վարդապետքն ցուցանին մինչև ցծերութիւն զհեթանոս սացն ճգնեալք. և զայս բարէլեզութեան աղագան կրթութեան մնաց, իսկ զայս և նոցա իւրեանց ալ տաքսախորհողացն ըստգտումն յաղագս որոյ և զգուշացան Այսօրիկ սակա Ապողինարացն որպէս էր վարկանիլ ճառեցաւ:

ԳԼ. ԺԷ. 2

Իսկ թագաւորն Յուլիանոս բազում գանձս ի քլրիստոնէիցն ժողովեալք. և ի Պարսս կոյս զփոյթն արալ

ա. δραμάτων

1 Ա. Կորնթ. ԺԵ. 33.

2 Տես Սող. Ե. 19. Նեկ. Ժ. 27.

ընդունել. այսքան ասացաւ վասն Ապողինարայ. " (Սա յիմ տակաց Բ որ և յետոյ հերձուած եմոյծ յեկեղեցի Ապունար. որ մարդկային 9 հոգի ոչ ունեւ ասէր Քրիստոսի. և այսոցիկ ի բազմաց յաղթահարեալ. հաւանեցաւ հոգի Քրիստոսի, բայց միտս մարդկայինս ոչ. փոխանակ մտաց տուծոցն բանն ասէ. որ զամենայն յամենայնէ ներքս որ ի բազմաց ուղղափառաց յաղթի):

ԳՂ. ԺԲ.

Յաղաղս հալածանացն որ ի Յուլիանոսէ եւ տանջեն զսուրբսն 1

Իսկ Յուլիանոսի ժողովեալ բազում արծաթ ի նէից և յառաջ ելեալ երթայ ի Պարս ի մարտ. Եւ ա Դ. յԱպողինարայ. ք. Ն. իմաստակաց. գ. Ն. զ

եալ յԱսորեացն հասանէր Անտիոքիա: Յոր հասեալ և զորպիսին իւր զբազմապատուասիրութիւն և Անտիոքացեացն կամելով ցուցանել: զգինս վաճառուցն իրաց առաւել քան զպարտն ի նուազն իջոյց, ոչ կամելով զժամանակին անձկութիւն, և ոչ համարելով որպէս զի եկն բազմամբոխ զաւրուն աշխարհականացն ի հարկէ զնաս լինի, և զաննախանձութիւն քաղաքացն հատաշէ: Վասն որոյ վաճառականացն և վաճառուցն կապեալ ից Կ ոչ տանելով զառ ի թագաւորին հրամանէ զնասն, ի վաճառականութենէն յայնմժամ ի բաց կացին: Եւ յայմանէ վաճառքն պակասեցան. նաև զյաւելումն ևս ոչ տարեալ Անտիոքացեացն. քանզի զիւրափոփոխ մարդկանն ոչ արարեալ փոյթ ի թշնամանս ընդդէմ թագաւորին եղեն տարեալք. գոչէին հակառակ նորա և ծաղր առնէին զմաւրունս, քանզի խորամուրու էր կըտրել զայն ասէին, և չուանս ի նմանէ հիւսուլ. դահեկանի նորա ցուլ ունել, և զաշխարհ ի նմինն կործաշեալ: Քանզի թագաւորն պաշտաւն ասէր զիցն գոյով, և ցուլս յաճախապէս ի բազինս կռոցն մատուցանելով զոհէր. բազին և ցուլ զրելով յիւրումն դահեկանին: Յայմ արհեստանաց ի բարկութիւն անգեալ թագաւորին, սպառնայր զամենայն չար առնել Անտիոքացեացն քաղաքի, ի ճարտն Վիւղիկեցւոցն դառնալ, և անդ ըզպատշաճն հրամայել պատրաստել առնուլ փութայր: Ուստի պատճառ ընդունէր իմաստակն Ղիբանոս զրել

ա. Καπηλοι մանրավաճառաց:

յԱնտիոք, ոչ սակաւ առմունս ընչից առնէր մեծատանց և վաճառականաց քրիստոնէից, նաև յեկեղեցեաց ևս: Եւ զմե-

զաղաչականն ա վասն Անտիոքացեացն. և առ Անտիոքացիսն սակս թագաւորին սպառնալեաց: Այլ զայս բանս գրել ասեն իմաստակին ոչ և ս բազումս ճեղ: Թ իսկ թագաւորին զործովք թշնամանողացն հատուցանել կամեցեալ, թողեալ հատուցանել, ընդդիմական փսոսանաւք զբարկութիւնն էլոյծ. քանզի առ խորհրդիւ նորայ անտիոքականն մաւրուատեցութիւնն բան արարեալ, նշանագիրս բանականս յԱնտիոքացեացն էթող քաղաքի: Սակս այսոցիկ այսքան ճառեցաւ:

Բայց ասելի է և որպիսի ինչ յԱնտիոքիա քրիստոնէիցն Յուլիանոս յայնժամ արար:

Գ. 1. ժ. 1.

Քանզի զորս ըստ Անտիոքիա մեհեանն բանալ հրամայել. աւճումն առնուլ որ ի Դափնին Ապողոնէ<sup>2</sup> փութայր: իսկ դեւն որ բնակեալ էր ի տաճարին երկնչելո՞վ ի դասցւոյն Բարիդուսա ասեմ ի վկայէն, ոչ առնէր պատասխանի, քանզի մերձ էր տապանն յորում մարմին սրբոյն կայր թաքուցեալ: իսկ Յուլիանոս իմացեալ ըզ-

ա. τὸ πρεσβυτεϊκόν.

բ. առ քաղումս արտասանել εἰς πολλοὺς εἰρηκέναι.

1 Սող. Ե. 13. Թէոդ. Գ. 10. Ուղիքն Ժ. 35. Կասիոզ. Զ. 31. Նիկիեփ. Ժ. 28.

2 Անտիոքի մ. ո մի անտառ կար Դափնէին նսւիրուած. ուր էր նսել նրա տաճարը:

Հեանն Անտիոքայ բանայ ի պաշտել զկուռս զոհիւք, " իսկ գեւն որ բնակեալ էր ի տաճարին, ի յահի<sup>1</sup> լեալ վասն սրբոյն Բարեղայ. որ մերձ է<sup>1</sup> տապանն յորում էր սուրբ նշխարքն: Դ

Իսկ Յուլիանոսի զայս իմացեալ, թէ վասն սրբոյն է այս,

ա. Դ. զոհոք. բ. Ա' ի ահի. գ. Դ. մերձ էր. դ. Դ. նշխարն.

պատճառս, հրամայէ փութանակի փոխել զտապանն: Զայս ծանուցեալ որոց յԱնտիքիա քրիստոնէիցն հանդերձ կանամբք և մանգամբք ուրախութեամբ և սաղմոսերգութեամբ ի Դափնոյ ի քաղաքն փոխէին զտապանն: Իսկ սաղմոսերգութիւնքն հպէին ընդդէմ հեթանոսացն շատուածոց, և հաւատացելոց ի նոսա և կոոց նոցունց:՝

ԴԼ. ԺԹ. 2

Յորժամ և բարբ թագաւորին թագուցեալք յանդիմանէին. քանզի ոչ ընդունէր զնախկին իմաստասիրին խոստացեալ: Այլ ի նախատական աւրհնութեանց զիւրատես էր առ բարկութիւնն, և պատրաստ էր զայս առնել քրիստոնէից, զոր առ Դիոնիզէտիանոսիւն արարին չարիս: Եւ վասն զի որ ընդդէմն Պարսից Վոյթ ոչ տայր զկամացն ժամանակ. հրամայէր Սաղուատիոսի եպարքոսի ձեռնարկել առ ի տանջել զամենայն Վոյթս սաղմոսերգաց: Իսկ եպարքոսն հեթանոսական

1 Տես Մէք. Աս. էջ 141. 142. եւ Յուլիանոս կամեցաւ կակզել զպատկերն Ազուզնի (յԱնտիք) ի տեղւոջն ուր էր գերեզման Բաբելայ ... Եւ հրամայեաց հանել եւ տանել ի քաղաքն. եւ քրիստոնէիցն առեալ Քնդութեամբ տարան սողմոսիւք եւ լապտերքք. Տես նաեւ Յովհ. Ոսկեբ. 4 սուրբն Բաբելայ. գլ. Ժ.:

2 Սուգ. Ե. 20 Թուփ. Ժ. 36. Թէոդ. Գ. 11. Նիկ. Ժ. 26:

հրամայէ փոխել զտապանն ի Դափնոյ քաղաք, Իսկ քրիստոնեայքն զայս հրաման լուեալ, սաղմոսիւք և օրհնութեամբ ահիւ և երկիւղիւ փոխէին զտապանն. որ զանտողսն զարմացուցանէր զհեթանոսս: Յայսոսիկ թագուցեալք բարբ թագաւորին յայտնէր, մախացեալ ընդ իրն և սրտմտեալ յարուցանէ հալածանս քրիստոնէից 9 նմանեալ Դիոնիզէտիանոսի. եւ

ա. Ն զտեսողս. ք. Դ. ցատուցեալ գ. Դ. Չեռագրի ինչպէս սկըզբից այստեղից էլ բաւական թերթեր են պակաս. կտրուածքին նախել շորս թերթ:

աղանդո՞վն գոյով, ոչ զհրամանն կամաւ ընգայաւ. իսկ ընդդիմաբանել ոչ կարելով, ըմբռնէր զբազումն ի քրրիստոնէիցն, և զումանս ի կապանս էարկ: Իսկ մին զմանուկ ոմն Թէոդորոս անուն, զոր հեթանոսացն մատուցեալ ընդ բազում չարչարանաւք և զանազան տանջանաւք էարկ. գզել ամենայն մարմնոյ հրամայեալ: Եւ յայնժամ ապա թողոյր զնա ի տանջանացն, զի ոչ ևս կեալ նմա ակն ունէր, այլ Աստուած էր, որ ապրեցուցանէր զմարդն. քանզի կենցաղավարել լինէր ժամանակս բազումն յետ այնր խոստովանութեան: Ընդ այսմ Թէոդորոսի Ռուփինոս որ Հռովմայեցի լեզուովն զեկեղեցականն պատմութիւն շարագրեաց. ասէ յետ այսորիկ ժամանակաւ ինչ յիտոյ խաւսել և հարցանել, եթէ գանեալ և վիրաւորեալ մեծի ումեմն ցաւոյ զգայր: Իսկ զճառեալն ասէ սուղ ինչ նմայ յոյժ լինել զառ ի թագաւորացն ցաւս, զի առընթեր կալով ումեմն երիտասարդի և մաքրել զառ ի հանդիսէն զելեալ նորա քիրտնն, և զովացաներ զնորայն հոգի, և վայելչութիւն նմա մանաւանդ քան զհանդէս զժամանակ տանջանացն առնել: Սակս սքանչելոյն Թէոդորոսի այսքան ճառեցաւ:

Յայնժամ հասեալ աղաչաւորք ի Պարսիցն խնդրէին յոլովս ժամանակս լուծանել զպատերազմն: Իսկ նա զնոսա ի բաց առաքեաց ասելով. զիս տեսչիք ոչ յետ բազում ինչ իրի, և ոչինչ են աղաչանք բարեխաւհրամայէ եպարքոսին՝ զսաղմոսերգողսն ի տանջանս առնել: Եւ ըմբռնեալ զմանուկ ոմն որում անուն էր Թէոդորոս, որ էր ի պաշտամանն, բազում և զանազան տանջանօք չարչարէր. և ապա թողոյր անյոյս ի կենացն, այլ կամք Աստուծոյ կեցուցանէր զխոստովանողսն բազում ժամանակս ի կեանս:

սութեանդ ձերոյ: Այսպէս յայնմժամ զաղաչաւղան ար-  
ձակեաց:

Գ 1. Ի 1

Եւ ըստ այլ յեղանակի թագաւորն զքրիստոնէսն  
Չեասել փութալով զընտանի յանդիմանէր զպաշտաւն:  
Քանզի զո[ր]հասէր գոլով: ոչ միայն ինքն արեամբն խըն-  
դայր: 2 այլ զի թէ ոչ այլքն զայս արասցեն վնաս վար-  
ժանէր: Եւ վասն զի ամենայն ուրեք սակաւս զայսպիսիսս  
գասնէր: Հրեայս գոչէր 3 և ի նոցանէ տեղեկանայր յա-  
ղագս Մովսէսական աւրինացն զոհելն հրամայելոց: Իսկ  
նոքա ի զոհելոցն ի բաց կացին: ոչ ուրեք այլուր կարե-  
լի գոլ զայս առնել ասացելոց: 4

ա Բն. աւել ունի. եթէ ոչ միայն յնրուսաղէմ, որ անհրաժեշտ է  
մեծացը լրացնելու եւ կայ համառօտ օրինակի մէջ:

1 Յես Սողոմ. Ե. 22. Թէոդոր. Գ. 20. Գրեգ. հոգ. ճառ. Ե.  
33. 4. Ափառ. Մարտի. ԻԳ. 1. Բուփ. Ժ. 37. Փիլ. 1. 14. Կաս. 6. 2.  
33. Նիկ. Ժ. 32. 33.

2 Յուլիանոսի զոհասիրութիւնը վկայում են նաեւ ուրիշ պատմա-  
ագիրներ:

3 Նրա հրէաներին գրած նամակը պահուած է:

(Իսկ վասն Թէոդորոսի քահանայի Անտիոքայ, որ վկայ-  
եաց առաջի բազում վկայից ի քեռոյն Յուլիանոսի ընդ բս-  
զում չարչարանօք արկեալ: բարի խոստովանութեամբ կատար-  
եալ թողում ասել իւրում պատմութեան. նա ևս բազումս ե-  
ցոյց չարչարանս սրբոցն որ ոչ էր գրեալ): Յայնժամ գայ ի  
Պարսից հրովարտակ խնգրել զխաղաղութիւն: 5 իսկ նա ոչ ըն-  
գունէր: զի արժանն քարշէր ի մահ: Եւ յամենայն տեղիս մե-  
հնիցն զոհս մատուցանէր և զուարճանայր արեամբն և ճեն-

(1) Չեն ի քն. թարգմանիչն ակնարկէ անշուշտ ի վկ. Թէոդորի-  
տեաց. Յես վրք. եւ վկ. Սրբոց. 4. Ա. 332-334. Նոր-

ա. Նոր. Քանզի արժանն տանէր զնա ի տեղի հատուցմանն. Խոր-  
Գ Ժ. 450:

Հրամայեալ ապա ընդ հուշող զտաճարն Սողոմոնի շինելը ինքն ի Պարս կոյս երթայր: Իսկ Հրէայքն ժամանակաւ ըմբռնեալ նախկին ցանկացեալք, որով նոցա տաճարն առ ի զոհել վերստին շինեսցի: Յայնժամ ոմանք փութապէս առ գործն լինէին. իսկ այլք ահաւորս զընքեան քրիստոնէիցն ցուցանէին, և ամբարհաւածէին ընդդէմ նոցա սպառնալով ի վերայ նոցա. « Այնքան արարեալ որքան ի Հռովմայեցւոցն նախկին կրեցին:

Իսկ թագաւորին ի հարկացն գանձուց զռոճիկսն տալ հրամայէր. պատրաստ լինէր ամենայն քար և փայտ, և աղիւս թրծեալ, և շաղախ կրոյ, և այլ ինչ որքան առ

1 Տես Մէթ. Ասորի. էջ. 143:

Ճերովք զոհեցն:

ԳՂ. ԺԳ.

Խէ որպէս հրամայէ Յուլիանոս հրէից գնալ յերուսաղէմ եւ շինել զտաճարն, եւ թէ որպէս իսկոյն փլանի ի շարժէ. երեւի նշան խաչին ի Գանդերձս հրէից: Եւ սպանանելն Յուլիանոսի զԵպիսկոպոսն յերուսաղէմն զսուրբն Կիւրեղ եւ զմայր նորա եւ Կիւրեղոցն յատկութիւնք:

Կոչէ և զհրէայսն և գովէ ըստ Մովսիսի օրինացն մատուցանել զոհս. և հրամայէ նոցա զոհել ըստ օրինացն զի տեսանիցէ, իսկ « արժան է մեզ առնել զայս, բայց յերուսաղէմ: Յայնժամ հրէիցն զտաճարն Սողոմոնի շինել հուշող ընդ հուշող. իսկ հրէայքն հրաման առեալ յարքունուստ առնել զվզեանակս » շինութեան տաճարին ի քրիստոնէից հարկաց. և ահաւորս « հրէայքն զինքեանս » քրիստոնէիցն երևեցուցանէին. ճեպէին փութով առ գործն, զքար և զաղիւս թրծեալ « և զկիր և զաւազ և զփայտ. և որ ինչ ի պէտս էր » շինուածոյն պատրաստէին:

ա. Բ. Ա. Ա՛ իսկ հրէայքն ասեն ք. չկ. քո. վզեանակ. և՛ վզեանակ գ. ն. արատր դ. ն. զինքեանս հրէայքն Ե. Բ. թրծել Լ՛ շիք. զ. ի պէտսպէս.

ի շինուամն պատրաստ լինէր: Իսկ յայնժամ Կիւրիղոս Երուսաղէմացեացն եպիսկոպոս զմարգարէին Ռանիէղի ի միտ առնոյր: զոր և Ռրիստոս յաւետարաննսն գերակընքեաց: և բազմաց յառաջ ասելով. որպէս զի եկեսցէ ժամանակ յորժամ քար ի քարի վերայ ոչ մնասցէ ի տաճարին, այլ բան Փրկչին կասարեացի: Եւ զայս ասացեալ եպիսկոպոսին. եղեալ շարժումն մեծ ի գիշերին ի վերընկեաց զքարինսն զնախկին հիմանց տաճարին, և զամենայնսն ցրուեաց հանդերձ մերձակայիւքն շինուածովք: Ահ յայսմանէ եղեալ զՀրէայնսն ըմբռնեաց և հռչակն ի տեղին ածէր և զհեռիսն բնակեալս: Եկեալ ապա յոյժ բազմաց, այլ նշան ի վերայ լինի. քանզի հուր անկեալ ի յերկնից զամենայն զգործիս շինողացն ապականեաց. զմուրջս, զլարս, զսղոցս, զտակուս<sup>ա</sup>, զուրազս և զամենայն զոր միանգամ պատշաճ առ գործսն ունէին շինաւղքն. և ճարակէր զայսոսիկ հուրն զաւրն ողջոյն: Իսկ Հրէիցն ի մեծ երկիւղի եղեալ, ակամայ զՔրիստոս

ա. զկացինս:

Յայնժամ Կիւրեղ Երուսաղէմի եպիսկոպոսն յուշ առնէ<sup>ա</sup> որպէս մարգարէութեամբ զաւետարանական բանն քրիստոնէից. Եկեսցէ ժամ, որ ոչ մնասցէ այդր քար ի քարի վերայ, որ ոչ բարձցի ի միջոյ աչի: Եւ ասացեալքն ի նմանէ՝ իսկոյն ի գիշերի եղեալ շարժումն, և զամենայն հիմունսն<sup>բ</sup> քանդեաց և աւերեաց զգործ շինուածոյն, և ոչ մնաց քար ի քարի վերայ, որ ոչ քանտեցաւ: Այլ և կահ գործողացն այրեցաւ<sup>գ</sup> հրով ի տեղւոջն ի վերուստ անկեալ, մուրձք և սղոռք, և գակուք և արազք, և ամենայն կահ շինողութեան ճարակեցաւ հրով:

Եւ Հրէիցն երկիւղիւ ըմբռնեալք ակամայ զՔրիստոս Աս-

ա. Գ. առնէր. ք. Ն. հիմունս. գ. Ն. այրեցեալ:



մերոյ մնային զձմեռնականն ժամանակ. զի և ո՛չ որ զձեռն ի նոցանէ թերևս է ասել կարէր ի ծոցոյ հանել: Իսկ զՀռովմայեցիսն տեսեալ և ի ձմեռայինսն ժամանակս կարողս ի ջանալ, եթող զգաւրն ի վերայ աշխարհին, և զբազում աւանս և զբերդս առին, նաև զքաղաքսն ևս առնուին: Իսկ պատեալ զՏիսպոն զմեծն քաղաքն, այնքան պաշարէ զԹագաւորն Պարսից, որպէս զի և նմա աղաչանաւք հպել յաճախագունիւք, և աղաչել ոչ վնասել կողմանն իւրոյ աշխարհին, եթէ լուցեալ զպատե-

(որպէս և ոչ մարգարէիցն և Քրիստոսի առաւելագոյն սքանչելեացն որ երևեցան. Զի կորացան " սիրաք իւրեանց յիմանալայ, և ասեն՝ առնել զօրէնսն, և ոչ առնեն. զի ոչ այսպէս արար ամենայն ազգաց տէր, և զգատաստանս իւր յայտնեաց որպէս և նոցայն. Եւ եկեալ Յուլիանոս յԵրուսաղէմ, որ վասն սաճարին շինութիւն էր կամք նորա, պատմեցաւ նմա որ ինչ անցք անցին. Եւ մտախորհ եղեալ լուեր, բայց զքրիստոնեայսն խոշտանգեր, և ըմբռնեալ զեպիսկոպոսն, ընդ որոյ ձեռն եղև գիւտ խաչին, սպան զնա դառն ասնջանօք. և զմայր Գնորա, որ Գ վկայեցին Ե բարի դաւանութեամբ ի փառս Աստուծոյ որպէս և նոցին իսկ ասի վկայաբանութիւն, որ աւելորդ է ասել, Գ Բայց ասի երկուս ոմանս է Կիւրեղոս ասել, միւսոյն վրէպեալ ի Յուլիանոսէ, որով գիւտ Խաչին եղև, նախկին Յուլիանոս, և մկրտեալ Կիւրեղ որ և զկարգս եկեղեցւոյ ասեն ունել Եկեղեցիս ուղղափառաց և զմարտիրոսականն առ զպսակն. և յետ սորա ասի միւս Կիւրեղ որ զԱրիոսի կարծիսն ասէին ուշտիլ. Եւ այս Կիւրեղս եհաս մինչև ի ժողովն սուրբ, որ յաշտագս Հոգեմարտին, որպէս նոցին ցուցանին երկօքին.)

ա. նորայրը ուղղում է կուրացան. Գ. կուրացան Բ. Գ. անց Գ. Ն. զմայր Դ. Գ. վկայիցն Ե. Բ. որք Գ. Ն. Ա. ասէ, Է. Գ. ոմն, Ը. Ա. Կուրեղս, Ն. Կիւրեղ Բ. մինն Ա՛ միւրիւրեղն.

րազմ՝ զնասցէ: Իսկ նա ոչ էառ յանձն և ոչ աղաչողացն ողորմեցաւ. այլ և ոչ զբանին մտադրութիւնն էառ, որպէս զի ուրեմն յաղթելն բարւոք, իսկ առաւել քան զյաղթութիւնն նախանձ: Վասն զի հաւատացեալ հմայից ոմանց. զաւուրա առննթէր նորա լինելով փիլիսոփոսն Մաքսիմոս ենթագրէր, և երազս հանելով զԱղէքսանդրոսի զՄակեդոնացւոյ զկարծիսն առնուլ, կամ յաւէտ ևս գերազանցեալ, զաղաչանս Պարսիցն արհամարհեաց: Քանզի կարծէր ըստ Պիւթագորի և Պղատոնի կարծեացն մարմնանալ, իբր զԱղէքսանդրոսին ունելով զանձն. մանաւանդ իւր իսկ լինել Աղէքսանդրոս յայլում մարմնում: Այս հմայք զնա պատմեցին. և յարդարեցին զնա զաղաչողսն Պարսից ոչ ընդունել: Վասն որոյ նորա ծանուցեալ եթէ ոչ եղեն ընդունելիք աղաչանքն իւր, ի կարիս անկանէր:

ա. Ռ. զորոց :

ԳԼ. ԺԴ.

Յաղաղս սատակման պղծոյն Յուլիանոսի:

Եւ յետ բազում չարեաց որ գործէր Յուլիանոս՝ ի հմայից և ի դիւթից՝ լուեալ, թէ բանակք զօրաց զքեւ շուրջ պատեալ ունիս միշտ զյաղթութիւն: Եւ Մաքսիմիս փիլիսոփայ երազս ասէր, որ ցուցանէր թագաւորեալ Յուլիանոսի տիեզերաց որպէս՝ Աղէքսանդր Մակեդոնացի. յորոց պատրեալ ի հմայից, չունէր զբան խաղաղութեան Պարսից զոր խնդրէին: Յայնժամ \* ժողովէր զամենայն զարս՝ իւր և դիմեալ երթայր ընդդէմ Պարսից ի մարտն, և նա ոչ գտեալ զբան՝ խաղաղութեան, ել Պարսից արքայն ամենայն ուժով՝ ընդդէմ Յուլի-

ա Գ. ի ղիւաց ք. Գ. եւ զմաքսիմոս փիլիսոփայ էր ազատաւոր. Ա՝ փիլիսոփա էր զայս ատէր: գ. Ն Ա. որ դ. Գ. Ա՝ զօր. Ե. Գ. զբանն գ. Գ. յուժով.

Եւ ի նմին աւուր յեա աղաչանացն ամենայն զաւ-  
բութեամբն զոր ունէր: Ճակատէր ընդդէմ զաւրուն  
Հռովմայեցւոց. բայց Հռովմայեցիքն անգոսնէին զթագա-  
ւորն: առ ի չլինել ի շահ պատերազմին: Սակայն եկե-  
լոցն ընդդէմ նոցա պատերազմէին և առժամայն զպա-  
տերազմունսն յեղուին ի փախուստ: Իսկ թագաւորն  
կայր առընթեր ի վերայ ձիոյ և քաջալերեցուցանէր  
զզաւրսն անզէն: բարեբախտութեանն յուսով միայնով  
փտահացեալ: Եւ յանկարծակի նիզակ լինէր բերեալ  
ընդդէմ նորա: և ընդ բազուկն թափանցիկ եղեալ,  
ի կողսն մտանէր. 1 և յայսմ վիրաց զվարսն շքէր ան-  
յայտ եղելոյ սպանողին գնա: Քանզի ոմանք ի Պարսկէ  
աւմեմնէ անձնատուր եղելոյ հարկանիլ ասեն. իսկ այլք  
յընտանի զաւրականէն որպէս յոլովն բան ունի:

Բայց Կաղիստինա որ յընտանիս թագաւորին էր  
զինուորեալ պատմեալ զոր ըստ նորայն յայնժամ պա-  
տերազմն քաջին չափով. ա ի դիւէ զնա հարեալ  
մեռանիլ ասէ: Ի ինչ զոր որպէս արարող ք ստեղծ: և

ա. հրօւսք մէտրօ.

բ. Մս. 6 ποιητής . ըանաստեղծն:

1 Տես Միք. Ասորի էջ. 145 . Եւ յանկարծակի եկն նետ մի գե-  
ղեցաւ փորոտեացն Յուլիանոսի. եւ վայթեցաւ արեւն:

Անոսի և զօրաց նորա ի պատերազմ. Եւ եղև պատերազմ  
սաստիկ և պարտեցաւ զօրն Յուլիանոսի և ի փախուսա դարձան:  
Եւ ի Յուլիանոս առընթեր կալով արգելոյր զզօրսն և քաջա-  
լերէր յաղթել հմայից. 2 յուսով. յայնժամ գա սուր սրեալ և  
հարկանէ զսիրտն և անդէն սատակեցաւ: Եւ զայս հաւաստի ոչ  
ունիմ ասել թէ ի մարդոյ և թէ Գ. ի պահանջող հրեշտակէ  
Աստուծոյ: Բայց Կաղեստինոս ոմն ի զինուորաց նորա ի գիւէ

ա. Գ. ի պատերազմն բ. Գ. հմայիցն գ. Գ. եթէ.

է ինչ զոր ունի և սյնպէս, քանզի ընդ բազումս քըն-  
նելով անցի: Որպէս զի արդեւք ունէր և ճշմարիտ զորս  
ըստ նմայն, այլև ոչ այն լինէր ծածկեալ, իբրև զի  
էր այրն վասն յաւժարութեանն ոչ զգոյշ, սակա բա-  
րեփառութեանն սնուփառ, յաղադս ստեղծական հան-  
դարտութեանն արհամարող: Բայց Յուլիանոս ի չորրոր-  
դում իւրում հիւպատուոջն, զոր հանդերձ Սաղաստիո-  
սիւն էեա ի քսան և վեցին Յունի(ս) ամսոյ, յաշխար-  
հին Պարսից զվարան, որպէս ասացի, կատարեաց: <sup>1</sup>

Այս էր ամ երկրորդ թագաւորութեան նորաս  
և եւթն ամ յորմէ հետէ կայսր ի Կոստանդիոսէ եղև  
կարգեալ, և երեսուն և մի ամ էր կենաց նորաս:

1 Փրկչ. 363 Թ.

հարեալ զնորա մահն ասէր. զի էր իսկ դիւպաշտ յորոց և  
զարժանն փոխարէնս ի դիւացն ընկալաւ ըստ Գրիստոսի վրէժ-  
խընդրութեան: Եւ այսպէս չարն չարիւ բարձաւ, որ սպառ-  
նայր յետ դարձին չար անցս " անցուցանել ընդ Գրիստոնեայս, Բ  
բայց ոչ որպէս նայն կամէր, այլ որպէս Աստուծոյ էր կամք  
եղև: Մեռաւ երեսնամեա, եօթ ամ կայսր լեալ, և մի ամ  
թագաւորեալ մեռաւ: \*

Իսկ զօրն Հռովմայեցւոց ի տարակուսանս <sup>2</sup> մտեալ այլ ոչ  
յամենեին, <sup>3</sup> այլ ի նոյն:

ԳՆ. ԺԵ.

Յաղագս թէ որպէս գիրս գրեաց, եւ թէ որպէս թագաւորեաց Յոզիանոս  
եւ թէ որպէս դաշինս արար ընդ Պարս:

Յետ մահու թագաւորին զՅորիանոս ասեն թագաւորել <sup>4</sup>

\* Բիւզանդ. «Հատուած» նոյն է եւ ի վկայաբանութեան Մար  
կոսի Արեթուայ եպիսկոպոսի վաղք եւ վկ. սրբոց. հ. Բ. 16:

ա. Գ. Ղրանց. Բ. Գ. քրիստոնեայն. գ. Ն. սատակեցաւ. դ. Ա. ի տա-  
րակուսանս. ե. Բիւզ. սրբագրում յամենային. Ա. յամէին. զ. Գ.  
թագաւոր.

ԳԼ. ԻԲ. 1

Իսկ զաւրականացն ի մեծի եղեալ աղվկի, ոչինչ ապուժեալ, ի նոյն հետայն աւրն յայտնեն թագաւոր զՅորիանոս, զայր քաջ և զբարեազգի. որ էր հազարապետ յորժամ Յուլիանոս զհերձուածն զնէր առաջի զաւրականացն. կամ զոհել և կամ ի բաց կալ ի զաւրականութենէն:

Իսկ Յորիանոս մանաւանդ զպատիւն ի բաց զնել յաւժարէր, քան կատարել զամբարիշտ հրաման թագաւորին: Այլ Յուլիանոս յաղագս կարեաց պատերազմին որ կայր ի վերայ՝ ընդ զաւրավարացն ունէր զայրն: Իսկ յայնժամ ճառեալ զնա առ ի թագաւորել հրաժարէր, և բռնութիւն ի զաւրականացն ձգտեալ զոչէր. **Ա**լ խորշել ասելով թագաւորել ի մարդկանէ հեթանոսանալ յաւժարեցելոց, իսկ նա դողով քրիստոնջեալ: **Ի**սկ յամենեցունց առհասարակ ձայն լինէր խոստովաւորելով և զնոսա քրիստոնջեայս լինել <sup>2</sup>, ընդունէր զթա-

1 Սողոմ. 2. 3. Թեոդ. Գ. 1 Խուփ. ԺԱ. 1. Փիլաստ. Ը. 1. Կաթող. Է. 1. ԿԻԿ. Ժ. 38.

2 Տես ՄԱԹ. Աս. ԷԶ. 147.

զայր քաջ և զբարեազգի. որ էր հազարապետ յորժամ Յուլիանոս զհեթանոսական աղանդ յայտնէր, որ կշտամբել<sup>ա</sup> զնա և զոհել կռոց և կամ ի բաց կալ ի զինուորութենէ. Իսկ Յորիանոս զպատիւն յօժարեալ ընկենոյր՝ քան թէ զհաւատն ուրանալ և կատարել զհրաման ամբարիշտ թագաւորին. <sup>1</sup> և Յուլիանոս վասն կարեաց պիտանութեան պատերազմին ի վերայ զօրացն ունէր զայրն երևելի. Իսկ յայնժամ ժողովեալ զօրավարացն և զօրացն թագաւորացուցանել զՅորիանոս. Իսկ նա հրաժարէր ի բռնութենէ զօրավարացն և զօրացն. աղաղակէր <sup>2</sup> և առէր. ոչ է պարտ առն քրիստոնէի թագաւորել հե-

ա. Ն. կշտամբեալ. բ. Ն. ընկենու. գ. զհրամանս ամբարշտին. դ. Ա՞ իսկ յայնժամ ժողովեալ զօրավարացն եւ զօրացն աղաղակէր:



Յուլիանոսի շարագրեաց. զոր Յուլիանոսի դիապատական « վերագրէր: Յորում բանի գրեթէ զամենայնսն զորս ըստ նմա գովականաբար պատմեաց. յիշեալ և զգրեանն, զորս Յուլիանոս ընդդէմ քրիստոնէիցն շարագրեաց, և իբր թէ ծիծաղելիս ի նոսա և ընդ վայրս ցուցեալ ըզքրիստոնէից գիրս: Զի թէ զայլսն զթագաւորին իմաստակն գովէր, հանդարտապէս արդեւք ի նոյն պատմութեան երթայր: Բայց վասն զի որպէս զգծնեա ճարտասան, յիշմամբ Յուլիանոսի գրենոյն ի վերայ քրիստոնէութեանն յառնէ, վասն այսորիկ և մեք սակաւս ինչ սակս այսոցիկ ասել յաւժարեացուք, նախկին առաջի եղեալ զնորա ճառեալսն:

Կլ. ԻԳ. 1

« Զմերայնւոյն, ասէ, զգիշերսն ձգեցելոց[ի] ի վերայ եղեալ թագաւորին զրաւք, պատճառ ի Պաղիստինեա մարդ աստուած և Աստուծոյ որդի առնեն. մարտ հեռի. և կշտամբելով զաւրէ, ծիծաղելիս ասացեալ և ընդ վայրս զպատուեալսն իմաստնագոյնս յայսոսիկ ցուցանի, քան զՏիւրացի ծերն: Բայց քաւ լիցի. ա. Բն. նուάφιου.

1 Տես Լիբանոս Ողբ. էջ. 581. հրատ Ռուսկ.

ԳԼ ԺԶ.

Թէ որպէս իմաստակն Յուլիանոսի ողբս ասաց վասն Յուլիանոսի եւ անբարեճեւ անձինն:

Յայնժամ իմաստակն Յուլիանոսի Լիբանոս ողբս ի վերայ նորա շարագրեաց ըստ ամենայնի կենաց նորա, և որ ինչ ըստ գերեզմանի արժանի բանք և ձայնք աւաղականք<sup>1</sup> մահու, զոր աւելորդ համարիցի պատմութեանս<sup>2</sup> զողբսն դնել բա՛իւս ա. Ա. աւաղանք. ք. Ա. համարեցայ.

«զի Տիւրացիս այս թէպէտ և ընդունէր քաղցրաբար «զճառեալն. արդեալք թէ որպէս զորդի պարտեալ:» Եւ քանզի այս ճառեալքս իմաստակին Լիբանոսի են. և ես իմաստակ հաճոյ զնա լինել տեսմ. և գիտեմ որպէս զի թէ ոչ էր թագաւորին ադանդւոյ համակարծի զամենայն արդեալք զնորայն ասել որքան քրիստոնէեայքըն ասէին) և թերևս որպէս [գ]իմաստասէր) մեծացուցանեն զասացեալսն: Զի և առ Կոստանդիոս ի կենդանութեանն գովս գրէր. իսկ իօրև վախճանեցաւ թշնամանըս լի վնասուք զեղոյր: Որպէս զի թէ Պորփիւռոս էր լեալ թագաւոր) նախկին արդեալք դասէր զնոսա գրեանն քան զՅուդիանոսին և եթէ Յուդիանոս էր լեալ իմաստակ) ասէր արդեալք զնա չար իմաստակ) որպէս և զԵկիբողիոս ի մահուանն Յուլիանոսի գրեաց ճառի: Եւ արդ՝ զի նա որպէս զհամակարծի) և որպէս զիմաստակ) և որպէս զսիրելի թագաւորի որքան նմա թուեցաւ) պատմեաց) և մեք առ ի նմանէ գրեցելոցն ըստ կարի պատահեսցուք: Քանզի նախ ասէ ի վերայ դնել զրովք ձմերանն զգիշերսն ձգեցելոյ: Իսկ ի վերայ դնելն նշանէ) զի գործ դնէր պարսաւ գրել) որպէս զի ըստ սովորական իմաստակացն առնել ի նորագունիցն ներածութիւն. քանզի նախկին զգրեանն մերժէր) իսկ յայնժամ ի վերայ դնէր: Եւ մարտ հեռի պարապեցուցեալ ոչ) որպէս ասեն Լիբանոս) յանդիմանել կարելով) այլ տկարութ(ի)ւն ճշմարտութեանն զի զբարւոք ի նոսա զգուշացեալսն որպէս զպարսաւասէր քարշէր: Քանզի ամենայն որ մարտնչի ընդ ումեք երբեմն խախտելով) և երբեմն թագուցանելով զճշմարտութիւնն) և ստեաց որքան պատերազմն կայ համակարգեալ: Եւ որ ցասմամբ լինի առ ոք զամենայնն որպէս զպատերազմող ոչ միայն գոր-

Տեւ, այլ և ասել փութայ զայնորիկ. առ որ անգոսնա-  
կանքն և առ որ թշնամութիւնն խախտել սիրէ: Եւ Յու-  
լիանոս և Պորփիւռիոս, զոր ծերն կոչէ Տիւրացի, եր-  
կօքինն պարսաւասէլք էին, ի յընտանից բանից կշտամ-  
բին: Քանզի Պորփիւռիոս զգլխաւորին իմաստասիրաց  
զՍոկրատայն վարս արտաքս քարշեաց ի գրեցելումն  
նորա իմաստական պատմութեանն: Այսպիսիս սակս նո-  
քա գրեալ էթող, որպէս և Մեղէտիոս. և [Ռ]ա-  
Նաւտիոս, գրեալ զՍոկրատայ, ասել ձեռնար-  
կեցին: « Սոկրատայ, ասեմ զառ ի հեթանոսացն սքան-  
չացելոյն արդարութեամբ և ողջսխոհութեամբ և այ-  
լովքն առաքինութեամբ: Զոր Պղատոն սքանչելին ի նո-  
սա իմաստասէր, և Քսենոփոն, և միւսն ևս այլն յիմաս-  
տասիրացն թիակոս, Բ ոչ միայն որպէս զաստուածա-  
սէր պատուեալ, այլ և ի վեր քան զմարդն իմանալ  
զնայ կարծեցին: Իսկ Յուլիանոսի ընդ հաւրն իւրում  
նախանձելով զինքեանն ախտ Գ ի կայսերսն յանդիմա-  
նեաց. բամբասեալ զամենայնսն զորս յառաջ քան զնա  
Թադաւորսն, և ոչ յիմաստասէրն Մարկոս ինայեալ:  
Զի ափսոսասէրք գոլով երկաքանչիւրքն, առ ի յըն-  
քեանց իսկ զյանդիմանութիւն ընդունէին: Եւ ոչ են  
հինձ պէտք բազմոց դժուակ բանից, բայց ուրանաւր  
պարտն է զայսոսիկ ունել ի հրաժարումն նոցայն բա-  
րուց: Այլ այսուհետև զայսոսիկ յերկաքանչիւրիցն բա-  
նից յաղագս նոցա բարոյից նշանելով գրեմ զայսոսիկ:

ա. Քս. է. αὐτὸ δὲν μῆτε Μέλιτος, μῆτε Ἄνυτος οἱ γραφόμενοι  
Σακράτην, εἰπεῖν ἀπεχρίσθαι ἠρακλῆα ἢ Ὀυγγίππῳ ἢ ἢ Ἐπιχρίπῳ. ἢ ἢ  
զեցին զպատմութիւն Սոկրատայ, ասել յանդնեցան:

բ. Քս. Թասոս խումբ:

գ. Քս. τὸ πᾶθος:

Որպիսի սակս Յուլիանոսի Գրիգորն Անձիանձու ճառեաց նորայոցն լուր բանից: Քանզի ասէ յերկրորդ ճառին որ առ Հեթանոսս ըստ բանի զայս ինչ:

« Բայց զայս այլոցն փորձն յայտնեաց, և զաւրութիւնն « որ ունէր զիշխանութիւնն: Իսկ ինձ ի սկզբան յայտնի « եղև տեսանել իւրք յեղանակաւ, յորմէ յարեալ եղէ « յայլն յԱթէնս: Քանզի եկն անդր յորոց ըստ եղբաւրն « նորա քաջացելոց, ի թագաւորէն հրաժարեալ: Իսկ « կրկին նորա բանն տարաշխարհութեանն ճառ. վայել- « չազոյն ըստ պատմութեանն Էղզացոց և որոց ան- « տի խրատարանացն, բայց տարակուսագոյն և բազմաց « ծանաւթ, որպէս զի ընդ որոց անդ զոհողացն և պատ- « ըողաց յալագս որոց ըստ ինքեանն զոյգ լինել: Չև « ևս համարձակութիւն ընկալեալ ամբարշտութեանն:»

« Յայնժամ ես ո՛չ պարսաւող առնն կարծաւզ եղեչ « զհտեմ, և ո՛չ զբարւոքն բնաւորեցելոցն առ այսոսիկ իմ- « ացեալ իմ: Այլ առնէր զհտական բարուցն անհար- « թութիւն և աւելորդն նանրութիւն, եթէ գէտ հա- « հաճոյ ոք կար(ծիլ)՝ բարւոք: Քանզի ոչինչ թուէր ինձ « (նշան)՝ լինել քրիստոնէի, քանզի էր նորա պարա- « նոցն անկանգուն, ուսքն մրցականք շարժակոծեալք:»

ա. Այստեղ ձեռագիրը փշացած է, ուստի եւկասկածեմ է .կարծի-  
քառի ընթերցումը. որի ծիւ վանկը ես եմ աւելացնում. բնագրում «:xձԷ»,  
որ վնջանակէ նաեւ .կարծել .

բ. Այս բառն էլ եմ աւելացնում համապատասխան բնագրի «:քսէտ».

«Քանզի յերեմանէն իսկ ծանուցեալ լինէր, ոչ ունել ըզ-  
նշան քրիստոնէի. քանզի էր նորա գլուխն ոչ բարիապետ »  
և խորամուրու, և երկայն հիւսեալ որպէս չուան պարանացն  
անկանգուն, ուսքն մրցականք և շարժակոծեալք. Բ աչքն վայրա-

ա. Ա՛ Ն. բարետես. բ. Գ. շրջաբեկեալքն. Ա. Ն. շրջաբեկեալք.

« անհն վայրացական և շրջաբերել և մոլեկան հայեցուած,  
 « ոտքն անկանծք, ընկուռնքն թշնամանս շնչելով և ար-  
 « համարհանսն, երեսացն ձեւք ծիծաղելիք, զնոյնսն բերե-  
 « լով ծաղր անյոյժ և եռանդնոտ, ակնարկութիւն և վեր-  
 « ակնարկութիւն առանց ոչինչ բանի, բան կապարեալ և  
 « հատեալ ոգւով, հարցմունք ստահակք և անհանձարք,  
 « պատասխանիք ոչինչ այսոցիկ վնհագոյնք, միմեամբք  
 « խառնակեալք, և ոչ բարեկաց, և ոչ կարգաւ յառաջ եկ-  
 « եալ խրատուն:

« Ջսա նախ քան զգործսն տեսի, և առ գործովքն  
 « ծանեայ. և եթէ էին մերձ առիս ոմանք յորոց այսքան  
 « անդր գոլով լսողացն, ոչ արդեւք զժնդակագոյնս ինչ  
 « սկայէին, որոց վասն զի զայս տեսի ի նոյնն բարբառեցայ,  
 « զորպիսի չար Հոովմայեցւոցն սնուցանէ: Յառաջագոյն  
 « յորջորջեալ և լինել սուտգէտ յ(ը)նքեան աղաւթեցի.  
 « քանզի լաւագոյն էր ինձ ստել քան այսքանեալք լնուլ  
 « տիեզերաց չարեալք, և այսպիսով երեւելի նշանի,  
 « որպիսի ձև ևս յառաջագոյն բազմոց, յուղխից խառ-

« ականք և շրջաբերեալք և մոլեկան " հայեցուածք. ոնգունք  
 « թշնամանք շնչելով, ոտք անկանծք Բ և արհամարհելիք, ձեւք,  
 « և տեսակք երեսացն ծաղրան ժոյժ և եռանդնոտ. Դ Եւ ամենայ-  
 « թիւ էր ատելի տեսութիւն, ևս ատելի բարքն ատելի Ատու-  
 « ձոյ. Ե և զժնդակ քրիստոնէից և սրբոց Ատուձոյ, Վասն որ-  
 « ոյ Գրիգոր ուղղափառ և հանձարեղ առաւել քան զառաւելս,  
 « որ և աստուածաբան կոչեցաւ, որ և Դ զՅուլիանոսի իրս երկայն  
 « բանիք զնորա չարութիւնն ներձայնեցուցանէ և ստուգապէս

ա. Գ. Մոլեկան. ք. Ա. շարժա ոճեալք. Գ. անկանծք նոր. ուղ-  
 « ղում է անկայք. գ Ա. ձեւք. դ Ա. Բ. նոանդոտ. ե. Գ. տեսութեան  
 Շ. ստուծոյ. զ. Գ. եւ յոր.

«նակեցելոյ. իսկ բազմաց յայրեցմանց և յեռանդմանց. «և ի վհոց ևս և յարանցսն մարդիք, և գաղանատեսակք, «զսննմանեաց և համադրաց բնութիւնսն նորա ձևել: «Այս և յետոյ արժանի բերաւք ամահանաց:»

Այսպիսիս Գրիգորիոս սուկս Յուդիանոսի պատմեաց: Ձի և ընդդէմ քրիստոնէից բանս բազումն ծախեաց ըզ- ճշմարտութիւնն սկսաւ բռնադատել, զի զոմանս յաս- տուածային գրոց եղծեալ, և զայս փոխեալ, զամենայնն առ ընսանին առնէր դիտումն, բայց բազմաց պատահե- լով նոցա ցուցին քակտելով և յանդիմանելով զնոցայն իմաստմունս: Նախ քան զամենեսին Որոգինէս, որև առաւ- ւել ժամանակացն Յուդիանոսի վերադոյն գորով զթու- եալսն խառնակել ընթերցողացն յաստուածային գրոց, ընդդիմաբերելով ընքեամք և թարգմանեալ, զչարարարու- յեցելոցն իմաստական բանագիտութիւնսն փակեաց: Ո- րոց թէ ոչ փաթարարար էի ընթերցեալ Յուդիանոսի և Պորփիւռիոսի, այլ բարեմտարար ընկալեալ ամենայն իրաւք արդեւք, ի յայլ ինչ գրանսն էին դարձուցեալ, և ոչ թերևս ի յիմաստմունս հայհոյականս գրեալ էին եղ- եալք: Ասան զի թագաւորն պարսաւել պատշաճնցոյց առ ազէտան<sup>ա</sup> և պարզամիտս զբանսն արարեալ, և զի ոչ առ որս յաստուածայնոց գրոց կերպարան ճշմարտութեան ունելով անդուստ յայտէ. քանզի առնելով զճառեալսն, որ- քան պիտոյից աղազաւ տնաւրինարար ի վերայ Աստու- ծոյ մարդկականագոյն կարգին, և բազումն ինչ այսպի-

ա Բն. πρὸς τοὺς Ἰδιώτας.

Ճառէ, որք կամից'ն ուսանել զնորա իրսն. Նա և բազում ու- րեք ճառի<sup>ա</sup> նորա չարիւթեան<sup>բ</sup> գործ և բան և մեզ աւելորդ է երկայնել<sup>գ</sup> զբանս:

ա. Ն ծարի. ք. Գ. շարութին գ. Գ. երկայնեալ:

սիս ի վերայ համբարձեալ, յետոյ բերէ ի վերայ զայս ինչ:

«Այսոցիկ այժմ իւրաքանչիւրն, եթէ ոչ բան է տարակուսական ունելով իմն տեսութիւն, զոր ես կարծեցից, բազ նաք են լի բանքն յաղագս Աստուծոյ հայհոյութեան:»

Եւ զայսոսիկ ի յերրորդումն նորա ընդդէմ քրիստոնէից գիրսն բանիւք ճառեաց: Իսկ ի ճառին նորա զոր յաղագս վերագրեաց, ա ուսուցանելով որպէս զի պարտէ զաստուածայինսն ստեղծաբանել առասպելս, ասէ և պարտէ թագուցանել յաղագս այսպիսեացն ճշմարտութիւն, ասելով այսոքիւք բանիւք զայսոսիկ:

«Քանզի սիրէ բնութիւնս թաքչիւ, և թագուցեալն յաստուածոցն գոյութենէ ոչ առնու յանձն մերկ բանիւք անսուրբան անկանել լսելիս:»

Իրեի այսոքիւք թագաւորն կարծիս ունել յաղագս աստուածայնոց գրոց, իբր թէ է ինչ բանք խորհրդականք տարակուսական իմն տեսութիւն ունելով, էր զայրագնի ի վերայ և ոչ ամենեցուն ունողացն, և ընթանայ ընդդէմ որոց ի քրիստոնէսն պարզագոյն ընդունողացն գբանսն: Բայց ոչ էր պարտ այսքան ընթանալ ընդդէմ պարզամտութեանն բազմացն, և ոչ ամբարտաւանիլ վասն նոցա հակառակ աստուածայնոց գրոց, և ոչ ատել և ի բաց շրջել զբարւոքն նոցա միացեալսն, զի ոչ ամենեքին զայնս իմանային որպէս նայն Էւորհէր: Բայց այժմ որպէս նմանեցաւ, զնոյնսն Պորհիւրոսի կրեաց. քանզի նորա վէրս ի կեսարիայ Պաղեստինեոյ յոմանց ի քրիստոնէից առեալ, ք ի ս և ա մ ա զ ձ ա

ա. Περὶ κυριασμοῦ.

ք Բս. աւել ունի . Եւ ոչ տարեալ զբարկութիւնն.:

կանէն ա զքրիստոնէութիւն եթող. և ստելութեամբն հարողացն զնա ի հայհոյութիւն հակառակ քրիստոնէիցն զրեալ եղև անկեալ, որպէս զի զնա Եւսեբրիոս Պամփիւլեա յանդիմանեաց, խախտելով զքանսն նորա: Իսկ թագաւորին բարձրատեսաբար թ առ պարզամիտսն Գ քրիստոնէից ունելով ի նորուն ախտէն ի Պորփիւրի հայհոյութիւնն խոնարհեցաւ. և երկօրին կամաւորապէս ամբարշտեալք, գիտութեամբ մեղացն զյանդիմանութիւնըն ընդունին: Եւ վասն զի իմաստակն Լիբիոս Չ այպանելով, զոր ի Պաղեստինոյն, ասէ, մարդ աստուած և Աստուծոյ մանուկ առնեն, մոռանալ ինձ թուի, որպէս զի նա կատարէ զնորին բանին որ զՅուդիանոս աստուածացոյցն: Քանզի նախկին ասէ զհրեշտակն զպատմող վախճանին, իսկ յետ փոքր ինչ իրի ի բաց լուծին, որպէս ըզհակառակ Աստուծոյ ստող: Ապա սակաւ ինչ անցեալով զիւաց Ե ասէ, սնուցիչ, զիւաց և աշակերտ, զիւաց և սպասիչ:

Բայց զայսոսիկ թէև նա այլապէս իմանայր, այլ սակայն չհամանուանութիւն վաթարին խոնարհեցուցել զայսոսիկ համարեցաւ ասել, զոր և քրիստոնէք նախատելով ասեն: Չի թէ զովութեան հոգ տանէր, պարտէր փախչել ի համանուանութենէն. որպէս փախեաւ և սոկս միւս այլն բանի, յաղագս որոյ բամբասեալ յնքեանց բանից եհատ: Բայց թէ որպէս այսուհետև զիմրդ որ

ա. μελαγχολία:

բ. ὑπεροπτικός:

գ. Քսազրի ծ (ծնօտի; բառը նախընթաց էջ 281) ծն ա. թարգմանուած է .տգէտ:

դ. Λιβάνιος:

ե. ἐδαιμέτων:

ըստ Քրիստոսի բանն աստուածաբանի և զիարդ որ յայտնին մարդ էր, իսկ անյայտն Աստուած, և զիարդ երկօքինն ճշմարիտ են, քրիստոնէիցն աստուածաբանք զիտակք են: Այլ հեթանոսքն նախ քան զհաւատալն ո՛չ կարեն առնուլ ի միտ, քանզի ասէ բանն. Ոչ հաւատասջիք, և ոչ ի միտ առջիք: Վասն որոյ ոչ ամաչեն բազում մարդիկ աստուածացուցեալս. և եթէ քաղցունս՞ պատճառով կամ արդարս. զարբեցու թեան ճառայեալս զիտակոնն ասեմ և զիտոնիւսն և զԱսկղիպիոսն: Ըստ որոյ յաճախի յիւրսն բանս երդնլով Ղիբանիոս ոչ պատկառէ. որոց զարուականս և զիգականս տուփմունս թէ արկանէի ի թիւ, հեռի մեզ լինէր յանգ ելանելոյն բան: Բայց բաւական լիցի զայս կամողացն զիտել զԱրիստոտելին Պեպշոս, և զիւլենիւսին Ստեփանոս, և զիւրգինոսին Պոլիմիշիմոն,<sup>1</sup> և զարարողացն Բ բազմութիւնն, որոց յաղագս այստոցիկ զրեալ ասեմ զորս և արդար և ընդ վայրս քան զամենայն հեթանոսացն աստուածաբանութիւնս ցուցանեն: Զի ընքեան հեթանոսացն է յոլովապէս մարդիկ աստուածացուցեալ, բաւականէ սակաւուցն յիշիլ: Քանզի Ռոդացեացն Գ յանցս ինչ անկելոց տուաւ պատասխատրութիւն, որպէս զի արդեք զՓրոբիկացի Աստին, զքահանայն մոլիկան նուիրացն որ ի Փրոբիւգեա մեծաբեցեան: Եւ է պատասխանին այսպիսի:

« Աստին կարդալ աստուած մեծ. և սուրբ զԱզոնիս Բարի վարուք:

ա. Բս. χριστός τὸν τρόπον. Եթէ արի, քաղք են:

բ. Եսս էլ 271 ծն. Բ.

գ. Ροδίοις. 280. ոմի . ողացեացն :

<sup>1</sup> Այստեղ յիշած Պեպշոս, Ստեփաննոս եւ Պոլիմիմոն սյոհ Կեղի-Չակնբերի գրած հռչակաւոր գրեանց անունն է:

« Եւ առատապարգև, և բարեգէտ զԳիտնիւսիոս: »  
 Իսկ պատասխանատուութիւնն և զոր ի մոլեկան հար-  
 ցականէն հասեալ զնոյն Ադոնին և Գիտնիւսիոս լինել ա-  
 սէ: Իսկ Մակէդոնայեաց թագաւորին Ալէքսանդրիոսի  
 յԱսիա կոչս անցեալ, Անփիկտոնքն գիւթէին, զի ար-  
 դեւք արարեալ Ալէքսանդրի շնորհեսցեն:

Եւ եցոյց Պիւթիայն Բ զայս « ԶԶևս աստուածոց հւ-  
 պատոս, 4 և զԱթինա զէ ծ ն ու ն դ ն » 4

« Պատուեցէք, ի մահկանացուաց մարմնի թագաւոր »  
 « Զոր Զևս անձառելի սերմամբք սերմանեաց » գործա-  
 կից »

« Աւգուտ անհկանացուաց զԱլէքսանդր թագաւոր: »  
 Զոյսոսիկ որ ի Պիւթիա ի դէն պատասխանեաց, որ  
 և նա զզաւրաւորսն աղերսելով աստուածս առնէր, և  
 չայս թերևս աղերս առնէր: Զինչ արդեւք ոք ասիցէ, զի  
 և կզղէովիք զմրցողն աստուածացոյց:

Պատասխանեալ և յաղագս նորա:  
 « Զայս յետ ի քաջաց կղէովիտ քաղաքամրցող »  
 « Զոր զոհիւք պատուեցէք, ասէ որպէս զոչ ևս մահ-  
 կանացու գոյով: » 4

Եւ Յիւնոմանոս ի նստասէ, ըստդոին զՊիւթէայն  
 Ապողովնի:

Իսկ կ'ի գիկոնացիքն երեքտասաներորդ աստուած  
 զԱդրիանոս յորջորջել, իսկ Ադրիանոսի ընդ Անախնուն

ա. Այս տողերը բնագրի մէջ հեքսամետր է:  
 Բ. Α. Πυθα 260. սխալմամբ զիւթիայն ունի:  
 գ. Α. δ ἑπατος Ածական անուն է. - գլխաւոր, բարձրագոյն:  
 դ. Τριτογέσια.  
 ւ. Այս չորս տողերն էլ բնագրի մէջ հեքսամետրով են:  
 զ. քն. երկու հեքսամետր:

առփեալ աստուածացոյց: Եւ զայսոսիկ այսպանելիս և լնդ վայրս ոչ անուանէ Ղիբանիոս, և զքրիստովնեայս և ըզմիայնազիրան զոր Անդրէաս Աղէքսանդրու վարսն գրեաց, գիտացեալ ոչ թաքչի և զնա զՊորփիւրիոս աստուածացուցանելովն. քանզի քաւ լիցի, ասէ, Տիւրիոս եթէ նախկին ընտրելոց քան զնա զԹազաւորին գրեանն:

Այսոքիկ վասն իմաստակին բամբասանաց ի կատարմանս բաւականաբար ճառեցաւ. զառանձին իրողութեան պիտելիս թողուլ ինձ համարիմ, բայց այս զկնի պատմութեանն ի վերայ եղաւ մեզ:

ԳԼ. ԽԳ. 1

Թազաւորին Յորիան յաշխարհէ: Պարսից գնացեալ, առ ժամայն նորոգէր որ ինչ եկեղեցեացն. իսկ առաջնորդք եկեղեցեացն ընթանալ փութային, ակն ունելով Խւարաբանչիւր ումեք յիւրեանց հաւատ յաւելուլ զթազաւորն: Իսկ նա նախկին համագոյութեանն հաւատով

1. Տես. Աղգմ. 2. Ս. Թէոդ. Կ. 2. 3. Ուլփ. ԺԱ. 1. Կաս. Ե. 3. Նիկիփ Ժ. 30.

Յաղագս դառնալոյն Յորիանոսի ի պատերազմն եւ նորոգեալ զքրիստովն, եւ թէ որպէս Աթանաս վերադառնայ ի յաթոռն իւր հրամանաւ Յորիանոսի եւ զիւրութիւն վնի քրիստոնէից:

ԳԼ. ԺԷ.

Եւ Յորիանոս գարձեալ զօրօքն յաշխարհն իւրեանց, առ ժամայն նորոգէր քրիստոնէութիւնն, և եղծանէր հեթանոսութիւնն. Եւ առաջնորդք եկեղեցւոյն փութային ՝ ի սես թագաւորին, և նովաւ զիւրն հաստատել հաւատս: Բ իսկ նա ամենեցուն հաւատն զհամագոյութեան որ ի սուրբ ժողովոյն Նիկիայ ասէր ՝ ընդունել ամենեցուն ի խաղաղութիւն, և ոչինչ

ա. Գ փութանային. բ. Գ. զհաստատս. գ. Բ. շնք.

զորով յայնժամ ամենեցունց խաղաղաբար մատուցանէր զիւրն:

Եւ քաջալիրեցուցանէր թղթովք զԱթանաս Աղէքսանդրացեացն եպիսկոպոս որ անդէն իսկ յես մահուանն Յուդիանոսի զեկեղեցիսն Աղէքսանդրիոյ ընկալաւ յայնժամ ապա համարձակագոյն ի թղթոց թագաւորին եղեալ յամենայն կողմանց երկիւղէն վճարեալ լինէր: Առջէր թագաւորն և զորս ի կոստանդինոսէ աքսորեալ եպիսկոպոս(ս)ունս զոչ հասեալսն ի Յուդիանոսէ կոչիլ: Այսքան և զտաճարսն հեթանոսաց խնորր իսկ նոքա այլ այլուր ծածկեալք լինէին: Եւ որ զփիլիսոփայականն ունէին հանդերձս յայնժամ ի բաց ելեալ զհասարակացն ձեւ առնուին զաղապրէր ի նոցանէն և որ արեամբ հրապարակաւ եղեալ շաղախումն որով անյագաբար Յուլիանոսիւ աւճանէին: Յայսպիսի կարգաւորութեան լինէր որ ինչ հեթանոսացն: Կ

ա. Այս նախադասութիւնը չկայ բնագրի մէջ:

աւելի այլ ինչ քան զայս: Եւ գրէ թուղթս աւ Աթանաս. դարձեալ ունել զիւր աթոռն և զեկեղեցիս Աղէքսանդրի և Եգիպտոսի որ ի նմա յառաջ հաւատացեալ: Յայնժամ համարձակութիւն առեալ ի թղթոց թագաւորին երևեցուցանէր զինքն ի թաքստենէն և ընդունէր զաթոռ իւր և հովուէր զժողովուրդ իւր: « զհաւատացեալս յԱստուծոյ՝ կոչէր և զամենայն եպիսկոպոսս զաքսորեալս ի կոստանդինոսէ և զոչ հաստատեալ ի Յուլիանոսէ կոչեցեալ զնոսա՝ հաստատէր: Ե զպաշտամունս հեթանոսաց խափանէր և զմեհեանս նոցա քակէր անպաշտելիս: Իսկ որ զփիլիսոփայութեան ունէին երևելի հանդերձս ըստ Յուլիանոսի օրինադրութեանն հրամայէր ի բաց դնել և զհասարակաց հանդերձս զգենուլ: Գ և դա-

ա. Ա՛ չիք. Բ. Բ. Աստուծոյ. Գ. Բ. զհանդերձս. Դ. Ա սգնուլ.

ԳԼ. ԻՆ. 1

Բայց քրիստոնէիցն ոչ լռէր, քանզի առաջնորդք  
 աղանդոցն առ թագաւորն գային, զառ ի նմանէ համար-  
 ձակութիւնն հակառակ կարծեցելոյն նոցա ընդդիմա-  
 մարտից զոլ յուսալով: Եւ նախ Մակեդոնիանոսացն  
 արարեալ զիրս մատուցին, արժանաւորելով արտաքս մը-  
 ղել յեկեղեցւոյն զորս զանն՝ Տանն կարգեն, և զինքեանս  
 շոխանակ մեծանել: Եւ էին տուողքն զգիրս աղաչանաց  
 այսոքիկ. Բասիղ Անկիւրայ, Սիդրանոս Տարսնի, Սոփ-  
 առնիոս Պոմփիլուպոլսի, Պասինիկոս Զիդացեաց, Վթէո-  
 փիլոս Կաստարաղացեաց: Զայսոքիկ զգիրս ընկալեալ թա-  
 գաւորին անպատասխանիս զնոսա առաքեաց. միայն  
 այսպէս ասացեալ. Ես ասէ զվիճարանութիւնն ատեամ:  
 և զընթացողսն առ միարանութիւն սիրեմ և պատուեմ:  
 Զայսոսիկ և յայդոցն տուեալ լսելիս, զպնդագոյնն վի-  
 ճել կամողացն թուղացոյց. և այս ըստ գիտման թա-

ս. Չոյսոս:

1 Տես Սողոմ Գ. 4. փիլոսո. Ը. 2-7. Կաստագոր Է. 4. Կի-  
 փ. Ժ. 10.

Պարեցուցանէր որ արեամբ և հրապարակաւ եղեալ շաղաղ-  
 մունք, որ առ Յուլիանոսիւ եղև ըստ հեթանոսացն կրօնիցն:  
 Բայց հեթանոսացն մարտ լռեալ առ քրիստոնեայսն, այլ  
 քրիստոնէից մարտ առ միմեանս ոչ լռէր: Քանզի Մակեդոնիոսք  
 արարեալ գիր զիւրեանցն մեծանել ի տեղի որոշելոցն և հաս-  
 տատել զհաւատ հոգեմարտին Մակեդոնիա: Բայս գիր ըն-  
 թերցեալ անպատասխանիս զնոսա առնէ:

Ասէ, ես զվիճարանութիւն ատեմ և զմիարանութիւն  
 սիրեմ ըստ սուրբ ժողովոյն հաւատոյ: Այս ամենեցունց լսե-

ա Բ. շ'ք ք. Բ. Մակեդոնի:

զաւորին լինէր: Քանզի այսքան և որոյ Ակակայն վիճա-  
բանութիւն յանդիմանել լինէր, և որպէս էին միշտ առ  
ուշուշան խոնարհեալք, յարտաբար եցոյց: Ջի ժողովեալք  
յԱնտիոքայ Ասորեաց ի բանսն գան Մեղիտիոսի, որ  
փոքր ինչ յառաջ մեկնեալ ի նոցանէ, ի համագոյու-  
թիւնն յաւեալ: Բայց զայս արարին, զի պատուեալ  
ի թագաւորէն տեսանէին զնա անդ յայնժամ կելով:  
Եւ միարան կամաւք զիրսս շարագրեալ խոստովանին ըզ-  
համագոյութիւնն, և զՆիկիոյն հաւատ հաստատեալ մա-  
տուցանեն թագաւորին, Մեղիտիոս և Անտիոքայ եպիս-  
կոպոսն և այլ բազումք ընդ նոսա: Կ իսկ զայս զգիրս  
ի ժողովու ժողովրդականացն Սարինոսի գրելոցն գտաք  
յորժամ շարագրեցաքն: Իսկ թագաւորն յաւժարու-  
թիւն ունելով աղերսիւ հաւանեցուցանել զորոշելոցն  
վիճաբանութիւն հատանել, ասացեալ, մի ինչ խռովա-

ա. Բնագրում եղող թագաւորն ներկայացրած թղթի պատճէնը  
բաց է թողուած:

լիս եհաս ըստ դիմաց թագաւորին. յայտոսիկ և Ակակա վիճա-  
բանութիւն յանդիմանեալ՝ լինէր. և որպէս էին միշտ առ  
ուշուշան խոնարհեալ յայտնաբար եցոյց: Քանզի ժողովեալ  
յԱնտիոք Ասորեաց հաւանեն Մեղիտոնի, որ հաւանէր զհա-  
մագոյութիւնն. և զայս արարին, զի պատուեալ զնա թագա-  
ւորին տեսին: Յայնժամ գիր հաւատոյ ըստ սուրբ ժողովոյն  
նիկիոյ շարագրեցին և մատուցին թագաւորին. և Մեղիտոսի  
Անտիոքայ եպիսկոպոսի, և այլ բազմաց՝ ուղղափառաց ընդ  
նոսա: Եւ թագաւորն յօժարութիւն ունէր աղերսիւ հաւանե-  
ցուցանել, զոր ոչ ելոյժ վիճաբանութիւնք. զի ծանր էր նմա  
խռովութիւն հաւատոյ: Եւ այնուհետեւ պատուել և առաւել սի-  
րել ասէր զմիաբանեալսն ի սկզբան հաւատոյն սուրբ ժողովոյն:

ա. Բ. յանդիմանութիւն. ք. Բ. եպիսկոպոսաց.

կան հաւատացելոցն լինել այսուհետեւ, այլ սիրել և առուել պատուելի զոր ի սկզբանէ միաւորութեամբ յեկեղեցւոյ ելեալսն: Չայս այսպէս նմա գործել թե միստրոսա սսէ իմաստասէրն. քանզի հիւպատիկոն բան հանելով, թ զարմացուցանէ զթագաւորն. որպէս զի տսել աղանդաւորել զոր կամինն ամենեքին, յաղթահարեալ զաղերսանացն ժամանակս: Չորս և արարքարչելով այսանորար սսէր յանդիմանել զնոսա ծիրանիս զԱստուած ուրախացուցիչս, ոչ լուսագոյն լինել նոցա քան զԵ. ռիպոս, և այժմ առ այսօրիկ այժմ ի հակառակ զհոսանան փոխելով Դ այսպէս սսէ թէ և սքրա ըստ կամաց եւռոպիականք են:

ԳԼ. ԻԶ. 1

Այսպէս ապա թագաւորն յայնժամ զղիմուսն հա-

ա. Θεμιστιος.

բ. Բն. Եπατακόν γάρ λόγον εις αυτόν διαλθών քանզի գրելով ծառի վերայ Կլաւտոսութեան նորա (արքայի):

գ Այս էլի վերջում գրիւք քնից յոգնած գրել է ստորին լուսանցքում. եղև քունս նեղեաց եւ վիտս յաւելու կամի:

1 Ցես Սոզմ, 2. 6 Թեոդ. Դ. 6. Փիլոսո. Ը. 8. Կապոգ. Է. 6. Նիկեփ. Ժ. 43:

Եւ այսպէս թագաւորն զհակառակութեան հերձուածոցն՝ արցածուցանէր ի միաբանութիւն սուրբ ժողովոյն ի փառս ամենասուրբ Երրորդութեանն:

ԳԼ. ԺԸ.

Յաղագս Յորհանսոսի գնալն առ ի Թաղել զԵսուիանոս. եւ թէ որպէս գովարանի, եւ ի գալն ի Կոստանդնուպօլիս եկեալ զիւզ մի մեռանի՝ թագաւորեալ ամիս 7:

Եւ գնացեալ յԱնտիոքա թագաւորն ի Ցարսոն Կիլիկեցա. Բ. Գերձուածն.

կառավարութեանն, զյառաջագոյն հերձուածեցերոցն ունէր: Եւ վաղվաղակի հասեալ յԱնտիոքւոյ ի Տարսան Կիւղիկեցւոց, անդ զՅուդիանոսի մարմինն թաղեաց, և զամենայն զեքսոսիոնին՝ աւրինաւորութիւն լցեալ, հիւպատոս յայնժամ անուանի, և անդէն ի Կոստանդնուպօլիս անցանել փութալով:

Գայ ի գեաւղ մի որ անուանի Կոստաստանա, որ է ի մէջ սահմանացն Գողատոյ և Բիւթենւոյ. ուրա՛նաւր և Թեմեստիոսի իմաստասիրի այդովք նախարարաւքն ընդ յառաջ ելեալ, զհիւպատոսական բան ասէր ի վերայ նորա. զոր և յետոյ ի Կոստանդնուպօլիս ամբօրին եցոյց: Այլ բարեբաղդարար զՀռովմայեցւոցն գործեաց կարծելով, զաշխարհականն և զեկեղեցեացն: Այսպէս բարերար թագաւորի բարեբախտեալ, եթէ ոչ էր եկեալ յանկարծակի ի վերայ նորա մահն.՝ և զայսաւ զթաղման:

1 Յես. Միք. Առ. րի. էջ 146. եւ Վարդան պատմագիր. Չկնի նորա Կոստանդնի) Յուլիանոս ամբ. Բ. եւ ամբոս Բ. իւ յետ նորա Բափեանոս ամ մի զոր գովէ Սոկրատ. Ասողիկ. Պատմ. Տէեզ. (Ա. Պետերբ. 1885.) էջ 138) նման է Վարդանին. իւ ապա Յուլիանոս Իզաբորդի Կոստանդիանոսի Բ ամ: Սա մեռաւ ի Պարսս եւ թաղեցաւ ի Տա սոն որպէս Սոկրատ ասէ: Հորայրք այս համառօտ ակնարկութիւնից եզ. ակադեմիս: որ Ասողիկը տեսել է Մեծ Սոկրատը, տեսելով. «Յայս ակնարկէ Ասողիկ. Բ. դ. 6. էջ 138 առեալ ի Մեծ Սոկրատոս, որպէս թուի»:

ւոց, անդ զմարմինն Յուլիանոսի թաղէր: Եւ կարգաւորէ ըզգործակալս աշխարհին և անդէն փութով դառնա ի Կոստանդնուպօլիս անցանելով, և գայ ի գիւղ մի, որում անուն էր Գատարան,՝ մերձ ի սահմանս Գողատացւոց: Ուրանօր էր Թեմիստիոսի իմաստասերի այլովք նախարարօք, ընդ առաջ՝ ելին թագաւորին և գովասանութեան բանս առ թագաւորն ասացին: զոր և գրով յետոյ ի Կոստանդնուպօլիս ցուցեալ, հաճոյ

ս. Բ. Դատասան. ք. Ա. Թէմեստիոս գ. Բ. յառաջ.

պիսի այր ի գործոցն բարձեալ: Քանզի ի նախկին ճառեցելում գեաւղջն ի ձմերան ժամանակի արգելմամբ տխտին ըմբռնեալ, ի հիւպատուոջն ընքեան և Բառոնիանու որդւոյ իւրում, տասն և եւթն Պետրուարի ամսոյ, թագաւորեալ ամիսս եւթն, կեցեալ ամսս երեսուն և երեք: Ունին զիրքս ժամանակաց երկուց և ամսոց երեքից և կիսոց:


Եւ ի բան գովութեան: Բայց թագաւորն զամենայն կարգս Հրատալայեցեաց գեղեցկապէս յարդարել ջանայր, զսշխարհի և զԵգիպտոսոյ: Եւ անդէն ի նմին գեօղ հիւանդացաւ, որով և մեռաւ իսկ. կեցեալ ամսս ԼԿ. թագաւորեալ ամիսս եւթն:


(Աւաղ զնորս արագ մահն. որ այնպէս բարերսր և սրգար: ողջահաւատ մեկնեալ յամենայն իրաց շարաց և բունն հարեալ զիրաւանց զամենայն կարգաւոր կարգեաց զեկեղեցւոյ և զաշխարհի: Եւ այնպէս արագ ի միջոյ իրաց բարձաւ, և տարակուսեցոյց մահ նորս զբազումս ի հաւատացելոց " որ սքաշչանալ ի դէպ է ի խորս մտակարարութեան Աստուծոյ. թէ՛ արեւ և անքննելի են դատաստանք " նորս: Եւ ոչ սակաւ վիշտս լինէր եկեղեցւոյ և ուղղափառաց. այլ նա այսպէս հանգեաւ ի փառս և ի գովութիւն Աստուծոյ:)

Ս. Բ. հաւատացելոցս. Բ. Բ. դատաստանին.









UNIVERSITY OF MICHIGAN



3 9015 04146 6270

